



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Umg
631



1999 17

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼԵՆԿ ԹԻՄՈՒՐԱՅ

ԹԱՐԴՄԱՆԵԱՅ Ի ՏԱԶԻԿ ԲՆԱԳՐԻ Ա. ՎԱՐԴԱՊԵՏ
ՏԵՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՅ. Ի ՄԻԱԲԱՆԱԿԱՆ ՈՒԽՏԵ
ՄՐԲՈՅ ՅԱԿՈՎԼԲԵԱՆՅ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԷՇՄԻԱՆՆԻ

Տ. Տ. ԳԵՂՈՐԳԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ

ՀՐԱՄԱՆԱԿ

ՊԱՏՐԻԱՐՔԻ ՍՈՒՐԲ ԵՐՈՒՆԱԴԵՄԱՅ

Տ. ԵՍԱՅԵԱՅ

ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԾՈՅՑ

Տ. ՄԿՐՏՉԻ

ՄՐԲԱՋԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ՅԵՐՈՒՆԱԴԵՄ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՐԲՈՅ ՅԱԿՈՎԼԲԵԱՆՅ

1873

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆԱԴՅԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Աշխարհական լեռներու արշաւանաց և գործոց բովանդակական պատմութիւնը լիովին աւանդած է Ժամանակակից պատմիչ Դամասկացի Ապատուլլահի որդի Ահմետ արագ շահը, թէ Թիմուր՝ որբան ազգաց և աղանց տիրեց, որբան տէրութիւններ և թագաւորութիւններ կործանեց, և քանի քանի աշխարհներ սրով և հրով դատեց, գերութեամբ և արեամբ յաւեր և յապականութիւնն դարձուց, որբան ազգք և ժողովուրդք նորա անողորմ որով մաշեցան և յանդարձ օստարութիւն վտարեցան, որբան քաղաքք, մզկիթք, և եկեղեցք հիմն յարեատապակեցան. և թէ որպահի դառնակակիծ ողբով և կոծով համայն աշխարհս լեցուց. և որբան մեծութիւն և ճիշտութիւն կապտեց և կողապտեց և իւր գանձարանն անթիւ և անհամար գանձիւք եւ հարատութեամբք լիցուց:

Ասոնց ամենն ալ իրենց հանդամակըներով և պարագաներով վերցիշեալ Արագ շահ Ահմետ է ֆէնտին Արակի լեզուաւ մի առ մի գրեր, և իւր պատմութիւնը մինչեւ Թիմուրայ որդւոց և թոռանց ժամանակը հասուցեր է, այն է թուականն Նիշքէթի հՀ. (1436): Մենք սցն հեղինակ՝ պատմութեան ընթացից մէջ այլազգի թարգմանցն հետեւելով, վախճանեալ պատմագիր կ'անուանեմք: Այս ընտիր գործը, թէպէտ հետ ժամանակաց Թուրքերէնի թարգմանուած է, այլ Արապերէն և Պարսկէն բառից կուտակութիւնը, Թուրք ժողովրդոց ընթերցման արգելք, եւ իմանալը գժուարին կը գործէր: Զայս տեսնելով Պաղտատի կուտակալ Վահմ. Խսմայիլ փաշան ՀՀ (1718) թուին կը յանձնէ զայն այլազգի երեւելի մատենագիր Նաղմի զատէ է ֆէնտին, վերաստին:

631

հ 18 687

818


թարգմանել ՚ի բարբառու ծաճկաց , որ և նա սիրով ընդունելով , կը կատարէ նորա այս օգտակար խնդիրը , որ յետոյ տպագրութեամբ ՚ի լցու ընծայեցաւ ՚ի Կ . Պօլիս 1277 թուականի Հիմքէթին :

Բունաւորիս պատմութիւնն աղդիս մատենագրաց ոմանք ՚ի ժամանակս ժամանակս միայն իրենց պատմութեան ընթացից և էջերուն մէջ , այլ և այլ եղանակաւ զետեղեցին և գրեցին , այլ մինչեւ ցայծմ նորա բովանդակ գործը առանձին մատենիւ չերեւեցաւ ուրեք : Այս մասին ացա մէջ ժամանակաւ երեւելի կը հանդիսանայ Ա. գ. գային պատմութեան դասակարգութեան մէջ , մերս Թումաց վարդապետ Մեծօրեցի , ժամանակակից և Թիւմուրաց գործոց պատմիչ : Սակայն՝ նա հազիւ կարացեր է միայն Հայաստանի մէջ տեսածները և հարեւանցի լսածները ՚ի գիր դրամել , ուրիշ պարագաները ՚ի բաց թողլով , մանաւանդ շատ տեղեր պատմութեան ուղիղ ընթացքէն խոտորելով , Արշաւանաց կարգը և ժամանակ ները կը խանգարէ . ինչպէս որ այն պատմութեան ընթացքէն յայտնապէս կը տեսնուի : Թէպէտ , շնորհ մեծ ունիմք մեր նախնի պատմագրէն , որ Հայաստանի մէջ գործուած չափիներուն և մեր Ազգին պատահած դէպէրերուն ականատես գոլով , գրէր և մեզ աւանդեր է , որ Ա. Ալազարի պատմագիրս կը զանաց և հարեւանցի կերպով կանցին , միայն Հայաստանի այլ և այլ մասերուն ակրող բռնաւորաց անունները լիշելով , և Հայաստան աշխարհի երբեմն մէկ մասը ջունաց աշխարհին հետ կը միացնէ . և երբեմն մէկ մասն Ատրպատական աշխարհին հետ կը խառնէ : Մենք առանց այս պատմութեան ուղիղ կարգը խանգարելու , և բնադրին անխոտոր ընթացքէն շեղելու , ջանացնէք թարգմանել ՚ի Հայերենի բարբառ մեր արդի աշխարհաբառ ոճով , հանդերձ կարեւոր ծանօթութեամբք , և Հիմքէթի թուականին առջեւ փակագծիւ Փրկչական թուականին համեմատութիւնն ալ աւելցնել : Պատմութեան շարունակութեան մէջ անխերի թարգմանուած է նաև , Խոլամ մողովուրդոց անգրագծիւ քմաց պարարիչ Շէյ խից ոմանց պատմութիւններն , որոնք իրենց կարծեաց

համեմատ ՚ի կարգի հրաշից կը համարուին , այլ առած է թէ՝ առանց փուշի վարդ չլինիր , և թէ՝ վարդը սիրողը , փուշերուն խայթոցներէն չխորչիր : Պատմագէտ ընթերցողներէն կը խնդրուի որ , ՚ի սէր ճշգրիտ պատմութեան , նոյն ՚ի կարգի հրաշից համարուած խօսքերէն չը խորչին :

Ի վերջո՞ այն այս սակաւաքիրտն մեր աշխատութիւնը կը մատուցանեմք օրհնեալ Ազգիս ուսումնասէր ընթերցանելեաց , ակն ունելով նոյց քաջալերութեան . և գործոց մէջ գտնուած թերութեան և ակամայ վրիպակաց , անմեղադիր ներողամտութեան , իսկ եթէ օգուտ և կամ բարցական շահ տեսնեն , այն թողլեցի ՚ի փառա Աստուծոց , ՚ի յանդիմանութիւն գործոց անագործն բրունաւորաց , և ՚ի վարձ դուղնաքեայ վաստակոց մերոց :

Թ.ԱՐԴ.ՄԵԽԱՆ.26



ԱԿԱԴԵՄԻԿՈՒ
ՀԱԿՈԲ Հ. ՄԱՆՈՒԴՅԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԼԵՆԿ ԹԻՄՈՒՐԱՅ

ԳԼՈՒԽ Ա.

Թիմուրայ ծնանդեն — Առաջին կենաց հանգամանքներն . ըստ այլ և այլ պատմութեանց : — Սաոյդ պատմութիւնն : — Առաջին ծագումն , Հերակլի թագավար Սուբթան Հիւսէյնի յարին , և նորա զրաց ողարսակա կարգեալ՝ Սահմանանի իշխանին յաղթեն :

Թիմուր բառը Պարսկերէն է , իսկ երբ Արաբացիք գործածեցին , սովորութեան համեմատ փոփոխելով , աշխարհիս մէջ երբեմն Թիմուր , և երբեմն Թէմէրլէնի հոչակեցին . Թիմուրայ նաև մակաց մէջ յիշուած է թէ , Թիմուր Մուրզափ որդի , և այն ալ Խաղաթի որդին է ⁽¹⁾ : Ծնած տեղը , Մակարանն նէիր (յայնից Ուստո գետոյ) , Սըմրդանափ կողմ Քէշանուն քաղաքի իշխանութենէ , Խոճայ Եթղատ անուն գիւղն է : Կը պատմեն թէ՝ ծնած գիշերը երկնից երեսը հուրինչ երեւեցաւ , և երկրիս վրայ իշնալով բաժանեցաւ , և կայծերը քաղաքները ցրուեցան : Կը պատմեն թէ , Թէմուր ծնած ատեն երկու ձեռքը թանձր արիւնով լիցուն տեսնուած է . Նոյն ժամանակի Մոգերէն և գիտութեան կերպորանքէն տեղեկութիւն ունեցողներէն՝ այս զարմանալիք գետքը հարցուեցաւ , ամանիք գուշակեցին թէ , այս մանուկը ոստիկան կը լլնի , ոմանիք՝ աւազակ , ոմանիք՝ միւսագործ , և ոմանիք՝ գահիճ : Այս ալ կը պատմաւի թէ ,

(1) Թիումայ Վ. Մեծորեցի առա ծնունդը միալմամբ կը կարծէ թէ՝ Հայաստան՝ ի Սարբարի , ի գաւառն Կոբալիս եղած լնի , որ անհիմն է , դի Հայաստան այսպիսի հրեշներու ոչ ննարան , ոչ Սնարան և ոչ Քնարան եղած է , եթէ 10 :

Թիմուրա հայրը, յայնկըս Ոդսոս գետոց յանապատը բը-
նակող ցեղէն, և յուզկահար աւազակներէն էր : Պատ-
մութիւն մ' ալ կ'աւելցնէ թէ, Թիմուրա հայրը հնակար-
կատ էր : Յայտնի է թէ այս խառն զրցյները, ՚ի ստիպել
հարկին, կարելի է համաձայնեցնել: Կը պատմեն թէ, Թի-
մուր առաւել աղքատութեամբ և սնանկութեամբ տա-
ռապեցաւ, երբեմն գիշերները սնանկութենէ կարի վստա-
նալով ռշխարի մի գողութեան գնաց, արթուն հովիւր
որ կըհսկէր՝ Թիմուրայ թիկունքը նետով վիրաւորեց եւ
անշարժ թողուց, և անսիջապէս սրաթեւ նետով մի ասդրն
եւս վիրաւորեց, ըստ հաւանական կարծեաց, կաղու-
թիւնը ասաի յառաջ եկած է : Այսուհետեւ աղքատու-
թիւնը բացում, և Աստուծոյ ժաղսվրդոց վիստը շատ ե-
ղաւ, Աստուծոյ երկիւղը թողուլ լքանելէն յետոց, սա-
տանայ մարդիկներէն Ապաս, ծիհան շահ, Գամարի,
Սիւլյաման շահ, Այստկիւլա, եւ Ծէյֆիտտին անուն
մարդկանց, եւ ասոնց նման (1) քառասուն վատաբախո-
ներու ընկեր և բարեկամ եղաւ: Այբան աղքատու-
թեամբ և չքաւորութեամբ, մինչդեռ չմեռնելու զօ-
րութեան կարօտ էր, դարձեալ հանապազ երկրի տէրու-
թեան և թագաւորութեան խօսակցութիւնը կ'ընէր եւ
այն փափաքով կ'թռչէր . սորս այսպիսի պահանջմունք-
ները որ կ'ընէն՝ ծաղրելով նորա յիմարութեան և պա-
կասամութեան կուտային:

Կը պատմեն թէ, նա աղքատ մարդ մի էր և մի մի-
այն բամբակէ շապիկ մի ունէր, երբ Գիւսէն քաղաքի
Ծէմիտտին անուն փառաւոր. Ծէյսին համբաւը լսեց,
որ նոյն քաղաքի բնակչաց սիրելին, և աշխարհիս ուսում-
նականաց հաւատարիմն էր, շապիկը ծախեց և արծա-
թովը այծ մի գնեց և յիշեալ Ծէյսին այցելութեան գլ-
նաց, և այծը ընծայ բերելով Ծէյսին ատեանը մտաւ,
Ծէյսը և իւր ընկերներն Ազօմքի և փառաբանութեան
էին, մինչեւ աղօմքին վերջը պարկեշտութեամբ ոտքի
կայնեցաւ, Ծէյսը և ընկերներն աղօմքը և փառաբա-
նութիւնը աւարտեցին, և տակաւին անձայն ըռութեամբ

(1) Թոռմայ վ. • դէէ 515 :

կեցած էին, երբ Ծէյսը Թիմուրա երեսը նայեցաւ, Թի-
մուր անմիջապէս փութաց ոտքը ինկաւ և ձեռքը համ-
բուրեց, Ծէյսը քիչ մի մոածելէն յետոց իւր կրծնակից-
ներուն դարձաւ և ըստա, այս մարդը իւր ունեցած բո-
լոր ստայուածքը տալով արժէք չունեցող ճանճի մի թեւ-
բանի մի համար աղացաւոր եղած է, դիտաւորութիւ-
նըս է որ չզրկելիք, և կրծնաւորաց հետ, նորա տենչանիքը
կատարելու համար, ձեռքը աղօմքի վերուց և օրհնու-
թիւն կարդաց, յետ այնորիկ նորա վիճակը սկսաւ տակա-
ւու տակաւ երջանկանալ: Կը պատմեն թէ, երբ Թիմուր
վտարանդի յուղկահարութեամբ կը շընէր, Ճանապարհը
կորմնցուց, և եօժնեկի մի չափ անսպասները քաղցեալ
և ծարաւի թափառելով մեռնելու աստիճանը հասաւ,
բախովին դիմուածով, Ճանապարհը թագաւորին ձիոց ա-
րօտափեղոյն հանգիւեցաւ, նա՝ որ ձիոց որպիսութենէ և
պայտառական գիտութենէ տեղեակ էր, ձիոց վերակա-
ցու ախուապետին հետ տեմնուեցաւ, երբ ախուապետը
իմացաւ թէ, Թիմուր ձիոց տեսակներուն և նոյա ախ-
տից և հիւանդութեանց վրայօք կատարեալ տեղեկութիւն-
ունի, պատիւը աւելցուց, և շարունակ քովին չօրոշելով
խօսքերուն կարեւորութիւն տուաւ, զարմանք, որ սոյն
ժամանակին թագաւորը քանի մի ձիէր ուղեց, ախուա-
պետը ուղած ձիէրը Թիմուրայ յանձնեց և խրիեց, եւ
թագաւորին՝ նորա հանճարը եւ ծառայութեան ար-
ժանի լինիլը, գրով ծանոց : Թիմուր գնաց իւր
պաշտօնը կատարեց, եւ թագաւորին խելայի արժա-
նացաւ և ախուապետին վերադարձաւ: Զինի ժամանա-
կաց յիշեալ ախուապետը մեռաւ, եւ ամբարտաւանն
Թիմուր նորա պաշտօնին ամբաձաւ: Եւ այսպէս օր քան
զօր սակ բախովին յաջողութիւն գտնալով, թագաւորին
քրոջ հետ ամսւանացաւ և ընկերաց մէջ փառաւորեցաւ:
Եւ պատճառն այս է որ նա կիսրիէն կամ Քարքիէն անու-
նով մականուանեցաւ և այնպէս հռչակուեցաւ: Կը պատ-
մեն թէ, երբ Թիմուր՝ օր մի թագաւորին քրոջը հետ կը
խօսակցէր՝ խօսքերնին աւելի զայրացաւ՝ կինը Թիմուրայ
առաջին վիճակը յիշելով, աղքատութիւնը եւ խղճու-

թիւնը մէջ բերաւ, Թիմուր բարկացաւ սուրը մերփոցուց և կատաղի անգժութեամբ վրան յարձակեցաւ. խղճալին թէ և աճապարեց խուսափիլ, այլ անապան, զի անողոք սուրը արքայագուն դշոյն արիւնամաժաժաւ դիաթաւալ կացոց. այս անարժան գործէն չի կրնալով իննալ, փախաւ և ապստամբութեան որոշում տուաւ: Կը պատմեն թէ, յիշեալ թագաւորը⁽¹⁾ Պալսի թագաւորըն էր, և ամբարտաւան Թիմուր՝ նորա ծառացութեան մէջ հարիւրապետ:

Սակոյն՝ ի ճշդրիս պատմութիւնս, Թիմուրայ հայրը թագաւորական նախարարաց մին էր, վախճանեալ պատմագիրը կը յիշէ թէ, Միւնթէսիսկալթ անուն Պարսկերէն պատմութեան մէջ, տեսած եմ որ, կանանց կողմանէ սերունդը ծինկիվ խանին կը հանի: Հումկ ուրեմն, յայնի է թէ, կարելի է այս բոլոր պատմութիւնները իրար համաձայնեցնել, և երկրացելին ի բաց թողուլ:

Ալ պատմեն թէ, Թուրքաց ցեղերը բոլորն ալ Արաբաց նման վրանարնակ ազգեր և ցեղեր էին, եւ յիշեալ թագաւորին իշխանութեան տակ, Ավամթ, Ֆիլայիր, Գաֆէէն, և Թիրլաս անուն ըստ Թուրք ցեղեր կային, իւրաքանչիւրը՝ ընտիր, աւերութեան պիտանի, ուղղութեան առաջնորդ, փառաւոր Վէզիր մի, և արթուն հրամանաւուար մի ունէր, Թիմուր, Թիրլաս անուն ցեղին իշխանին որդին էր, ուշիմ հանճարեղ, օրինաց և բարեկարգութեանց տեղեակ և քաջ, գործունեայ և հմուտ քաջազանց մէջ Մնէր և Աճէր էր՝ շարունակ նախարարաց և իշխանաց հետ խօսակցելով ողովներ կրկազմէր և զքուանաց խնձոյք ներ կ'պատրաստէր, երբ գիշեր մի այսպիսի մարդ կանց հետ կ'խօսակցեր, սրտին խորհուրդը յայննելով այսպէս սկսաւ խօսիլ թէ, Մեծ մայրս մոդական օրինաց, և աշխարհիս դիապուածոց տեղեակ ամիկին մի էր, երբեմն իւր երազներէն կը ցուցնէր թէ, իւր զաւակէն թագաւոր մի պիտի ծագի, եւ թագաւորները չնշելով, շատ տերութիւններ պիտի նուածէ, քաղաքաց և ժողովոդոց պիտի

(1) Կամ Բահը, որ և Զարիսապ, որ և կոչեցաւ Բակորիս, 'ի սահման Պատմապի:

տիրէ, այն ինքնակալ թագաւորոր և վասուաւոր իշխանը, անշուշտ պէտք է որ ես լինիմ՝ և այս գործը ինձ կը պատշաճի և ծագումն մերձ է, այն ատեն ինձ ընկեր և գործերուս օգնական և ճանապարհիս առաջնորդ կը լինիք՝ և այս մասին ուխտ և երդում կ'ընէք, ամենեքեան ըն. գունեցին՝ եւ երդմամբ խոստացան որ նորա օգնական և ձեռնառու լինին: Սակայն, նորա Թիմուրայ այս խօսքը և չար տենչանքը չժամկեցին եւ ժողովէ ժողով հրատարակելով յայտնեցին, և ամեն տեսած մարդոց պատմեցին, բայ այնմ թէ՝ Երկրս, անձանց մէջ զադոննիք չի մնար: Թիմուրայ թագաւորելու տէնջանքը և իշխանութեան ծայրը ամբառնալու փափաքը, թագաւորը լսեց, և իմացաւ որ Տէրութեան և Աղիմն մէջ այնպիսի խոռոշար մի երեւցած է, քաղաքաց և ժողովոդոց բարբը կ'ապականէ, ուստի փութաց զայն ի բաց հալածել՝ Թիմուր իմանալով, խոյս տուաւ. և նոյն օրէն որոշում տրւաւ որ յարձակի և անկախութեան իրաւոնները ձեռքբերէ:

Ի պատմութիւնս ոմանց կ'ըսուի թէ՝ Թիմուրայ վերոց գրեալ Նէմա Խտտին շէյխին ժողովը երթալն, նոյս աղօթից արժանի լինիմն սցն ժամանակը եղած է, վասն զիքանի որ տէրութեան և թագաւորութեան խորդ կը լինէր, Թիմուր կը յիշէր որ իւր թագաւորութիւնը, յիշեալ շէյխին, և շէյխ Զէյն Խտտին Խափիմն, և Աէյսու Պիգրէ անուն մարդկանց Պղօթից օժանդակութեամբ եղած է, որ յետոյ մի առ մի պիտի պատմենք:

Ի պատմութիւնս ոմանց կ'ըսուի թէ, յիշեալ ամբարտաւանին առաջին ելքը ՎՎ. - Վ. (1358-68) Հէճրէթի թուականին միջոցները եղած է: Սակայն Դամասկոսի կատարեալ առաքինի և գիտնական Պուխարացի Մէճէլ մէտի որդի Ալբայտոթին Ապու Ապտուլահին ԱՅ. (1432) թուին վախճանեալ պատմազրին պատմածին համեմատ⁽¹⁾

(1) Հ. Միքայէլ Զոմիեռն 'ի Ալբայտոթ թագաւորելը դէկ 1366: Թուական պ. նախ քան զգալ յաշխարհն մեր դնէ 'ի թուին Հայոց 833: (1386) այլ մենք ամփափիս պահեցաք զնիճըթի թուական հեղինակին և պանթէր նմին եգաք զթուական Քրիստոսի փակագծի:

ՎՎՎ (1369) թուին Պալսի թագաւորի որդի սուլթան Հիւսէյինը սպանելին յետոյ թագաւորական գահը բազմած, և թագաւորութեան ժամանակին եւս երեսուն և վեց տարի եղած է: Կը պատմեն թէ նորա առաջնորդ երե թշնամութեան եւ հպատակաց ընչց անիւրաւութեան ձեռք կարիւուեց, հպատակը տափառապեցան և խոռվեցան՝ շատերը իրենց երկիրը տուները և բրնակութիւնները տաղականալով թողարքին և գաղթեցին և (1) Ճիշտն գետը անցան, և յանկայ Ուտսո գետոյ երկիրը գատարկ մնաց, Թիմուր՝ անորի չուեց, գնաց Խորասանու կողմերը նուաճեց, եւ մանաւանդ Արձանի անապատին տիրեց, երբ նոյն սահմանին մէջ կը թափառէր, ինքը և իւր ընկերները սնանկացած և քաղցած կ'տառապէնն, Թիմուր՝ ոչխար մի ճարելու համար՝ ոչխարաց մակաղատեղին գնաց, մինչդեռ ոչխար մի գողնալու դիտաւորութեան վրայ էր, հովիւր իմացաւ և քանի մի սրա թեւ նետով վիրաւորեց բռնեց կապեց և Հեռաթի թագաւոր սուլթան Հիւսէյինի առջեւ տարաւ, թագաւորը գանիւք տանջելին յետոյ, հրաման ըրաւ որ կախէն, Արքայորդին Վիյասիտատին փութաց միջնորդել և զայն ՚ի մահուանէ աղատել. սուլթան Հիւսէյին բարիացաւ և Վիյասիտատինը խրատելով ըսաւ թէ՝ այս գործը, քոյ ոչ խաղաղութեամբ և վտարանդութեամբ ասպիլդ կը գուշակէ. վասն զի այս ապակինից մարդ մի է, սրա կենդանութիւնը քաղաքաց և ժողովրդոց կարստեան պատճառէ. Վիյասիտատին պատասխանեց թէ, իսո մարդուն չարութիւնը ինչ է, և ինչ քանի կարող է, մօնաւանդ որ այս աստիճան վիրաւորեալ եւ խոցութեալ մերձ ՚ի մահ վտանգուած լինի, թագաւորը միջնորդութիւնը ընդունեց, մինչ զի վիրաբուժ խրկեց որ զայն դարմանէ, յետ այնորիկ իլշեալ թագաւորին առջեւ, իւր ծառայութիւնը և հպատակութիւնը կը հատուցանէր, և կատարեալ յաջողութեամբ թագաւորին բարեկամութեան, և ծառայից մէջ պատուոյ և աստիճանի տէր լինելու արժանի եղաւ:

(1) Կամ Զահան, գետ հարաւային յԱրաքացոց կոչ Աւմիտտէրիս, և ըստ նախնեաց Ուտսո:

Պատահմամբ նոյն ժամանակին (1) Սամիստանի իշխանը թագաւորէն ապատամբեցաւ՝ թշնամութեան դրույթարդեց եւ հնազանդութեան լուծը խորտակեց. նորա վնամները բառնալու համար, Թիմուրը՝ կաղմեալ զօրաց սպարապետ կարգելով՝ զրկեց, թէ պէտ գնաց և յիշեալ ապատամբը վանեց և հեռացաւ, տակայն դարձեալ բնաւորութեանը մէջ ծածկուած չարութիւնը յերեւան հանելով, առաջն ընկերաց և բարեկամոց հետ, զէմ եղեալ յայնկոյս Ուտսո գետոյ գնաց: Ի պատմութիւնու ու մանց յիշեալ թագաւորը մեռնելին յետոյ, ամբարտաւանը Թիմուր՝ մինչդեռ սուլթան Վիյասիտատինի ծառայութեան մէջ էր՝ ապատամբեցաւ եւ գնաց յայնկոյս Ուտսո գետոյ, և այն կողմերը չարութեան եւ անորէնութեան կիսիչ հուրը բորբոքեց, թէ պէտ ջանաց սուլթան Վիյասիտատին զայն վանել և ՚ի բաց մերժել, այլ աւանդ, դիւսող ժամանակը անցնելին յետոյ, դժուար եղաւ իւր տենչանաց համանել, և ջանքը անօդուաւ եղաւ:

ԳԼՈՒԽ Բ.

Թիմուրայ պարտութեամբ Ճեհուն գետը անցնին: — Նէխէալ բաղարին տիրեն, որ Գարիշի բերդ անունով հռչակաւոր է: — Պատահմանի իշխանին հետ մրաբանին:

Թիմուրայ աւարաւութենէ և յափշտակութենէ, չարութենէ և լիևասակարութենէ, այն կողմերը գտնուած աղքատ հպատակները, նեղութեան և տառապանաց մէջ էին, նորա նեղութիւնը և տառապանը բառնալու համար, վրան զօրաց գումարտակներ խրկուեցաւ, Թիմուր՝ երբ այս լեց, բարեկամոց հետ գէպ ՚ի Ճիհուն գետը դիմեց և աճապարանօք անցնելու գնաց, առատուածային սրանցելեօք միշեալ գետոյն հորդած և ալիքները ծալ ծալ գիզուած ժամանակին պատահեցաւ. Թիմուր բարեկամը ները ժողովելով պատուիրեց, որ իւրաքանչիւր որ փու-

(1) Կոչի և Պագան, և առ հինա Սագաստան, Աֆղանիստան աշխարհին գաւառաց մէկնէ:

թայ միանակ եւ թեթեւաբեռն երիվարով անցնիլ, եւ անցնելէն յետոյ, այն կողմը այս ինչ տեղ դարձեալ ժողովնն, որ ող և կորսուածը իմացուիք. այս ձեւով իւրաքանչւրոք իւր ձիոյն օքրոււցաւ եւ կոկրմիլոսի թեթեւածուածը նման այն վտանգաւոր գետէն, մահուան վտանգները տեսներով անցան, երբ նշանակեալ տեղը ժողովնեցան, Աստուածային յաջողութեամբ մէկին եւս փրնաս կամ պակասութիւն պատահած չէր : Այն կողմը թէպէտ և աղչաներէն և չարիքներէն աղատեցան, այլ այս կողմը վշասութեան հուրը բորբոքեցաւ՝ զի սկառ ժողովսւրդը աւարել և յափշտակել :

Ամբարհաւածն Թիմութք՝ օր մի իւր բարեկամներուն հետ խորհուրդոյ ատեան կազմելով ըստաւ, այս աւանին մէջ (1) Նէխչէպ քաղաքը գեղեցիկ բերդ մի, և ամուր քաղաք մի է, եթէ նուաճնեն հնարաւոր լինի՝ շատ գեղեցիկ պատապարան լինելու տեղ մի է, և եթէ կարելի լինի՝ նորա իշխանն Սուսայ սպանել և անոր ընչլց և հարստութեանց ակրել, մեր երիվարները եւ զէնքերը կը բազմանան, և մեր ուժը և զորութիւնը կ'ընդարձակի, և խոսք բացաւ թէ, դէպի ի բերդը եղած ջուրի ճանապարհէն, քաղաքը մանելու շատ գիւրին ճանապարհ մի գիտեմ, և փոքր ինչ վիճաբանութենէ յետոյ, ամենեքեան միասիրու և համակամ, ձիերնին դուքս թողին և գիշերուան մութին, յիշեալ ճանապարհէն քաղաքը մոտան, և իշխանին պալատը յարձակեցան, քաղաքին իշխանը՝ քաղաքէն դուրս այգիները և պարտիվները զննելու, զքսանաց եւ զուարձութեանց գնացեր եր, պալատը գտնուած մարդիկները կոտորեցին, կահ կարասիքը և զէնքերը աւարի առին, աեսածնին և գտածնին գրաւեցին, ինչը և ըստացուածը յափշտակեցին և կողովտեցին, եւ իշխանին ձիերը հեծան : Այս անակնիկալ դէպէր երբ քաղաքացիք իմացան, խուռն բաղմութեամբ ժողովրեալ իշխանին մարդ զրկեցին և պատահած դէպէր ծանուցին, անմիջապէս այն կողմէն օգնութիւն հասաւ, և դուռն դործեցին այն աւաղակները պաշարել սպանել և ցրուել. երբ Թիմութք

(1) Մերուուկ, Թոռ, ԴՊոր, Պար, Կոչ զաւ Նուկառայ :

բարեկամները, քաղաքացւոց այնքան բազմութիւնը եւ նոյա լանքը տեսան, երկրիս ընդարձակութիւնը իրենց գլխայն նեղ եկաւ . խելքելմին յափշտակուեցաւ և մրտքերնին ցնորեցաւ, մենք մեր ոսկովվ որոգայթը ինկանք կըսէին, երբ Թիմութք տեսան որ տակնապեալ և խոռվեալ վիճակի մէջ են՝ գոշեց, բարեկամիք, երկիւղի տեղչէ, այլքաջաց ասպարէզ և ձրից միցելու ժամանակի է, միաբանութիւնամբ և խուռն բաղմութիւնամբ քաղաքին դուռն յարձակիսէ, և սուսերամերկ կըսուց հրապարակը իջնեմք. մէր Ճակատուն և պատերազմին մէկը կարողութիւն չընի գիմադիք լինիլ, իսկոյն ամենեքեան միահազըն արիական գոշմամբ, և կիւցագնական շորժմամբ, դէպի ՚ի քաղաքին գուռը յարձակեցան, արդարեւ իրենց անօրէնութիւնը՝ բախտին համաձայն եղաւ, մէկը նոյա Ճակատուն չկարողացաւ գիմադիք լինիլ և պատերազմիլ, և այն վտանգէն այսօրինակ իրենց օձիկը աղատեցին : Յետ այնորիկ տակաւ առ տակաւ բաղգելնին բարձրանալով, բաղմութիւնին երեք հարիւր հոգիի հասաւ : Սոյա չարութիւնը և խոռվութիւն աշխարհք բռնելով, թագաւորի կողմէն գունդ մի զօրք խրկուեցաւ, որ զանոնք վանեն և ՚ի բաց հալածեն, այլ նորա եւս կոտորուելով, անարգութիւնամբ ետ գարձան : Թիմութք վառքը, բարձրութիւնը՝ և մեծութիւնը, մարդկանց միտքը պաշարեց : Եւ այս կերպով այն կողմէրը բռնութեամբ բերդ մի նրաւաճեց ամուր տեղ և ապաստանարան որոշեց՝ և ապա սկսաւ բռնութեամբ յափշտակած ժողովրդոց ինչը եւ հարստութիւնը, յիշեալ բերդը պահել :

Պատախան քաղաքին իշխանութիւնը, որդի ՚ի հօրէ ժառանգելով, երկու եղաքաք գահակցութեամբ տիբած և ժառանգած էին : Սուլման Նիւսէյին բռնութեամբ երկուսն եւս իշխանութիւնէ հեռացուց, և ապա դաշինք դրաւ որ իւր իշխանութեան և հրամանին տակ լինին, և որդիքը պատանդ առաւ, և նոյն երկրի իշխանութիւնը իրենց թողուց եւ հաստատեց, այս պատճառաւ նոքասութան Նիւսէյինէն ցաւած էին, Թիմութք նոյա դեսպան եւ դաշնագրեր խրկեց՝ և ուղեց որ իրեն հնազանդին :

նորա ընդունեցին, և պատասխան տուին որ, իրեն հետ
միասիրու և համակամ են:

ԳԼՈՒԽ Գ.

Մողլ ազգին Հերտիմի թագաւոր սուլթան Հիւսէյինի վրայ յառնելու—
թիմուրց Մողլաց սպարտապետին պատասխանոր զրին և դաշնակցին:—
Պահակէն ի՞նչպէս անցնին, և առվլան Հիւսէյինի զօրքը ի՞նչպէս խոր-
տակէն: — Արքապատի իշխան Ալի շիրին հետ դաշնակցին, և Պատափի
շանի կողմ էրթան:

631 Երբ սուլթան Հիւսէյին լսեց որ Մողլ ազգը արևելեան
կողմէն ապատամբութեան դրոշը պարզե՞ր՝ եւ իրեն հետ
մարտ և պատերազմ մղելու դիտաւորութեան վրայ է,
զօրքովով եղաւ, պատարազմի եւ պաշարաց պատրաս-
տաթեամբ իւր տեղէն չուեց և յիշեալ ցեղին վրայ գնաց:
Ճիշունէն անցաւ եւ երբ թշնամույն դէմ ճակատե-
ցաւ, բաղդին և ճակատադրին դատակիրով, թագաւո-
րին զօրքը խորտակաւեցան և փախան, սուլթան Հիւսէյին
կատարեալ սորջանօք յակամայից ետ դարձաւ: Սոյն կէ-
տին նենդաւորն Թիմուր Մողլաց սպարտապետ Գամար-
իստին խանին նամակ եւ պատգամաւոր խրկեց, ինքը
սուլթան Հիւսէյինի թշնամութեան մասին՝ միասիրու և
համամիտ է, և եթէ բարեկամութեան պէտք լինի իրենց
միանալը ուղեց. Գամարիստին ընդունեց, և այս մասին
միաբանութիւնն կազմեցին: Սոյա հնազնդութիւնն եւս
Թիմուրայ փառքը աւելցուց, և երկիւղը մարդկանց սիր-
ուր զարհութեցաւց, սուլթան Հիւսէյին հարկադրեցաւ սո-
ւա կենդանութիւնը բառնալը համար, բազմաթիւ դոր-
քեր ժողովը, և աճապարանօք Թիմուրայ վրայ երթալ.
օթեւանաց և իջնւանաց երկարութիւնը կարելով, վեր-
ջին օմեւաննին Գաղփա անուն տեղը եղաւ՝ և ուր վրան
ները կանգնեց. յիշեալ իջնւանը մէկ ժամ ընդարձակու-
թեամբ երկու բարձր լերանց մէջ տեղն էր, և մէջ տեղէն
դուռ և պահակ ունէր՝ երբ նոյն տեղը կը փակուէր, իր-
բեւ ամուր բերդի մի կը լինէր, եւ ուրիշ կողմէն ճանա-
պարհ գտնելն անկարելի էր, Պահակը բռնելու համար,

Թիմուրայ՝ եւ թագաւորի կողմէն փութանակի մարդիկ
ներ խրկուեցան, թագաւորի կողմէն յիշեալ տեղը դրա-
ւեցաւ, Թիմուր և իւր բարեկամները իրենց փափաքին
չհանելով, ուրիշ կողմ արդելուած մնացին: Սուլթան Հիւ-
սէյինի յիշեալ Պահակը գրաւելն, ելև մուտք փակելի և ամ-
բացնելն Թիմուրը անհանգիստ ըրաւ, բարեկամները ընկեր-
ները և իրեն հետևողները ժողովելով այսպէս մկան խօսիլ:
Ես այս կողմերս այնպիսի ճանապարհ մի գիտեմ որ ոչ թէ
մարդ, այլ և անսառուն և թռչուն անգամ թռած և ան-
ցած չէ, միայն թէ ճանապարհը դժուար և անցնիլը տա-
ժանելի է եթէ կարողանամք մեր ձիոց սանձը ձեռքերնիս
առնելով, գիշերուան մուլթին երթալ և թշնամին յան-
կարծակի կոմիել, յայտնի է թէ մեր բաղձանաց համեմատ
կամքերնիս կրկատարի, բոլորն ալ այս խօսքը ընդունեցին
և գովեցին, և անմիջապէս անտի մեկնեցան գիշերուան
մուլթին բիւրաւոր նեղութեամբ եւ տաժանելի աշխա-
տութեամբ գնացին, երբ մինչեւ առաւօտ սուլթան
Հիւսէյինի բանակը չկարացին ժամանել, շատ արտմեցան,
որովհետեւ ետ դառնալը անկարելի էր, ակամայ կամք
ճանապարհը շարունակեցին, հազիւ արեգակը ծագելուն՝
սուլթան Հիւսէյինի բանակը երեւեցաւ, մտածեցին ե-
թէ թագաւորը իմանսց, թէ Թիմուր և իւր բարեկամ-
ները այս աստիճան յոդնած և քնահատ են, իրենց վի-
ճակը ուրիշ կերպարանք պիտի առնու, ուստի այս ճա-
նապարհորդութեան վրայօք սորջանալով կ'ըսէին՝ մենք
մեր կամք փորձանաց որոդայթը ինկանք, նենդամիտն
Թիմուր երբ լսեց թէ զօրաց մէջ այսպիսի խօսքեր տա-
րածուած է, ըստ, ընկերը, այս տեղ երկիւղ կրելու բան
մի չկայ, բանակին մօտ տեղ մի սակաւ ինչ հանգստացէք,
և ձիերը արօտի թող տուեք. զօրքերը մեծ շնորհք հա-
մարեցին զայն՝ տեղ մի իջան և ձիերը արօտի թողով ի-
րենք քնացան: Երկու կողմի զօրաց հագուստը և զէնքե-
րը միակերպ էր, քանի որ սուլթան Հիւսէյինի զօրքերը
կ'երթեւիէին, զանոնք իրենցմէ կ'կարծէին, վասն որոյ ան-
հոգութեամբ մէկին հետն ալ չհակառակեցան:

Իսկ նորա սակաւ ինչ հանգստացան և զօրացան և



թշնամին այս կերպով խաքեցին, ապա իրենց երիշարները աշտանակեցին եւ շանթարձակ կայծակի օրոտմակը սուսերամերկ զինեալ յանկարծ բանակին վրայ յարձակեցին. թագաւորի զօրաց՝ օմանք ամեն կողմ ցիր ու ցանի ժախան, և տմանք մարտի եւ պատերազմի դաշտին մէջ կաթիլ մի ջրաց պապակեալ կարօտ մնացին, սուլթան Հիւսէյին երբ ասոնք իմացաւ՝ բոլոր բեռները և աղնաւ մաղնը իւր տեղը թողաց՝ և աճապարանօք Պալմի կողմ գնաց, և իւր զօրաց մնացէալները Թիմուրաց հետեւցան և նորա հրամանին հնագանդեցան :

Յետ այնորիկ, Թիմուր յանկոյս Ուդսոս գետոց երկիններուն տիրեց, բազում բերդերու եւ ամբոյներու տիր եղաւ, և Սըմրզանտի իշխան Ալի շիրին նամակ եւ պատգամաւոր իրկեց, և առաջարկեց որ տիրած երկիրներուն վիճակը ընկեր ընէ, և սուլթան Հիւսէյինի կողծանման մասին իրեն հետ միասիրու և համամիտ լինի, նայս պայմանաւ խոր նիզակակցութիւնը խոստացաւ եւ հրաւերը յարգելով Թիմուրաց կողմ գնաց, յանդիպման ատեն Թիմուր եւս գիմաւորեց և մեծայարդ պատուով ընդունեց, հակառակ ուխտից բան մի չփորձելու համար, երկու կողմէն երդում ըստին և միաբանութիւն կազմեցին:

Թիմուր՝ Ալի շիրին հետ միաբանութիւն կազմեցին յետոց, (Պատախշանի) կողմ գնաց, երբ նոյն սահմանը հասաւ, յիշեալ քաղաքը գահակցութեամբ թագաւորուով երկու եղանակը, զայն դիմաւորեցին, անգին եւ բաղման թիւ պարգեւներ և ընծաներ մատուցին և բաղմագունդ զօրքեր գումարեալ պարաստեցին, և անոր հետ սուլթան Հիւսէյինի դիտաւորութեամբ Պալմի կողմ գնացին, երբ յիշեալ երկիրը հասան, սուլթան Հիւսէյին նոցա ՚ի պատանդի եղած երկու որդիքը, առանց յանցանաց և մեղացանդթաբար սրով սպանեց, և որքան որ գուն գործեց Թիմուրը ՚ի բաց վանել չկարաց, զի ինքը տկար և ջրքը սակաւաթիւ գոլով, պարտեցաւ և գերի վարեցաւ, ինչքը և հարտառութիւնը Թիմուր գրաւեց, յետոց Պատախշանի թագաւորները իրենց տեղը իրկեց, և սուլթան Հիւսէյինը առաւ Սըմրզանու գնաց :

ԳԼՈՒԽ Դ.

Թիմուրաց թողթամիշ խանին հետ պատերազմին և — Աչյուս պիգբեյին պատահին : — Թուրքաստանի և Խոճինստի տիրը, — Եմրին ըրած ընորհին : — Ալի զրին սպանուումն : — Մըմրզանտի խոռվարաց բարձուումն : Ալմրզանտի երկիրն : — Երկու գետոց մէջ տեղն : — Պատախշան եւ խոռնաս քանը քններին :

Պատրքաստանի թագաւոր (1) թողթամիշ խանը՝ երբ սուլթան Հիւսէյինի դէպքը լսեց, նորա հետ ունեցած մերձաւորութեան և գրացնութեան պատճառաւ, բարիութեան և նախանձաւորութեան հուրը բորբոքեցաւ, զօրաժողով եղաւ՝ պատերազմի և Արշաւանաց պատրաստութեամբ մեխնեցաւ, և Թիմուրաց վրայ շուեց գնաց։ Խոճինտի և Սըմրզանտի մօտեցը, ձիհուն և (2) Ալիուն գետերուն մէջ տեղը Թիմուրաց հանդիպեցաւ, և երբ երկու կողմի զօրաց մէջ պատերազմի հուրը սկաւ բորբոքիլ յ Թիմուրաց զօրաց շատերը կոտորեցան, և իւր բաղկին ուժը և զօրութիւնը խորուակեցաւ :

Ալինցդեռ խռովին տագնասի մէջ էր, այն երկիրը նոր եկած Սէյխտ Պիգբէ անուն օտարական մի պատահեցաւ, և երբ Թիմուրաց մօտեցաւ, Թիմուր աղացելով ըստաւ, Ալտէր, մեր զօրաց շատերը կոտորեցան, թշնամին հզօր, և մեր բախտը տկար, օգնութեան, և յաջող ժամանակի պատեհութիւն շիմնաց. մեղի բարի աղօթքը մի ըստ, թերեւտ նոյն աղօթից օժանդակութեամբ՝ այս անգունդէն ազատինք : Սէյխտը մի՛ վախնար ըստաւ, և ան միջապէս ձիէն վար իջաւ, և գիտինէն ափ մի մանր խիճ առնելով, վերատին ձին հեծաւ, և անուքը եղած մանր խիճէրը թշնամւոյն դէմ ափուեց, ապատամբը փախաւ, այսինքն ոլ անձրեւ, շնորհը ըսէ ըսերով գեղեցիկ ձայն նուլ գոչեց, Թիմուր եւս Սէյխտին հետեւելով՝ աղազաւ

(1) Թուրքաց Վ.՝ Մէծոր գրի և Թագաւորն հիւսիսոյ Թողթամիշ անուն, տիրն Շնուաց և Ազմինի, որ նատէր ՚ի Սարաց մերձ ՚ի Ալիին . . . երես 13 :

(2) Գետ հիւսիսային, յ Արարացքոց, Ալի Ծերեա, (գուղն ծոլ) :

կեց, Թիմուրայ ցրուեալ զօրքերը, երբ այս ձայնը լսեցին սրտերնին ամբազնդեալ ամեներեան ժողովեցան, եւ կռուց տեղին դառնալով նորէն պատերազմի սկսան, և երբ բազմութեամբ միահազո՞ն թշնամոյն վրայ յարձաւ կեցան, Թոգֆամիշի զօրքերը դէմ կենալու եւ պատեարագելու ուժ և կարողութիւն չունենալով ցրուեցան. Թիմուր անփոց ետեւէն իյնալով շատերը անցադ սրցն կերակուր ըրաւ, նոցա ինչըք տոտոցուածքը և գրաստները աւարեց և յափշտակեց, աւագայնոց և գիմաւորաց շատերը գերի բռնեց: Այսօրինակ Թուքրաստանի և Խոճնտի երկիրներն նուածեց, և իւր իշխանութեան տակ առաւ յետոց Սրբութամատ դարձաւ:

Ա երսցգրեալ Եմրին կենասպրութեան մէջ իրարուանհամաձայն պատմութիւններ կան, ոմանք ըսած են թէ յեգիպատոս արիւն առնող կարիեգմասի մի էր, Սրբութամատ եկաւ և մինչդեռ Սէյխտութեան հետամտած էր երջան. կութեան յանդիպեցաւ, եւ ոմանք Մէ Վէրքէցի էր, ինչ և իցէ, յայնից Արտագետոց, և Խորասանու Երկիրներուն մէջ, մեծամեծ իշխաններէն մէկը եղաւ, եւ յաջողութեամբ բախտին, ըստ վերցգրելոցն, Թիմուրայ մերձաւոր և բարեկամ եղաւ, երբ Թիմուր ուզեց վիճքը Արշաւանց մէջ ջրջեցնել, Եմրիը Թիմուրայ աղացելով ըսաւ. ով Եմրի, Երկիրս վրայ երիւ պատուաւոր մզկիթները շատ կալուածներ ունի, ՚ի բազմաց Խորապանու աէրութեան մէջ եղած կալուածոց տիրելու, եկամտից և ծախտոց, շնութեանց և նորոգութեանց կարողութիւնն և կարելիութիւնն ունիմ, եթէ յարդւաց յորդի այս նուաստիս շընորհէք, իմ որդւաց բաժինը, երկու մզկիթաց կալուածոց մէջ, ասկէ առելի չէ, Թիմուր կալուած եղած գիւղերը իրենց պարագայներով հանդերձ նորհէց, և մինչեւ ցայսօր կարելի է թէ նորա սրդիքը և թոռունքը կը դառանդէն:

Պատախշանի իշխան Ալի շլրի և Թիմուրայ մէջ քանի մի իրաց համար, թշնամութիւն և ատելութիւն ծագեցաւ, ամեն մէկին ցեղ մի հետեւելով, քանի գնաց

թշնամութիւնը աւելցաւ. վերջապէս Ալի չի թիմուրայ նենդութեան թակարմը իյնալով, նորա հրավառ սրցն կերակուր եղաւ, և նորա իշխանութեան տակ եղած երկիրներն եւս անիրաւ Թիմուրը դրաւեց:

Աըմբդանս քաղաքին մէջ քանի մի ապականիջ և անօրէն անձնիք, պատուոց տէր մարդիկները կ'թշնամանէնն, այս վիասակարները յատուկ և հասարակ երկու ցեղ էնն, և երկուքն եւս իրարու հետ վազեմի թշնամութիւն տնելին, այլ պէտք եղած ատեն վարձեալ միմեանց օգնուան, և խուլութիւն յարուցանելու դաշնակից, Թիմուր հանապազրդ ասոնց խուլութենէ և վիասէն աղ զատ չէր մնար. Շատ անգամ մէկ կորմ հանապարհորդելով, իւր տեղը դրած փոխանորդին հակառակ կողմը գտնուելով, իշխանութիւնէ կը խէնն և կ'վերցնէնն, և երկիրը վրդովելէ չէնն դադարէր, Թիմուր՝ Արշաւանքէն դանապան կ'ողպէր, եւ մասնաւոր փոփոխութեամբ քաղաքը կ'բարեկարգէր, երբ դարձեալ մէկ կողմ կ'երաժապ, իրենց առաջին անզգամութիւնն յերեւան ածելով, խուլութեան և ապականութեան հուրը կ'բորբոքէնն, այսօրինակ սոցա գործը ինք անգամ հասաւ, որքան որ պատժուեցան և խորառուեցան, օգուտ մի չեղաւ, այն պիղծ խմբակն եղձման և ապականութեան համար մկան դաւաճանութիւն պատրաստէլ, և այսպէս սկսաւ պատրաստութեան, ինչպէս որ (1) Կէյքապատի որդի Նուշիրվան Մէկուէքի, և նորա աղահանաց ըրածէ, նոր ՚ի նորոյ պալատ մի կանգնել տուաւ՝ մէջը խորշ տեղեքը պահարաններ եւ գարաններ յօրինեց, և քաղաքին ընդհանուր ժողովուրդը կոչունքի հրաւիրեց, իւրաքանչիւր աղդի իրարութեանէ տեղեկութիւն չունենալու պայմանաւ, մէկ մէկ տեղ, և ամեն ցեղին առանձին օժարան մի որոշեց, յիշեալ անզգամաց որոշուած տեղւոցն, մէկ ծածուկ կողմը քանի մի քաջ գահիձներ դարանի դրաւ, և պատուիրէց որ, երբ նորա կուգան, մէկ մէկ սպանեաւ:

(1) Պատասաց որդին Խորով Նուշիրվան արքայ Պարսից, յաւառը Յուստիանոսի կայսէր Յունաց Ընդառաջակող Սասանեան հարստութեան և Տէս Պատ. Հայոց, Հատ. Բ. Երև 281.

ցէք, այս օրինակ որոշում տալէն զի՞նի, քաղաքին ժողով վուրդը տէսակը տեսակին և ցեղը ցեղին հետ նոր պարագաներեց ։ նորա եւս հնաղանդելով եկան, ուտելէն և ըմբելէն յետոյ խիլանէր կ'հագնեին և կ'հանգըստանային, եւ իրենց համար որոշեալ տեղը կ'երթային ։ երբ յիշեալ սրիկաները եկան, դարձեալ ըստ օրինի մեծամեծ պատուով և մեծարանօր յարդեց, մինչ զի իւր ձեռքը շատերուն բաժակներ մատուցանելով, կատարել լսակս անհոգացուց և սրտերնին ապահովցուց, ուտելէն և ըմբելէն յետոյ, խիլանէր հագցուց և քանի որ մէկ մէկ յիշեալ տեղը կ'խրկէր, դարանի մոտած դահիճները կ'ըսպանէին և կ'թաղէին, լրանալուն, ժաղալը ցրուեց, եւ երբ իւրաքանչիւր ոք իւր տեղը դարձաւ, գործը իմացուցաւ ։ Այս աւաղակաց կորստեամբ, նոյն երկրին Թիշ մուր առանց արգելքի և նեղութեան ալիրեց :

Յայտնի է թէ, յայնկայս Ոգտոս գետոցն մեծամեծ քաղաքներէն մին ալ Սրմրդանսն է, յառաջադցյն նորա գառառներէն, Զըլաթայի հաշուցն համեմատ, ինը Թուրման (իւրաքանչիւր Թուրմանը տառը հազար հոգի է) պատերազմական զօրք ունենալու պատիւն ունիէր՝ պէտք եղած ատեն կ'ժողովիչին, պատմագիրները կ'պատմեն թէ՝ յետոյ եօթը թուրմանի իջու ։ այս քաղաքը պատուաւոր և անուանի տեղերէն մին է՝ պատմագրաց ունաց կարծեաց համեմատ, արտաքին բերդը տասն երկու փարսախի չափ (իւրաքանչիւր փարսախը մէկ ժամ և մէկ քառորդ է), շըլապատ հեռաւորութիւն ունիր ։ Այս քաղաքէն կէս օթեւան հեռի տեղ մի, Թիմուր նոր քաղաք մի շնուր տառվ, անունը Գամանկոս դրաւ, Սրմրդանսի ժողովուրդը իւրենց ինչը ստացուածքը և աղխամազնը նոր քաղաքը փոխադրեցին և անդ բնակեցան ։ Կըպատմեն թէ, մինչեւ ցայսօր հին Սրմրդանսի մէջ, Քաղդիացւոց գրավ տղեալ դրամ եւ գենար կը գտնուի, որով աղքաները կը շահուին ։

Մէկն ալ կյլեք խանի մայրաքաղաքը Սէրդինան է՝ որ քարոզաց կարգէն ուղղութեան առաջնորդ վախճան նեալ Պիհայի խոտմնը երկու աղաք և Տակաց աշխարհները եղած լայնածաւալ միշտն ։ որ հին մատենագիրը կը կոչեն աշխարհ (յարեւմուղղին) ։

(1) Ի բան կամ Արան, է աշխարհն Պարսից, մինչեւ ՚ի ծանուցեալ կովկասային և Արեաց, Հնդկաց և Չինաց աշխարհները եղած լայնածաւալ միշտն ։ որ հին մատենագիրը կը կոչեն Արմաքան (յարեւմուղղին) ։

(2) Իսկ Թուրման՝ Ալի-թիֆ, (յարեւմուղղին), ընդարձակ տապարէզ թափառաց ։ որ մատենագիրը մէր կոչեն աշխարհ Քուազնաց և Հնաց, ուրց գէմ բաղնագիրի մարտս մըեցին նախնի Պարսիկը ։ Այս է հին Թուրման աշխարհն, որ այժմ կոչեն աղաս Թաթարը ։ Թերեւս այս իրան Թուրման աղաքի ։ Ա. Վ. Եղիշէ, որ իւր պատմութեան մէջ կը կոչէ Նըրան և Տամերան աղաք և անարեաց, աւս Ցուշիք, Հաս . Բ. Երևան 578 : Եղիշէ, երես 17-41 :

դրբը և կարողութիւնը աւելցնելու համար, Մողը կոր
մէն ամուսնացաւ, փեսայութեան մերձաւորութեամբ՝
յիշեալ ազգին հետ միաւորութեան համար, Մողը
թագաւոր սուլթան Գամեր խոտինի դուստրը կին առաւ,
և նոյն ազգին հոգէն ազատեցաւ, և ապա յաղթութեան,
և ջինկիդ խանի ազգին հետ միաւորութեան պատճառաւ,
դանոնք իրեն պաշտպան և թիկունք ունենալով, գնաց (1)
Խուարզիմի երկիրը նուածել և փութաց նորա թագաւ
որ Սոֆի սուլթան Հիւսէ յինի թագաւորութիւնը բառ
նալ: Յիշեալ երկրին մեծամեծ քաղաքներէն մին՝ ձերձանն
էր, և ասոր նման դեռ քանի քանի մեծամեծ քաղաքներ
ունէր, աղբիւր խամար իմաստնոց, և աղբերակն հերձեալ
արանց, այսինքն՝ բնակարան ուղղափառաց և իրենց ցան
կութեան հետեւողաց: Ժողովուրդը՝ Ալմրդանսի բնա
կիներէն՝ փափիակեաց. և շարժմոնկընի չնաշարհիկ էր,
մանաւանդ՝ նուագածական գիտութեան մէջ ամենայն
մարդկանց յաղթաղ էին, պտուղները առատ, աղբիւրնե
րը և ջրերը շատ, քաղաքները և գիւղերը իրարու մօտ.
օդը մաքուր, և գեղեցիկները ցանկալի նահանդ մի էր:
Բունաւորն Թիմուր գնաց՝ և իւր խսկական դիտաւորու
թիւնը՝ որ սուլթան Հիւսէ յինն էր, զարմանք է որ նա և ս
պատերազմի գնացած, ներկայ չգտնուեցաւ, չընկաները
այրեց, քանդեց, կողովուեց՝ աւարեց և ետ դարյաւ:

Ամբարտաւանն Թիմուր՝ անդամ մի եւս սուլթան
Հիւսէ յինի վրայ յարձակելու, և Խուարզիմի երկիրը նը
ւածելու դիտաւորութեամբ, բազմութեամբ զօրաց գր
նաց, և կատարեալ զօրութեամբ մեծամեծ չանքեր ըրաւ
յիշեալ երկրը նուածել, այս անդամ եւս սուլթան Հիւ
սէ յինը ներկայ չգտնուելով՝ ձերձան քաղաքը պաշարեց,
ճանապարհները փակեց, և պատճենները արգիլեց: Առև
թան Հիւսէ յինի բարեկամներէն, Հիւսէ յին Արտինն ա
նուն բարեբախտ վաճառական մի՝ որ ժամանակին պատա
հարաց հանդիպեր, ջերմը և ցուրտը գիտէր՝ և աշխալ
հիս շատ քաղաքները շրջէր և տեսէր էր, Թիմուրաց բախ
դին դիմեց, աղաջեց և միջնորդ եղաւ որ հաշտութիւն

(1) Կոչե և Խարեզմ (Գրազմիս) Թաթարիստանի Խիլա զաւառն է:

խօսի, Թիմուր՝ որոշում տուաւ որ ջորիի մը բեռ գրամակ
հաշտութիւն ընէ. նա՝ դարձեալ նորա գթութեան դի-
մեց միջնորդութեամբ և թափանձանօք յիշեալ ստակին
քառորդ մասով գործը լրացուց, և նոյն գրամը խւր գան-
ձէն տաղով, Խալամաց ստացուածքը և հոգին նորա բրու-
նաւոր ձեռքէն աղատեց, Թիմուր նոյն դրամը տուաւ, և
այսքանով բաւականացեալ՝ ետ դարձաւ:

Հերամի թագաւոր Ղիյասիստիմին՝ որ յառաջադոյն
Թիմուրաց կենդանութեան պատճառ, ՚ի կախաղանէ և ՚ի
տանջանքէ աղատութեան առիթ եղած էր, Թիմուր ա-
հարկութեամբ գրուած նամակ խրկեց, և ծանոյց որ ըն-
ծայ և նուէր, ծառաներ և աղախիններ խրկէ և հրա-
մանին հնագաներ լինի, եթէ ոչ, կուգամ տունդ և երկիրդ
կ'կործաննեմ և զքեզ ՚ի կորուստ կ'մատնեմ: Յիշեալ նա-
մակը երբ հասաւ իրեն՝ տուած ծանը և խիստ պատաս-
խանին մէջ կ'ըսէ, զքեզ ՚ի կախաղանէ և ՚ի տանջանաց
աղատեցի, և իմ յառուկ ծառաներուս խմբին մէջ քեզ
յատկութիւն տալով՝ նախարարացս մէջ երեւելի ըրած
էի, չարութեամբ և անդգամնութեամբ. Աստուծոյ սուրբ
անունէն չվախնալով, ժողովուրդը կոտորեցիր, և քաղաք-
ները կործանեցիր, բաց յայսմանէ՝ առանց պատկառելու
մեջ հետ այս օրինակ արհամարհանօք կըլարուիս, եթէ
չնորհաց յարդը գիտցող մարդ ես, գոնէ որոշում տուր
դալ եւ հաւատարիմ լինի: Այս խօսքերէն Թիմուրաց
բարկութեան հուրը բորբոքեցաւ, և ձիհուն գետը ան-
ցաւ, Ղիյասիստիմի վրայ յարձակեցաւ, և իրեւ երկ-
նացին պատիժ Հերամթ քաղաքին վրայ գիշեր ատեն ինկաւ-
Ղիյասիստիմի՝ որ ճակատելու եւ պատերազմելու կարո-
ղութիւն չունէր, քաղաքը՝ և շընկայ այգիները և պար-
տէները, և աղբատաց տուները խոր խրամով ամրացուց
և ինքը ներքին բերդը նատաւ. նա՝ այսպիսի մարդ մի էր,
որ նախատեսութիւն եւ խելք չունէր, և գործոյն վախ-
ճանը չէր մտածէր, և կարծեց թէ, այսքան պատրաս-
տութեամբ Թիմուրաց պատծոյ Ճիրաններէն կ'աղատի.
ուստի անհոգ կեցաւ: Թիմուր՝ մարտի և պատերազմի
փոյթ չուարտաւ, միայն ըրս կողմի ճանապարհաց ել եւ

մռւար փակեց և բանալցութիւնը կարեց, մի միայն իր նամ կապաւ պաշտելու և նեղելու, եւ ինքը ուրախութեամբ նստաւ։ Պաշտեալ մեծամեծք և փոքրունք, առ քառք և մեծասունք ՚ի պատճառս սովորն և նուազութեան, հաւասար վիճակի մէջ էին։ Ըագաւորին պաշտօնեայները և ծառաները տառապեալը և արտմեալը, յակամացից անձնատուր լինելու համար՝ Թիմուրայ հաշտարար իրկեցին, եւ նախկին բարեկամութիւնը ՚ի յուշ ածին, եւ ստոցդ անձնատուր լինելու համար հաւատարսութեան երդումն պահանջեցին։ Թիմուր նախկին բարեկամութիւնը պահեց, և երդմամբ հաւատարմացուց և պայման դրաւ որ, Վիյասիամի արիւնը չժափուի։ Այս դաշնեքավ՝ Վիյասիամին բերդէն իջու և Թիմուրայ առջեւ գնաց, յետ հանդիպման երկուքը ՚ի միասին քաղաք մտան, և թագաւորական պալատը գնացին։ Սյն միջացին Ներաթի զրքը ՚ի պաշտօն ծառայութեան կոցին։ Վիյասիամին մարդիներէն մին անոր ակ նարկեց որ, Թիմուրը անմիջապէս նյն ժողովն մէջ յան կարծակի սպանէ, նա՝ կարծեց որ, գուցէ այս գործէն իրեն վնաս մի կ'հանի, ջնդունեց, իւր սոսացուածքը եւ հոգին, այլոց փրկութեան և ուրախութեան համար ջրփոխարինեց, և յակամացից գործը ծածկելով Թիմուրայ բռնութեան սրոգայթը մատնուեցաւ։

Վախճանեալ հօր՝ յառաջագոյն տուած խրատները յիշեց և սորջանաց կրակներավ այրեցաւ և տուղրեցաւ, և ճակատագրին հնազանգեցաւ։ Այս կերպով, Թիմուր՝ Ներաթի երկիրը կողմ կողմ գրաւեց և ախեց և իշխաններ կացցց։

Խորասանուա տւաններէն Խուաֆ անուն աւանին մեծամեծ շէյխէրէն Շէյխ Զէյխ Զէյխտամին ապու Պէրիր անուն շէյխին համբաւը լաեց, որ կատարեալ բարեգործ և առաքինի, յոյժնապէս հրաշագործ և մեծամեծ երկիրներու տէր էր, և նորա այցելութեան գնաց, երբ նորա գալուստը շէյխին ծանուցին, երբէք խօսք մի չարտասանեց և ջնօսեցաւ, Թիմուր եկաւ, և փութաց նորա ոտքը համբուրել, շէյխը իւր օր հնեւալ ձեւքը Թիմուրայ թիկմունքը դրաւ, և քաղց-

րութեամբ վարուեցաւ, ապա Թիմուր գլուխը վերցուց և շէյխին դարձաւ ըստաւ, ինչու ժամանակիս թագաւորաց չէք պատուիրէր որ արդարութիւն և գթութիւն ընեն, և Աստուծոյ ժողովաւրդը չնեղին եւ չարչարին, շէյխը պատասխանեց, պատուիրէցիր և ճանապարհը ցոց տուիր նոքա անսաստ գտեալ չպահեցին, վաօն որոյ անմաց վրայ բռնացար, Թիմուր՝ շէյխին այս խօսքը ընդ հեծուկս ինքեան համարեց, և աշխարհակալ լինելուն վրայ մեկնելով, ուրախութեամբ շէյխին ատեանէն մեկնեցաւ։ Թիմուր կ'սպատմէր թէ՝ ժողովին մէջ, երբ շէյխը ձեռքը թիկունքս դրաւ, որպէս թէ՝ երկինք և երկիր իրար կ'մի անային, և ես մէջ տէղը ձմկուելու և խմոր դառնալու աստիճան վիշտ կրեցի և նեղուեցայ։

Յետ այսպիկ սուլթան Վիյասիամինը առնելով Արմբրունատ գնաց։ Յառաջագոյն ըրած երդումը պահելու համար, երբ Արմբրանատ հասան, զայն քաղցի և սովոր տառապանօք կենաց պարենէն անցուացցոց։

Թիմուր՝ որ յառաջագոյն աւագակութեամբ բռնըւած, և Սամիստանի մէջ անարդանք կրած էր՝ նորա վրեժը առնելու գնաց։ Սամիստանի երկիրը տուժից և վնասուց հուրը բորբոքեց, բնակիչը հաշութեան և խաղաղութեան աղաջանօք գիմաւորեցին, ներելու և գթալու պաղատանօք, ջանացին նորա բարկութեան հուրը շիջուցնել, Թիմուր՝ հաճեցաւ և խնայեց, սա պայմանաւ որ բորբոքերը յանձնեն, նորա բոլոր զէնքերնին կրելով Թիմուրայ առջեւ բերին, եւ երգում ընել տուաւ որ, մարափ և պատերազմի գործիքներէն գաղտնի և ծածուկ տեղերը պահուած բան մի չմնայ. Երբ ասու գութեանը վերահասու եղաւ, ապա մեծին և փարբին չմնայելով առ հասարակ կոտորեց, և այն աստիճան փոյթ տարաւ երկիրը կործանել որ ծառի և քարի անուն, տանց և բնակ կութեանց հետք չմնայ. Ինչպէս որ, Առաջին Դագմանցի Զագմագլյէ գործոցը, Քիրմանցի Ապու էլ Ֆալթի Մէհէմմէտի որդի շէյխ Զէյխտամին Ապախւլաթիքը վախճանեալ պատմագրին պատմած է թէ՝ անօրէն Թիմուրէն ազատող Սամիստանի ժողովուրդը, իրենց վրայ

իջած սաստիկ պատիժ և պատուհասէն, ուրբարի օրերը կորսնցուցին, ապա Քիրման մարդ խրիելով, գործը անտի ստուգեցին:

ԳԼՈՒԽ Զ.

Թիմուրց Շիրաղ երթազն: — Շիրաղ Աշխաբին հետ առասկիլ: — Կապ Աճէմի թագաւոր շահ Շէճային հետ թղթակիլ: — Շահին գործերն: — Թագաւորութիւնը իւր որդւոց բաժնել:

Սուվայցը Թիմուրայ (1) Շիրաղի կողմ երթան, երբ իրադ Աճէմի թագաւոր շահ Շէճային, Շիրաղ եղող Հասան ձեփի վէվիրը լաց, որ անգութ Թիմուրայ հարուածոց և բռնութեանց դէմ դնելու՝ զօրութիւն և կարողութիւն չուներ, առ հարկին փութաց ընծայներալ դիմաւորել, և գնաց հնազանդութիւն յայսնելով, իւր իշխանութիւնը հաստատեց: Յայսնի է թէ՝ Թիմուրայ միշտընքնաւոր սովորութիւնը այս էր՝ որ ուղեւորութեան և արշաւանաց օտարութեան և պանդիստութեան մէջ, հիւր եղած տան տիրոջ անունը, հանգամանկը, սերունագը, մակ անունը կ'հարցնէր և մատքը կ'պահէր, և կ'պատուիրէր, եթէ տէրութեանս և թագաւորութեանս ժամանակին լուրը առնես և քրխ գաս, դքեզ կ'պատուեմ, և դու փափաքիդ կ'հասնի: Երբ այս օրինակ ամենուն վրայ բռնացաւ, թագաւորութեամբ և իշխանութեամբ անունը եւ համբաւը չորս կողմ տարածուեցաւ, ամեն կողմէն զանտզան ազգեր որ կ'երթային, և կ'հանդիսէին իւր խոստմոնքը կատարելով կ'պատուէր և կ'մեծարէր, և իւրաքանչյւրն իւր բաւականութեան եւ աստիճանին համեմատ կ'յարգեր: Նմանապէս երբ համբաւաւոր, և ըստ կարծեաց աղքատ մէկին լուրը կ'առնէր, նորա այցելութեան կ'փութար:

Ինչպէս որ Շիրաղի մէջ Աշխատութեան հետամուտ, Սէր ապահաւ՝ մակ անունով, Սէյս Մէհէմմէտ անուն անձ մի կար, և Սէր Ապտալիյէ անուն հռչակաւոր ցեղ մի եւս անոր հետեւած էր: Այս կմիրը երբ Թիմուրայ ներ-

(1) Հին թրդաբազր ՚ Ֆարսիան, կամ ՚ Լարիան:

կայացաւ, Թիմուր ոտքի կայնեցաւ, և նորա ձեռքը մեր մելով պատուեց, և իւր քովը մեղ ցուցնելով մեծարեց, ապա խօսակցութեան ատեն ըստ, Ավ Տէր խորասան աշխարհին նուաճումը ինչ կերպով կարելի է, և այս երբ խորհրդակցելու ժամբով հարցուց, Էմիլը պատասխանեց թէ, ես աղքատ մարդ մի եմ, այսպիսի խորհրդակցութիւն և խօսակցութիւն իմ գործս չէ, եւ այս մասին խօսք խօսելու կարողութիւն չունիմ, յիրաւի (1) չէրլիք եմ, այլ այս գժուարին գործերան և թագաւորական իրաց միջամտելու ակար եմ, թագաւորաց գործերուն մոտալ, կրակին ձեռք երկարցնել է, Թիմուր չընդունեց և աղաչելով ըստ, դու խմացականութիւն ունիս, այս գործին մէջ ինձ առաջնորդ, և փափաքիս համելու ուղեկից պիտի լինիս: Պատասխանեց չէյսը, “Արդ՝ խօսքիդ հետեւելով, եթէ այս գործոցն մէջ իմ խորհուրդներս կը լսես, և եթէ Խորասանու մողավորոց քեզ հնազանդելը, և նորա իշխանաց և նախարարաց հպատակիլը կուղես, Առ ՚ սո Թուսայի որդի խոճայ Ալին այս աշխարհին մեծը և ազգին ցեղագետն է, և ամենեքեան նորա գատաղութեան հետեւած, և հրամանին հնազանդած են, եթէ այն քեզ օգնական եւ ձեռնոտու լինի մարդ չակառակիր, նորա արտաքին կերպարանքը ներքին մարդոցն համաձայն մարդ մի է, եթէ ձեզի հետ միասիրտ և համամիտ լինի, ձեր կաքը տեղը կ'հասնի, իսկ եթէ ձեղ հակառակ գտնուի, ուրիշներէն շահ մի չլինիր, վասն զի՞ այս աշխարհիս ժողովուրդը տնող խօսքին կապուած և նորա հրամանին (2) հետեւած են: Յիշեալ չէյսը, թէսկէտ և (3) Շիշի աղանդէն է, և յանուն տասն երկու խմամից (5) Խութպէ կը կարդայ, սակայն ժաղովորոց աշքին ահարկու եւ փառաւոր է, անոր նախակ գրէ եւ ձեր հնազանդութեան հրամիրէ, եթէ սիրով ընդունի եւ հետեւի, յարգէ եւ մեծարէ որ անոր եղած պատիւը եւ մեծարանքը գարձեալ բողոքն ալ քու թագաւորութեանդ կ'վե-

(1) Առոք կամ մարդաբէին ցեղէն:

(2) Պարսից կոմին է:

(3) Ուրբաթ օրը մէկիմէի մէջ կարգացուած հանդիսաւոր աղօթքն է, զուն մէջ թագաւորի մասնուն ալ կ'լին:

ու ուրեմն՝ լսելով, խօսքը վերջացուց : և երբ իւր տունը գարձաւ, խիզն խոճայ Ալիսին նամակ գրեց, և Թիմուրայ հետ տեղի ունեցած խօսքը ըստ պատմեց, և պատուի ըեց թէ, երբ Թիմուրայ մարդը ձեզի դոց պէտք է որ անյապալ նորա հրաւիրանաց հնազանդիք : Այս նամակը լուսացին հասաւ, և կաստաբելապէս գոհ և շնորհակալ եղաւ, և Թիմուրայ երթալու և հանդիպելու համար՝ ընծայ և նուեր պատրաստեց, և նորա անուան Խութպէ կարդալ և դրամ հատանել տուաւ, և Թիմուրայ մարդուն գալստեան սպասեց, քանի մի օր անցնելին յետոյ Թիմուրայ մարդը բարեկամական նամաւ հասաւ, տողը ածիմաստին մէջ սէր և բարեկամութիւն յայանելով, զինքը հրաւիրէր էր, նոյն կետին տեղին չուեց, Թիմուրայ հրաւիրանաց հնազանդելավ, նորա կողմէ գնաց, երբ նորա գուցուտեան լուրը Թիմուրայ հասաւ, գոհ և շնորհակալ եղաւ և տէրութեան պաշտօնեայները իրիկեց որ դոցն զիմաւորեն, հանդիպման ատեն, մեծամեծ պատուով մեծարեց և ծանրագին խիզայիւք փառաւորեց, յետոյ իւր երկրին իշխանութիւնը իրեն առւաւ, նա հաճութեամբ սրաի և ուրախութեամբ ետ գարձաւ : Եւ նորա միջնորդութեամբ յայնկայս Ագսոս գեասց բոլոր իշխանները, էմիլի Մէհէմմէտ իշխանը և մեծ իշխանը՝ այլովքն հանդերձ եկան և մէկ մէկ իրենց հնազանդութիւնը յայանեցին : Այս կերպով Թիմուրայ փառքը և մեծութիւնը՝ ի ծագաւշաբնի հռչակեցաւ, անուան և համբաւոյն դղբումը, Վաղանտարանի, Կիլանի, Աէ քաղաքի, Ասրպատականի, Իրագ Արապի, և Աճէմի կողմերը հասաւ, ելքը եւ բարձրանալը ամենեցուն յայսնի եղաւ :

Ժանտաժուտն Թիմուր, Խորասանու աշխարհին իւր կամքին համեմատ տիրելին՝ և հակառակութեան տրոտ մութիւնը փարատելին յետոյ, Նիրազի թագաւոր՝ եւ (1) իրագ Աճէմի շահ եղող շահ Շէճային նամակ և դեսպան խրիեց, և իւր նամակը այս օրինակ գրած էր, անըսկի կիզընական թագաւորն թագաւորաց, կենդանի, կենդանար և անվախճան, անօրէն իշխանաց և ամբարիչտ

(1) Հաճանդ Մորաց, և Պարսից ամէն գուտուներէն զլսաւորն է :

թագաւորաց վրայ, այս իւր ծառայն խրիեր է, և լած էք թէ ինձ հնազանդովներուն և հպատակովներուն վրայ երջանիկ գրուս և բախտու, հզօր և յաղթական ըրեր է : Արդեմէ գլուխդ փառք և երջանիկութիւն ունիս, ընծայ և նուերնէր պատրաստելով իրիկ, ինձ հպատակ և հրովարտակիս հնազանդ լինին քեզ բարիք և պատիւ գիտցիք, եմէ ոչ ծովու ալեւաց նման գումարտակը կուգամ, երկիրդ յաւեր և յապականութիւն կ'գարձնեմ եւ զքեզ սաստիկ պատուհամներու կ'մատնեմ, իմ այն կողմ գալը առանց երկրսցութեան, երկրին աւերման պատճառ, եւ աղքատ հպատակաց տառապանաց առիթ կ'լինի, մեղքը քեզ կ'վերաբերի, և յանցաները քեզ կ'պատկանի, նամակը երբեմն փափաքը գրգռելով, և երբեմն երկիրդ տալով լուսաւ իրիեց :

Եահ Շէճային նամակը կարգաց և իմացաւ թէ բնչ աստիճանն անիրաւ և անպատճառ է, հաշտութեան եւ խաղաղութեան կողմ հակելով՝ փոյթ տարաւ, անօր վրանամները բառնուու համեղ խօսքերով եւ բարեկամական նազաներներով պատասխան տալին յետոյ, խոստացաւ որ իւր բարեկախտ գուտարը Թիմուրայ որդւոյն հետ ամսւանացնէ : Այն օրինակ հուշութեան և խողաղութեան սակին յարգ տողով, նորա չորիներէն և վեսաններէն ազտեցաւ, այլ հարմանախօսութեան գործոյն համար իրակուած մարդկանց ատութեամբը, ամնւանութեան գործը հաստատուեցաւ, այլ բարեկամութիւնը և հաւատարմութիւնը ամնւր լինելով, շարունակ իրարու դեսպաններ նուերներ և ընծաներ երթեւեկելէ չգադրեցաւ : Ապա շահ Շէճայի որքան որ կենդանի էր, Թիմուրայ հետ քաղըրութեամբ վարուեցաւ, բարեկամութիւն եւ սէր ցոյց տարով, իւր ժամանակը խաղաղութեամբ և անդորրութեամբ անցուց :

Այս Շահը գիտնական և առաքինի դասերու լուծիչ, պատմիչ և քերմով, ազնիւ և շնաշնարհիկ թագաւոր մի էր, նոյն ժամանակին օրէնսդիրաց և քերմովաց անուանին էր : Ինքը Մէհէմմէտ Մուղաֆֆէր անուն, ցեղի մի սկզբն օրգին էր . հայրը Գարաչսարը (1) Եզասի

(1) Գարսիստանի սահմանին մէջ զլսաւոր քաղաք մի է :

Երկրին անապատը բնակող, հրշակաւոր և քաջութեամբ անուանի գործունեայ և քաջափորձ պէջ մի էր: Երբեմն Շիրավի և Եզտի մէջ տեղը Արագ ցեղէն Խիֆաճայի վրանսաքնակներէն ձէմալ Լուք անուն աւազակ մի երեւեցաւ, և կատզած շան պէս աւազակութեամբ Խլամաց վնասներ կուտար, թագաւորը և Երկիրը անձեռնհաս է ին զայն բռնել և արժանաւոր պատիմը տալ, յիշեալ Եմիրը յանկարծակի այս աւազակն վրայ յարձակեցաւ, և պէս պէս կունեներէն եւ պատերազմէն յետոյ՝ սպանեց, և հատեալ գլուխը Շիրազբերելով թագաւորին հանդի պեցաւ, թագաւորը զայն պատուեց և մեծարեց և ապա իւր ծառայութեան մէջ գնելով՝ գիւղեր և ագարակներ չնորհեց, այս կերպով իւր ընկերաց մէջ երեւելի հանդիսացաւ և մեծամեծ նախարարներէն մին եղաւ: Բախդի և ճակատագրի գատակնքով Շիրազի թագաւորը հիւանդացաւ, որովհետեւ թագաւորութիւնը և տէրսութիւնը կասափարելու կարող զաւակ չուներ, յիշեալ Միր Մէհմէտը գահաժառանդ ընարեց, մեռնելին յետոյ, առանց խոռվութեան Շիրավի և նորին նահանգաց անկախ թագաւոր եղաւ: Այս իշխանը՝ շահ Մուզաֆֆէր, շահ Մահմուտ, և շահ Շէճայի անուն երեք որդիք ուներ, ամեն մէկը կատարեալ իշխան և կառավարութեան կարող մարդիկ էին, եւ առանձին պաշտօններով պատուեցան: միայն շահ Մուզաֆֆէր, հօրը կենդանութեան ատեն մեռաւ, և նորա պաշտօնով որդին շահ Մահմուտ ուրախացաւ:

Յետ այնորիկ Երկիրի և թագաւորութեան վէճերով, հօր և որդւոյ մէջ Երկարաւակութեան և խոռվութեան հուրը վառեցաւ, և կ'փութային իրար սպանել և կորուսանել, վերջապէս հակառակութիւնը և վէճը՝ կոռուի և պատերազմի փոխուեցաւ, շահ Շէճայի և իւր հայր Մէհմէտը, իրարու վրայ դրբ համեցին և երբ սկսան ճակատիլ և պատերազմիլ, շահ Շէճայի կողմը յաղթեց, և հայրական իրաւանց շուք չդնելով, հայրը բռնեց և աչքերը հրացեալ Երկաթով կուրացուց, և թագաւորութիւնը իրեն սեպհականեց, յետ այնորիկ փոխ առեւել

կնոք, և արագահաս պատմօք, շահ Շէճայի ինքն Եւս հիւանդացաւ, և երբ իւր մահը ստուգեց՝ իւր որդւոյ և եղաօր որդւոց տէրութիւնը բամէնեց: Զէյն իւլ Ապիստին որդւոյն՝ Շիրազը, շահ Մէհմէմէտ միւս որդւոյն՝ Քիրմանի Երկիրը, և եղաօր որդի շահ Եահեային՝ Եզտի Երկիրը, և շահ Մահմուրին՝ Ասպահանը, որոշեց՝ և պաշտմնին յայսնեց, կուկագիր գրեց և վիայիւք հասաւ տեց: կուկը և նորա պահպանութիւնը Թիմուրայ յանձնեց: Յետոյ շահ Մահմուրի և Զէյն իւլ Ապիստինի մէջ ատելութիւն և թշնամութիւն ծագեցաւ, Երկարաւակութեան և կութեան և խոռվութեան հուրը արծարծեցաւ. և հուսկութիւննին մարտի և պատերազմի հասաւ: Պատերազմի մէջ՝ շահ Մահմուր յաղթով գտեալ Զէյն իւլ Ապիստինը բռնեց և հրացեալ Երկաթով աչքերը կուրացուց, և Շիրազը եւս գրաւեց: Երբ Թիմուր՝ նորա հօր Եղաօր հետ տեղի ունեցած հակառակութիւնը՝ տաելութեան և գրգռութեան առիմ տաւող շարժմունը ըլ լսեց, վրէժ խնդիր վնելու դիտաւորութեամբ դիւղով ժամանակի պատահ ման սպասեց:

ԳԼՈՒԽ Ե.

Թիմուրայ Երարդ անդամ՝ Խուարդիմ Երթան: — Վահառականին միջնորդութիւնն ընկունելն: — Սուլթան Հիւսէյինի դարձն: — Վահառականին և որդւոյն մահն: — Թիմուրայ չըրրագ մեղամ խուարդիմ Երթան: — Սուլթան Հիւսէյինը սպանելն: — Մազանտարանի Վէլի շահ: և Խպուհիմ շահ Գմի իշխանաց իրկան նախակերպն: — Շահ Վէլի պատերազմի և Խորսականն: Թիմուրայ զօրաց: Ազգու Պէրի Սամանիի, Աշխատ Այս Քիւրուիի, և Խւմբէթ Թիմբէնիի հետ ունեցած գէպքէրն:

Թիմուր զօրամողավ եղաւ և Արշաւանաց պատրաստութեամբ Աստրապատի Ճանապարհէն Խուարդիմի Երկիրը գնաց, օթեւանները եւ իշեւանները կորելով, յիշեալ Երկիրը հասաւ, և ուզած տեղը վրանները կանգնելով բանակեցաւ: Զարմանիք՝ որ Երկրին թագաւորը դարձեալ ներկայ չպանուելով, նախայիշատակեալ Հասան Միւրինձ զայն դիմաւորեց, և իւր ընծայները մատոյց,

Երբ երկրին վիճակին և հոգառակաց որդիսութեան վլրայօք խօսակցութիւն եղաւ, Թիմուր իւր կամաց ինչ լինիլը յայտնեց, վաճառ ականը քաղցրութեամբ աղաջւով լով լսաւ, երկրին կապող և արձակող տէրը, տակառին ներկայ չէ, և եթէ անոր բայցակայութեանը իշխան կարդէք, թէ և երկրին ժողովուրդը հաճութիւն ցոյց կուտայ, ձեզ ծառացեն և ձեք իշխանութիւնը հաւանութեամբ կ'ընդունի, և ձեք հրովարտակին հրու և հնագանդ կ'լինի: Ատկայն երբ երկրին թագաւորը գայ, անտարակյու մարտի և պատերազմի հուրը պիտի բորբոքի, և նուաստիս եւս վնասներ և նեղութիւններ պիտի լինի, բաց յոցմանէ՝ յայտնի է թէ, այսքան Աստուծոյ փողովուրդը ոտնակոխ պիտի լինի, և շատ մարդիկ ՚ի կորուսո պիտի մասնուին, այժմ եթէ Հիւսէյին Խօֆին ձեր կողմաննէ փոխանորդ համարէք աղքատաց և անանկաց գրթութիւն ընէք, պատուաւոր մարդկանց պատիւը պաշտոննեք, մեծ վարձուց և բազում բարութեանց արժանիք կ'լինիք: Այսպէս երբեմն խրատելով և երբեմն աղաջւով և Թիմուրյաց սիրով շուելով, գեղեցիկ խօսքեր բրաւ, Թիմուր մեղմացաւ, միջնորդութիւնը և աղաջանքը ընդունեց, և առանց պատիժ եւ շարիք հայցնելու, ետքարձաւ: Նա այս օրինակ ճամբու դրուեցաւ, և սուլիման Հիւսէյինն եւս իւր տեղը վերադարձաւ:

Յիշեալ Հասանին մէկ անժառանդ որդին սկսաւ սուլիման Հիւսէյինը բամբառէլ, և ատելութեամբ նորա վլրայ խօսիլ, և խօսքերը բոլոր քաղաքացւոց մէջ տարածուեցաւ, և քանի որ մարդկանց բերանը յածեալ կ'խօսուէր՝ խղճակի վաճառական Հասան հայրը, թագաւորին համար ըրած ծառայութեանց, և Թիմուրը ետ դարձրնելու մասին ըրած տնօրինութեանց հաւատարով, որդւոյն երիտասարդական շարժմանց անփյոթ եղաւ, և կ'ըսէր թէ երիտասարդի խօսք՝ և պատուաւոր մարդու յանցանք է, թագաւորը այսպիսի առասպել խօսքերով զմեզ չմշնամաներ, երթալով այս խօսակցութիւնը թագաւորին ականջը հասաւ, բարութեան փոխարէն շարիքներ հատոց, բարեկամութեան իրաւունքը և ծառապանք:

որէնքը չարպեց, հայրը և որդին գլուխնին բաց, տոքերնին բոկ, ձեռքերնին կապած, սաստիկ հարուածներով տանջելին յետոյ, թունաւոր սրով սպանեց, տուները և բնակութիւնները կործանեց, ինչքը և տուացուածքը անիրաւութեամբ յափշտակեց:

Այս անցուսալի դրից, եւ անարժան գործոյն, Աստուծոյ նախանձը անգամ շտանելով, Սօֆի Հիւսէյին և շատ շտեւեց ատանջանաց տունը և հատուցման ատեանդ գնաց, այսինքն իւր օրհասով մեռաւ. և իւր որդին Սօֆի Սուստուֆ՝ արքայական գահով փառաւորեցաւ: Յիշեալ Սօֆի Հիւսէյին՝ անհամեմատ յորդիս մարդկան, և ամենէն գեղեցիկ, ծագիտէ անուն մէկ դուստրը, Թիմուրայ որդի Ճիհանկիրի հետ ամունացած էր, սոցա սերունդէն սուլթան Մէհմեմէտ անուն նշանաւոր որդին ծնաւ. որ պարկեշտ խելացի նախատես, և կրթեալ, փառաց և թագաւորութեան արժանի, քաջազուն երիտասարդ մի էր. և Թիմուր միշտ հաճութեան աչօք կ'նայէր, և սիրունդէն ամասնկաւ իւր գաւակին աւելի կ'յարդէր, ուստի ամենէն վեր դասեց և գահաժառանդ ընտրեց, սակայն բախտը չ'օդնելով՝ Յունաց աշխարհը Ագ չէհիր քաղաքը իւր բնական մահուամբ մեռաւ, որ Աստուծով մի առմի պատմութիւնը իւր տեղը պիտի լիշենք:

Մինչդեռ Թիմուր՝ Սօֆի սուլթան Հիւսէյինի հետ այս օրինակ մերձաւորութեան եւ վիեսայութեան բարեկամութիւն ունէր, երբ վաճառական Հասանին դէսպրէ և առանց յանցանաց անոր ըրած անիրաւութիւնը և տանջանքը, շատ դժուարը եկաւ, բարկութեան և սրամտութեան հուրը բորբոքեցաւ, և չորրորդ անգամ խուարզմամբ արշաւելով՝ այն աշխարհը նուածեց. Սօֆի Սուստուֆը անողորմ սրոյն կերակուր ըրաւ, տունը և տեղը կործանեց, քարի և աղիւսի նշով չթողողւց, այս երկիրն եւս առնելով, իւր կողմէն նոր իշխան կարգեց, վերցուելու կարելի եղած ինչքը եւ հարսաւութիւնը ՚ի Արմրզանդ կրել տուաւ: Այս երկրին նուաճման թուականը պահանջմանը բարեկամութեան իրաւունքը, որ 773 (1373) թուին պատմացաւ:

Հետ չեն չափուիր, Խրագայ զօրքը պատերազմով և մարտնչող, ձիալսրծ և նկալակաշարժ են, թագաւորի բնուարութիւն և առիւծի կերպարանք ունին՝ նոյա քաջութիւնը անուանի և զօրութիւնը աշխարհիս մէջ միտւած է։ Նահ Վէլին սուլթան Ահմէտին այս մնութի խօսքերէն բարկացաւ, և երբ խմացաւ թէ՛ շահ Նէջային և Խարսիմ Գըմին՝ անհոգացեալ ձեւնուու չեղան, և լաւ համարեցին կառավարութեան սանձը Թիմուրայ յանձնել, հաշտութեան եւ խաղաղութեան որոշում տալ, յոյժ արտօնեցաւ և լիտացաւ, և այսովէս աներեւութեավէօ յանդիմանական ձեւով պատասխան տուաւ, եթէ բարձրեցն Աստուծոյ օգնութիւնը ինձ ընկեր, և բախտս ինձ ձեւնուու լինի, քաջապմնդ գոտեւորեալ Թիմուրայ հետ անդամ մի պիտի ճակատիմ, և եթէ կարողանամ հզօր և յաղթող լինիլ մէկ մէկ ձեր վայ պիտի գամ, և ձեր երկիրը այրելով և քանդելով աշխարհս ձեր գլուխն նեղ և անձուկ պիտի ընեմ. իսկ եթէ հոգի կամաց համեմատ չնեց Թիմուրայ պատիմը պիտի հանդանայ և մէկ մէկ ձեզի եւս պիտի հանի: Յետ այնօրիկ բախտին հաւանելով Թիմուրայ գէմ ճակատելու և պատերազմելու համար, արիութեան գոտին ածեալ գնաց, երբ երկու կողմի զօրքը իրարու գէմ ճակատեցան, և յառաջապահ հեծելագունդը պատերազմիլ սկսաւ շահ Վէլին զօրքը մինալով գիմադիր լինիլ անմիջապէս խորակեցան. Թէ՛ պէտ և շահ Վէլի իւր գիտաւորութեան վրայ հաստատուն իննալով, սակաւ ինչ եւս պատերազմեցաւ, այլ իւր զօրաց անհաւատարմութիւնը և տկարութիւնը, և Թիմուրայ զօրքը բազմութիւնը և շաստութիւնը տեսնելով, որքան որ վեր իւր գիտաւորութեան վրայ հաստատուն իննալով, սակաւ ինչ եւս պատերազմեցաւ, այլ այն վատն եւս Թիմուրայ երկիւզէն օգնութիւն չնելով սպանեց, և հատեալ գլուխը Թիմուրայ իրկեց:

Վպատմնն թէ՛ ամբարհաւած Թիմուրայ բախտին սակալ յաջողութիւն գտնալու օրէն, մինչեւ իւր վերջն

Մաղանստարանի (1) աշխարհը, շահ Վէլիի, խպրահիմ Գըմիի, և Խոկէնտէր ձիլսրին նման անուանի նաւ խարարաց իշխանութեան տակն էր. Թիմուր երբ Խուար զիմէն դառնալով, Խորասան հասաւ, շահ Վէլիին եւ Խարահիմ Գըմիին աշխարկութեամբ գրուած նամակներ եւ զետպաններ խրկելով ծանոց, իւր հնագանդութեան և հաստակութեան հրաւիրեց, ասաւ թէ՛ ոչ պատրաստ ինին. Խորահիմ Գըմի յակամայից հնագանդութիւնը եւ նորա հրաւէրը ընդունելով՝ պատուիսաննեց, իսկ շահ Վէլի թէ՛ թշնամութիւն եւ ատելութիւն յայտնելով՝ պատառ խանելու յետոյ, Խրագ Ահմէմի եւ Քիմանի թագուոր շահ Նէջային, (2) Խրագայ և Ատրպատականի թագուոր սոր, սուլթան Ահմէտ ձիլսրիբին նումակ գրեց և մորդիկներ խրկեց. նամակոց մէջ, Թիմուրայ հետ ունեցած խօսքերը նշանակելին յետոյ՝ կ'ըսէր, ամենէն աւելի՝ Թիմուրը կ'բաց վաց վանելու ջանադիր կ'լինիմ, եթէ հզօր եւ յաղթող գտնուիմ, գուք եւս ձեր աէրութեան և երկրին մէջ հանգիստ կ'լինիք, ինձ հասած արտմութիւնը և ուրախութիւնը ձեզի ևս կ'համափ, վերջապէս եթէ խորհրդ և այս կոյր կարիքին աղետոց և չարիքներէն աղատելու համար ինձ օգնութիւն լինէք, նորհիւ բարձրելոցն Աստուծոյ, նուտասոս բաւական կ'լինիմ, քաղաքները և ժողովուրդը նորա չարութեանէ և տարականութեանէ կ'աշգատեմ, եթէ հպարտութեամբ ինձ օգնութիւն շնէք, գրացնոյն մորուքը սափրուած աւենող անձը՝ իւր մորուքը թրջելով՝ սափրու տալու պատրաստ մօղ լինի, որ իրեն ալ նոյն պատմը պիտի պատահի: Սակայն շահ Նէջայի ասիի, յառաջ իշխուածին համեմատ, Թիմուրոյ հետ հաշտութիւն ըրած գտնուելով, նորա նամակն երբէք կարեւ գորութիւն չուուաւ: Այլ սուլթան Ահմէտ՝ Թիմուրը յիշելով, այս օրինակ հպարտութեամբ պատասխան գրեց, Այն վասարտախտ կազը՝ ինչ կարելի է որ՝ իրաւու երեւակցէ, Խրագայ քաջերը, Խորասանու քաջաց

(1) Կոչ և Տաղասոսն, Պարսկաստանի երեւել նահանգներն մէկն է:

(2) Հնա Քաջեւացոց և Ասորոց Երկիրը, Բարելն մայրաբարան, որ այժմ կոչ Պաղտասա, և իւր հահանգներով կոչ Խրագի:

կեանքը, միայն երեք անձանց ձեռքեն ձանձրացած և տղլ կարացած էր՝ և նոյա աղէտքը բառնալու տրտմած եւ տարակուսած էր: Մէկը Մազանուարանի գիւղերէն Սարմանի անուն գիւղի բնակիչներէն՝ Ապու Պէքիրն էր՝ որ պատերազմի ասպարիզի մէջ քանի քանի անգամ առ իւծի նման Զղաթայի զօրքը խորտակելով ցիր ու ցան ըրած էր, լեռները և երեմն դաշտերը բնակելով, պիտանի և քաջ մարդկանց հետ բնակութիւն հաստատեր էր՝ քանի որ դիպող ժամանակ կ'գտնէր, Թիմուրայ զօրքը կ'որսար, և կոտորելով անհանդիստ կ'ընէր, այս կերպով Զղաթայի զօրքը անոր վեաներէն շարունակ ազատ չէին: որ մի բազմութեամբ վրան յարձակեցան նեղ և անցուկ կրծի մը մէջ միայնակ պաշտեցին: նա զօրաց բազմութեամը նայելով փախուստէն ուրիշ ճար մի չգտաւ, և մինչ փախչելու տեղ կ'որոնէր, դէմը ութը կանգուն լսյն խրամ մի ելաւ, անկէ ուրիշ փախչելու տեղ չկար՝ անմիջապէս ձիէն իջաւ, և այնքան զինուք և զարհիսք, նոյն խրամը դիւցաղնաբար ցաթիեց անցաւ, եւ ընկերացը հարնելով, թշնամիյէն ուղածին պէս լրէժ առաւ: սակայն յետոյ չմացուեցաւ թէ՝ անյաջող հողմով որ կողմը գնաց, և վիճակը նըր կայացաւ: Մին եւս Աէյիտ Ավի քիւրտին, որ Քիւֆէի իշխանն էր, երբ Թիմուր Պազտատի տիրեց, գնաց անսպատ, լեռնոտ և քարուտ տեղերը բնակեցաւ, քաջազուն կորիձներով ջանակը և աշխոյժ բարեկամներով, կ'իջեւանէր եւ կ'ըռէր, քանի որ պատեհ ժամանակ դտնար, Թիմուրոյ ոջարաց հօտը և անսանոց ջոկը կ'աւարէր և կ'յափշուակէր, եւ ձեռքը ինկած մարդիկները ուստի պատժով կ'սպանանէր և կ'տանջէր, Թիմուրոյ կենդանութեամը, նա միշտ այսպիսի դործով զբաղեցաւ: Մին եւս իւմմէժ Թիւրքմէնին էր, Սա⁽¹⁾ Գարապազի թուրքերէն գոլով, իւր երկու որդւովը Թիմուրայ սրտմն մեծ վլբք մի եղած էր, Թիմուրայ որդի կմիր Խնշահին հետ, որ Թաւրիզի իշխանն էր, շատ պատերազմներ ըրած, կրկին և վերստին անգամ Զղաթայի զօրքը կոտու

բած էր՝ և աշխարհս իրենց գլխուն նեղ, և կմիր Խնշահը անհանգիստ ըրած էր: վերջապէս իւր ազգականներէն քսու մարդ մի՛ Զղաթայի զօրաց առաջնորդ եղու, եւ յանկարծակի դայն կոխել տալով՝ սպանանել տուաւ:

ԳԼՈՒԽ Բ.

Թիմուրայ՝ կրտ Ամեմ Երթալն: — Հահ Մանսուրի հետ ըրած պատերազմն: — Մանսուրի քաջութիւններն: — Զօրաց նենգութիւնն: խորսութիւնն: — Եւ իւր մահն: — Թիմուրայ՝ Ասպահան քաղաքին ըրած բռնութիւնն: — Ըստհանուր կոտորածի հրամանն: — Մանկանց երիվայց սահմարի լինին:

Պարսից աշխարհին թագաւոր՝ շահ Շէճայի մեռնելին յետոյ, իւր որդւոց և թոռանց մէջ խորովութեան հուրը բորբոքեցաւ, և նոյա գործոյն վախճանը, պատերազմի հարուածի և կոտորածի հասաւ: Հահ Մանսուր ամենեցուն յաղթեց, և աէրութիւնը ժառանգելով ուրախացաւ: Յառաջագոյն պատմութեան ընթացից մէջ գրուածին համեմատ, շահ Շէճային կոտակգրոյն մէջ Թիմուրոյ հակողութիւնը նշանակուած էր, շահ Մանսուր երբ իմացաւ թէ, իւր հօր եղօր որդի Զէյն իւլ Ապիսիւնի ըրած ատելութիւնը պատճառ, եւ թշնամութեան գիսաւոր առիթ ըրած է՝ իւր մերձաւոր ազգականաց մարդիկներ խրկեց, և իւրաքանչիւրոց օգնութիւնը եւ ձեռնետուութիւնը խնդրեց, և պահանջեց որ այս պատիքը բառնալու համար, կարելի եղածին չափ, թէ գրամով և թէ մարդով՝ իրեն օգնեն: Ամենելքան բարկութեամբ և կատաղութեամբ, ոչ թէ օգնութիւն, թերբեւս թշնամութեամբ պատասխաննեցին և իւրաքանչիւր ոք սկսու պատրաստի՝ իւր երկիրը և ժողովարդը պահապահով լինի: շահ Մանսուր՝ երբ նոյա օգնութիւնէ և ձեռընտութիւնէ յոյը կորեց, իւր քաղաքը ամբացուց, կողմ կողմ քաջ պատերազմող պահապահ զօրքեր կացուց, եւ երբ տէրութեան նախարարները իմացան թէ ինքը անձամբ դիտաւորութիւն ունի երկու հազարի չափ հեծե-

(1) Աիւնեաց աշխարհն է:

լազորօք Թիմուրայ դէմ երթալ, խկոյն շահին պալատը երթալով խորհրդոյ ատեսն կաղմեցին, եւ այս օրինակ սկսան խօսիլ, դիցուք թէ Թիմուրայ դէմ գնացիք, եւ պատերազմը յարդարելով գուն դործեցիք մեծամեծ ջանիւք թշնամին վանելու, սակայն մենք մեր զօրաց վրաց վստահութիւն չունիմք. եթէ կեղծաւոր մարդկիներէն ու մանք, անօրէնութեամբ և դաւաձանութեամբ Թիմուրայ կողմ անցնեն, մնացեալ զօրօք՝ Թիմուրայ հազարաւոր և բիւրաւոր զօրաց, և Զղաթայի յափշտակիներուն, բնիչ պէս կարելի է դէմ կինալ, և զանոնք 'ի բայց վտարել, սորա վախճանը, ամենեքեանիք նոցա բոցավառ սրցն կերակուր, և կամ անօրէն թշնամւոյն ձեռքը կապեալ գերիներ չ'պիսի լինիմք, մարդ մի թշնամւոյն ձեռքը իննաւ լին յետոյ, սորդանալը օգուտ ընէր, այսպիսի յորդորներով խրատեցին, և խօսքերնին վերջացուցին։ Շահ Ման սուր՝ լախտին ձեռք կարիառելով լսաւ, այս լախտը թողոյն մարդոյն գլուխը ցրուէ և ուղեղը գուրս հանէ, որ Թիմուրայ դէմ կինալէն և պատերազմըն երես դարձրնէ, եթէ պատերազմի եւ մաքառման դաշտին մէջ ես միայնսկ մնամ, Ճիդ կ'թափեմ և կ'պատերազմիմ, կամ սիրելի յաղթութեամբ փափաքիս հասնելով թշնամին վրէժա կ'առնեմ, և կամ ուխտիս վրայ մեռնելով, վստութեան անարդութիւնէ կ'աղատիմ. ինձ նուաստ մահը, Թիմուրայ հպատակին գերազանց է, ինձմէ վերջը մընացողներուն փոյթ չունիմ լսաւ, և վճռեց և պերճութեամբ հրամայեց որ վճռողական հրովարտակը ելլայ։

Այս արտամառիթ դէպէր այսպէս եւս կ'պատմեն թէ, շահ Մանսուր՝ երբ լսեց թէ Թիմուր շարժեր և իւր վրայ կուգայ, իւր ընտիր զօրաց շատերը, իւր իշխանութեան տակ եղած բերդերուն և ամրոցներուն պահպանութեան խրկեց, միայն Եիրազի գործունեայ փորձ եւ հմուտ զօրքերը ժողովելով խորհրդոց ատեան կազմեց, և այսպէս մկան խօսիլ, Թիմուր զօրաւոր թշնամի և բըռնաւոր հպատակը կ'արդար մի է, սորա վեամները բառնալու, ուղիղ անօրէնութեան եւ վառվուն մտաց կարօտ է. Եիրազի պահպան զօրքերը խրկելէն, և ամեն կողմ միր

կամաց համեմատ ամրացնելին յետոյ, մաս մի թշնամին որսացող քաջերով անձամբ դուրս կ'ելլամբ, և թշնամին յառաջ և յետուտստ, յաջմէ և յահէկի կ'պատեմբ, ծառուայները և անաստները կաւարեմբ, և կ'յափշտակիմբ, սապարաց և ջրերուն ձամբաները կ'կարեմբ, նոցա ձանապարհը և անց ու դարձը փակելով, կ'ջանամբ զանոնք տաղոկացնել, նոքա կախին իրենց հոգւոյն փրկութեան զբաղվէ. Եիրազի և կամ մեր ուրիշբերդերուն վիսաս չեն կրնար տար. երբ այս ընթացքով շարժիմբ, յայտնի է թէ՝ նոքա պիտի տկարանան և իրենց փափաքին չղիտի հասնին. Աստուծով նեղութեան ժամանակը քառ ասուն օրէն աւելի չուեր: Արդ՝ ովքաջերը, պատերազմի դաշտին և կռուց ասպարիզի մէջ ամենեքեանիրդ արիամիրտ եւ եւ ունդուն ասիւծներ եք, յոսս և վստահութիւնս ձեր վրայ է, թշնամին վանելու զորութիւն և կարողութիւն ունիմբ. ձեզ բնիչու Աստուծոյ ժողովուրդը, ձեր տունը և ընտանիքը, ինչը և սուսպառածքը պիտի պահպանէք, չնորհի բարձրելոյն Աստուծոյ այս չարիքները բարձուելին յետոյ, ձեր ամենեցուն առատ սարգեւներս և անզայժման տուքերիս պէտք է որ լինի, զձեղ մէծահամբաւ Աստուծոյ մէծութեանը յանձնեցի: Այսպիսի քաջալերութեան առիթ և իրախուսանաց պատճառ թագաւորական պատուելուներով կ'իրամներով զօրաց միաբը զօրացուց, եւ քաղաքէն գտարս ելլալու պատրաստութեան մկան, այս անօրէնութեամբ իւր սպատրաստութիւնը տեսաւ, և բաւականի շափ պիտանի զօրքերով իւր ձին աշտանակեց, երբ քաղաքին գուռը հասաւ՝ ՚ի կանանց Պարսից լիտի անամօթ ջատուկ կին մի Պարսկերէն լեղուտսւ լի հայհոյութեամբ աղաղտկեց և ըսաւ, ու ոչը այս անգութ անօրէնը, այսքան ժամանակ մեր ընչեց և հոգւոյն ափեց, այժմ քարը գլխոյն նեղ եկաւ, այսպիտի նեղութեան օրերը և դառն ժամանակին զմեղ առիւծուց բերանը և կարճաց ձիրանները ձգելով կերթայ, քաջաց զէնքերը իրեն անարժան լինի, և իւր ցանկութեան և տեհանաց չհամնի: Երբ դարշելի պառաւին այս խօսքերը շահ Մանսուրի ականջը հասաւ, ձեռքերը

և ոսքերը գողաց՝ և խելքը ցնորեցաւ, եւ երիտասարդական եռանդով ձիուն գլուխը քաշեց, իւր տեղը անշորժ կեցաւ, ուխտ եւ երդում ըրաւ՝ որ իւր երկրին պահպանութենէ մի չշնչնչ և մի հսդի չմնկնի և չհեռանայ, երթաղը թողուց՝ եւ քաղաքին պահպանութեան կանգնեցաւ:

Յետ այնորին՝ երբ Թիմուր եկաւ և Նիրազի բոլոր ոկրք իջաւ, և սկսաւ պաշարելու պատրաստութիւն տեսնալ: Նահ Մանսուր՝ պատրաստութիւները կարգադրեց, և զօրաց յառաջապահները յաջը և ահեակը, Գայլ անուանեալ գունդը՝ և պոշաւորները աւգածին պէս զարդարեց և յարդարեց ապա թշնամւոյն դէմ ելաւ, և սկըսու մարդ գնել և պատերազմի, և գիւցազնաբար հարկանել և կրաորել: Մինչդեռ թշնամւոյն կողմը անդամ անդամ տիարացնելու և խորակելու վրայ էր, իւր զօրաց մէջ, Խորասանու զօրքերէն՝ Զէմիտամինի որդի Մէհմէտ անուն վասարախտ նենդաւորը, որ իսկ և իսկ Թիմուրայ հետ ծածռէկ համաշնչութիւն և միաբանութիւն ունեցած էր, պատերազմի ոսաստկութեան առեն՝ մինչդեռ իրարու հոգի առնելու տալու վրայ էին, յիշեալ Խորասանցի Մէհմէտը կեղծաւորեալ, մաս մի նենդաւորներու հետ վրանները կործանեցին, և երբ շահ Մանսուրը թողով, Թիմուրայ կողմը անցան, զօրաց կեսէն աւելին այն աւազակին հետեւելով՝ Թիմուրայ կողմ գնացին. այս անցուսալի դործը շահ Մանսուրը ապշեցուց, արտմութեան և խորհոգոց խորերուն մէջ ընկղմեց. սակայն այսքան տկար և վհատեալ զօրքերով, դարձեալ պատերազմէն և կոտորածէն չդադարեցաւ, վհատութիւն և պակասութիւն չյայտնեց, կողմ կողմ առիւծաբար կ'յարձակեր և դիւցանաբար կ'նիզախէր, այսպէս պատերազմի ասպարիզէն չհեռացաւ, և թշնամւոյն մազի չափ առ կարութիւն ցոյց շառաւաւ: Առաւտօնէն մինչեւ երեկոյ այս օրինակ թշնամին վանելաւ գուն գործեց, եւ անհամար ջանքեր ըրաւ. երբ գիշերուան մութը հասաւ, որ բարեկամը թշնամիէն չեր որոշուէր, իւրաքանչիւր որ իւր որունը և բնակութիւնը դարձաւ:

Կայն գիշերը՝ շահ Մանսուր տեսակ մի պատրաստութիւն եւս ըրաւ. քուրձի մի մէջ կոտրած կամացի բեկորներ, և քիչ մի զանգակի նման բաներ ժողովական կամաց կուտած մատակ ձիու մի պոչը կապեց և Թիմուրայ բանակը քշեց, այն զարհութելի շփոթութենէ և ահա բեկ աղաղակներէն և խովովութենէ, թշնամւոյն բանտեր ահապին ազմուկ մի բնկաւ, մարդ մարդու վիճակը և ինչ պատահիլ չին գիտեր, բանակին բազմութիւնը կարծեց որ թշնամին կոխեց, ազմկեցան և շփոթեցան, և սկսան իրար կոտրել, գրասոր՝ ձիք և ջորիք խորանները և հովանոցները ոտնակրիս ըրին, միայն երկիւղէն և տագնապէն՝ շատերուն լեզնին պատառեցաւ, և գրեթէ վլրջն դատապատճնին օրինակին եր, շահ Մանսուր բանակին եզերը դտածը կ'սպանանէր և կ'գերէր, և շատերը շղթայի կը զարներ, այն մուժ գիշերուան մէջ տասր հազար զօրք Զղաթաներէն՝ ՚ի առւր մաշեցան, երբ առաւտօնէան երկեցից պայծառ ջանք՝ գիշերուան խաւարը փարատեց, անմիտ Թիմուրը ինչ բանի հանդիպիլը չգիտնալով, դարձեալ փայթ տարաւ շահ Մանսուրը պաշարէլ: Նահ Մանսուր արիւթեամբ ամբացեալ՝ իւր տկար վիճակին և մարդ կոնց սակաւութեանը շնայելով՝ առաւտօնէան իւր օդաչունժոգը աշտանակից և (1) հինգ հարիւրի չափ քաջ պատերազմականներ ընտրելով, պատերազմի դաշտը ձիավարեց եւ կայծակի նման որոտաց, ես եմ՝ շահ Մանսուր, ով որդիքը որդ, և կինը այրի ընել կուզէ, թող դէմ ելաց լսաւ, և քաջութեամբ ձայնը բարձրացուց, յաջ և յահեակ աղատօրէն յարձակմաք եւ գիւցազնաբար խիզախմամբ թշնամին ովհարաց հօտի նման քշեց, է որ ձիէն վար տապակեց, է որ բոցավառ որով մարմնոյն կալ և հրդէհեց, և մինչեւ Թիմուրայ մատ տեղերը հասաւ, Թիմուր երկիւղէն չկրնալով կենալ, կանանց խմբին մէջ պահուեցաւ, Մանսուր երբ գէս այն կողմը ձիավարեց, կանայք աղաղակ բարձն, քանի որ քոյ թշնամին մարդ կանց մէջ է, մի թէ քաջութիւն է կանանց մէջ մոնալ, որոնածդ ուրիշ կողմ է ըսելով՝ շահ Մանսուրի դէմքը:

(1) Քումայ Վ, Մէծորեցի գնէ 800 զօրօք, երես 12:

դարձուցին, և Թաթարոց կողմ խրկեցին, այն քաջազու նը հաւատաց և վիրաւորեալ առիւծի նման յաջ և ահեակ չնայելով, այն անզգամաց խարեյութեամբ՝ չարագործ Թաթարաց մէջ ինկաւ, ամեն կողմէն Զղաթայի ցրդերը և միջմանց նման Թաթարները գլուխու հաւաքեցան, ու մանք սրաժամից նետերով և ոմանք թերաքամեալ սուրերով անշարժթողուցին, նաև բախտին և ձակատագրին դատակին քոյն խանարհեցաւ, և որբան կարելի էր երբեմն նետիւ և երբեմն սրով, եթ հեարից կիմոգրէր, և իւր նժցդը աւքացելով և խածնելով թշնամիներէն մարդ չէր մօտեցը նէր. վերջապէս ամեն կողմէն լիճակը փոփոխեցաւ և խո նարհեցաւ, և բաց յայօբան նեղութենէ և յաջատութենէ, ծառաւութեան տադհամը զինքը թաղկացուց և տկարացուց, և բաժակ մի ջոյ միջոց չգտնալով՝ յակամայից դէպ ի մէկ կողմ ուղեւորեցաւ, և ինքզմէրը դիա կանց մէջ ձգելով ծածկեցաւ:

Այս պատերազմին մէջ նախարարներէն Թէլէքքիլ անուն էմիրը, իւր ուխասին վրայ նահատակեցաւ. Ֆայ խարիստին անուն իշխանը՝ եօմանասուն վերքով ազատեցաւ, և բննասուն տարի ապրելով՝ իւր բնական մահ ուամբ մեռաւ: Մանաւրի բանակին և նորա բազկին խորտակման վրայ Թիմուր զուարթացաւ, և նորա հոգէն անկասիած լինելու համար միաբր ննկաւ որ զայն որոնէ, և չորս կողմը հետազոտել առաւ, որքան որ նորա կեն դանութիւնը և մեռելութիւնը որոնեցին, ոչ ոք կարաց նորա կենդանութենէ և մեռելութենէ տեղեկութիւն տալ: Մանաւր՝ այն թշւառութեամբ մինչեւ ինքը նք ծածկեց ծածկած էր, մութ գիշերն և լու վերահասաւ, և իւրաքանչիւր ոք իւր տեղը և բնակարանը գնաց: Զղաթայի չարակամերէն մէկ վատին ճանապարհը՝ Մանաւրի վրայ պատահելով, այն վատաբախտին գթութեամնը դիմէց, և իւր գալոնիքը յայտնեց, և ալէսպէս պարգեւներ խոսացաւ, և կանիթիկ լինելու պայմանաւ, իւր մասին մատացաւ, և սակաւ ինչ ագամանդ տալով աղաչեց՝ որ զինքը իւր բարեկամաց հասցնէ. այն գարշելի դեւը՝ և լուցիկ գեհէն հրոյն երբէք մարդասիրութիւն չընելով,

իւրեւ երինացին պատաիծ ձիէն վար իջաւ, և անմիջապէս այն տարաբախդը նահատակեց, և հատեալ գլուխը Թիւմուրայ առջեւ բերաւ, և շահ Մանաւրի հետ պատա, հած արկածքը պատմեց, Թիմաւր՝ միկողը չհաւատացաց, յետոյ երբ ստուգելով ճշմարտութեան վերահասու եղաւ, այն անզգամ աներեւոյթ դեւը սաստիկ տանջելէն և վուժինդիր սրավ սպանելէն յետոյ հրաման խրկեց, և երկիրը ունեցած տունը և տեղը կարծանեց, բարեկամները մերձաւորները, որդիքը և կանացքը բնաջնջ կոտորել տուաւ:

Յետ այնպիկ, ոյս յաղթութեան յաղթանակը՝ շահ Մանաւրի քաջութիւնը, նորա յանդգնութեան եւ համարձակութեան պատմութիւնը, և այս պատերազմին մէջ պատահած զօրայ գործերը, և հաստատութիւնը՝ մի առ մի յիշելով՝ կատարեալ և ընդարձակ պատմութեամբ դրել տուաւ, և իւր իշխանութեան տակ եղած երկիրները՝ յաղթական նամակներ խրկեց: Այս կերպով ֆարսի և իրագ Աճէմի երկիրներուն տէր եղաւ:

Կահ Շէճային ազգակինաց, և ուրիշ այն կողմի թագաւորաց՝ շողզօրմթ նամակներ գրեց, մեծն և փաքքին միրուք բժշկեց, և երբ Շիրազ արքայանիատ քաղսոքը մըտաւ, մունետիվներ կանչել տուաւ թէ, ամենան ինսոյ տուած է, անհատ մի անհատը չպատի վկացինէ, և անցեալ գատերը չպատի վարուին, որով իւրաքանչւարոք ապահով և հանդիսաւ եղաւ. և ապա շրջակայ իշխանները հրաւիրեց, ամենեքեան նորա հրամանին հնազանդեցան: Քիլմանի իշխան սուլթան Ահմէտը՝ և Եզզուք իշխան շահ Եահեան եկան և հստիդիպման օրէնքը յարգեցին, և ծանրագին խիզախիք մարդասիրութեան արժանի եղան, միայն Ալբանի (Կրման) իշխան Ապու իւլ ֆաթին նորա հնազանդութիւնը ըննդունեց: Այս այս անդամ հնազանդութիւն ընդունալով պէտք եղածնն համեմատ պատուեց, և որը յամառութեան ճանապարհը խոտորեցան, փոյժ տարաւ պատժել, յետոյ Շիրազ՝ եւ նորա շրջակայները գտնուած քաղաքաց և աւանաց վրայ գլսահարկ դրաւ և ժողովեց, ապա քաղաքին պէտք եղած զօրքը դրեց և

որոշեց, կանոնները և օրէկքները հասաւառեց, և վերակայուներ կարգեց, շահ Շէճայի որդի Զէյնիւլ Ապիտինը պատռեց և մեծարեց, և բաւականի չափ թոշակ սահմանելով՝ ինքը Ասպահանի կողմէ գնաց :

Ասպահան քաղաքը՝ Պարսկաստանի մեծ և բազմամորդ բնակչօք լի, և աշխարհիս մէջ հոչակաւոր քաղաքն էր. քանի քանի առաքինեաց և խմասնոց օթարան, եւ գեղեցիկ շինուածներով եւ փափկութեամբը՝ մարդկանց մէջ համբաւաւոր եղած էր. Սոյն քաղաքի բնակչաց պատռւաւոր մեծամեծներէն՝ գիտական, հրաշագործ, և իսլամաց առաջնորդ, Շէյխ Խմամի խոտին անուն գիտականի մի առջեւ՝ Թիմուրայ խօսակցութիւնը եղաւ, Ասպահանցիքը՝ աճիւ և գողութեամբ կ'ըսէին թէ, մեր վիճակը Բ'նչողէս կ'լինի, և եթէ այն անօրէնը գայ, ձեռքէն Բ'նչողէս պիտի տղատինք. Շէյխը՝ ժողովուրդը մսիթարելով պատռակեց, քանի որ կենդանի եմ, Աստուծով նուասու բաւական կ'լինիմ՝ Թիմուրայ շարիքները ՚ի բաց վանել, իսկ եթէ օրհար կենացս օձիկը պատառէ, և աշխարհէս հրաժարիմ, զգուշութիւնը ձեռքէ մի թողուք, եւ խոհեմութեամք շարժեցէք, թերեւս այն անօրինին շարիքներէն ազատիք : Բախտին դատակիքով՝ Թիմուրայ Ասպահանի մօտերը իջած գիշերը, յիշեալ Շէյխը ՚ի կենաց զրաւեցաւ, և քաղաքը՝ որ լցու էր, հետ զշետէ խաւարեցաւ, եւ նորա մահուամբ քաղաքին ժողովորոց լացը տրտմութիւնը տիրութիւնը և տիկարութիւնը բազմացաւ, և կրկնապատկեցաւ, ակամայ կամք քաղաքին երեւելիները Թիմուրայ առջեւ գնացին, և սակաւ ինչ գանձիւք հաշոտութեան եւ խաղաղութեան որոշում տուին. այս գանձը առնելու և հաւաքելու համար, Թիմուրայ կողմէն անդութ հարկահաններ խրկուեցան, հարկը տանց լրայ բաժնուեցաւ եւ հարկահանները տուները իջան, հարկը ժողովելու համար տանուաւերց պէսպէս նեղութիւն և վիշտեր տալին զինի սկսան որդւոց եւ ընտանեաց պատռուցն անպարկեցորէն ձեռք կարկառել: Ասպահանցիքը այս անարժան գործոյն չկրնալով հանդուրժել քաղաքի իշխանին տեղը նասող գիտակցին:

և իրենց վիճակէն գանդատելով բաղպեցին, եւ ասացին թէ այս աստիճանն արհամարհանաց և պատուաց մասը գանաց չեմք կարող համբերել. եւ այս մասին մահուկէանիքն վեր կ'գասենք, քաջութեան եւ արխութեան որէնքը կ'յարգենք եւ կ'սիրենք : Զարակամ իշխանը՝ ՚ի բարկութիւն և ՚ի սրամութեմիւն բրդեալ, պատուիրեց որ կէս գիշերաւն թմնուկ հարկանել տալով ձեզ կիմացը նոյն վտանգաւոր կէտին, իւրաքանչիւրոք իւր առնը եղած սատիկանին գործը տեսնէ, և ոպանանելով մարմինը ՚ի կարուսա մասնէ, ամենեքեան այս վաս որոշման եւ վատթար խորհրդացն վրայ միաբանելով՝ տուներնին դարձան, եւ որոշեալ ժամանակին սպառեցին, անարդը և պատռականը այս բանը իրբեւ նուիրական գործ համարելով միաբանեցան : Այն վատաքախորը՝ երբ գիշերը թմնուկը զարնել տուաւ, իւրաքանչիւրոք իւր տունը եղած սատիկանը սպանեց, որ թուով վեց հաղար անգութ չարագործներ էին : Առաւօտեան երբ այս անակնունելի լուրը Թիմուրայ հասաւ, բարկութեան հուրը բարբոքեցաւ, և լոդհանուր կոտորածի հրտարատակ ըրաւ, օձաբնոյթ Թաթարները եւ շարակամ Զղաթաները տուսերկ զինեալ մեծ և փոքր, կին և աղջիկ չըսելով՝ գրաւածնին և տեսածնին սպանելու և կոտորելու ջանիւր, ծերունեցն՝ ծերութեանը, մանկան՝ մանկութեանը, իմաստնոյն՝ խմաստութեանը, առաքինուայն՝ տուաքինութեանը, պատռականին՝ պատռույն, օտարին՝ օտարութեանը, մերձաւորին՝ մերձաւորութեանը, խլամին՝ խւամութեանը, քրիտոնին՝ քրիտոննէութեանը, երիտասարդին՝ երիտասարդութեանը, տկարին՝ տկարութեանը, խելացիին՝ ուշինութեանը, և աղքատին՝ աղքատութեանը, ընային և ըրխնային : Այս լոդհանուր կոտորածի հրովարտակը երբ քաղաքին բնակիչք իմացան, ամենեքեան բախտին և ճակատագրին հաճութիւն տալով, ոչ ոք երբէք մարտի և պատերազմի ոտք և ձեռք շարժեց : Այն վատերն եւս մէկին գթութիւն չընելով, վերէն ՚ի վայր սրոյ ճարակ տուեալ կոտորեցին և գիտիները գաղանաց և թռչնոց գէշ արիին :

Վաղառութեան թէ՛ աղքատ մի Թիմուրայ մերձաւոր
Էմիրի մի երթալով՝ նսրա գթութեանը ապաւինեցաւ,
և սղորմութիւն հայցելու եղանակաւ, այսպէս խօսք բաւ-
ցաւ, Ավ Էմիր՝ մնացեալ հպատակաց դատիւ, և այսքան
անմեղ մանկանց սղորմութիւն և գթութիւն ընել պէտք
է, Էմիրը պատուիրեց թէ՛, Գնայ՝ արդ քանի մի տառա-
պեալ մանկունքներ ժողովէ՛, և Թիմուրայ ճանապարհին
վրայ սպասէ՛, անպատճառ ներողաւթեան և գթութեան
կյանդիսպիր, յիշեալ աղքատը հրամաննն հնազմնդեցաւ,
և գնաց՝ սուրէն ապրեալ քանի մի փոքր մանկիներ ժո-
ղովեց եւ փրկութեան յուսով՝ Թիմուրայ ճանապարհին
վրայ սպասեց: Թիմուրայ՝ և յիշեալ Էմիրին ճանապարհը
մանկանց ժողովանեղոցն սպատահեցաւ՝ Էմիրը ման-
կունքը ախնարկելով՝ միջնորդութեամբ Թիմուրայ խօսք
բացաւ. Տէր Արքայ, այս զիշեալ սպատելիներուն գթու-
թեամբ նայել պէտք է, այլ այն արեանաբեռ բռնաւորը
սպատափանեց թէ՛ սոքա այն սպատամբաց կորիւնները
և ծնունդը չէ՞ն, Էմիրը սպատափանեց թէ՛ սոցա բախ-
ոք, երջանկութիւնը և վիճակը թշուառացած է, այժմ
իրենց աղքատութիւնը որբութիւնը խզաւթիւնը, եւ
տկարութիւնը միջնորդ բռնելով՝ ձեր աղքոյական ողոր-
մութիւնը եւ թագաւորական գթութիւնը կ'ինդրեն: Անգութ Թիմուրը երբէք սպատափան չոտալով՝ ները ան-
ձամբ մանկանց բազմութեան կազմը ձին քշեց, եւ անի-
ծեալ զորքերն եւս՝ ետեւէն երթալով, (1) այնքան անմեղ
մանկունքը ձիսց սոքերուն տակ տոնակիս ըրբին:

Այս կերպով Ասպահանի պայծառութիւնը աւե-
րակի փոխուեցաւ, ժողովարքը և բնակիչը կատարե-
լապէս նուազեցաւ: Ապա բեռները և աղմամալով ժո-
ղովեց և Սրբութիւնի կոզմ գնաց: Այս մեծ դիպուածքին
սպատահած չարքիները մէկ թուականի մի մէջ չպատահե-
ցաւ, զի մի ըստ միոնչ սպատմելը ողբոց և տրումութեանց
առիթ, և թուելը անկարելի է:

(1) Թուաց Ա. Անձորդեցի այս մանկանց գէտքը Արքաստիւ եղած
լ'պատճ, « Եւ զորդիս և դրուերս ժողովալու՝ ի գաշոսավորի միջ ան-
թիւ և անհամար՝ հրաման ետ իրեւ զորցոյ կամնասայլոց կոխել զնոսա
անողորմութեամբ » . Երես 63:

ԳԼՈՒԽ թ.

Թիմուրայ Մողոլ աղքան տիրելու— Խօսասանու և Թարսի կողմերը գտա-
նալու— Տան և եօթ թաղաւորաց սպանութիւն— Սրբան բերդին կիւտէ-
գիր Էմիրին ապստամբութիւնն և թշնամութիւնն:— Սիւլէյման խան ման-
կան սպանութիւն— Եւ Գամասկացի կող գէտքին :

Ամբարտաւանն Թիմուր՝ երբ Ասպահանէն մեկնե-
ցաւ և աղմամալով Սրբութանու թափեց, Ճիշանկիր որ-
գւոյն որդին սուլթան Մէհէմմէտը՝ Մէյֆիստին Էմիրին
հէտ գէսլ յարեւելը և Ափհուն գետոյն միւս կողմը իւր տէ-
րութեան սահմանաց ծայրը, և ուր որ իւր իշխանութիւնը
կ'համեր, խրիեց Խորասանու աշխարհէն ամսուամը հե-
ռաւորութեամբ բացակայ Զղաթայի Մողոլի և Զինաս-
տանի կողմերը պատելու համար. և սահմանադլսոյն ծայ-
րը Աշխարայ անուն քաղաքը՝ առաս գանձուց շտեմարան
լինելու համար՝ շնել տալ. քաղաքը հաստատելէն և ամ-
բոցը հիմնելէն յետոց, Մէյֆիստինի եղբայր Ալլահաս-
տանուն Էմիրը՝ այն կողմերու թագաւորաց գեսպանու-
թեան խրիեց, մէկին Մէլլիքէի բէսիր (մեծ թագուհի)՝
անուն գուասրը, և միւսին Մէլլիքէի սանիր (փոքր թա-
գուհի) անուն գուասրը, հարմանիսութեամբ կնութեան
ուզեց: Այն անօրինին Խալամաց երիկիրը գործած չարու-
թիւնները՝ այն կողմերն եւս հաշակուած լինելով, չու-
րացին ինդիրը մերժել, այլ նորա պահանջմանց հնազան
գեցան, և ամենայն սիրով յօժարեցան իրենց դասերը
նորա հէտ ամուսնացնել. այս սպատճառաւ՝ Մողոլի բո-
լոր կողմաները նորա ահէն և երկիւղէն սասանեցան, եւ
նոցա շատ երկիրները գրաւելէն յետոց, Ափհուն գետոյն
եղբայրը մեծ քաղաք մի շնեց, և գետոյն վրայ հաստա-
տուն կամուրջ մի պատրաստեալ կազմեց:

Եւ այս քաղաքը Նահրուխիւն անուանելուն սպատճա-
ռըն այս էր, քաղաքին շնութեան հրաման ընելէն յետոց
ինքը իւր մշտնշնաւոր սովորութեան համեմատ մինցիւու-
թարեկամաց հէտ ճատրակ (սամբանձ) կ'խաղար, խա.
զին մէջ Թիմուր՝ (բուխը և շահը) քշելով իւր հակառա-

կորուլ պարտաւորեց, հակառակորդը մինչեւ զայն վա-
նել կ' չանար, քաղաքին շնուռվեան և սփսոսից լանալուն
լուրը հասաւ, եւ գարձեալ նոյն ժամուն՝ նոր արու զա-
ւակ մի ծնանելուն աւետիմն եւս գալով, որդւցն անու-
նը Շահրուխ, և քաղաքին անունը Շահրուխիւէ անուա-
նեց :

Ամբարտաւանն թիմուր, թուրքաստանի կողմանց
կանոններ դնելն, և ողեար եղած խաղաղութիւնը, եւ
զորքը հաստատելն յետոյ, Խորասանու կողմ գնաց, կուլ
մանց կողմանց թագաւորք և իշխանք նորա հրաւիրանաց
հնազանդեցան, հրովարտակին ներգործութեան յօժարե-
ցան, և արգիլմանէ մեկուսացան, իրենց բերդերը և իշ-
խանանիստ քաղաքները յանձնեցին նորա կամքը հաճելը
և հաբատակիլը երջանկութիւն, և իրենց ընչեց և հոգւոյ
փրկութեան առիթ սեպեցին : Սէրճանի իշխան Ապու իւլ
ֆաթի՛ իւր նախարարներէն Կիւտէրիզ անուն Եմիր մի
տեղը փոխանորդ կարգելով, իւր նախնեցաց սովորութեան
համեմատ երաւ եւ թիմուրայ հետ հանդիպելով՝ խա-
ղաղութեան նաւահանգիստը ելաւ : Աէճրանի կողմէն,
սուլթան Ապու Խսհագն եւս նորա հրովարտակին հնա-
զանդեցաւ, հնազանդութիւնը և հաբատակութիւնը հա-
ւատարմութեան և ասպահովութեան առիթ գիտնալով՝
հոգին ազատեց : Միայն լեռները և ասպարաժուոտ տեղերը
և Ազգանստարանի լեռները և բոլորները թափառող Խո-
կենակը ծիլայի, Արշիկունտ, Խոպրահիմ Գըմի, եւ քանի
մի քաջ և արի մարդիկներ չհնազանդելով՝ իրենց տեղը
հաստատուն մնացին :

Վ երջապէս ասոնցմէ զաա՝ միայն Խրագ Աէճէմի թա-
գաւորներէն շահ Շէճայի եղասցը սուլթան Ահմէտ, և
տասն և հօմն հատ թագաւորք և արքայորդիք՝ թիմու-
րայ աստեանը ներկայ կ' գտնուէին, պատահմամբ օր մի
յիշեալ թագաւորները թիմուրայ հետ խորանի մի մէջ
ժողովնեցան, նոյն իշաբն իրարու ակնարկեցին թէ, ահա
թիմուրը սպանելու դիպող ժամանակ և կարծեցին թէ
այս օրինաւոր գործով բոլոր աշխարհիս խաղաղութիւն
կ' լնի . ումանիք առ երկիւղը ընդունեցին, և ոմանիք բնու-

Եան հաճելի և ընդունելի քաջութիւն մի կ' լնի կ' ըստ-
մի, սոցա այս շարժմանքն և խօսքերն բալոր նշանացի եւ
ակնարկելու եղանակաւ կ' լնիէր, ընդունողները՝ այս գոր-
ծէն հեռի մնացէք ըախն, եթէ ոչ գաղտնիքը Թիմուրոյ
կ' յայտնեմք եւ զձեզ կորստեան անդունդը կը գորեմք
Սակայն նոյա ամսարկին և նշմարանքն թիմուր նոցա
մուայ մէջ եղածները խմացաւ, այլ իբրեւ յանդէտս ան-
խոյթ լինելով ժողովը ցրուեց : Քանի մի օրէն յետոյ՝ կար-
միքներ հագնելով ատեան ելաւ, և երբ մարդկանց բաղ-
մութեան հետ, լիշեալ տասն և հօմն թագաւորներն ալ
հրաւիրեց և առջեւը բերաւ՝ անմիջապէս անիրաւ սրով
սպանեց, քաղաքները և երկիրները բոլոր գրաւեց եւ
ժաւանգեց, նոցա որդիքը՝ սերունդը բարակամները եւ
պարագաները ցիր ու ցան ցրուեց, ապա նոցա տեղը՝
իւր որդիքը և ծառաները կացուց :

Կպատմեն թէ՝ սոցա սպանման մէկ պատճառն եւս
պյու էր, Պարսկաստանի երկիրը ընդարձակ, բոլորը քաղաք,
գիւղ, աւան և ագարակ, իշխանները մեծամեծաց մէծ՝
քաջութեամբ անուանի, հանձարով և խոհեմութեամբ
մարդկանց մէջ հռչակաւոր, տէրութիւնը կառավարելու
կարող, թշնամին վանելու քաջ՝ զորքերը հարընտիր, զո-
րապեանները գործունեայ և փորձ էին : Թիմուր խորհեցաւ
և նախատեսութեան աջօք նայեցաւ, որ առ կենդանու-
թեամբ սոցա իրեն և որդւոյն երկիրը ըստեպէհականուիլի,
և սիրագրաւ թագաւորութիւնը իւր թշնամիէն ազատ
ըմնար, իշխանութեան գահը հաստատուն ըլինիր, եւ
փաւըը ամեն ատեն մշտնջենաւոր, և թագաւորութիւնը
շարունակ տեւական ըմնար, և ամեն ժամանակի մէջ տէ-
սակ մի վտանգներէն շազատիր : Արդ՝ սոցա սաստակմամբ
աշխարհիս սեպէհականութիւնը իրեն եւ որդւոյն մնալու
փափաքը տածեց, եւ ձինկիզ իրանի օրինաց համեմատ,
նոցա սերունդը կարել, և այս մասին բաց ի իրմէ և յոր-
դւոց ուրիշ թագաւոր ըմնալ ու գելուկ, զանմը ջնջեց,
երբ նոցա որդիքներէն և կամ սերունդէն, մէկին վայոյը
տեղեկութիւն կառնէր, անդթագար կ' փութար զայն ջն-
ջել և կորուսաննել :

տուլթան Ապու իւլ ֆաթիյին Սէրճանի փոխանորդ Էմիլ
Կիւտէրիզը, Թիմուրայ ընհաղանգեցաւ, և պատրաստե-
ցաւ որ նորա հետ պատերազմի՝ գէմ կենայ և ՚ի բաց
վանէ։ Յիշեալը յառաջադոյն շահ Մանսուրի ծառայու-
թիւն մէջ էր, և կ'կարծէր թէ, շոհ Մանսուր տակաւ
էն կենդանի է, և միայն թէ պահուած է, մօտ ժամա-
նակին կ'յասմուի բակրով կ'բագասէր, նորա այս միմա-
րական խօսքերը Թիմուր լսեց՝ զրբ պատրաստեց, և զ-
րապետ կարգելով նորա վայ խրիեց, սոյն պաշտօնիր-
խրկուած զօրքերը զնացին և զայն պաշարեցին, և սկան-
նեցէ. բերդը ամուր և հաստատուն, աշտարակները և
պարիսպը երկառափ, ոչ թէ յակմել և նուաձել, թերեւ
մօտ երթան անդամանկարելի, և համեմթ ամենադժուար
էր, խրկուած զօրքերը՝ միայն պաշարեցին բերգին ամրու-
թիւնը և հաստատութիւը Թիմուրայ ծանուցին, Թիմուր
գարձեալ Եիրազի զօրքերը, Եղափ և Քիրմանի քաջերը
յօգնութիւն խրիեց. նորա եւս գնացին միշեալ բերդը
հասան, և հնարք ըրտան կերպով մի նուաձել, քան
ռարիի չափ նոյն կողմերը թափառեցան և ընդունայն աշ-
խատեցան։ Վերջապէս Կիւտէրիզ շահ Մանսուրի կեն-
դանութենէ և յայսնութենէ յուսահատեցաւ։ Սուլթան
Ալպու իւլ ֆաթի զայն Թիմուրայ միջնորդեց և երաշ-
խաւոր եղաւ, և խաղաղութեամբ բերդը Թիմուրայ զօ-
րաց յանձնեցին։ Նա նախարարներէն և երեւելի իշխաննե-
րէն ուշիմ և վեհամխոս Քիրմանի իշխան Այխտ կիւլային
գնաց ապաւինեցաւ հնաղանգութիւն եւ հապատակու-
թիւն յայսնեց։ Գարշելի Այխտ կիւլան, սուլթան Ապո-
լիւլ ֆաթիյին միջնորդութեան և ձեռնոտուութեան ան-
փոյթ լինելով՝ զայն նենգութեան և ատելութեան սրով
սպանեց. այս վկասի լուրը երբ Թիմուրայ հասաւ՝ բար-
կութեան հուրը բարբոքեցաւ, և Այխտ կիւլային սաս-
տիկ ատելութիւն, եւ բազմաթիւ թշնամութիւն նիւ-
թեց, սակայն հետքը չերեւեցաւ։

Սուլթան Ահմէտ՝ նորաբողբոջ Նոճի նման, սուլ-
թան Մէհմի եւ Սիւլէյման խան ամուն երկու արքայա-
զան ժառանգներ ունէր, սակայն Սիւլէյման խան սենիկի

Ի պատմութիւնս ումանց, այս բոհաւորին՝ թուգաւ-
որաց և արքայորդւոց բնաջինն ըառնալու պատճառաց
մին եւս այս էր, Արշինունտ, Խիկնտէր Ճիզայի, և Քա-
րահիմ Գըմի գալէն և հնաղանգելէն յետոց, անգամ մի
Խիկնտէր Ճիզայի Թիմուրայ հետ ՚ի միասին ժողովին մի
մէջ անհոգութեամբ եւ անդուշութեամբ խօսակցու-
թիւն ընելու ատեն, Թիմուր Խիկնտէրին ուղղե-
լով ըստ թէ, Արդեօք բախտին և Ճակատագրին դա-
տակնով, եթէ վիճակը փոխուի, և գէպերը յեղաշրո-
ջն, ինձմէ վերջը որդւոց եւ թոռանցս հետ կրուելով
թշնամութիւն և ատելութիւն ընելու, նվ ուժ և զօրու-
թիւն, և այս բանին ով արժանաւորութիւն և բաւակա-
նութիւն ունի, նախատեսութեան աշօք՝ որը կ'տեսնատ,
և որը կ'իմանաս, յիշեալը՝ տակաւին անհոգ և անգդ չ'հո-
մարձակեցաւ պատախանել, եթէ պատեհ ժամանակ
գտնամ, որդւոցդ նախ ես գատախազ եմ. Երկրորդ Արշի-
նունտ, և Խպրահիմ Գըմին, եթէ իմ ժանիքներէս իրենց
հոգւոյն օձիկը ազատեն՝ Արշինունտի փիւնիկ որսալու
ծուղակը կ'իյնան։ Անոր ձեռքէն ազատովով, Խպրահիմի
հիրաններուն կ'մատնուի։ Արշինունտ և Խպրահիմ ժողովին
ներկայ չ'են, ուստի Թիմուր անհոգութեան տալով, պա-
տախան ըլտուաւ, այս խորհրդով որեթէ զայն բռնէ, Ար-
շինունտ և Խպրահիմ կ'փախչեն. մինչեւ որ երեքը մէջ
տեղ բերէ և գործերնին տեսնաց։ Յետոց Խիկնտէրի այս
աստիճան անդուշութեամբ ըստ խօսքերուն վրաց զայ-
ջաց, և երբ բարեկամներն եւս զինքը յանդիմանեցին,
պատախանեց թէ, զիս Աստուած խօսել առւաւ, թէ
պէտ այսպիսի խօսքեր վայելու և պատշաճ չ'ը, սակայն
առանց ընարութեան պատահեցաւ։ Այս երկիրդով՝ Խ-
իկնտէր և Խպրահիմ փախան, և խեղջ Արշինունտ Թի-
մուրայ բռնութեան մասնուեցաւ։ Այլ Խպրահիմ, նոյն
փախատեան ատեն՝ իւր ընական մահուամբ մեռպւ։ Խիկ
Խիկնտէր, անուանի և քաջ մարդ մի գոլպէ, հասուկը ե-
րեք կանգուն և կէս էր, նոյն փախատեամբ զնաց, և վե-
ճակը ինչի պատահիլը չիմացուեցաւ։

Ապէտ յառաջ գրուած և պատմուածին համեմատ,

կակուղ մոմի նման էր, վարդափթիթ դէմքը նազիլի, աշխարհիս ազնուութեան արեգակը, և բոլորակ լուսնի պէս ծայր գեղցիկ, հասակը վեց տարեկան, և արքայական երջանկութիւնը դիսուն վայ նշանաւոր մօնուեկ մի էր, Քիրմանի իշխան, անգութիւն Այս կիւլսյ կ'կասկածէր, եթէ այս լուսատիպ մանուկը զարդանայ, իշխանութեան և փառաց արժանի կ'լինի, ուստի միաբը դրաւ որ զայն սպանանէ և կորուսանէ, ոչ այն որբացելոյն որբութեանը դթաց և ոչ աղնուական մօրը պշաց արտապուաց և անշօդնականութեան, զի յարաժամ այնպիսի անգութիւն դահճա մի կ'որոնէր, որ կարող լինի անողորմաքար այն արբացաղուն զաւակն արիւնը թափել, զի այս պշտակի գործը ու բուն որ առաջարկեց, բացէ ՚ի բաց հրաժարեցաւ, վերջապէս սատանայական անիծիւք անիծեալ անբեր անապատի բնակիսներէն գարշելի սատանայ անարդ և նուտասա բեւամորթ Արաբացի մի դտաւ, և յօժարեցսց զայն, որ Արէյման խանին կենաց գահը կործանէ, այն անգութ անօրէնը այս խուժագուժ արաջարկը ընդունեց ։ պատահմամբ նյոյն ժամանակին մանուկը չարակնութեան հանդիսեալ աշացաւութեան բռնուած և մինչդեռ ըստ արնդուին գիրիլք քնորվ զմայլեալ հանգչած էր, այն առ բարից անհաւատը և գարշելի գեւը վրան յարձակեցաւ, և Արէյման խանը թունաւոր և արեան ծարտութաշնորհ սպանեց, և արքայութեան նահատակաց խրչը բնին խառնեց, նյոյն կէտին աղախնեցը և ընդունէր, մերձաւորը և ազգականք, կանկան բարձեալ և զօձիս պատառ ռեալ ողբացին և կոծեցին և իրենց ձայնը մինչեւ յերկինս բարձրացուցին։ Սորա ցաւը չմոռցուած վշտակիք մօրն և ս այս դժբախտութիւնը պատահելով, ներկայք եւ բացակայք, այս բանին համար զօձիս սպատառեցին եւ բոլոր քաղաքին բնակիչը այս անիրաւութեան համար լացին և կոծեցին։ Այս անբարիչը գործը թէպէտ արտաքուատ Այս կիւլսյի ակնարկութեամբ եղաւ. այլ այն վճռով որ (մարդիկ իրենց թագաւորին օրինաց հետեւող են) իմաւուին համեմատ, դարձեալ Թիմուրայ մօտեցաւ։ Սակայն ՚ի պատմութիւնս ունաց կըսէն թէ, դարձեալ Այս

կիւլսյ, Թիմուրայ ակնարկութեամբ այս անօրէն գործոյն և մեծ մեջաց խոնար հեցաւ։ Ըստ այսմ օրինակի, կ'պատմեն թէ, Ամբարտաւանն Թիմուր՝ երբ Դամասկոս նուաճել գնաց, այն կողմանց գործերը լուսուց, վերադարձին անիծեալ զօրաց մէջ Դամասկոսի աթիկներէն ալդքատ կիւն մի գերի ինկած էր, յիշեալ կիւնը աշխարհիս դիպուածներով փափկութենէ և բերկութենէ հեռացած, իւր տունէն և հայրենիքէն զարգացած, մերձաւորներէն և ազգականներէն օտարացած։ բաց յայսմանէ՝ այն ինչ ՚ի սահնէ հատեալ, և կաթի փափուանօք սրտաձմիկ մատաղատունկ եւ գեռափթիթ գուատր մի աւնէր, երբ Համայ քաղաքին մօտեցան, մանուկը պանդխատութեան վիշտերէն և հանապարհին նեղութենէն, ախրաժմախիթ ոգւով լալէն և կանկան բառնալէն և պատառոցը հառաջաներովով, ողբալէն չէր դադարէր, անզգամ զօրքերէն սմանք, մանկան ձայնէն և պաղակէն ձանձրանալով, իրենց մէջէն գեհնենաժառանգ Պաղսացի գարշելի սատանաց մի եկաւ և մանուկը ու զեց, մայրը կարծելով թէ զայն գլութեամբ պիտի գրգուէ եւ միմիթարէ, իւր սրտին հասորիկը նորա ձեռքը յանձնեց, այն անօրէն անզգամը, մանուկը առաւ, և քիչ մի ետ մնալով քարերուն մէջ ձգեց, և տարաքախտ մօրը ձեռնընունայն եկաւ հասաւ, ծաղելով և ինդալով կ'ըսէր աղջիկը հիմայ կուգայ, կինը երբ գործը համկաս, զինքը ուղղուին վար նետեց և իւր զաւակը կողմէ կողմ որոնեց, և քարակացաներու մէջ գտաւ, և վերասին ուղար հեծուլով գարձաւ, յիշեալ չարագործը եկաւ և յառաջա զոյն ըրած անգութեան ըքմեղութիւն յոյտնելով, դարձեալ մնաւուկը ուղեց՝ բխարաւոր երգումներ ըրաւ որ քիսաէ, և կինը հաւատացնելու չափ ուիստ և պայման դրաւ, ցաւագնեալ մայրը՝ ժամ մի հանգիստ առնելու համար, դարձեալ մանուկը այն անօրինին ձեռքը յանձնեց, այս անզգամ առաւ այնպէս կորնցուց և անցայտ ըրաւ, որ այն նժդէհութեամբ և օտարութեամբ տառա պէսով ուղղուին իջաւ, և որքան որ որոնեց և թափառեցաւ ըկրնալով գտնալ, ցաւքը և հեծութեամբ ետ

դարձաւ : Այս եւս Թիմուրայ՝ և իւր ծառայից և մարդկանց անօրէնութեան և անգթութեան յայտնի նշան է :

ԳԼՈՒԽ Ժ .

Թիմուրայ Իրագ Կրապ գառնակն : — Պաղտասի զօրաց խորտակումն : — Թիմուրայ տէրութիւնը բարեկարգէն : — Հաղիսասանի երկիրը նուաճէն : — Համաստան քաղաքի Եփրին միջնորդութիւնն :

Իրագ Աճէմ, լայնութեամբ և երկայնութեամբ Թիմուրայ յանձնուեցաւ, նորա պերճութիւնը՝ վնասները և չարիքը, անիրաւութեան ձայնը և աղաւղակը, Իրագ Արագի մէջ տարածուեցաւ՝ և Պաղտատի թագաւօք սուլթան Ահմէտ Ճիլայէրիխին տրտմութիւն պատճառեց, եւ նորա սրտմութեան և նախանձու հուրը բորբոքեց, քաջ և գործունեաց զօրքերը պատրաստեց, և գումարտափներ կազմեց՝ եւ Սինայի անուն հոչչակաւոր մէզերը պարապետ կարգելով՝ Զղաթայի զօրաց կողմը խրկեց, երբ այս հակառակ լուրը Թիմուրայ հասաւ, ուրախացաւ և գոյն սրտիւ ըսաւ թէ, թշնամութեան և ատելութեան գոյները բացուեցաւ, մարտի և պատերազմի միջոցները պատրաստեցաւ . Թիմուր՝ իւր անթիւ զօրքերը պատրաստեց՝ և թշնամին որսացող քաջէրը ժողովելավ զայն դիմաւորեց, Սուլթանիյէ քաղաքին մօտ երկու կողմի զօրքերը, իրարու գէմ ճակատեցան, Զղաթայի զօրքը ծովու ալեւաց նման խումբ խումբ յորդան տուեալ, միահամուռ յարձակմամբ դիմեցին . Պաղտատի զօրքը չլարաց զսեղի առնուլ և հաստատուն կենալ՝ վայրավատին ցրուեցան, եւ հաստատութիւննին փախուսաի փոխուելով, Պաղտատի և ուրիշ քաղաքաց կողմերը ցիր ու ցան փախան : Զօրապետնին երբ բիւրաւոր սորջանօր Պաղտատի եկաւ, սուլթան Ահմէտ լի բարկութեամբ և սրտմութեամբ սոստիկ դանից և հարուածոց մասնեց, յետոյ՝ կանացի ըլլ գեստներ հագցուց, և Պաղտատի շուկաները հրապարակելով պէտպէս անարգութիւններ և արհամարհանքներ ըրաւ, և զանազան նախատանօր անպատուեց : Թիմուր այսքանու բաւական սեպելով ետ դարձաւ :

Յիշեալ ամբարտաւանն՝ Սըմբղանափ սահմանը և նուրա գաւառները շալցուաւ, և երկու գիւղաքաղաք նոր ինորոց շինել տալով՝ իւրաքանչիւրը մեծամեծ քաղաքներու անունով անուանեց և հոչակեց : Այս անգամ, Սըմբղանափ ամբողջ իւր յաւելուածներով, յայնկոյս Ոդսոս գետոյ երկիրները՝ իւր պարագայ իւր, Խուարզիմ, Քեաշզար, Պատախշան, Խորասան, և Մազանտարանիշատ երկիրները՝ Թարշան, Բէ, Ղաջնէ, Աստրապատ, Սուլթանիյէ, Իրագ Աճէմ, և Ֆարս, իւր իշխանութեան տակ ինկան, Թագաւորները և իշխանները առանց հակառակելոց հրամանին հնագանդեցան, և առանց արդելքի նորա ծառայութեան եկան : Տիրած երկիրները իշխաններ խրկեց, ինքը սկսաւ Սըմբղանափի մէջ նոր ինորոց այգիներ և պարտեղներ տնկել, և շնաշմարհիկ (1) իրամայ պարաներ և ալբոնի բարձր գլեակներ շնել տաւ Սոյն ժամանակին ժողովուրդը ըստ ամենայնին նորա շարիքներէն և աղջաններէն աղատեցան, ապահով և հանգիստ մնացին :

Թիմուրայ մշտնշենաւոր սովորութիւնը, նախ որ կողմ երթալը կ'ծածկէր, և ուղղակի մէկ կողմ կ'երթար, և ուրիշ տեղ կ'երեւէր, զըր օրինակ՝ եթէ կամքը արեւմնեան կողմ երթալ էր, նախ արեւելեան կողմ քիչ մի կ'երթար և ապա անտի գառնալով իւր նպատակեալ տեղը կ'ուղեւորէր : Այս պատճառաւ Սըմբղանափի մէջ այդ գիններ և պարտեղներ հնարեց, պալտոններ և գղեակներ շնել տուաւ, աւարտելէն զինի՝ զօրաժողովը լինելու կողմը կողմ մարդիկներ խրկեց, և հրաման ընելով յայտարարեց որ Խուանէստ և Թուրքաստան աշխարհաց կողմերը արշաւելու համար՝ այս ինչ օք՝ այս ինչ ժոմ, յայս նիշ տեղ ժողովն : Զօրաց խումբը՝ հպատակներէն և երկրագործներէն, համացւելու և փառաւոր լինելու համար, զօրաց հագուստներ օրուեց, և մէկ կողմ մեկնեցաւ . քանի մի օթեւան երթալէն զինի՝ Պաղտատի սահման Լազիստանին երկիրը երեւեցաւ : Յիշեալ երկիրը այդիներով և պար-

(1) Տաճկաց փափկութեան դրախտն է :

աւէզներով յարդարուած, բարեքեր գիւղերով և ագաւ քակներով զարդարուած, պոտովները առաստ, և գնացուն ջրերը չամ երկի մի էր: Իշխանը Մէլքը իզզէթամն Աստ պասի քաջ խելացին էր, թէպէտ բնակած բերդը ամուր և հասաւասւնաշտաբամները և մարտկոցները ամբապինդ և բերդերուն մէջ ամբութեամբ հռչակաւոր անառիկ բերդ մի էր, այլ Թիմուրայ իջնալը և քաղաքը մօնսով յանկարծակի պատահեցաւ, զի բաց փափակասութենէ պաշարաց և նուազութենէ ռազմամթերաց, զօրաժողով լինիլն ևս անկարտելի էր: Վասն որս իզզէթամն՝ բաց 'ի անձ նաստուք մնելէն այլ գեղ, հնազանդութենէ և հպատակութենէ՝ այլ գարման ըլ գառաւ, բերդը բնծայ տալու պայրմանաւ, Թիմուրայ հանդիտեցաւ, և բերդին բանաշները նորա անդութ ձեռքը յանձնեց. սակայն անօրէն նենդաւորը, անոր այնքան մարդապիրութիւն չընելին զուս՝ Սըմրդամատի մահապարտաց բանալը խրկեց. այլ յետ ժամանակաց զայն արձակից, հնազանդութենէ և հպատակութենէ զատ, ինչ բանի համար որ հրովարտակ լինէ, հրամանէն գուրս չելլալու պայմանաւ ծանր երդմամբ ուխտ եւ գաշնկը դրաւ, քանի մի ծի և ջորիներ տալով խւր երկիր խրկեց, և իշխանութիւնը իրմն թողլով հաստատեց:

Մէծասիրուն Թիմուր՝ լիշեալ երկիրը գրաւելէն եւ ամիրելէն և իշխան կարգելէն յետոյ, ավետամնդիր և բեռները, այն մօտերը Համատանքաղաքը թափեց: Այս քաղաքը կենցաղագէտ, եւ թագաւորաց բարեկամութեան արժանի, պատուարժան Սէլիս և փառաւոր գիւնական, Միւճմէպա անուն բարձրաստիճան չէրիք մի կ'ընակէր, Թիմուրը գիմաւորեց, խոնարհութեամբ եւ աղաջանօք միջնորդեց, քաղցրութեամբ և պէտէս իրաւոներով ըսկաւ խօսիլ եւ համոզել թէ քաղաքին ժողովուրդը թող հարկատու մնին և իրենց հոգին աղբատեն, որդւոց և ընտանեաց խնայելով հաշտութիւն ըրէ: Միջնորդութիւնը ընդունեց, և որոշեալ հարկը տանց վասյ բաժնեցին, եւ ամբողջապէս ժողովելով Թիմուրայ գանձը յանձնեցին Բայ յայսմանէ երբ մաս մի եւս քաղաքական առւեք պահան-

նեց. նցն փառաւոր Էմիրը գնաց իբրեւ միջնորդ, աղշքատաց և անանիաց կողմանէ միջնորդ կանգնեցաւ. աղաւեց և պաղտտեց: Թիմուր՝ որ սովորութիւն ունէր մեծապատիւ գիտնականները յարդել, երկրորդ պահանջը նորհեց և չուելու հրաման ըստ:

ԳԼՈՒԽ ԺԱ.

Թիմուրայ վաղացականի մահամանի տուած միասները և նեղութեամբ, Պաղտատ թագաւորական պեր հութեամբ նատող, սուլթան Ահմէտ ձիլայերիյին տըրաւ մութեան առիթ և ցաւոց պատճառ եղաւ. յառաջադցյն Թիմուրայ հետ ունեցած ակտեղի կոիւները եւ առանց պատճառի ատելութեամբ լաւ գիտցաւ որ անպատճառ Թիմուրը պիտի շարժէ եւ իւր կողմը գալուն պատճառ պիտի լինի, որքան որ ինքը զօրութեան և կարտղութեան աէր անուանի թագաւոր մի էր, այլ երբ ծանրը գոյ թեթեւը կ'վերնայ, և երբ առիւծը երեւէն աղուէսը խայս կուտայ, խմատին համեմատ, իմացաւ որ հակառակելու կարողութիւն չունի, և որքան որ զայն վանելու և չարիքները բառնալու գեղ և գարման որոնեց, փախչելէն ուրիշ աղատութեան տեղ և փրկութեան ճանապարհ ըլ գտաւ, բառնալու կարելի եղած դրամէն, և այլ բաներէն առաւ և ի փախուատ աճապարեց: Զահար անուն որդին, և իւր ընտանիքը, գանձը և հարստութիւնը, Նիրվանի մօտ Նէճայ անուն ամուր բերդը և Անասիկ ամրոցը խրկեց, և ինքը 180 (1392) թուին Պաղտատէն եւ լաւ Գամասկոսի կողմերը զնաց, և յետոյ Եղիպատրի թագաւոր Սայիս Պէրգատիդի որդի Մէլքը Զահարին հովանաւորութեանը աղպահնեցաւ:

Պահմանականի և Համատանի տուած միասները և նեղութեամբ, Պաղտատ թագաւորական պեր հութեամբ նատող, սուլթան Ահմէտ ձիլայերիյին տըրաւ մութեան առիթ և ցաւոց պատճառ եղաւ. յառաջադցյն Թիմուրայ հետ ունեցած ակտեղի կոիւները եւ առանց պատճառի ատելութեամբ լաւ գիտցաւ որ անպատճառ Թիմուրը պիտի շարժէ եւ իւր կողմը գալուն պատճառ պիտի լինի, որքան որ ինքը զօրութեան և կարտղութեան աէր անուանի թագաւոր մի էր, այլ երբ ծանրը գոյ թեթեւը կ'վերնայ, և երբ առիւծը երեւէն աղուէսը խայս կուտայ, խմատին համեմատ, իմացաւ որ հակառակելու կարողութիւն չունի, և որքան որ զայն վանելու և չարիքները բառնալու գեղ և գարման որոնեց, փախչելէն ուրիշ աղատութեան տեղ և փրկութեան ճանապարհ ըլ գտաւ, բառնալու կարելի եղած դրամէն, և այլ բաներէն առաւ և ի փախուատ աճապարեց: Զահար անուն որդին, և իւր ընտանիքը, գանձը և հարստութիւնը, Նիրվանի մօտ Նէճայ անուն ամուր բերդը և Անասիկ ամրոցը խրկեց, և ինքը 180 (1392) թուին Պաղտատէն եւ լաւ Գամասկոսի կողմերը զնաց, և յետոյ Եղիպատրի թագաւոր Սայիս Պէրգատիդի որդի Մէլքը Զահարին հովանաւորութեանը աղպահնեցաւ:

Գոռառնի Թիմուր՝ առելութեամբ շարժեալ, Թաւու
ըէղքաղաքը առաւապանաց ենթարկեց, այն չեն և բա-
րելիք քաղաքը առարեց և յափշտակեց, աղքատ և հա-
րուստ ջսելով, բոլորն եւս մէկ հաւասար վիճակի մէջ
ձգեց: Ապա մաս մի զօրը բաժնեց խրկեց որ Նեհայ բեր-
գը առնեն, ուր սուլթան Ահմէտի գանձը և հարստու-
թիւնը, որդիքը և ընտանիքը ամբացած էին. յիշեալ բեր-
գը այնպիսի ամսուր և հաստատուն բերգ մի էր որ, կովկ-
ասու լեռներուն հաւասար, և երկնից ամպերուն կից,
մուաց թուշունը աշտարակին ծոցը չէր հասներ, և խոր-
հրգոց թեւաւորը նորա ամրութեան դադամբը չէր ժա-
մաներ, և բաց յայսմանէ սուլթան Ահմէտի կողմէն, ա-
ռիւծի նման հուժկու և բաջ Ալթուն անուն արիստօնիրտ
Էմիր մի նորա վերակացու եղած, երեք հարիւրի չափ
հատ ընտիր և զօրաւոր, պիտանի և անուանի մարդիկնե-
րով, բերդապահութեան պաշտօնին մէջ արիւթեամբ
գումարած, և սուլթան Ահմէտին որդւոյն և գանձուց
պահպանութեանը, քաջութեամբ կազմ եւ պատրաստ
կեցած էին: Զարթայի զօրքերը բերդին բոլորսիքը եկան
հասան եւ վրանները կանգնելով բանակեցան, և սկսան
գուն գործել և բերդը պաշարել: Էմիր Ալթուն գիշեր-
ուան մութին բաւականի չափ մարդիկներով, բերդէն
կիշեար եւ յանկարծակի նոցա բանակը կոսիւլով, թրշ-
նամին կ'աւարէր և կ'յափշտակէր, կ'կուտորէր և գերի կը
վարէր, և անմիջապէս բերդը կը դառնար. այս կերպով
սոցա մարտը և պատերազմը երկարեցաւ: Թաթար գորքը
Թիմուրց ծանուցին, թէ իրենք անհանգիստ և առաջա-
կացեր են, նա՝ Գալթաղ անուն մէծ Էմիրը և երեք հատ
Էմիր եւս, իրենց պարագաներով օգնութեան խրկեց, երբ
նոր զօրը հասաւ, իմացան որ պատահմանիր Էմիր Ալ-
թուն բերդէն գուրս որսի աւարի և յափշտակութեան
դնացած է, ճանապարհը փուկեցին, եւ մէծ պատրաս-
տութեամբ ջանադիր եղան կերպով մի զայն որսալ եւ
ձեռք բերել. Էմիր Ալթունին պատահեցան և ջրս կող-
մը պատելով ջանացին զայն բանել. Էմիր Ալթուն՝ երբ
այս բանը եւ Զարթայից բազմութիւնը եւ շատու-

թիւնը տեսաւ, բարեկամոցը ոյս օրինակ ոկտա- իու-
մլ, պէտք է որ մի սիրտ և համամիտ, մի ձեռք և մի
խոզք, ուղեղ գետաւորութեամբ միաբանիմք, եւ մենք
զմեղ թշնամւոյն մէջ մեկ հարուածով զարնենք անցնինք,
կամ մեր հոգւոց օձիկը ազատելով բերդը կը մտնամք,
կամ քաջաց մահուան նման նահատակութեան կ'արժա-
նանամք, ամեներեան համակամ եւ միաշունչ, իրենց
միտքը Աստուծոյ յանձնելով յարձակեցան, շնորհիւ-
բարձրելոյն Աստուծոյ, որպայ որ պատահեցան և գիտե-
ցան հարին 'ի բերան սրոյ, և դէմ գալողներուն բախ-
գը թշուառացոցին եւ այն պատերազմէն ազատելով
դէպ 'ի բերդը ուղեւորեցան, այս մարտին մէջ Զարթայի
զօրքերէն բաւական մարդ կոտորելու դինի, մեծ Էմիր
Գալթաղին կենաց գրոջը կործանեցին, և մեկ Էմիր եւս
դիտապատ անկաւ:

Այս ցաւալի լուրը՝ Թիմուրց զարթացման առիթը
եղաւ, և ինքը մնածամբ պաշարման տեղը ունապարեց:
Այսպէս անընդհատ քաջութեամբ Էմիր Ալթուն բերդը
կ'արհպանէր և կ'հսկէր: Անդամ մի եւս, իւր հանապա-
զօրեայ սուլթան Ահմէտի կողջ հետ, որ Զարթային մոցին
էր, իսկ և իսկ գալաւամեատ սատանացական և երիտա-
սարդական յարաբերութիւն ունեցեր է. բարկութեան
հուրը բորբքեցաւ, և որամութեան զարութը վառե-
ցաւ, նոցա արժանաւոր պատիքը տալով երկուքը 'ի
միասին որով սպանեց, եւ երկրիս երեսը նոցա պիզճ
մարմիններէն մաքրեց, զինի այսորիկ երբ Էմիր Ալթուն
արշաւանդէն գառնապով բերդին դուռը հստակ: Զահար
Էմիր Ալթունին եղօր դիակը իրեն դէմ բերդէն խրամի
մի մէջ ձգելով պատահած գէպքը նորա պատմեց,
Էմիրը պատախանեց թէ Օրհնեալ է Աստուծ, շատ
բաւ ըրած էք, ես ալ այս գործին հաւանութիւն չունիմ՝
եթէ ասկէ յառաջ իմացած լինէի, ես նկրնին անձամբ
նոցա սպանման և սուսակման կ'փութայի, և բարձրացին

նենդութիւն ընսպներուն օրինակ կ'ընէի, ատիպեց որ բերքին դուռը բանայ, Զահարը ընդգունեց և դուռը ընդցաւ, դարձեալ որբան որ ներազութիւն խնդրեց, և ըստ թէ՛ եղբայրս իւր գործած մեղքին պատիմք գտաւ, այլ իմ յանցանքս ինչ է, նուասոս՝ քարերարիս եւ ձեր փրկութեան և սպահանութեան համար կեանքս զահեցին և տակաւին չեմ խնայեր, միթէ վայերնէ է, ուրիշներուն յանցանօք և մեղքը զիս դատապարտել: որբան որ աղաւեց պաղասեց և երդումներ ըրաւ՝ Զահարը չհաւասաց, թերեւս մերձաւորութեան կարեօք և եղբայրական օրիցն կրակով ինձ մեաս տաս ըստ, արգիլեց և արհամարհել լով պատասխան տուաւ: Այս իւս յուսահասեալ ըրած ծառայութեան վրայ զանցաց և բիւր անգամ աւալեց՝ որ իւր արժէքը չդիտցողներուն ծառայ եղեք է: բարեկամէն անսարդութիւն և աշխարհէս ոչ հաւատարմութիւն տեսնելուն, ձեռքը ճնկան զարիւաւ և ձիուն գլուխը դարձը նելով այն մօտերը Մէրիսա անուն քաղաքի մի կողմ գնաց:

Յիշեալ քաղաքը Թիմուրայ կողմէն զինուք և զօրութեամբ յարդարուած էր և Տէրլիշնիշաւա անուն իշխան մի ուներ, տակայն իշխանը սիէտք եղածին չափ մարդ և պիտանի զօրք չունենալով՝ երկուղի եւ տարակուանաց մէջ ինկաւ, և Էմիր Ալթունէն կատկածելով՝ վերջապէս սպանեց և հատեալ գլուխը Թիմուրայ խրկեց. Թիմուր նորա այս գործէն բարկանալով պաշտօնէ ձգեց և անարդեց, և աքսորմամբ անպատուեց:

Այլ Զահար ըրած գործերէն խութեալ և տառապեալ սառուգափես գիտցաւ որ, ոչ Զղամայի զօրաց դէմ կենալու զօրութիւն ունի, և ոչ բերդը պահպանելու կարութիւն. վասն որոյ որդւովք և լնառնեօք չուեց եւ ի փախուտու աճապարեց, և յիշեալ բերդին Թիմուր առանց խռովութեան տիրապետեց. նոր վերակացու խրը կեց և պատուիրեց՝ որ Տիրվանի իշխանին հետ բարեկամութիւն ընելով, միշտ խաղաղութեամբ վարուի:

Յետ այնորիկ դրուց պարփեց առանց կենալու Պաղ սաստի կողմ երթալ, եւ առանց դանդաղելու փութաց, Թուրք ճամբար հանել: Ասկէ յառաջ գրուած եւ պատ-

մուածին համեմատ, սուլթան Ահմէտ Երբ Թիմուրոյ գաշը լսեց՝ Պամասկոսի կողմ գնաց: Պաղսատ թագաւորէն և զօրքէն դատարկի մնաց: Թիմուր առանց խռովութեան ՎՃ (1392) թուին Եէվլիս ամասն և մէկին ուրբաթ օրը Պաղսատ մօտաւ, եւ քաղաքին ժողովսարդը նեղութեամբ և բռնութեամբ չարչարեց, և քանի քանի տուանը և գերդաստանները կործանելով Տիրքանակեցի կողմ գնաց:

ԳԼՈՒԽ ԺԲ.

Թիմուրոյ Թիմուրի թերդը առնելն: — Կիմուէ քաղաքը կործանեն: — Բայս էլ Ալինի և Անժապի կումելը առաքելն: — Մարտին քաղաքին՝ և մէկքին բերդին առումն: — Ժողովոց կոտորումն: — Մէկիք Զահարի կապանը: բանտարկիլն: — Ազատին և իւր իշխանութեան տեղը գտնենալը:

Սախ Թիմուրի բերդը ՎՃ (1392) թուին Զիշին ձէ ամսոյ տասն և չորսին պաշարեց և անոր չորս կողմը աւարեց և յափշտակեց, եւ իւր սաստանաները արձակեց որ բերդը առնեն. բերդին տէրը՝ թէպէտ փոքր ինչ զիսց էաւ և հաստատութեամբ ջանաց զանոնք արգիլել և ՚ի բաց վանել. տակայն լսւ գիտցաւ որ այնպիսի պողովաւ տիկ ժանիքներու դէմ մաքառիլն բաց ՚ի իւր ճիրանները և բազուկը վեստակիլն ուրիշ օգուտ մի չունի, հաւատարմութիւն պահանջեց, որդիքը և թուանքը բողոքակիրը և իւր պատանքը աչքին դիմաց առնել, այն կաղ դեւին առջեւը գնաց, հպատակութիւն եւ հնագանդաւթիւն յայնեց, ներողութիւն և թողութիւն հայցեց: Կուրացեան մորը Թիմուր՝ անխնայաբար զայն սպանեց, կանացը և որդիքը գերի վարեց, և անսի մեկնեցաւ:

ՎՃ (1393) թուին Սէֆէր ամաց քասն և մէկին Նինութի քաղաքը տառապանաց հուրը բորբաքեց, երկիրը սպականեց, տունէ և որմէ նշոյ չժողովուց, ժողովաւրը աւարելով եւ յափշտակելով աղքատացուց եւ մեծամեծ տագանին անարգեց: Ասպա Բաս էլ Ալինի կողմ գնաց, այն երկիրը եւս կողսպանեց, ժողովսարդը տառապանօք

ցիր ու ցան կացուց։ Ապա յիշեալ թռուականին և Շէպիլ էվիլ ամսոյ սկիզբը Ռիհայի կողմ՝ գիշերատնաց եղաւ։ Ներսը և դուրսը անօրէնութեան բոցերը տարածեց, բռնութեամբ և զրկանօք ապականեց, և նոյն ամսոյ տասներկուքին Տիգրանակերտի կողմէն Անթապ գնաց, այն կողմերն եւս սցրեց քանդեց և անիծեալ զօրբերով Մարտինի վրայ գիմեց։

Այս բերդին թագաւոր Մէլիք Զահարը, երբ լսեց և իմացաւ որ Թիմուր՝ Մարախին քաղաքին վնաս և չարէք հասցնելու դժումամբ կուգայ, տերութեան նախարարները և բարեկամները ժողովելով փութաց խորհրդոց ատեան կազմել, և այսպէս սկսաւ սքանչելի կարգաւ խորիլ։ Այս անօրէն բռնաւորը ըստ մեծի մասին, հնազանդութիւն ցոյց տուտղներուն քաղցրութիւն եւ մարդափրութիւն կը ցուցնէ, եւ ապահովութիւն ուղելով դիմաւորողներուն վնաս և չարիք չհասցնէր, թշնամին դիմաւորելու կ'երթամ, խաղաղութեան և հաշտութեան սակին դիմաւութիւն տալով անձնատուութեան վաճառաց միջնորդ կ'լինիմ, եթէ բերդը յանձնելու համար նեղէ պնդէ եւ թափանձէ, այն ատեն իշխանութիւնս կուրանամ, և կ'ի մացնեմ որ բերդը ձեր իշխանութեան տակն է, և իմ խօսք չանցնիր՝ յետոյ եթէ մարդ խրկելով բերդը ձեղմէ ուղէ, պէտք է որ դուք եւս արդիլէք և մերժելով պատասխան տաք. եթէ զիս սպանանէ, և ձեզ երկուդ տայ, Աստուծոյ վճիռն է, մահուանս փոխարէն՝ բերդին սպան պանութիւնը ընդունեցէք, երկու չարեաց փաքրագոյնն ընտրելի է, բարեկամաց փրկութեան համար հոգի զոհելը, անոնց թշուառութիւնը չի տեսնելին գերազանց է։ Ապա իւր եղանակ որդին Մէլիք Շահապ խոտին Ահմէտը, իւր տեղ գահաժառանդ և փոխանորդ կարգելով, հաշտութեան աղաջանօք Թիմուրը դիմաւորելու գնաց. 1394 (1394) թուին Շէպիլ էվիլ ամսոյ տասն և հինգին չորեք շաբթի օրը Ակլալ անուն տեղը Թիմուրայ հանդիպեցաւ, խօսակցութեան պահուն՝ Թիմուրայ կողմէն ոչ մարդամիրութեամբ արհամարհանօք և քրտմնջանօք բնուունելութիւն եղաւ, ապա առաջարկեց որ բերդը յանձնէ,

Մէլիք Զահար խոնարհութեամբ եւ սրտաբեկութեամբ սպատասխանեց թէք բերդը իւր տիրոջ ձեռքն է, նուասսա միայն իմ անձէս ուրիշն կարող չեմ, վասն որց անձս ձեր հպատակութեան և ծառայութեան նուրիեցի։ Թիմուր զայն հետը առնլով յիշեալ տեղէն մեկնեցաւ, եւ Մարտինի բերդին մօտերը վրանները կանգնելով նստաւ, բերդը ուղեց և բերդականաց սպառնալիքներ ընելով մարդիկեց. նորա մարդիկները արգիլեցին և ետ դարձուցին, և ծանուցին թէք բերդը յանձնել անկարելի է. բերդականաց գէմ Մէլիք Զահարը անողորմ դահճաց ձեռքը մատնեց՝ և այս կերպով եւս երկուդ տուաւ, դարձեալ նորա անփոյթ եղան։ Մէլիք Զահարէն հարիւր թուման, որ Յումանը վայտան հազար դահճեկան է, փրկանք ուահանջեց. նա իւր ակքասութիւնը յայտնեց կարողութիւնէս և զօրութիւնէս վեր է չեմ կարող հատուցանել. ապա շղթայից կապանքը սաստիացաւ։ Քանի մի օրէն վերջը Նինուէի Մարախինի և Մծբնի մէջ տեղ գտնուած վրանացը ազգաց գիւղերը և ագարակները աւարեց եւ յափշտակեց, զօրաց և երիվարաց հանգստութեան համար դադարեցաւ։

Կատարեալ ուժ և զօրութիւն ստանակէն յետոյ, Զրպաթոյի քաջաց Թիմուրայ կողմէն հրաման եղաւ որ իրմէ ըստին Մարախի վրայ յարձակին. Զզաթայի զօրքերը անհուն մըջմանց նման խումբ խումբ յորդեցին, գիշերը ցերեկուան և ցերեկը գիշերուան խառնելով գուն գործեցին յաղթել եւ նուաճէլ յիշեալ ամսոյն երկուքին. եւ գիշերուան երրորդ պահուն յանկարծակի քաղաքը կոմեցին, գիշերը մինչեւ առաւօտ և նոյն օրը մինչեւ երեկոյ սատանայ Զզաթաները սուսերամերկ զինեալ մարդիկը կանացը և մանկունքը կոտորեցին՝ և բռնութեամբ քաղաքին տիրեցին։

Այս անդունդէն իրենց հոգւոց օձիկը աղատազները, ներքին բերդը դիմեցին և խաղաղութեան նաւահանգիստը ուր կոմեցին, քաղաքը գտնուած մարդկանց եւ կանաց շատերը վիսական բաժակաւ զմայեւալ քաւութեան ընով նեշեցին։ Դարձեալ նոյն գիշեր Մունետիկները

կ'աղաղաղակեին աւարել և յափշոտակել, տուները և գերդաստանները կործանել. Զղաթայի քաջերը և աւարառութաթարները գրգռուելով՝ հետեւաեալ օրը կէս օրուան ատեն մարտ և պատերազմ տուեալ, շուկաները և վաճառանոցները կործանեցին, և մինչեւ երեկոյ տանց եւ բնակութեանց հետք քը թողով անուանի քաղաքը ապահանեալ հիմնարեւին տապալեցին. Երկու կողմէն մեռնողները անմժիւ և անհամար էին, սակայն կ'պատմեն թէ մէծ մասամբ Թիմուրաց զօրաց չարակամ Զղաթաներէն էին:

Ըստ մէծի մասին, բազմութիւնը ներքին բերդը ամբացաւ և համաշռնչ միաբանութեամբ կը ջանային եւ կ'աշխատէին թշնամին ՚ի բաց վանելը Թիմուր երբ իմացաւ թէ նոցա յազմէնը դժուար է, նոր խորհրդով նեն դութեան և գաւաճանութեան ճանապարհը խոտորեցաւ, մարտը և պատերազմը դաբրեցուց՝ և ամրականաց շոզորթն նամակ խրկեց՝ որուն մէջ կ'ըսէր, ձեր Մարտին բերդը պաշարելոց մեծաց և փոքրոց աղքատաց եւ տկարաց՝ գիտութիւն լցի. ձեր մեղաց եւ յանցանաց յամառութեան եւ հակառակութեան ներուած, և ձեր հոդոց և բոլոր ընչից խնայուած է, բարի աղօթքին ուրիշ ձեզմէ բան մի չպահանջուիր, հնազանդութենէ եւ հոգատակութենէ զատքան մի շառածարկուիր, դուք հաւատարմութեամբ սրտի և ապահովութեամբ՝ մեր այս նամակը ձեր ձեռքը գիր հաւատարմութեան և մուրհակ ընելով, մեր առջեա գաք: Նամակը Ամրականաց հասաւ եւ իմաստին սկզբացան, այլ անդգամ պահապանները և տղէտ ժողովուրդը ընդունելով, Թիմուրաց մարդիկները անարդութեամբ վարեցին: Թիմուրաց բարկութիւնը սաստկացաւ և ծով զայրութը քրիքեցաւ և դարձեալ բազկի զօրութեանը յեցեալ, առաւօտուն ընտրեալ գունչ գերուն: և ընդհանուր զօրքերուն էմիր Մահմատը ըստարապետ կարգելով բերդը պաշարելու խրկեց. մարտին և մըմանց նման Զղաթայի զօրքը գնացին եւ բերդը ամեն կողմէն պաշարեցին, ներլութեան և անձիւթեան անդունդը գլորելով տագնապեցին՝ հինգ օր և հինգ գի-

շէր անդուզ և անդադար մարտ սաստիկ եղեալ պատերազմեցան սպանեցին և կոարեցին, այլ բերդը յաղթեց դժուարին և առնելը անհնարին եղաւ. Էմիրը՝ Թիմուրաց մարդ իրկեց և օգնութիւն պահանջնեց, սց անդամ թիւ մուր ինքը անձամբ գնաց, եւ իբրեւ երկնային պատիժ բերդին տակը իջաւ՝ մարտը սաստկացուց և գուն գործեց բերդը նուաճել. բերդականը տագնապեցան ոչ թէ բերդը, այլ և աշխարհս իրենց զլսուն նեղ և անձուկ եկաւ, իրենց յամառութեան եւ հակառակութեան վրայ պահցին՝ քաջութեան բազուկները տակաւ թուլացան, ուժերնին և զրութիւննին նուազեցաւ. Թիմուրաց պատիժամասոր խրկեցին, և առաջին ուխտին և պայմանին համար կենաց ապահովութիւն ներողութիւն և թողութիւն խնդրեցին: Թիմուրաց նենդութիւնը չը գիտնալով երբ բերդին գուռը բացին և գուրօն ելան, անդութ թիւմուր՝ մէծին և փոքրուն չը ինայեց, և հրաման ըրաւ որ առ հասարակ կոտորեն. անմիջապէս սատանաց Զղաթաները Պապ իմթիլ անուն դռնէն բերդը մտան, ապստամբ և հնազանդ չըսելով սուր եղեալ կոտորեցին և սպանին, և զրմանս չըթայակապ գերի վարեցին:

Այն միջոցիս երկու հազարի չափ Խողամը՝ մեծ միջ կիմը դիմեցին, և իբրեւ տուն աղատութեան ապաւինեցան. այլ այն անհաւատները Աստուծոյ տան շուք եւ պատիւ չը դնելով, բոլորն եւս առ հասարակ կոտորեցին և մզկիմը կործանեցին:

Յետ այնորիկ, Թիմուր դիւաց առաջնորդութեամբ և սատանայի թակարեժով անտի մեկնեցաւ և Արձիշի բերդը գնաց, զայն եւս առաւ: Եւ փութանակի Արդիք բերդին վրայ դիմեց, և նորա իշխան Գարա Մէհմէմիւր արտաքսեց 1393 (1393) թունին Շէվվալ ամսոյ սկիզբը նոյն բերդը առաւ և մէջը գանուած զօրքերը՝ ՚ի սայր սուսերի սատակեց (1).

(1) Այլազիքի հեռնակն հաշիւ թէ Հայաստանի քանի մի բերդերուն անունը տալ կը աժամանի կրած աղքաբները և շարիքը զանց ընելով մանաւ և անդ բոլորպին անցիշտառակ կը թուզու վանց բերդին առաւմ, և առկալ կոտորածը, որ թուայ վ. Մէծորեցի ժամանակակից պատմագիրը կը յիշեւ տես երեւ զի:

Ապա ՎԱՎ (1394) թուին Զիղգատէ ամսոյ եօթին, Սրմրզանտի կողմ իւր աշխարհաւէր ձիսն երասաննակը դարձուց։ Մարտինի թագաւոր Մէլիք Զահարը, Էմիր Ռէբին իտաին, Էմիր Խզզէթաին, Էմիր Սիւլչյան, Էմիր Ասպողայ, և Էմիր Զիա իտաին նախարարներով հետր տարաւ, և Ճանապարհին վսոյ Սուլթանիյէի բանտր բանտարկեց, և ինքը Տէցտի գնացագ (Խազաց դաշտի) կողմ գնաց։

Մէլիք Զահար և իւր ծառաները ամբողջ տարի մի մէջ նեղութեամբ և տառապանօք բանտր մնացին, նոյսա վիճակին ուր կայանալը որդիքը և ընտանիքը չին գիտեր։ Թիմուրայ կին (Մէլիքէի քէպիր) Սուլթանիյէ գալով, որպէս թէ Թիմուրայ ակնարկութեամբ Մէլիք Զահարը բանտէն հանեց, և կապանքը թեթեւցնելով՝ զայն Թիմուրայ հնազանդութեան և ծառայութեան հրաւիրեց։

Եցին ժամանակին ՎԱ (1395) թուին և Շատրան ամսոյն Թիմուր Սուլթանիյէի Ճանապարհաւ Համատանի կողմերը անցաւ, և նոյն քաղաքին մօտերը տառներէր օր նատելէն յետոյ, Մէլիք Զահարին, թագաւորական աւետաւոր և ինդութեան բանիքը խրկեց, և պատուիրեց որ կապանքէն արձակեն և ուղածէն աւելի պատուով բերեն։ Մէլիքը Բամազան ամսոյ տասն և հինգին հինգշարթի օրը Սուլթանիյէն մեկնեցաւ, և նոյն ամսոյ տասն և եօթին շաբաթ օրը Թիմուրայ բանտիր հասաւ, Զըղաթայի նախարարները փառօք դիմաւորեցին, և Թիմուր հանդիպման պահուն ուղի կանգնելու օրէնքը յարդեց, պարանցոց փարեցաւ և ձեռքը սեղմելով մէծարեց, տրումութիւնը փարատելու համար անշափ բարեկամնեթեամբ ներովութիւն ինսգրեց, և վեց օր շարունակ կոշունքներով պատաւեց, թագաւորական խիլանէր հադցուց, և առքսական տրօք մեծարեց։ առաջ հարիւր ձի, տառը ջորի, վեց ուղու, բանի մի պատմուճան և բանի բանի ծանրագին աղնիւ ընծաներ շնորհեց, իւր տէրութիւնը իրեն բաշխեց և հաստատեց։ Ապա Տիգրանակերտի տահմանէն մինչեւ Սորապատականի և Հայսատանի սահմանը, յիսուն և վեց դաւաւուց իշխանութիւնը հրովարտակին մէջ նո-

րա անուան գրեց, և պատուիրեց որ սյն սահմանաց նախարարները եւ իշխանները Մէլիք Զահարին իշխանութեան տակ լինելով, նորա դատողութեան համեմատ գարծէն, երկրին հարկը և մաքսը նորա գանձարանը կրեն և յանցնեն։ առաջ՝ որ ատեն որ Թիմուրայ կողմէն կանց ուի գալու հնազանդելու, եւ ծառայութիւնը անթերի կատարելու դաշտմբ, ուստ և երգում ընկը տուաւ, և կատարեալ փառօք Մարտինի կողմ խրկեց։

Զահար՝ նախ իրեն տուն թշրւառութեան եղող Սուլթանիյէն փառօք և պէրճութեամբ հանդիպեցաւ, յետոյ Թաւրիդի իշխան Թիմուրայ որդի Էմիր Ննշանէն եկաւ, նա վինքը պատուալ մեծարեց եւ Ճանապարհի պաշարի ձեռնոտուութիւն ըրաւ, յօթեւանէ յօթեւան իշեւանները կարելալ ՎԱ (1365) թուին և Շէփիար ամսոյ տասն և մէկին ուրբաթ օրը ուրբախութեամբ Մարտին հասաւ, գահաժառանգ որդին Մէլիք Սալէհը ամենէն յառաջ դիմաւորեց, ապա քաղաքին միւս երեւելները գիմաւորեցին և հանդիպմամբ փառաւորեցան։

Մէլիք Զահար երջանիկ բախտով և նոր թագաւորութեամբ միշեալ տեղովն իշխանութեանը ժամանեց։ և նախ Հիւսամ խտանի դպրոցը իւր փառաւոր հօր գերեզմանը այցելութեամբ պատուեց, ապա իշխանական գահը բազմեցաւ, մէջ և փոքր նոր ուխտադրութեամբ կրենց աւենչանաց հասան։

ԳԼԻՒԽ ԺԴ.

Թիմուրայ խաղաց գաշտի կողմ երժան՝ Շէխ Խարահիմին լնծայիր գիմաւորելն։ — Թիմուրայ խաղաց գաշտին հետ տեղի ունեցած գէպիքրուն պատման։ — Խաղաց գաշտի ժողովրդոց։ — Գաշտին և կասպից ծովան։ — Մէրայ քաղաքին նկարագրութիւններն յիշեալ երկրին նախկին հնութիւնն։ — Եւ վերջին աւերտն։

Մաղաց դաշտի աշխարհը՝ բազմամարդ քաղաքներ և լնդարձակ դաշտեր ունէր, և Թոգթաշ խանին իշխանութեան տակն էր, որ յարաջադրոյն Թիմուրայ հետ մարտ

եգեալ պատերազմեցաւ, և բախդին դատակնքով՝ ՚ի պար տութիւն մասնեալ՝ ՚ի փախուստ աճապարեց :

Յիշեալ երկիրը Տէցա պիրքէ (Պիրքէի դաշտ) անունով եւս կ'յիշուի, և այսպէս անուանելոյն պատճառը այս եղաւ՝ թէ նոյն դաշտի ընակիները, և թէ այն կոզմ գրանուող ազգերը ամեննեքեան կա ապաշտ էին, հաւատոքէ և կրօնքէ տեղեկութիւն չունեին, Պիրքէ Խան անուն թագաւորը՝ Շնորհիւ Տետրն աստուածային ուղղութեան արժանի լինելով, փառք և ժագաւորութեամբ փառաւորեցաւ, իւր ծառաները և պարագաները, և ըստ մեծի մասին յիշեալ դաշտի ժողովուրդը հաւատով լուսաւորեցան : Այն բարեւրախող քազոքին կաւրքերը խորուակեց, եւ Աստուծոյ միութիւնը դաւանելու նշանները բարձրացուց, և Խալմանց օրէնքը գործադրեց, վասն սրյան կողմերը՝ ՚ի հաճոյ նկեան Պիրքէ անունով յիշուեցաւ :

Թիմուր միուքը դրաւ որ յիշեալ աշխարհը արշաւէ, Երվանի իշխան Նէյս Խալմահիմ՝ որ իւր նախնեաց մերունդը մինչեւ Նուշերվանի կ'համնէր. երբ իմացաւ որ իւր երկին մէջէն անցնելով յիշեալ դաշտը ճանապարհորդել կուզէ, իշխանութիւնը՝ ՚ի գործ դրաւ, իւր բովանդակ տէրութեան նահապետ ժագաւորութեան վեզեղը՝ և երկին դատաւոր Պայէգիստ կոչեց, և այս ցաւը փարատելու և տնօրէնութիւն մի ընելու համար խորհրդոց ատեան կազմեց, և հարցուց թէ՝ փախստեան կողմը բռնել պէտք է, թէ մարտի և պատերազմի որոշումը տայ, որ կողմը ընդունելի, և կամ ո՞ր ճանապարհը վայելուչէ; Դատաւորը մարտի և պատերազմի հաճութիւն ցղուուաւ, այլ պատասխանեց թէ՝ լեռներու դլուիր և ճանապարհը դժուար տեղերը փախչիլ և անճնապահ լինիլ՝ ընդունելի և արժանի է. Նէյս Խալմահիմ ըստ թէ՝ այդ որոշումը բոլորովին սիսալ է, երբ իմ ազատութիւնս և իրկութիւնս հոգալով, աղքատները եւ Աստուծոյ ժողովուրդը թշնամոյն ճիրանները և ատելցն բանոր ձգեմ երթամ, դատաստանի օրը բարձրելոցն Աստուծոյ, բնչ կերպով պատասխան տալ կարելի կը լինի,

Դամ պէտք է երկիրը և հպատակները պահպանելու համար քաջութեան գօտին կապենք, եւ գուն գործեմք թշնամին վանել, և կամ պէտք է քաջրութեամբ փութապ այն անօրէնը դիմաւորել, և հնազանդութիւնը ընդունել և ծառայել, եթէ մեր իշխանութիւնը թողու և չարիբները բաւայ, ահա այն է մեր կամքը, իսկ եթէ անիրաւութիւնն գործելով, կամ իշխանութիւնէ զրկէ, կամ ՚ի բաներ մասնէ և կամ սպանանէ, ընդունիմք, և նոր իշխան կարգելով՝ աղքատք և տնանկք իրենց տանց և բնակութեանց մէջ, հոգւով և տուցուածով ապահով կ'լինին ըստա՝ և դիմաւորիլ նախապատիւ սեպեց : Նախ Թիմուրայ դալատեան համար քազաքը զարդարեց և հանդեպներ ընելուաւ շուկաները և վաճառ անոցները շքեղութեամբ պայծառացուց, ապա հնազանդութիւնը և հպատակութիւնը տառուգելու համար, յանուն Թիմուրայ դրամ հատանել և լութէպէի աղօթքը կարդալ տուաւ, յետոյ ընծանաւ և պատարագ, և պէտպէս ազնիւ և չնաշխարհիկ բաներ պատրաստեց՝ եւ բերցենելով դիմաւորելու գնաց : Զղաթսցի սովորութեան համեմատ՝ օրէնք եր որ իւրաքանչիւր ընծայից տեսակը ինն հատ լինի, Նէյս Խալմահիմ եւս, Թիմուրայ օրինաց շուք եղեալ, ամեն տեսակին իննիր հատ տարաւ՝ և երբ Թիմուրայ առջեւ ընծաները մատոյց, միայն ուլում հատ գեղեցիկ գերի բերած էր, երբ պատճառը հարցուեցաւ, համեստութեամբ պատասխանեց թէ, իններօրդը ես ինքնին իմ անձս է. այս սքանչելի շողոքորթութիւնը Թիմուրայ բնութեան համաձայն եւ զարմանալի գալով, հաճութեամբ նուելները ընդունեց, պատուց և յարգանաց տեղը բազմեցուց, դու իմ որդիս և այս աշխարհիս մէջ փոխանորդս եւ հաւատարիմս ես ըստաւ, ծանրագին իմիլաներ հագցուց, մարդասիրութեամբ և քաջրութեամբ վարուեցաւ, իշխանութիւնը հաստատեց հաւատարիմս իւր երկիրը և իշխանութեան տեղը վերադարձուց :

Յետ այնօրիկ՝ Նէյս Խալմահիմ իւր ընծաները կատարեալ ընելու համար, ուտելիք և ըմպելիք, անթիւ և անհամար ազնիւ մրգեղներ Թիմուրայ բանակը բերաւ.

Զղաթայի զօրաց բաժնելէն յետոյ՝ այսքան ալ աւելեալ
մնաց, և անսառունք անդամ՝ բաժին ունեցան:

Խաղաց դաշտի նախարարներէն Այխտ կիւլվան՝ Միւն
քարաթ կամ Գրանկիրաթ ցեղէն էր, Թոգթաշ խանի ծա-
ռայութեան մէջ ձախակողմէն նախարարաց գլուսա որ է-
միրն էր, քանի մի ծառայութեան մէջ պակասութիւն, և
Թոգթաշ Խանի կամաց հակառակ գործէր ունէր, յիշեալ
Խանը՝ որ հզօր թագաւոր մի էր, Այխտ կիւլվայ միչու անոր
ցասումէն կ'զգուշանար: Պատահմամբ գիշեր մի արքէ-
ցութեան խնձորքի մէջ, մինչդեռ գլուխները տաքցեր
և խօսքերը քաղցրացեր էր, Թոգթաշ խօսքը Այխտ կիւ-
լվային ուղեւով ըստաւ, քեզի համար օր մի ունիմ որ ըգ-
քեղ կենաց պարենէն պիտի զիկէ, և լուսութեան անկիւնի
մի մէջ պիտի քնացնէ: Այխտ կիւլվայ վրիսիւալ համարելով
պատասխանեց թէ, քաւ լիցի որ իմ տէրս իւր ծառային
լինաւէ, եւ իւր ձեռօք հաստատած շէնքին կործանման
փոյթ տանի, սակայն նորա առաջն խորհուրդը ստուգե-
լով՝ թագաւորը խարեց և ՚ի կարիս որավայնի պատճա-
ռելով ժողովէն բաժնուեցաւ. և թագաւորին յատկա-
ցեալ սեփհական ախոռը գնաց, առանց գիտնալու պա-
հապանաց զօրաւոր նժայդ մի աշտանակեց, և իւր բա-
րեկամաց պատուիրեց թէ, զիս ուզովը Թիմուրաց քով
թող գտնայ. Նցին մութ գիշերուան մէջ լեռները և դաշ-
տերը ձորերը և բլուրները կարելով վրկութեան նաւա-
հանդիսար փութաց: Թոգթաշ Խան էրք նորա փախուա-
որ իմացաւ, ետեւէն ձիաւորներ հանեց և փութացուց,
այլ նորա ձիուն փոշիներուն անդամ չիհամնելով՝ անօդուա-
ետ դարձան: Փախստականը գնաց Թիմուրաց հասաւ՝
հաղոսակութեան յարգը և ծառայութեան օրէնքը կա-
տարելէն զինի, գլխէն անցածները մի առ մի պատմեց,
դուք այսքան պատերազմի նեղութիւններ կրելով, տէրու-
թիւնը ընդարձակելու համար լիսները և ապառաժուա-
ները կ'թափառիք, բիւրաւոր ցաւօք և նեղութեամբ ըս-
տացած տեղերդ անօդուատ և անշահ երկիրներ են. Խաղ-
աց դաշտի հարստութիւնը շատ, գրաւումը եւ նուա-
ճումը դիւրին, պատճառն բնէ որ պատրաստաւ շա-

հուց և վաստակոյ վրայ լուսութիւն կ'սահէք, զձեղ վա-
նելու կարող եւ զօրացդ արգելք լինելու բերդ չկայ,
գանձ, հարստութիւն և անսառունք շատ են, ըստ, եւ
թիմուրայ միտքը գէպ ՚ի այն կողմը յօժարեցուց:

(Յիշեալ դաշտի մողավորոց նկարագրութիւն) :

Այս դաշտը Թաթար աղդին սեփհական է, և շղա-
վայրը ընդ լայն և ընդ երկայն ընդարձակ է, օդը աղնիւ,
գնայտն ջրերը շատ, բերդերը սակաւ, օդուտը շատ,
մարդիկը քաջ, զօրքերը և գունդերը ուժեղ և զօրաւոր,
որդիքը արեգակնախոյլ, դատերքը լուսնոյ նման, կերպա-
րանինին գեղեցիկ և սիգաձեմ. խօսքերնին քաղցր և գլ-
րաւիչ, մէջ մասամբ խելացի, տնօրէնութեան և պատ-
րաստութեան մէջ կատարեալ, կամբերնին շարունակ ի-
ջեւանել և չուել, սովորութիւննին զուարձութեամբ և
զրուանօք ուտել և ըմպելէ, յափշտակութենէ և աւարա-
սութենէ ապահով և հետի են, իրարու հետ միշտ խա-
զազութեամբ և բարեկամութեամբ ժամանակնին կանց-
նի: Յառաջադցն Խուարդիմի կողմէն բազմաթիւ վաճա-
ռականիք և կարավանը զանազան առյունօք և վաճառք-
ներով երեք ամսուայ հեռաւորութենէ աներկիւղ ճամ-
բորդութիւն լինելով Արքիմ կ'երթային, առանց կարօ-
տելու պիտոյքի պաշարի և ընկերի, աղդաց և ցեղից մէ-
ջն կոչունքներ վայելելով փառաւոր եւ պատճառուոր
կ'անցնէին:

(Պաշտին նկարագրութիւն) :

Յիշեալ երկիքը ընդ լայն կասակից և սեւ ծովերուն
միջոցը, հարաւային կողմէն սկսեալ գէպ ՚ի արեւելք կը
տարածուի, Խուարդիմի երկիքը, Թուբքաստանի, Զդաթա-
յի, Խաթթայի, Զինի, և Մողաց երկիք սահմանները կը
հասնի: Արեւմտեան կողմը Ռուսաստան, Պուլըաբք եւ
Թաթարք: Հիւմասիցին կողմը աւազակցոյ բլակներ, բազ-
մավանդ և ճանապարհները խափանեալ, բնակիներէ

զւրկ անսապատ մի, աւերակ եւ անշնչն ամսոյ տեղ մի է, ոչ թէ մարդի մներէ, թերեւս անսառներէ անգամ գաւարի է :

(Կասպից ծովուն նկարագրութիւնն) :

Յիշեալ ծովը՝ Պարսից ոճով՝ Գրլզըմ անունով հրաշակուած էր, Նիւսիսսցին կողմը եղած սեւ ծովը քիչ հեռաւորութեամբ է, միայն կովկասու. լեռներուն մէջ պարփակուած է, բոլորտիքը կիւանի, Մազմանարանի երկիրները, Աստրապատ և Նիրվան քաղաքները, և բազմաթիւ Պարսից քաղաքներ ունի, ինքը պարփակեալ ծով մի գուլվ, Ռուսաստանի քանի քանի գետերու եւ վտակներու հետ, Նեղոսի և Եփրատոյ նման, ձիհուն և Սիհուն գետերն եւս նոյն ծովը կ'թափին, այլ ոչ աւելնալը և ոչ նրանդիլը տեսնուած է :

(Սէրայ քաղաքի նկարագրութիւնն) :

Ռուսաստանի կողմէն եկող Խյլ գետէն բաժնուած՝ Սէնքիսյա անուն փոսակին վրայ վախճանեալ սուլթան Պիրքէն, յիշեալ դաշտը Սէրայ անուն մեծ քաղաք մի շնչեց և արքոյանիստ ըրաւ, դաշտին ժողովուրդը Խալամութեան երջանիկ բախտին և բարիքը առաստ օքնեալ հաւատքին հրաւիրեց, ազգաց շատերը հրաւէրը ընդունեցին և իսլամութեան ճանապարհին հետեւեցան, վախճանեալ թագաւորը քաղաքին մէջ Խալամութեան արարողութիւնները կատարել տալով, նոր կ'նորոյ մզիթներ աղօթարաններ՝ և դպրոցներ կանգնել տուաւ, կրօնից աւանդութիւնները ուսուցանելու համար, պարգեւս և պատիւս խոստանալով չորս կողմէն երեւելի գիտնականներ հրաւիրեց, և եկողները տրօք և կատարեալ մեծարանոք փառաւորեց: Որք են Գաթիպ խոտին Բաղի գիտնականը՝ և շէյխ Սաստ խոտին Թէֆթազանին դժուարիսաց բանից մեկնիչ, Սէյխտ Ճէլալ խոտին, Հաֆզ խոտին Ղիստարափ, և Ահմէտ Ճինտի, և ասոնց նման քանի քանի Հանիքի և Շաֆիի աղանդէն՝

գիտուններ և առաքինիներ, և բազմաթիւ պարկեշտ քերթողներ և ազնիւ մարդիկներ ժողովելով, կրօնից և մոտաց կրթութեան օգտակար գիտութիւններ կը հատարաւի երած որ յետոյ Աւգի և Խանի պէյերու ժամանակները աւելի ծաղկելով, քաղաքը գիտնականաց ժողովարան, և մետաղ առաքիններց եղած էր:

Կըպատմեն թէ՝ այս քաղաքը այն աստիճան բազմամարդ, ազգաց և ժողովրդոց բազմութեամբ մարդկանց ծով մի եղած էր, որ որ մի քաղաքին երեւելեաց մէկին ծառանի փախաւ և քաղաքին մէկ կողմը վաստակի համար խանութ բանալով՝ քսան տարիի չափ առ և տուր ըսաւ ժողովրդոց բազմութենէ և շատութենէ՝ և ճանապարհայտ ամբոխէն, աէրը անորմէ տեղեկութիւն մի չկարաց առնուլ. (մնացեալն եւս սար համեմատ գիտցիք):

Ժամանակ մի յիշեալ քաղաքը մինչդեռ այս օրինակ բազմամարդ և շէն էր, աշխարհիս գէսպէքերով՝ գիշերուան և ցերեկուան դարձուածներով՝ ապականիներ յայտնեցան, մանաւանդ՝ անցոյ Թիսուր և Ս. յիտ կիւվայ որ անդուլ և անդադար մարտ և պատերազմ աւար եւ յափշտակութիւն ըրբն, նեղութիւն և տառապանկը խոռովութիւն, և շարութիւն հասուցին. օրով՝ քաղաքը և ժողովուրդը եղծեալ ապականեցան, դաշտը գտնուած ազգերը նեղութեանց հանդիպեալ սպառեցան, և մնացեալներն եւս այսր անդր վայրավատին ցրուելով՝ նոյն երկիրը մարդիկներէն դատարկ մնաց, ճանապարհները խափանեցան, քաղաքը կործանեալ անհետացաւ: Առաջին շինութենէ մինչեւ իւթ կործանումը՝ վաթառն երկը տարի եղաւ: Վախճանեալ պատմագիրը Ա. (1436) թուին, Հաճի Թարիսանտ քաղաքի և Սըմրդանտի գիտնականաց գլուխ խոճայ խասամիտին խոճայ Ապտիւլ մէկիրի որդւոյն հետ տեսնուելով՝ խօսակցութեան ատեն, յիշեալ գաշտին որպիսութեան վկայօք խօսք կ'լինի, խօճայ խսամիտտինի Ա. (1441) թուին կերպով մի յիշեալ դաշտը ճանապարհորդութիւնը պատահելով՝ տառապանօք նեղութեամբ եւ տաժանմամբ անցնիլը, քանի մի ոտանաւոր քերթուածով բամբասեր է, յառաջ որը այս որ շէն էր, Թիսուրաց ապա-

կանութենէ յետոյ, աւերակ լինիլը հրատարակեր, և վախ ճանեալ պատմագրին բերանացի գանդատանօք պատմերէ:

Թիմուրայ թաղաց գաշտի կողմէ երթալու:—Թոգթաշ խանի պատկազն և խորսակումն:—Այս կիւլսի նենդութիւնն:

Ակէ յառաջ գրուած և պատմուածին համեմատ, Այս կիւլսի յորդորմամբ, ամբարտաւանն Թիմուր մարտի և պատերազմի քաջերը ժողովեց՝ սպանման և կոտրման գործիքները պատրաստեց, և աստեղամիւ զօրօք եւ թշնամին որսացող գունդերավ, ծովու նման գոչելով, հեղեղի նման յորդեւով երկնից նման որոտալով, միշտ գաշտը գնաց. երբ նորս գալստեան լուրը տեղւնի թագաւոր Թոգթաշի ականջը հասաւ, խկայն ազգաց գըլի խուղութուն՝ մաղավորոց մեծամեծներուն՝ շղակայ բնակչաց՝ և բարսուիքը գոնուած ծառայից, ազգաց և ցեղից երեւելիներուն, յաջ և ահեակ գերեաց և ազատաց՝ և ամենայն զօրաց հրովարտակներ և մարդիներ խրկեց՝ եւ Թիմուրայ դէմ պատերազմելու հրաւիրեց: Զօրքերը մըրջ մանց և ծովու ալեաց նման յորդան տուեալ մարտի եւ պատերազմի սպարէց ժողովեցան և երբ երկու կողմի զօրքերը՝ կանաչ ծովու նման իրար կը խօսնուէին, Թոգթաշի նախորդաներէն՝ անցարմար Էմիրմի, որ ժամանակ չը չդիսցող աբաղալի տէս կը բազասէր, այսինքն՝ ուրիշ Էմիրի մի հետ արեան գատ ունենալը պատերազմի ատեն յայտնեց: Թոգթաշ խան վննիքը խրամելով՝ ըստ այն, քու դատդ և վէճդ կը բառի, և պատիւդ կյարգուի, սա կայն այժմ պատահած մեծ շարփը, տէրութեան և ազգին հանդիպած ահագին խուղութիւնը կը տեսնաս, այս մեծ ցաւը վանելէն եւ բառնալէն յետոյ, ստոցդ գիտայիր որ հակառակորդդ տանջանաց հրապարակը կը բերեմք և ձեր իշխանութեան կ'յանձնեմք, այն ատեն եթէ կուզես վը բէմինդիր եղիր, եթէ կուզես արեան գինը առնելով կամ

բըրդ կատարէ, յամառեալ Էմիրը ըստ ոչ, այժմ պէտք է որ լինի, եթէ ոչ քեզ հնազանդութիւն չըւնիմ, Թոգթաշ պատասխաննեց թէ յամառ՝ գժուարին և անկարելի եղած խնդիր մի առաջարկեր, այժմ մենք մեծ վտանգի մատնուած ազգ մի ենք, այս դժոնդակ գործը միաբանութեան գօտին ածելու և ընկերութիւն կազմելու պէտս ունի, նա որք մն որ իրաւուց Էմիրը Ա՛դ Ա՛դ կոչուած ցեղին, և նորա մեծ բազմութեան հետ միաբանելով՝ զօրքէն բաժնուցաւ, և Յունաց աշխարհի կողմ գնաց, Անդրիանու պօլսց դաշտերը երթալավ՝ այն կողմերը տուն և բնակութիւն հաստատեցին: Այս կերպով Թոգթաշի վիճակը վատթարացեալ չփոթեցաւ, և զօրքը նուազեցաւ, դարձեալ նա՛ զիարդ և ից ըստ պահանջման հարկին՝ հեծելազօրը և հետեւամերը կազմեց՝ և գտնուած գումարուակաց հետ՝ Թիմուրայ դէմ ձակասեցաւ: Կատաղի Թիմուրայ որսիսութիւնը յայտնին և նորա զօրաց բազմութիւնը և քաջութիւնը բացերեւակիի է, երկու կողմի զօրքը՝ երկու ծովու նման իրարու դէմ ձակասեցան, մարտիկը և պատերազմականիք սկսան միմեանց դէմ մաքառիլ եւ կոռուիլ, բախտի և ձակաստագրի դատակնը ունի, բախտին մունետիկը՝ Թիմուրայ ժամանակին յաջողութեան դիրութիւն տալով՝ Թոգթաշի գունդութիւնը թշուառութեան փոշով խորտակեցան, և բախտին ձախորդ գիապուածով ի պարտութիւն մատնեցան: Թիմուրայ անիծեալ զօրքերը՝ մեզուի նման ցրուեցան, և Խաղաց դաշտի Երվիրները նատան, ազգաց և աղանց տիրեցին, ժողովուրդը աւարեցին և յափառակեցին, և շատ մարդիկներ կաստեցին և ցնցեցին: Թիմուր՝ հարատութեան առատութիւնը և գերմիները բաժնելէն յետոյ կանոնները և օրէնքները փոխեց, տութան Պիրէկի պալատը Սէրայշրդ և Հաճի Թարիանաքաղաքները կործանեց, ժողովուրդը յօտարութիւն վուարեց, գոնուած գանձը և հարսառութիւնը, ձիերը, և անամոց ջոկը, Այս կիւլսի կիւլսի երեւելի և յաշ ամենեցուն ցանկալի, և Թիմուր՝ իւր տէրութեան պաշտօնէից մէջ, փառաւոր, և ընկերաց մէջ իշխանութեան աէր եղաւ:

Այսու կիւ-վայ՝ Թիմուրայ հետ Սըմբդանտ երթալու
և առաջարկին ճածկաբար իւր ազգականաց եւ
երկրին ժողովրդոց և բարեկամաց՝ նամակներով մարդիկներին իրկեց, և պատուիրելով ծանոց թէ՝ իրենց գտնուած
տեղէն չուեն, և մէկ իջեւանը երկու օր չմնալով՝ փութան
թշնամոյն անմատչելի՝ շրջապատը ամրափիսկ, այս ինչ
գժուար ճանապարհը և անառիկ տեղը երթան իջեւա-
նին. Թիմուր կոյր կարիք մի է, եթէ իրենց յաղթէ՝ նորա
վնասներէն և չարիքներէն ազատիլի է, և ծա-
նոց թէ՝ հետամուտ է նա ստացուածքնին յափշտակել,
մարդիկները կոսորել, և վայրավատին ցիր ու ցան ցրու-
ուելը Յիշեալ ժողովուրդը հրամանին հնազմնդելով փու-
թանակի աճառպարանօք շուեցին, ապահով տեղերը եւ
դժուարուու ձորերը գնացին ամրացան նատան:

Եւս այնորին՝ օր մի Այսու կիւ-վայ Թիմուրայ խոյք բաշ-
նալով, այս օրինակ իւր դիմաւորութիւնը ծանոց, Տէր Ար-
քայ, նուաստիս ազգականները և ժողովուրդը մեծ բար-
մութիւն է և ամենեքեան ինձ օգնական և ձեռնոտու են,
իմ խաղաղութիւնս ՚ի նոցանէ, և նոցա ապահովութիւնը
և հանդսութիւնը իմ տնօրէնութեամբս և խաղաղու-
թեամբ է ։ յացանի է թէ Թուդթաշ ինձ հետ ունեցած
թշնամութեան վոէժը մերձաւորներէս և ժողովուրդէս
առնլով՝ իւր բարկութեան հուրը նոցա կորստեամբ
շիջուցանելու մաօք՝ այն ազքատաց վնասներ պիսի տայ,
այս ցաւերուն բարձումը՝ իմ իշխանական տնօրէնութեա-
նըս կրթերաբերի, և դժուարին դործոց լուծումը՝ իմ խոր-
հրդոցյ կապուած է, անոնց հանդիպած վնասները՝ ինձ
կ'հանդիպին, և անոնց համած տրտմութեան փոշն՝ իմ
զուարձութիւնն կը տրտմեցնէ, ձեր բարձր թագաւորա-
կան մեծութենէն կ'ինդրուի որ ձեր բարի տնօրէնութեան
պահանջման համեմատ, յիշեալ ազգին ներկային և բա-
ցակային սրտերը փայփայելու և մոքերը բժշկելու հա-
մար, ձեր հաւատարիմ ծառային հետ հրովարտակ մի
խրկէք պատուիրել հրամայէք, որ անոնի մեկնին և ձեր
դժուաթեան հովանաւորութեան տակ գան, իսաղաղա-
նան և անդորրանան, և այն վուանդաւոր դաշտէն եւ-

թուգթաշի վնասներէն և չարիքներէն ազատելով, մասցած
փոխ առեալ կեանքերնին ձեր փառաւոր հովանաւորու-
թեան տակ անցնեն, եւ արքունի ծառայութեանդ մէջ
աշխատին, յաւել քան զայս հրամանը թաղաւորիս է ։
ազգին և տէրութեան անօրէնութիւնը՝ ձեր բարձր կա-
մաց կ'մնայ ըսելով խօսքը վերջացուց ։ Անմիտն Թիմուր
պատասխանեց թէ, այս գործը յառաջ տաներու և նպա-
տակին հասցնելու քեզմէ աղէկ, և այս հակառակորդին
անձին դէմ, քեզմէ ուրիշ ավ կայ . արդ պէտք է որ այս
գործին դուք ինքնին ջանոցք, և այս ինդիրը նպատակին
հասցնելու անձամբ աշխատիք ։ Այսու կիւ-վայ գործը ծած-
կելու և Թիմուրայ միտքը գողնալու համար ըսաւ, պէտք
է որ, ձեր հրովարտակին հետ մեծ նախարարներէդ մէկը
ինձ հետ ՚ի միասին լնիւնցն ժամանակին յիշեալ ազգին մե-
ծամեծներուն և երևելիներուն շղզքորթն ամսակներ գրեց,
և Այսու կիւ-վայ՝ մեծ կամրի մի հետ, իւր նպատակեալ
տեղը ուղեւորեցաւ ։ Յետոյ Թիմուր Այսու կիւ-վայի թա-
կարմը բռնուակը, և նորա խարէյութեամբ փախվլը ի-
մանալով, հրամանը ետ առնելու մարդիկներ իրկեց, եւ
սաստիկ սպատուիրեց որ, փութանակի երթան զայն ետ
րերէն։ Այսու կիւ-վայ իւր ազգին երթալ հաւանելին յե-
տոյ՝ հրամանը ետ առնելու եկող մարդը հաղիւ հասաւ,
և հրամանը ներկայացուց ։ Այսու կիւ-վայ՝ ճանապարհին
ընկեր եղող կմիրը, և յետոյ եկող մարդը՝ ատեան հանեց
և միտքը եղած խօսքերը այսպէս պատմեց ։ Թիմուր ընդ-
համաւր աշխարհս կոսորելու և աւաբելու ջանացող ան-
գութ անօրէն մի և Աստուծմէ շիվաբաղող մարդ մի է, սա-
կայն ետ Աստուծմէ կ'վախնամ, և Թիմուրայ հետ լնիւ-
րանալէն տաղուկացեր եմ, անոր ծառայութեան և հապ-
ակաւթեան մէջ լինիլը, անզգամութեան հետամուտ լի-
նիլ է ։ արդ՝ օր յառաջ Թիմուրայ կողմ երթալով, փու-
թայէք գործը իմտցնել, ըսելով խրկեց ։ Նոքա սուրհան-
դակի արագութեամբ գնացին և Թիմուրայ ներկայանա-
լով իրենց պատգամաւորութիւնը ծանուցին, սորջանօք
սիրաք խռովիցաւ և աւաղելով միտքը տագնապեցաւ, և
ուրիշ հետարք ցգոնդարուն անհոգութեան տուաւ, և փու-

թաց ձիոյն երասանակը Սրմբղանտի կազմ՝ դարձնել, այս առևէտեւ Թիմուրայ իշխանութիւնը և հրամանը իշխալ դաշտէն բարձաւ:

Վ'պատմեն թէ Թիմուր խր կենաց մէջ երիսւ մարդ գէն ուրիշ մէկու մը չխաբուեցաւ, և նոցա ձեռքէն եւ վնասէն չկարաց աղատիլ, մէկը յիշեալ Ա. յիս կիւլանէ, յակ միւոր Եգիպտոսի գիտնականներէն դատաւորաց գատաւոր իսկն Խալութուննէ, որոց ընդարձակ պատմութիւնը և Թիմուրայ հետ ունեցած գործերը և խարէյութիւնները, չնորհիւ բարձրելցն Աստուծոյ կիւմուց պիտի պատմենք ունուար սարդ առջ ունուար սարդ ունուար սարդ ունուար:

ԳԼՈՒԽ ԺԷ.

Էմր Ա. յիս կիւլայի և Թոդթաշ խանի պատրազմներն: — Ա. յիս կիւլայի փախուստն: — Թոդթաշ խանի մահն: — Ճէլալ խանինի գարձն: — Ա. յիս կիւլայի մահն: — Թիմուրայ Աստրասական գալն: — Թահարթին հշազմտիլն: — Թիմուրայ Գամալզին և կեսարից կողմնց գրած նամակներն: — Ակբարից թագաւորին գեւագն և նամակ իրկելն: — Պիրուան խոտեին Եգիպտոսի և Յունաց աշխարհի թագաւորաց գրած նամակներն, և նոցա պատասխանն: — Թիմուրայ յԵգիպտոս խլկած նամակն և դեսպանն:

— Եւ Մէլք Զահարին պատասխանն:

Երբ Ա. յիս կիւլայ Թիմուրայ Ճիրաններէն աղատեցաւ և իւր աղգին և ժողովրդոց մէջ իւր կամաց համեմատ՝ անկախութիւն և սեփականութիւն դտաւ, Թոդթաշի գործերէն և շարժմունքներէն շարունակ զդուշանալով, հետագութէն և լրտեսելէն չփափարելէն զինիւ մարտի և պատերազմի կաղմեցաւ և պատրաստեցաւ, միայն թէ ինչքը թագաւորելու արժանաւորութիւն և բաւականութիւն չունենալով՝ միտքը դրաւ նոր թագաւոր կարգէ, և բրունութեամբ թագաւորական գործերը ուրիշն համար պատրաստէ՝ ցեղից մեծամեծները և աղգաց նախարարները հրաւիրեց, ամենեթեան հրաւէրը ընդունելով եկան մօտը ժողովեցան, և ինքը Թոդթաշի դէմ ճակամելու եւ պատերազմելու բաւականութիւն ստացաւ, և գուն գործեց արշաւելու պատրաստութիւնը կազմել, Թոդթաշ

առակաւին Թիմուրայ հարուածներէն ըստ յամենայնի հանդարտութիւն ըլ գտած, երբ այս չարագուշակ լուրը լրաց, փութաց յակամայից նոր զօրք ժողովիւլ և թշնամին վանելու պատրաստութեան աճապարել: Ա. յիս եղանակաւ քանի մի անգամ իրարու վրայ երթալով պատարազմեցան, երբեմն ասոր կողմը եւ երբեմն անոր կողմը յաղթելով, յաղթութիւնը կ'ըռնաբարուէր, վերջապէս տասն և հինգ անգամ իրարու արիւն խմելու ծառաւեցան, և մէկ զմէկ ձեռք բերելու գոտեւորեցան, և շատ մարդիկներ կուսարելով՝ իրուստ մատնեցան, և բազում գանձք և ստացուածք վասնեցան, և ժողովուրդք տառապեալք՝ այսդ անդը ցրուեցան:

Հուսկ ուրեմն Ա. յիս կիւլայի զօրութիւնը եւ կարդութիւնը, փառքը և մեծութիւնը նուազեցաւ, եւ բախտին հայելին բեկեալ և փոշուեալ խորտակեցաւ, այն կողմի դաշտերուն ելից և մասից՝ ճանապարհաց եւ շաւզաց խկութենէ տեղեակ լինելով հինգ հարիւրի շափ հեծելը զօրոք անապատի կողմ փախաւ, և այն կողմի անձանութ և ամայի դաշտերուն և խոտերուն մէջ ծածկութելով պահուեցաւ, նորա որ կողմ երթալն և վիճակին ուր կայսնան ոչ ոք իմացաւ, և աեղեկութիւն չուռաւ:

Ա. յիս Թոդթաշ նորա նենդութենէ եւ խարէյութենէ կակածելով չարունակ շրջականները հետազոտելէ չփափարեցաւ, մից ամսոյ չափ ժամանակ անցաւ, և երբ տեղի մի լուր չփափաց առնել, Թոդթաշի սկրար ապահովեցաւ և զօրաց հրաման տուաւ: Ա. յիս կիւլայ եւս որ Թոդթաշը լրտեսելէն չըր գագարէր, երբ լսեց թէ Թոդթաշը զօրքը ցրուեց և ինքը միայնակ մնաց, յաջոզաւթեան դիպող ժամանակ դիմանալով օդաչու երիվարները հեծան, գիշեր և ցերեկ քուն և հանգիստ մերժելով, յանկարծակի յափշտակիչ կայծակի նման Թոդթաշը կոփեցին, նաև այն կէտին իմացաւ որ յետաձիգ օրհար խր կենաց օձիկը կը քաշէ, ամեն ուստեքէ փրկութեան ճանապարհները փակուեցաւ, և ամեն կողմէն աղեալից տեղացումը երեւեցաւ, որքան որ ջանք, յոյզ և խնդիր բրաւ, օդուտ մի ժի տեսնելով տկարացաւ և ընկճնեցաւ, և յանկարծական

դիպուածով սրամահ զբաւեցաւ ՚ի կենաց։ Այս մեծ պատերազմին՝ թշնամւոյն հետ տան և վեց անդամ կռուեցան։

Թոգթաշի մահուամբ՝ դաշտին իշխանութիւնը Այս կիւվայի անցաւ, Թոգթաշի որդիքը փախուցեալ ցրուեցան, Ճէլալ խոտին անուն որդին՝ Ոռուսաց և Քըր պալի կողմը՝ և միւսները Սաֆթայի կողմ՝ երթալով՝ պահուեցան։

Յետ այնորիկ՝ Այս կիւվայ թագաւորական գործը ուղածին գրաւել տալով, հրամայելը և արդիկելը իրեն վերապահեց, ՚ի բազմաց՝ Գութթիղ Թիմուր խանին, յետոյ եղօրը Շատի պէջին, ապա Գութթիղ Թիմուրայ որդի Ֆուլատ խանին։ և ապա նորա եղօրը Թիմուրայ գրաւել տուաւ։ Յիշեալ Թիմուր խանը՝ Այս կիւվայի կատարեալ հնազննդութիւն քննելով՝ յամառութեան եւ հակառակութեան ճանապարհը խոտորեցաւ, և մէջերնին սաստիկ թշնամութիւն ծագեցաւ։ Մինչդեռ այս օրինակ կռուց մէջ էին ՀՀ (1411) թուկին Թուսաստանէն Թոգթաշ խանի որդի Ճէլալ խատին, թագաւորական իրաւունքը պահանջելու և հօրը վլէմը առնելու մոօք՝ երեւեցաւ, և բազմաթիւ զօրք երկուքին վրայ գնաց։ Ասուածային օգնութիւնը բախտին բազուկները զօրացնելով կռուց սասպարիզին մէջ Թիմուր սպանուեցաւ, և Այս կիւվայի բախտը թշուառանալով, վերաւորեալ փախաւ և Սիհուն գետը սատակեցաւ, եւ մարմինը հանուելով Աշրայճիկի մէջ թազուեցաւ։

Սոյա այսքան պատերազմին և հակառակութենէ յիշեալ դաշտը գտնուած ազգք և ժողովուրդք թշուառացան, մարդկանց թիւը և հարստութիւնը նուազեցաւ։ Կաղ Թիմուրայ պատերազմին անթիւ և անհամար արդեր ջնջուեցան։ Այս կիւվայի երկուրդ Թիմուրայ, և Ճէլալ խտինի դէպքերուն եւս՝ հազարաւոր և բիւրաւոր մարդիկ կոտորեցան և գերեցան, ինչք և հարստութիւն յաւար և յափշտակութիւն մատնեցան, և նոյն դաշտը ընակիլը դժուար և անկարելի եղաւ։ Աեծամեծ ցեղերէն Գարապուղուան անուն ցեղը, և բանի քանի ժողովուրդք

Յունաց և Ռուսաց բաժնի կողմերը երթալով՝ ոմանկը գերի և ոմանկը անհաւատ և մուրթատ եղան, Ճանապարհները փակուեցաւ, ծիւնի և անձեւի սաստիկութենէ, մարդիկ և վաճառականիք կարեցան, և նոյն սահմանին անունը և նշանը ցոմնաց։

Յիշեալ Այս կիւվայ՝ թխագոյն՝ միտքը վառվուուն՝ և կամքը ուղիղ էր, գիտնականաց սիրելի՝ եւ արդարոց մերձաւոր, ցերեկները ծոմ և գիշերները ամուր, մարդարին և կուրսանի օրինաց հնազանդ, և կատարեալ տաճիկ էր. քսանի չափ որդիքներ ունէր, ամենէքեան փառաւոր՝ հզօր՝ քաջ փորձ և գործունեաց մարդիկներ էին։ Սոյա զարմանալի գործքերը՝ և պանչելի սրամութիւնը շատ է, և սոյն համառօտութեան մէջ ցովանդակուիր, վասն որց համառօտեցաւ։

Ասկէ յառաջ գրուած և սրամուածին համեմատ, Թիմուր Սուլթանիյէ գնաց և անտի Համատան անցաւ։ Սարտինի թագաւոր Մէլիք Զահարը բանտէն հանեց, Շահին՝ և իրագայ մէջ տեղը եղած քաղաքաց՝ գիւղից և աւանաց բավանդակ գործերը իրեն յանձնելով Սարտինի իրկեց։ Յետոյ Թոգթաշ խանի պարտութեան՝ անիրաւութեամբ յափշտակած ծառայիւք և ընդոննօք և իրեն հպատակող դաշտի ցեղերուն ոմանց հետ Պարսից երկիրները դարձաւ. ուր չկրնալով ամփոփիլ Սըմրդանս գնաց, և բեռը թեթեւցնելին յետոյ, առանց յապաղելով փութանակի օմեւանները և իշեւանները կտրելով՝ Խորասանու և Ասրպատականի կողմերը դէմ եղեալ գնաց։ Եղր Ասրպատական հասաւ՝ Թահարթին իշխանը զինքը դիմաւորեց հպատակութիւնը յայսնեց, և իւր իշխանութեան երասանակը Թիմուրայ ձեռքը յանձնեց, նորա քաղաքաց դիւղից և աւանաց անիրաւութեամբ ձեռք չկարկառեց, և իւր իշխանութիւնը թողով հրաման տուաւ։

Յետ այնորիկ՝ անտի չուեալ Մարտինի կողմ գնաց, նորա գիւղից եւ աւանաց առանց վնասելու անցնելով՝ նորա գիւղից եւ աւանաց առանց վնասելու անցնելով՝ Աիհայի Ճանապարհաւ Դամասկոսի կողմ գնաց։ (Թիմուրայ Դամասկոսի և Կեսարից կողմանց գրած նամակները)։ Թիմուր Մարտինէն մեկնեցաւ, Աիհայի երկիրը տագ-

նապի մէջ ձգեց, մինչդեռ մտագիր էր աւարել և յափըշ
տակել քաղաքին երեւելիներէն հաճի օսման անուն բա-
րի մարզը զայն դիմաւորելու գնաց՝ և պէսպէս աղաջա-
նօք և պաղատանօք ուղարի մի բեռ գրամի հաշոռութիւն
ըրաւ. յիշեալ գրամը տանց վրայ բաժնուեցաւ. ժողովե-
ցաւ գումարեցաւ. և թիմուրայ գանձը յանձնուեցաւ:
Ապա նոյն տեղէն՝ կեսարից՝ Եւթոկից՝ եւ Սեբաստիոց
թագաւոր Պիւրհան խոտին Ապա. Ապասախն մարդիկներ
փութացուց, ապառնավեց եւ խոտութեան նամակներ
գրելով խրկեց, և քանի մի ուխտից և գաշանց և պայմա-
նաց խոտմանց հետ՝ պատուիրեց որ իւր աշխարհին
Խութպէի աղօթըը և զրամը Մահմաւ խան՝ կամ Եւ-
րիրզամիշ խան՝ յանուն թիմուրայ կարգալ և հատանել
տայ:

Յայսնի է թէ՝ թիմուր՝ Մահմաւ անուն որդի, և ո-
որդոյն օրդի, և այս անունով գահաժառանգ շուներ,
իսկական ընագրին մէջ Մահմաւ խան, կամ Սէրիրզամ-
միշ խան, գրամ եւ Խութպէ լինելու համար, արձա-
նագրուած գտնուելուն՝ անոր հետեւած եմք: Սակայն
թարգմանութեան ատեն՝ թիմուրայ գրոշմով գրամ մի
ձեռք բերինք, սուլթան Մահմաւ բառը՝ կմիր թիմուր
Կիւրիկնի հետ գրոշմուած լինելուն, իւր իսկութիւնը պա-
հեցինք. յայս հայեցեալ թիմուրայ մէկ անունը Մահմաւ
և Սէրիրզամիշ լինելը հաւանական է:

Դառնանք մենք վերատին մեր պատմութեան՝ Պիւր-
հան խոտին՝ թիմուրայ մարդիկներուն երես չուռաւ, ու խո-
տին և պայմանին չհաւատաց, և պատասխան ուազու փոյժ
չըրաւ. և բաց լայսանէ գեազանը սպանեց, և հատեալ
գլուխը դարձեալ իւր մարդկանց պարաւոցէն կախելով
վաճառանոցի և քաղաքին մէջ հրապարակեց. յետոյ մար-
մինը երկու կտոր ըրաւ, մէկ մասը ջունաց աշխարհի թա-
գաւոր Պայեզիս խանին մայրաքաղաքը, և մէկ մասը Ե-
րիպտոսի թագաւոր՝ Մէլիք Զահարին խրկեց, և այս քըսաւ
մինչի դէպէին պատմութիւնը՝ հետեւեալ կերպով մի ըստ
միոցէ գրեց. « Նուաստ ձեր գրան հողին հրելէ մի, եւ
ձեր ընորհաց ծովուն մէջ կաթիլ մի է, երիթր և հարրու-

տութիւնս՝ ձեր երկիրը և հարտութիւնն է, և բովան-
դակ ուշադրութիւնս, ձեր սրտի յարատեւ ուրախու-
թիւնն եւ զուարթութիւնն է, այսքան տկարութեամբ
աղքատութեամբ և սակաւութեամբ մարդկանց, որ իմ
տէրութիւնս անդամ անկարող եմ՝ պատսպարելու. Թիմու-
րը արհամարհէնը՝ և գեսպանները սպաննելս, ձեր թա-
գաւորութիւնը գօրացնելու եւ ձեր տէրութեան գրացը
բարձրացնելու համար է, ձեր թագաւորութեան տիբու-
խին յուստով և ձեր ձեռնոտութեան և օգնութեան
հաւատաղովն է, նուաստա՝ ձեր տէրութեան հովանի, և
ձեր գրաց յառաջապահն եմ, եթէ ոչ յայտնի է թէ, սր-
տատիճան յանդկնելու, և թիմուրայ հետ հակառակելու
կարողութիւն չունիմ. ՚ի հարկէ լած էք թէ՝ թիմուր
. ինչ աստիճան անօրէն, եւ որպիսի շրագործ աւարտ-
ուու և յափշտակիչ է, թագաւորներ կացուց և թագաւ-
որներ ջնջեց՝ ինչ արիւններ թափեց, և ինչ սրտեր առ-
չորեց, և որքան տուններ եւ գերդաստաններ կործանեց,
ինչպէս կարելի է, այսպիսի հեղեղի մի և անդութ անօ-
րինի մի դէմ դնել և հակառակիլ, եթէ դուք՝ ձեր օգ-
ուութեամբ և ձեռնոտութեամբ, տկար բազուկներս դո-
րացներ, դուք բազմոցի և բորձի հանդսութեան մէջ,
փառօք կ'զւարթանաք, իսկ եթէ անտեղի դանդաղու-
թեամբ վարուիք, այս նուաստիս երկրորդը դուք կ'լինիք,
տէր մի արասցէ՝ վստագնելցո յանդիտած չարիքը և վր-
նանները՝ յայտնի է թէ՝ երթալով երթալով ձեզի եւս
պիտի համանի: Արդ՝ պէտք է որ միայնեմք մեր ձեռքերը
և մեր սրտերը՝ և միաբանութեամբ այս կրակը մարեմք,
եթէ ոչ երբ ցրուի և տարածուի՝ աշխարհ ամենայն մէկ
տեղ գայ, մարելը անկարելի կը լինի. և թիմուրայ պա-
ստաման չապահու պատճառն այս է որ, ինչ կերպ անօրէ-
նութիւն և հրաման որ ընէք, անօր համեմատ գործեմ,
և ըստ այնմ պատրաստութեան ոկսիմ, ողջ լերուք ո:

Ուլժան Պիւրհան խոտինի կնքեալ նամակը՝ սուլթան
Պայեզիսին հասաւ, և երբ կարդալով նորա միտքը հասկաւ
ուրախութիւն և ինդութիւն յայտնելով բիւրաւոր կեց-
ցէներով գոլից, և նամակին պատասխանին մէջ կ'ըսէք,

Արդարեւ անվիշեր գործեր և արիական քաջութիւններ՝ ցոյց տուեր էք, այս մասին՝ արիութեան գօտին ածեալ այն անիծեալը ետ գարձնելու և վնասները բառնալու իշխանաբար տնօրէնութիւն և խոհեմաբար շարժում ընէք, եթէ հարկ լինի վկայ է բարձրեալն Աստուած, գիշերուան մութին պէս սեւ զօրքերովս կ'երթամ, որոց դէմ ոչ յանդիման լինիլ և ոչ պատերազմիլ կարող է, վրանը և հովանոցը ոտնակոխ, և աշխարհս գլխոյն նեղ և անձուկ կ'ընեմ, եթէ գայ, ջանացիր յանդիման լինիլ եւ գուն գործէ գեղեցիկ նախատեսութեամբ և յատակ դիտաւորութեամբ զայն վանել, անիծեալ զօրաց բազմութեան մտածութիւնը՝ ձեր նպատակին արգելք թող ըլլինի Զօրութեամբն Աստուածոյ դիւրին է ասկաւոք բազմաց յանթել. ճշմարտութեան համեմատ, խոտերուն եւ խորիւներուն հոլովութիւնը հակառակորդին արգելք ըլլինի, եթէ յարմար և վայելուչ կ'տեսնէք՝ վասն հաւատոց պատերազմող գիւցազուներուդ հետ՝ գուք ինքնին անձամբ սուսերամերկ վինեալ անոր չարիքները բառնալու ջանադիր եղիք, զի ես զգօնութեան աչօք կը նկատեմ թէ յաղթութիւնը պիտի ժառանգէք՝ ըսելով թագաւորական պատուական նամակը խրկեց, և պատասխանն ոյն ըստ պասեց։ Իսկ Եգիպտասի թագաւոր Մէլիք Զահարը՝ ինչ կերպով պատասխան տալը պատմութեանց և վիպասանութեանց մէջ ըստեմուեցաւ և ըսկարդացուեցաւ, այլ ըստ մեծի մասին հաւանական է որ, սուլթան Պայեղիսի հետ միասիրտ եւ համամիտ լինելով՝ այն եւս ոյն մոտք սուլթան Պիտրհան խոտինի պատասխան տոււած լինի, զի վախճանեալ պատմագիրը՝ գործոյն յայտնուելուն թողուցած է։

Ապա յաղթահարեալն Թիմուր՝ Եպիգառսի թագաւոր Մէլիք Զահարին գեսպան և Արաբացւոց բարբառով նամակ գրեց և խրկեց. և այս օրինակ սպառնալք եւ խստութիւն լրած է, որ թարգմանելով կ'օրինակինք։

(Պատմէն նամակին)։

(Ասա՛, Աստուած, որ արարեր գերկինս եւ զեր-

կիր, զաներեւոյթ աշխարհս և զիլսյութիւն. դու ես որ իշխես ՚ի մէջ ծառայից քոց, յորժամ հակառակիցին ՚ի միջի խրեանց (1)։

Գիտասնիք՝ մենք մեծին Աստուածոյ զօրքերն, եւ Աստուածոյ պատուհասէն ստեղծեալ ազգ մի ենք, նուրա պատժոց արժանի եղանակուն վրայ խրկուած ենք, գանգատաւորին ողորմութիւն, եւ արտասուողին գլութիւնը չենք լիներ, բարձրեալն Աստուած գլութիւնը մեր սրտերէն յափշտակեր, եւ ողորմութիւնը մեր մոքերէն խզեր է, մեր հրամանին ըլհնազանդողին և ըլհպատակողին բիւրաւոր յաւեր կ'հասցնենք. քաղաքներ կործաներ, մարդիկներ կոսորեր, և երկրիս վրայ ոճիքը և չարիքներ ցըսուցեր ենք. սրտերնիս ապառամին թիւերնիս աւազի նման է. երիվարնիս սրաթուիչ եւ նիզակինիս երկսայրի թափանցիկ է, մեր երկրին ապականութիւնը չհասնի, և մեր դրացնոյն վեսա չհանդիպիր, եթէ մեր դաշնիքը կ'ընդունէք, և մեր հաշտարար հրամանները ձեզ հաճց կ'թուեն, մեզի հետ միաբանեցէք, շահու և միասու մէջ ձեզի հետ հաւասար կ'լինիմք, իսկ եթէ մեր հրամանը անարգելով կամակորութեամբ յամառիք, ուրիշներէն մի գիտնաք, այլ գուք ձեր անձը կը կշտամբէք, մեզի բերգեր արգելք ըլլինիր, և մեր զօրաց կոտորումը ըսլատահիք, ձեր մեզի եղած անէծքը ընդունելի չէ. վասն զի յօրինաց արգիւնը լրայք և խմեցիք՝ ուրբաթօրը և մղիթի ժողովումը թողուցիք, վասն որոյ արհամարհանաց անարգութեան պատժոց եւ տանջանաց պատրաստ եղիք, գուք ձեր կարծիքով զմեզ անհաւատից կ'պատշաճեցնէք, իսկ գուք՝ յայտնի է թէ ՚ի կարգի ամբարշտաց էք. բախտի և ձակառագրի Աստուածը զմեզ ձեր վրայ խրկած է, ձեր բազմութիւնը մեզի նկատմամբ սակաւ է, և ձեր փառաւորը մեր մօտ անարգ է, յարեւելից և յարեւմուց բովանդակի երկրիս տիրեցինք, և քանի նաւեր ըռնութեամբ յափշտակեցինք, և այժմ ձեզ գլութիւնը ընելով՝ նամակ գրեցինք. կորառեան և ապա-

(1) Վ կայութիւն ՚ի կորանէ.

կանութեան մունեւտիկը՝ ով ամբարիշտ և չար ազդ . ձեր դլիսյն վրայ եկանք հասանք բաելով՝ ազաղակելէն յառաջ, պատասխան տաղ փութացէք, վերջ :

**Այս նամակը Մէլիք Զահարին հասաւ, և կարդա-
լով պարունակութիւնը հասկցաւ, նորա եւս զօրաց բեր-
նէն լինելու պայմանաւ, ընդարձակ և ճարտար բանիւք
Արագերէն պատասխան դրեցին, որուն թարգմանու-
թիւնը հոս կը դնենք :**

(Պատմէն նամակին) :

**(Ասա՛, Աստուած թագաւոր ամեղերաց, տան
զմագաւորութիւնն ուշ կամիս, և բառնաս զմագա-
ւորութիւն յորմէ և կամիս, փառաւորես զայն, որ կա-
միս՝ և անարդես զայն՝ որ կամիս, ՚ի ձեռն քց են բա-
րութիւնք, և դու ես յամենայնի կարող) (1) :**

Գեր թագաւորաւթեան եւ արքունի բարձր զր-
րան կողմէն խրկուած նամակը հասաւ. . եւ իմաստին զօ-
րութիւնը իմացուեցաւ : Մանուցած էիք թէ՝ Աստուծոյ
ուստաւհասէն ստեղծուած՝ եւ Աստուածացին պատճաց
արժանի եղողներուն վրայ խրկուած էք, գանդատաւորաց
դթութիւն, և արտասուողին՝ ողորմութիւն շնէք ընէք,
բարձրեալն Աստուած մեր մորէն գթութիւնը յափշտա-
կեր է . արդարեւ մեծ ամօթով եւ ահագին յանցանօք
դուք զձեղ գոված էք . եթէ կը խրատուիք՝ ձեր խոռքերը
ձեղի քարոզ բաւական է . Ասա, ով անհաւատը ոչ պաշ-
տելք, զոր դուքն պաշտէք : Գրեանց մէջ յիշուած եւ
սմենայն յանցանօք նշանակուած էք, բաց յոյանանէ
դուք զձեղ անհաւատ համարած էք, Անէծք Աստուծոյ
՚ի վերայ անհաւատից . ճշմարիտ է որ՝ մենք հաւատա-
ցեալ ենք. մեզի ամօթ և սուտ չհանդիսակիր՝ մէծահրա-
չակ կուրանք մեր վրայ իշնելով՝ շարունակ նորա լուսաւոր
որհնութիւնը մեղի հասած է, իշնել՝ հրամացէ՝ արդիւք՝
տպօրինաւոր և օրինաւոր սեպելլ մեղի սեփհական է, յա-

(1) Վկասութիւն ՚ի կուրան :

ւուրն դատաստանի, հուրը ձեզի համար ստեղծուած է :
Այս եւս զարմանալեաց զարմանալին է որ՝ առիւծը սար-
դիստայնով, ինձը՝ գայլով, և վօրաւորը տիարով կ'վախ-
ցընէք, մեր երիխորները իբրեւ գնոյուն ջուր սրբնօաց
մեր քաջութիւնը բարձր, և մեր սուբները արեւելք և
արեւմուտք հաշակուած է, և մեր փառաւոր դրոշը հա-
նապաղ յաղթական է : Եթէ սպանեմք յաղթող, և ե-
թէ սպանուիմք նահատակ կ'լինիմք, մեր եւ արքայու-
թեան միջոց՝ մէկ ժամի չափ հեռաւորութիւն է, Մի-
համարիք մեռեաց, որք վասն Աստուծոյ մեռամին՝ նորս
կենդանի են առ, Աստուծոյ եւ, կերպիկին : Գրած էիք թէ
Կրտերնիս լեռներու և թիւերնիս աւազի նման էու Մաս-
գործը ոչսարբն շատութեան վրայ հոգ ցներ, և գոյլ մի
ոչսարի հոտէն չոփախչիր, փայտին սակաւ ինչ հուր բա-
ւական է, և սակաւ զօրքը բազմութեան յաղթող և նո-
րա փառքը յափշտակող լինելլ կրկին անգամ իմացած և
տեսած էք, եթէ փախչիր հարկ լինին նախատինքէ և վա-
տութիւնէ կ'փախչինք, եթէ ոչ մեր կենդանութիւնը եր-
ջանկութիւն է, և մեր մահը նահատակութիւն, և Աս-
տուծոյ զօրքը յաղթող : Հաւատացելոց գլուխն (մարզա-
րէն) և ամենեցուն տիրոջ յաջորդէն ուրիշ մեղմէ հնա-
զանդութիւն կ'պահանջնէք, այս մասին ձեզի հնազանդու-
թիւն չըկայ, պատաւիրած էիք թէ . մենք մեր վիճակը
ըննենք և յայտարարենք, այս խօսքին մէջ յօյժ տիա-
րութիւն և կասպարեալ տփիսութիւնն կայ, քննութիւնը
ինչպէս է, և ծածուկ եղած բանը ինչ է, զինի հաւա-
տոյ՝ անհաւատին ուրիշ բան մի կայ, ձեր գորգակետին
իմացուցէք որ՝ յօրինաց խօսքերը և պատմութիւնը՝ դրան
ձունելու և ճանձի բղայութ չափ աղդեցութիւն չըրաւ,
օգնութեամբ բարձրելցն Աստուծոյ՝ մեղմէ ձեզի սուրէն
ուրիշ բան չի կայ, մերջ :

Յայտնի է թէ՝ Թիմուրայ և Մէլիք Զահարին մէջ
ունչի ունեցած երկու նամակները՝ յառաջադցն Նասրը
թուսի յօրինամիք . և Հիլարիի կողմէն նոյն ժամանակի
եկիսպասի թագաւորին եկած նամակին պատճէնք, եւ
Եկիսպասի թագաւորէն առ Հելորին՝ նոյն ժամանակին

գիտնականաց սեւադրութեամբ եղած նամակին սրատ ձէնն, մի և նյոյն լինին, վախճանեալ պատմագիրը ՚ի գիրա ումանց, տեսեր կարդացեր և պատմեր է. ուստի սյոն համառօտութեան մէջ եւս նշանակուեցաւ: Թիմուրայ գես պաններուն՝ սուլթան Պիւրհան խտինին ըրած թշնամանը և պատիմը, իիշեալ ամբարտաւանը իմանալին յետոյ՝ սիրով այրեցաւ եւ մոտաց ուշագրութիւնը ցրուեցաւ. սակայն երբ իմացաւ թէ Խալամ զօրքերէն շատ դիւցա զունք՝ Յունաց աշխարհի եւ Եփիալասի զօրքեր, եւ ՚ի Դամասկոս կորովի քաջաց գումարտակներ կան, այն թշնը մարսեց, եւ բարեպատեհ ժամանակի սպասելով՝ ետքարձաւ:

ԳԼՈՒԽ ԺԶ.

Թիմուրայ Հնդկաստանի կողմէ բրթան: — Սուլթան Մէրասի պատրաստութիւնն: — Թիմուրայ նենդութիւնն: — Պատերազմն: — Հնդկաստանի գահան տիրեն: — Տէհիմ մայրաբարպին առումն: — Մերասից Պիւրհան խտինի, և Եփիալասի Մէլք Զահարին մահուան լուրերի:

Հնդկաստանի թագաւոր Թիմուր շահն իւր գահը և իշխանութիւնը թողով՝ մեռաւ, և իւր հարց գերեզմանը թաղուեցաւ. Թիմուր երբ իմացաւ որ տէրութիւնը և ազգը կառավարելու արժանաւոր, և թագաւորութեան համօրէն գործերը կապելու եւ արձակելու կարող զաւակ չունի, դիպող ժամանակ սեպեց, և ցան կացաւ նորա տէրութիւնը և թագաւորական իշխանութիւնը ժառանգել: Սակայն Հնդկաստանցիք՝ թագաւորը մահուամբ յուղեալք և խոռովիք մինչդեռ ոմանք կ'յաղթէին և ոմանք կ'պարտէին, այս կրակը մարդու եւ խռովութիւնը բառնալու համար՝ խելացիները եւ գիտնականները անպատճառ թագաւոր մի դնել պէտք է կ'ըսէին, բարեկարգութեան տեղեակ իշխաններէն Մէլուայի անուն իշխանը համահաճ հաւանութեամբ թագաւորական գահը բաղմեցուցին, նա սկսաւ տէրութիւնը յարդարել և բարեկարգել, արժանաւոր մարդիկները

՚ի ծառայութիւն կոչել, եւ անարժանները հեռացնել: Ապա՝ Մոլթանի իշխան Սարէնք խան եղայրը խոռովութիւն և երկպառակութիւն յարոյց, և սուլթան Մէլուային անհնապանդութիւն յայանեց, և մէջ տեղը ծադած հակառակութենէ Հնդկի ժողովուրգը երկու կուսակցութեան բաժնուեցաւ, մէկ մասը Մէլուային, և միւս մասը Սարէնք խանին հետեւելով՝ մեծ բաղմութիւն, ծառաները և իւր պարագաները ահագին ամբոխ մի կաղմացին, մինչ զի միայն ութը հարիւր փղով պատերազմի պատրաստեցան, սոցա վէճը և խոռովութիւնը վերցուելն յետոյ՝ խիստ մեծ գժուարութեամբ՝ բերդը թշնամը բռնութենէ ազատեց, և սուլթան Մէլուային նկանիշան փառօք Հնդկաստանի գահը բաղմեցաւ:

Եւ լսեց որ Թիմուր՝ Հնդկաստանի տէրութեան վրայ արշաւելու համար կ'պատրաստուի և զօրաժողով կը լնի, այս անօրէնը վանելու գեղ և գարման որոնելով, լնի, այս անօրէնը վանելու գեղ և գարման որոնելով, լնի, զաջ զօրքեր ժողովեց, սահմանագրուխները փակեց, եւ ուրիշ երկիրներուն բերդերը ամրացուց, և բերդապահ զօրքերը բաղմացուց, և շրջ կողմէն բաջութեամբ և արդութեամբ անուանի մարդիկներ ժողովեց, և մինչդեռ փղերը կ'պատրաստէր՝ Թիմուր բաղմութեամբ զօրաց և մեծ պատրաստութեամբ և պաշարօք, իբրեւ գիշերայրածակ սուրհանդակ գիմեց՝ և հեղեղի նման առանց գիշեր և ցերեկ լսելու աճապարանօք Հնդկաստանի սահմանը հասաւ:

Հնդկաստանի ժողովուրդը ոմանք Մահմետական՝ և ոմանք մոսկակրօն էին: Մէլուային կարելի եղածին չափ հեծելազօրը պատրաստեց, եւ փղերը յարդարեց՝ և իւրաքանչիւր փղով թիկանց վրայ բերդի նման գահաւարակներ զետեղեց, եւ մէջը պատերազմականներ շարեց, բոլորտիքը զանգակներ կախեց, եւ կնճիթներուն վրայ առւրեր կապեց, և ժանիքները իբրեւ երկրուայրի գաշոն սրեց, և ծովուն նման գունդ գունդ յորդեալ գնացին, և անմիջապէս ախտաւորք՝ եւ թեթեւ ոտն սումերաւորք՝ մարտի և պատերազմի պատրաստեցան:

Անդամիխն Թիմուր՝ Հնդկիներուն այս աստիճան

պերճութիւնը և գումարտակաց պատրաստութիւնը եւ զօրաց բաղմութիւնը տեսնելով՝ ապշեցաւ, մտածեց որ ասոնց հետ յայտնապէս ճակատի և պատերազմելը մեծ թերութիւն է, սոցա՝ նենդութենէ ուրիշ դարձան չփեց լառաւ, և դաւաճանութեան թելը ձեռք առաւ, չը տեսնուած և չը լառած տեսակ մի նենդութեան ճանապարհը խոտորեցաւ, երեք չորս անկիւնաւոր Արագերէն նէսր տատակի բառած, (որ շատ անգամ ովհաբոց գլամը կրիակի), փուշի նման երկաթէ շատ մի փուշեր չինելու համար՝ բանակին մէջ գտնուած երկաթագործաց հրաման բրաւ, քիչ ժամանակի մէջ պատրաստեցին, գիշերը այն եռանկիւնի ձեւով երկաթի փուշերը իւր և թշնամուցին բանակին մէջ տեղ մէկ կողմ սիռել տուաւ, առաջապահ և վերջապահ՝ յաջ և ահեակ կողմերը մէկ մէկ նշանով որոշել տուաւ, ապա յաջ և ահեակ կողմերը մէկ մէկ գտնուդ զօրք դարանի դրաւ, երբ բոլոր կարգադրութիւնները պատրաստեց՝ օր մի առաւոտուն փողերը հնչեցուց, եւ աստեղաթիւ զօրքերը յարդարեց, ճիռաւորները և հետեւակիները պէտք եղածին համեմատ բասաւորեց, մարտ և պատերազմ յօրինեց : Հնդիկ զօրքերը երբ տեսան որ, փուշերով որոշուած կողմը զօրք խրիեց՝ փղերը յառաջ միեցին, սուսերաւորք և վաղակաւորք, աղեղնաւորք եւ տապարաւորք միահամուռ Թիմուրաց կազմ դիմեցին եւ երբ իսկ և իսկ նշանակեալ տեղը հասան Թիմուր փախուստ կեղծեց, միամիտ Հնդիկները՝ երբ իրենց փղերը այն անիծեալ փուշերուն վրայ քչեցին, փղաց ուրբերը ասեղի մասմաթի կամ կարիճի նման խայթերով՝ սրտերնին մորմնքեցաւ, և անմիջարկ փղերը այն կակիծով եւ դարձան և գնացին . և խորհակ Հնդկաց խումբերը սանակիս եւ խումբեալ ամբոխիւ՝ պատահած մարդիկները վեր ՚ի վարդորեցին . յետոյ՝ դարձանի մտած Զղաթայի գորքը դուրս յորդեցին, և յանկարծական կրակի նման յերիկնա բարձրացան, և վեհազուները պատերազմ միեցին, միամիտ Հնդիկները՝ երբ իրենց փղերը այն անիծեալ փուշերուն վրայ քչեցին, երբ զիշերուած մութը յաղթեց, իւրաքանչիւր սք իւր անզը և բնակութիւնը գարածաւ :

նեալ եւ վաստակաբեկ ապշեթեան ձորերուն մէջ տարակուսեալ մնացին :

Այս տարօրինակ գէպքը այս կերպով եւս կ'պատմն : Թիմուր իմացած էր սր Հնդկառուանի մէջ ուղարկ չինելով, բնութեան անհամանայնութենէ, փփղը ուղտէն նրտելով կը փախչի, ուստի հինդ հարիւրի չափ իրդեզոյ ուղուերուն պատասաց մէջ, չը խոտ լցնելով պատրոցիները առանձին եւ երկու կողմի գործի գործութեան մէջ, ահաելի ձայներով անհեթեթ եւ տարօրինակ խաղերով Փղաց գէմ գնացին, սոցա անմարդասիրելի բարքը և ըրտեսած շարժմանըները տեսնելով փղերը ապշեցան, և անմիջարկ սկանալով՝ կողմ գտնուած Հնդիկ զօրքը ուղակիս, և իրենց խառնաշփոթ յուղմամբ զանոնք տապնապեկով ցիր ու ցան բրին . և երբ նոյն կետին Թիմուրաց դարձանամուտ պուածերու սումերա անդթու շինամիքն յարձակեցան, Հնդիկները տակաւ յաղթութեան ասպարիզէն հեռացան, և Թիմուրէ անք յաղթանակաւ յառաջեցին : Անկայն Հնդկառուանի բաց և եռանդուն մարդիկներէն, բաւական գիւղազմաններ և վեհազուներ, զինեալ իգչին և ՚ի զարդ երեւելի բացեր գտնուելով՝ դարձեալ մեծ եռանդով մինչեւ երեկոյ քանութեամբ ահազին պատերազմ միեցին, երբ զիշերուած մութը յաղթեց, իւրաքանչիւր սք իւր անզը և բնակութիւնը գարածաւ :

Առաւոտեան Հնդիկ զօրքերը վերսացն մարտ և պատերազմ միեցու կարողութիւն չըւնեին, զի իրենց գործը և զօրութիւնը ծիւրուած, արիութեան և կարողութեան գոտին թուլացած էր, վասն որց՝ այսր անդը վայրավատին ցրուեցան, և իրենց հաստատութիւնը փախուատի փոխեցին : Սուլթան Մհրուայի տկարացաւ և վատթարացաւ և խորտակմամբ ՚ի պարտութիւն մասնեցաւ, իսկ Թիմուր կատարեսւ յաղթութեամբ զուարձացաւ և զըս գարթացաւ :

Սամանակին Հնդկաստան աշխարհին մայրաքաղաք եղած Տէհլի մեծ քաղաքը նուաճնելու դիմեց, գնաց մըմանց նման անթիւ զօրք լիշեալ քաղաքը պատեց և պաշարեց, բիւրաւոր կոխներով և խիզախմամբ և պէս պէս նենդութեամբ և ճակատու, նախ քաղաքին մէկ կողմին յաղթեցին, և երեք օր պատերազմելով, միւս կողմին եւս գրաւեցին և նուաճնեցին։ Այս քաղաքը ժողովարան իմաստոց և բնակարան առաքինի մարդկանց և երեւելի վաճառականաց էր՝ պէսպէս ազնիւ և չաշխարհի իրաց մետաղ և շտեմարան կերպասուց և դիպակաց, և աշխարհիս մէջ հռչակաւոր լինելուն, ընդարձակ բանիւր գրելու կարօսութիւն ընկիւ :

Թիմուր Հնդկաստանի գահը բազմեցաւ, շրջակայից վերին և ստորին կողմանց տիրելով, նոցա պէսպէս ընծաներուն արժանացաւ, և կերպ կերպ հարստութիւն եւ մեծութիւն ժողովելով իւր փափաքին հասաւ, ՚ի ծով և ՚ի ցամաք, յարեւելք և յարեւմուտք՝ զօրք իսկեց սահմանները գրաւեց և տէրութիւնը որոշեց, եւ մինչդեռ օրէնքներ յարդարելու և կանոնները նորոգելու և կազմելու վրայ էր, աւետաւորներ ժամանեցին և պատահած դիսուածները տեղեկութեամբ պատմեցին թէ, սուլթան Պիւրհան իսումին ՚ի Աբրաստիոյ, և Մէլք Զահար Պէրգուգ Ենգիպտոս, աշխարհիս անհիմն փառաց կրիւները թողով՝ յաւիտենական տոռնը գնացին։ Թիմուր կատարեալ ուրախութեամբ և խնդութեամբ որոշեց որ, Պամակոսի կողմարշաւէ երթայ, և փութանակի Հնդկաստանի գործերը տեսաւ, և ըստ բաւականին զօրքերը եւ սկահապանները որոշեց, ապա Հնդկաստանի երեւելեաց և մեծամեծաց մէկ մասը հետք առաւ անթիւ գանձ ընտաշխարհիկ և ազնիւ գոյքեր և կերպասեղններ վերուց և փղերը ըստ օրինի Հնդկաց բեռնաւորեց, սրտի ուրախութեան և պէրճ յաղթանակի անբաւ մեծութեանց և ճոխութեանց արժանացեալ լու (1399) թուին Սըմբանստ եկաւ, և բեռնաց ծանրութիւնը թեթեւցնելով, անտի եւս մէկնեցու, և շտապ տագնապաւ ձիհունը անցաւ և խորասանու կողմարշաւ :

Յայտնապէս հրատարակեց թէ, իւր միաքը սուլթան Պիւրհան իստիմի, յառաջագոյն իւր դեսպանաց լրած անիրաւութեան վրէմբ առնելու համար է, այլ ՚ի ներքուստ դիտաւորութիւնը ընդհանուր էր, միայն կ'ծածկէր որ իւրաքանչիւր ոք յառաջագոյն պատրաստութիւն ցատենայ : Սցին ժամանակիս Թաւրիզի և նորին նահանգաց իշխան Թիմուրայ որդի Էմիր Ինշահը, իւր հօր ՚ի խրատէ և ՚ի յանդիմանութենէ բաղադրեալ նամակ մի գրեց . եւ ծանոց թէ սուլթան Ահմէտ Ճիլայերին վերատին Պաղտատ վերագարձաւ, եւ Զղաթայի զօրքը հարուածովք և բռնութեամբ արտաքսեց :

ԳԼՈՒԽ ԺԷ

Էմիր Ինշահի Թիմուրայ զրած նամակն ։ Թիմուրայ Թաւրիզ էրթամուն ։ Նամակին զրգուչ եղաղներուն ոպանումն ։ Գարապալ և անտի Արքաստան էրթամուն :

Ամբարհաւաճն Թիմուր՝ երբ Հնդկաստանի գործը լուսուց, որդին Էմիր Ինշահէն նամակ մի եկաւ : Պատմիչներուն ոմանց կարծեաց համեմատ, նամակին բավանդակութիւնը և կատարեալ միտքը այս կերպով գրուած էր : Ավ Հայր՝ յայտնապէս կ'տեսնուի թէ, համակիդ մեծութեամբ անդամոցդ թուլութեամբ և մարմնոցդ որ կարութեամբ, արշուանաց նեղութեան հեծնելու և իշնալու կատածանաց մէջ տաղոկացեր էր : Արդ եթէ դուք ՚ի բարեպաշտից և ՚ի հաւատացելոց անտի էք՝ ձեզ արժան այն է որ մզկիթները նստիք, և հանապաղորդ Արարջն ամենեցուն յաղօթու կանխէք, ձեր ծառայութիւնը կատարելու կարող զաւակներ, և տէրութիւնը գրաւելու բաւական թոռներ ունիք, քանի որ մահուան խոկումը կայ, երկիրը և տէրութիւնը ընդարձակելու մտածութիւն և յաղթող թագաւորութեան ադահութիւն ընելը՝ խելացի գործ չէ, եթէ նախատեսութեան ակամբ և օրինակ առնելու աջը նայէք, այս աշխարհիս կը թողուք

քեզ գերի եղան . և Եղիսաբետի թագաւորը քեզի յաղը թուեցաւ , ՚ի վախճանի պալատ և զշեակի աւերակի , և վերջին վիճակի հող լինի չ : Գեղեցիկ աղօթիցդ գոհ հութիւնը՝ եւ Դաւիթ մարգարէին ընդարձակ տէրս թիւնը , օրհնութիւնը և գովաւթիւնը : Մեծին Սովորմանի մի մարդկանց և այսոց , գաղանաց եւ թռչոց իշխելը , կոհութիւնը եւ փառաքանութիւնը : Եւ մեծին Աղեքանդրի (1) կապանքը , յարեւելքը և արեւմուտք արշաւելը չե՞ս յիշեր , և չե՞ս մոսածեր : Մանաւանդ մեծ մարգարէին Մահմէտի յաղթական և զօրաւոր յայտնի դէմի մասին , որ խօստացեալ էր յԱստուծոյ և ՚ի սուրբ Մարգարէից , աշխարհիս արեւելքը եւ արեւմուտքը նորա ճշմարիտ աշբին մէջ երեւեցաւ , և երկրիս գանձը նորա տիրեւլու ծառայութեանց նուիրեց , հրեշտակաց զինուորութիւնը նորա յաղթական իշխանութեան ատեն պատրաստ յանձնեց , մարդիկ և ոգիք , գաղանք և թռչունք նորա մարդ գարէութեան հաւատացին . լըոները և քարերը հրովարտակին հնաղանդեցան , առաւօտեան զէփիւոր նորա յաղթութեան ատեն , և միջօրէի խորշակը թշնամիները սատակելու խրիեց : Փախատեան (Նիճրէթ) և ժողովրդոց ծառայութիւնը , երկու դատերաց երկրորդը , որմնք այրին մէջ լինելը հոչակուած է այլովքն հանդերձ . . . Հայր Արքահամու կոչունքին կատարումը . Մովսէսի և Արդւուն իսրայէլի պատճառուները , հոչակաւոր Աստուծածաշը , եւ Աւետարանը , յաւուրն գատաստակի պատուաւոր յաջորդի դրսջը բարձող Աղամ և Եւայ Աստուծած ընկելի գետցն տէր , նոյնին մեծութեան՝ որ ուրախութեամբ ըւսաւոր տեղը բազմէր են , և այլ պատուաւոր մարգարէից , որոց անցաւոր աշխարհիս իշխութելը գնել , այլ թերեւս ատելութեամբ նայեցան , միշտ առ Աստուծած աղօթեցին , եւ Աստուծոյ ժողովրդոց գիտութիւն ընելէն ուրիշ դիմաւորութիւն

(1) Տէմիր զափու կամ գուշան Արևաց , որպէս թէ ոց պահակը և պարիսպը մէջն Աղեքանդր լիներ : և ամրութեամբ փակեր է , որին զի Առուճ Առանուճ (Գուգ և Մագոգ) աղջը գուրա չելը և աշխարհա շապականէ :

և յաւիտենականութիւնը ստանալու ճանապարհին կ'հետեւ էր , պէտք է որ մարդու բամբակէ շաղիկով , եւ բաժակի մի պարզ ջրով գոհ լինի , և այս եւս վերջապէս մահուանու մասն մատնուադինն և կարօտ միացողին , շատ է : Դիցուք թէ (1) Նէտատի Ճիւութիւնը Ամուսնութիւնը՝ Ամագլեկաց եւ Ա՛տի հարստութիւնը ստացար . եւ բախտին յաջորդութեամբ Փարաւոնի և (2) Համանի կատարեալ իշխանութեան հաստար , և (3) Գարունի գանձը շահեցար , և տիեզերիս հարըստութիւնը յափշտակեցիր , քաղաքներ կործանելով , և ժողովուրդ կոտորելով , յաղթական բախտով , վառոք և պերճութեամբ իրբեւ կեսար եղար : Դիցուք թէ երկրիս շրջ կողմին , արեւելից և արեւմոխց տիրեցիր . կեսանքդ բիւրաւոր , և ծառաներդ թագաւորներ , (Խաղաց) խագանը և (Զինաց) կայսրը՝ շղմայակաւու

(1) Այս ժողովրդեան (Ա՛տի) թագաւորմէրին մին Եւստատ առ առան , դրաստին և անոր հէշտութեանց փայ խօսւիլը լսելով միտը գրրաւ որ իւր տէրութեան մէջ պալատներ կառուցանել և պարտիզներ շնէլ տայ , որոնք իրենց շքութեանքն եւ գեղեցիւթեանքն դրախտի սպասիք մի ներկայացնեն : Արեւելքան մատենազիք մանաւանդ բանաստենէրդ իրէմի պարտիզներ (ժամկութեան դրախտ) կը նմանէցնեն վայերագեղ գիրքերը և գեղեցիւշնեն պարտաները : Այս պարտիզները և ոյր շնուռածները կը լուսի թէ քանդուած են յերինուստ եղած աղազակի մի քասիք նշյու երկրի ժողովրդեան

(2) Պարաւոնի վէզին է :

(3) Գարուն , (որ Ա . Գրաց մէջ կորիս կ'անուանի) որց հարստութիւնը Տաճկաց մէջ առակ եղած է : բորորմին ոսկիով պատած պայազան մը ունէր , կը սեն մէկնէք , որուն գուները ոսկի է ձուլած ենն : իւր հարստութիւնները զինքը իւր հարքենակաց թշուաւութեանցը մասին անցրայ րած էնն , և իւր ամբարտաւանութիւնը այն աստիճանի հասաւ , որ մինչ զի Մովսէսին գէմ ապատամեցաւ : Ա անս որոյ Մովսէս Աստուծու իշխութեց , որ զինքը անոր (այսինքն կորիսին) ձևոքն աղատէ : Աստուծած աղին թուզուց որ ուղած հրամանը երկրին այս Աւարի և Մամիսէ հրաման յեց երկրին՝ որ կորիտ իւր պալատովը և գանձերովը մէկ անդ կը լընէ : Աւանդութիւնը կաւելնէ , որ երբ բացուած երկրով կը կըւը զարփի , նախ մինչեւ իւր ծունկերը յետոյ մինչեւ մէջքը . և ՚ի վերջու մինչեւ վիշտը , նախ զրա անպամ աղազակից առ Մամիսէ , որ գմաց իրէն և ներումն ընորէէ , բայց Մովսէս մօնիկ ջրաւ : Աստուծած կրամաքից զՄովսէս իւր սոյն անգթութեանը համար որ այսպէս կորիտ բիւրմէ չօրս անգամ ներումն ինդրեց , եւ գու ականջ լը գրիթ : Մինչդէւ եթէ ինձմէ միմակամ աղինդրէր : ես անոր կը ներէիք :

չունեցան . ուղղահաւաստ յաջորդներէն եւ առ Աստուած առաջնորդով իմամներէն , Ապու Պէքիրայ եւ խօմէրայ , և երկու պատուաւոր իմամներ Օսմանայ և Ալիայ արդարութիւնը , և այլ կատարեալ իշխանաց և առաքինի թագաւորաց , որք Աստուծոյ իրաւանց շուք դըրին , և Աստուծոյ ժողովուրդը պաշապանեցին , և բարի օրէնքներ հաստատեցին , և հաւատոյ շաւզին մեջ բարւոք ընթացան , որոց գոհնութեան արժանի ջանքերը մինչեւ ցայսօր մարդկանց բերաննէ , և բարի անուննին կ'յիշուի , ի՞նչպէս ասոնք միաբդ չես բերեր . եթէ քարող կուղես , հերացդ եւ ալեւացդ սպիտակութիւնը քեզի քարոզ բաւական է . ժողովրդոց ափրեցիր՝ փոխանակ նոյս ընջից և հոգւոց պաշտպանութիւն ընելու , սրտերնին խորովեցիր և տուներնին կործանեցիր . այս գիտաւորութեամբ ոքքան որ պալատներ և դղեակներ կառուցանես , եւ բազում գանձ և հարստութիւն ժողալիս , Ա'աի և Շէտատի պէս չես լինիր : Աշոարհս եկող գնացող անօրէն , ամբարիշտ , չարագործ բռնաւոր , երկիւղած և արդար թագաւորաց և կայսերաց վերջին վախճանը ուր կայտնալը խորհելով՝ այս նամակիս բովանդակութիւնը քեզ պատասխան բաւական համարես , ամէն կահ կարասիքը իւր ափրոջը յանձնես , և ամեն բան իւր տեղը գնես . իսկ եթէ խորովայցով մարդիկներէն կ'լինիս , կուգամ զօրաւոր հարուածով մի երկու սոքդ կ'հաւասարեմ , վերջ :

Թիմուր՝ երբ այս նամակը առաւ , Թաւրէզ գնաց , և նոյն տարսւան Բէպիլ էվլիլ ամսոյ եօթին Գարապալ ժամանեց , Էմիր Ինչահի բարեկամները բռնեց , մանաւանդ նուագածութեան արհեստին մեջ կատարեալ վարովես և գեղգեղանաց գիտութեան մեջ հազուագիւտ , ափագար հնարագիտաց գամիկա Մէրասոր անուն բարեկամը տանջանաց հրապարակը մատոյց , Էմիր Ինչահը պղուրելու և նոյն նամակը գրել տալու , առիթ լինելու յանցանօք՝ զայն , և ուրիշ խորվարար մարդիկները սպանեց :

Գարապալ քանի մի օր կենալէն՝ և գրաստուց հանչիսաւալէն յետոյ , Ա. Վ. (1399) թուին , ձէմազիլ ախլու ամսոյ երկութիւն հինգշաբթի օրը՝ յիշեալ տեղին փոքր ինչ

գնաց , և այն մօտերը Պէլդիս անուն ամնուր բերդը յաղը թեց եւ նուածեց , և Վրաստանի կողմ գնաց , տիրած բերդերը և ամբոյները կործանեց , և յաղթական գտած մեծը և փոքրը սպանելէն և գերելէն զինի , Պաղտատի կողմ դէմ եգեալ գնաց : Բոնաւոր Թիմուրայ վերատին Պաղտատ երթալը , սուլթան Ահմէտին երկիւղ և տրտմաւթիւնն ապատձառելով՝ Ա. Վ. (1399) թուին , թէձէպ ամսոյ տան երկութիւն Պաղտատին մեկնեցաւ . եւ Թիւրքմէնի հզօր պէլդիկն Գարայ Յուսուֆի հովանաւորութեանը ապաւինեցաւ : Թիմուր երբ սուլթան Ահմէտի փախուստը լսեց , Պաղտատ երթալը թողուց և Վրաստանի կողմ մերը գագարեցաւ . և իւր ուղեւորութեան մէջ , հեղուգութեամբ եւ դանդաղութեամբ անհոգութիւն ցցց տուաւ . Գարայ Յուսուֆ եւ սուլթան Ահմէտ անարդ տենչանօք և վատ խորհրդով , որոշում տուին թէ Թիմուր Վրաստան կ'յապալի , Պաղտատ չգար՝ և երկութիւն ի մի ասին իրենց տեղին չուեցին , տուն խաղաղութեան կոչուած Պաղտատ բաղադրը վերագարձան , տակաւին սուլին նեչնաստած էին , Թիմուրայ Վրաստանէն ելլալը և Պաղտատ գալը հռչակուեցաւ , գարձեալ տագնապելով չկարացին նստիլ , և Յունաց աշխորհի կողմը շուապաւ գնացին , իրենց շբեղ պալատը բուոց և ագուաւուց բնակարան եղաւ :

Յեա այնորիկ եկաւ հասաւ գարնանային զուարթ եղանակը , Թիմուր մարդ ընեղելու , աւար և յափշտակութիւն ընելու պայմանաւ , չուեց և Թիւրքմէնի Հովատուն ամարանոյները գնաց զուարթացաւ , թէպէտ սոյն ժամանակիս նորա վիասը մէկումը չհանդիսակցաւ , այլ ազգք և ժողովուրդք նորա բռնութենէ միշտ կըսարսէին և սրտերնին յարածուփի կ'տատանէր , բաց յայսմանէ , մի և նոյն ժամանակի մէջ , Եգիպտոսի թագաւոր Մէլիք Զահարը , և Սերաստիոյ թագաւոր Պիւրհան իտափին մեռան , և նոյս յաջորդները յամենային անգործունեայ և համօրէն ամբոյին գործերը տնօրէնելու անկարող լինելով , բոլոր հասարակութիւնը անհովիւ ովսարի և անվերակացու գիւղի նմանելով տագնապեցան , և սկսան Թիմուրայ շարթքէն և վնասներէն երկիւղ կրել :

ԳԼՈՒԽ ԺԵ.

Պիւրհան խոտինի կենաց հանդամնքնեւ—Սեբաստիոն թագաւորին:—Գար սակաւը հետ ունեցած գեղացերն:—Գերի բռնուիլն և մաշն: Կենացը թիւնն:—Ապս իւլազիղ գիտականն:—Գարափուքի Սեբաստիոն երթաւն և ժողովոց շնորհուելն:—Սեբաստիոն խորհօւրդն:—Սույնին Պայք զիոր իւնաց թագաւոր ընտրեն, և անոր Սեբաստիոն դան:

Այս թագաւորին բարեքախոդ հայրը՝ Կենարիս թագաւոր էրթինայ անուն անձին ժամանակը դատաւոր էր, սիրելի յաջ թագաւորին, պատուաւոր և բարձրաւ տիճան նախարարաց և իշխանաց մէջ: Որդին Պիւրհան խոտին Ահմէտը՝ յառաջին տիս մանկութեան, ուսումնասիրութեան հետամուտ՝ փառաց և մի միայն առաքի նական վաստակոց ճգնող էր, խոնցական և արտաքին զիւտութիւնները սովորելու համար Եգիպտոս գնաց, և զի ինքը խելացի, ուշիմ, մուալարժ, և իմացող էր, սակաւ միջոցի մէջ շատ ուսմունքներ ուսանելով, իւր ընկերաց յաղթող և աշխարհիս մէջ երեւելի հանդիսացաւ: Օր մի երբ Եգիպտոսի անկիւնները կը շընէր, աղքատ մի պատահելով՝ անոր քանի մի ստակ որպանւթիւն տուաւ, աղքատը՝ խօսքը Պիւրհան խոտինի ուղղելով ըստու, արժան չ որ դուք այս քաղաքը մնաք, զի դուք Յունաց աշխարհի թագաւորն էք, Պիւրհան խատին այս խօսքը լսելուն արէս, Եգիպտոսէն յարաքերութիւնը կարեց, գասը եւ դոլրոց թողուց՝ և Սեբաստիոն կողմը հասանիլ փութաց, համականն հայրը ուրախացաւ, և քաղաքին երեւելինները նորտ գալստեամբ բարեկեցիկ եղան, և ինքը մեծին եւ փոքուն սիրելի եղաւ: Յետ այնորին սիսաւ դորոշները օրինաց դասաւուաւթեան պարապէլ, և խոնցական գիւտութիւնները ուսուցանելու աշխատիլ, և իւր քաղաքաւ վար և բարեկարգ ընթացքով՝ ամենեցուն սիրելի եղու, գեղեցիկ և աղիսի բանաստեղծութիւններ յօրինեց, և շատ պատմութիւններ գրեց, առատաձեռնութեան հաճ և իւսուուս աղքատաց հաւան էր: Ընդ նմին գորականի հագուստ սով թագաւորաց իշխանաց և նախարարաց հետ իւնիցաւ:

վարելով, զինուորութեան մէջ եւս ձեռք ունէր: Ասսաւածացային հրամանաւ երկրին թագաւորը մեռաւ, Սէհէմմէտ անուն փարք որդին՝ համահաճ հաւանութեամբ աւագայնոյն՝ թագաւորական գահը բազմեցաւ, եւ մեծամեծ իշխաններին Մաթհարփ որդի Ղաղնէֆէր, Ֆէրիտուն, Մուխոփ որդի Հիւլիսին, հաճ Խպրահիմ, և յիշեալ Պիւրհան խոտինը քաղաքին համօրէն գործոց տնօրէն, և ժաղըլուգոց վիճակին բարւորիչ եղան: Աստուածային հրամանաւ, Պիւրհան խոտինի հայրն եւս նոյն ժամանակին՝ բռնութիւնը եւ գատաւորութիւնը թողով՝ հանդերձեալ գատարանը գնաց, և Պիւրհան խոտին հօրը տեղ գատաւորութեան պաշտօնին յաջորդեց, գիտութեամբ և քաղաքավարութեամբ երեւելի մեծութեան իշխանութեան եւ խմաստութեան մէջ, ամենէն գերազանց հանդիսացաւ:

Այն ժամանակին Պիւրհան խոտին պաշտօնները բաժնելու սկսելով, Մուխոփ որդին, Հիւլիսին, և Հաճ Խպրահիմը մէկ մէկ բարձր պաշտօններով՝ թագաւորութեալ քաղաքէն հեռացաւ, և քաղաքին գործերը՝ իրեն՝ Ղաղնէֆէրին՝ և Ֆէրիտունին մնաց: Բախոդին եւ ճակատագրին գատակներով՝ նոր թագաւոր սուլթան Մէհմէտան եւս անցաւոր թագաւորութիւնը թողով, յաւիսենական թուգաւորութեան գնաց, եւ տէրութեան ժառանգութիւնը և իշխանութիւնը, այս երեք անձանց՝ բաժանորդութեամբ ժառանգ մնաց: միարանութեամբ քաղաքին և հպատակաց գործերը կլստենէին, տասը կլոնաւոր կարպէտի մի մէջ շնէն պարունակուիր, խմաստին համեմատ, ընկերութեամբ լուծը առին, բայց իրարմէ զզուելով և նախանձելով, մէջէրնին ծածկապէս թշամնութիւն ծագեցաւ, ամենէն աւելի Պիւրհան խոտին՝ թագաւորելունչանը անհանգիստ եղած էր, և իւր ընկերները որսալու մոտք այս օրինակ նենդութիւն մի ըրաւ: քանի մի օր հիւանդութեամբ տունը նստաւ, և ծածկաբար քանի մի անդութ դահիճներ գարանի գնելով պատեհ ժամանակի սպասեց: Այս կողմէն, հիւանդատես երթալու և

Նորա որպիտութիւնը հարյունելու համար, Պաղսէֆէր եւ Ֆէրիտուն մօտը գնացին, նորա վիճակը և որպիտութիւնը հարյունելու ատեն՝ դարձնի դրուած դահիճները դուրս ելան և երկուքն ՚ի միասին յանիրաւի սրով սպանեցին, և Պիւրհան խոտին դատուորը՝ թագաւորական դահով պատուեցաւ:

Այս չարագուշակ լուրը՝ շվակաները դմնուած նու խարարաց տրտմութեան և տափնապի պատճառ եղաւ, և իրենց սրտին մէջ մթերեալ և ծածկեալ նախանձութիւնը յայտնեցին, և իրարու հետ վիճելով կ'ըսէին՝ քանի որ ամենեքեամիս Սեբաստիոյ որդիքներն ենք, մեր սերունդը նախարարաց և թագաւորաց կ'համին, Պիւրհան խոտին դատուազը ովէ, և ինչ տոհմով և հաշուով, և ինչ կարողութեամբ դահուն և թագին տէր կրվնի: Մանաւանդ Եւթովից իշխան չէլիս նէժիպը, և Ամասիոյ իշխան չի կելտին այս դատին մէջ յամառութեամբ հատատուն կեցան, և բայ յայտանէ սուլթան Ալյո խոտին եւս Պիւրհան խոտինի հետ գժուելով՝ հրովարտակը խաբէյութեամբ գրաւեց: Ապա Պիւրհան խոտին իւր սերունդը սառուգել միոքը իյնազով նախնի պատմութիւն ներէն սկսաւ պատմել, և յայտնապէս ծանցը և տեղեկացոց որ իւր նախնիքը թագաւորաց խմբէն են, և սկսաւ քաղաքաց յաղթել, և յամառ մարդիկները աւարել և յափշտակել: Ի բաղմաց՝ Եւթովից իշխան չէլիս նէժիպն վրայ գնաց բռնութեամբ և հարստահարութեամբ բերդին արուաքսեց, կամայ և ակամայ նորա հետ միաբանելով՝ ետ դարձաւ:

Սյոյն ժամանակիս Յունաց աշխարհի Թաթարները բազմութեամբ և ամբոխիւ Սեբաստիոյ կողմ յարձակեցան, և Պիւրհան խոտինի հետ պատերազմը և կոխւ երկարեցաւ, և վերջապէս Սեբաստիոյ դաշտերը բնակող Թիւրքմէն նախարարներէն Գարաիլուք մականաւով՝ Յաման անուն էմիրը՝ իւր հնազանդութեան երաստանակը Պիւրհան խոտինին յանձնեց, և ընծաներ մատցց, և այս խուման վերցութիւնը՝ իւրաքանչիւրոք խաղաղացան և անդորրացան:

Սուլթան Պիւրհան խոտին՝ մինչդեռ Գարաիլուքի հետ միաբանած խուման եւ երկպառակութեան դռները փակած էր. քանի մի ատելութեան առիթ լուրեր տարածուելով՝ խուման ծագեցաւ, քարեկամութիւննին եւ միաբանութիւննին՝ թշնամութեան եւ երկպառակութեան փոխուեցաւ, և քանի քանի անդամ մարտ տուեալ պատերազմեցան: Գարաիլուք իւր ժողովով և պարագայիւք, ծառաներով և ընդուներով, անմատչելի տեղերը գնաց ամրացաւ, և Պիւրհան խոտինի հոգէն ազատեցաւ, և Պիւրհան խոտին զայն մարդու տեղ չըգնելով՝ անփոյթ եղաւ:

Յետ այնորիկ՝ Գարաիլուք մարդիկներէն ամսցելով, երբեմն Սեբաստիոյ և երբեմն Սարապատականի դաշտերը ձմերելով կը շրջէր: Սեբաստիոյ մօտերը օդը աղիւ, ջուրը թեթեւ, գարսրեօք և արօտով, կարմիր և գեղին մարգագետինով զարդարուած տեղերը՝ աշնան և գարնան եղանակներուն՝ նորա ամարանոցն եղած էր: Գարաիլուք մինչդեռ յիշեալ տեղոյն ցանկանալով կ'երթար, Պիւրհան խոտին խմացաւ որ Սեբաստիոյ վրայէն պիտի անցնի, և սկսաւ ամբարտաւանութեամբ և մեծամութեամբ ըսել, կովը և ուղողը ինչ համարձակութիւն և ինչ կարողութիւն ունի որ առիւծին բնակարանը կ'հանդիպի, և անմիջապէս իւր զօրաց և ծառայից հետ ծիերնին հեծան և աճապարանօք դիմեցին գնացին, Գարաիլուքը յաւար և յափշտակութիւն մատնել սաստիկ զայրութէն և բարիկութենէն զօրաց գումարման և բազմութեան ջուղասելալ՝ մինչդեռ միայնակ քանի մի սպասաւորներով կ'երթար, բարեկամներէն ոմանք կ'ըսէին՝ եթէ քիչ մի զօրք համնելուն սպասէք՝ լսաւ է, թէ և ձեր մեծութիւնը այս կարեւոր գործոյն բաւական է, սակայն Գարաիլուք՝ քաջ գործունեաց՝ և յաջողաձեռն մարդ մի է, և անտեղի է անոր հետ անհոգութեամբ վարուիլ. որբան որ խրատեցին՝ մտիկ չըրաւ, եւ յարբած ուղողի նման գէպ՝ ՚ի Թիւրքմէնի չուն յարձակեցաւ, և քաղցած առիւծի նը ման որպի ետեւէն պնդեցաւ, օրը տարաժամ և գիշերուան մութն եւս իւր սեւ վարագոյր ափուեց: Գարաի-

լուք գունդ մի Թիւրբըմէնի քաջերով և անդութ մարդիկ ներով Պիւրհան խոտինը գիմաւորեց, և անմիջապէս բըռնեց և կապանօք գերիվարեց։ Պիւրհան խոտին՝ արդարասէր մարդ մի էր, Գարափլուք խորհեցաւ որ, նա իւր վաղեմի բարեկամ և բարի խորհրդակիցն է, ուստի գարձեալ խաղաղութեան և հաշութեան պայմանները հաստատեց, բարեկամութեան և միաբանութեան գաշնչները նորոգեց, և մինչ կը խորհէր խոռվութեան և հակոռակութեան գուները խապառ փակել, Եւթովից նախկին իշխան շէյխ Նէջիա՝ որ Պիւրհան խոտինի հարուածով և բռնութեամբ նոյն քաղաքէն արտօքրուած էր, երբ այս գէպը լուց, յաջող ժամանակ գիտնալով, փութաց Գարափլուքին հանդիսպիլ, և բարեկամութեան պատրուակաւ Գարափլուքին իբրեւ խորհուրդ եւ խրատ, կատարեալ թշնամիկան և թունալի խօսքերով այսպէս սիստանուիլ, Տէր մի արասցէ՝ որ խելքդ ցրուած և իմացականութիւնդ պակած լինի, պատեհ ժամանակը անցնել, օրինաւոր գործ չէ, եթէ գու Պիւրհան խոտինի գթութեազօք կընսիս՝ նաքեղ թշնամութեան ազօք կընայի, զի նենու գութեամբ և անիրաւութեամբ ճանաչուած, գաւաճանութեամբ և կեղծաւորութեամբ հռչակուած մարդ միէ, եթէ քեզի վլֆակած յաղթութիր և առտուածային օդնութիւնը անոր լինէր, երբէք երբէք՝ վկայ Ապուած, քչ ազուտութիւնդ դժուարին էր, ամեն ատեն հողմը կամաց համաձայն չ'նչէր, եւ ամեն ատեն բախդը ձեռնոտութիւնը չննէր։ Վերջապէս այն սատանամն՝ թագաւորին սպանման այսովիս սատանայակամն հնարքներ նիւթելով Գարափլուքը մոլորեցուց, և Պիւրհան խոտինը սպանելու յօժարեցուց, նա զայն սպանեց, թագաւորութեան և իշխանութեան հետամուտ եղաւ։

Վախքան զայս գրուած և պատմուածին համեն մատվախանեալ Պիւրհան խոտինը, գիտուն՝ առարինի առատաձեռն, և խոհեմ, պատմութիւնը աղիս, զրութիւնը և բանաստեղծութիւնը նուրբ, սիրող իմաստոց և գթած աղքատաց էր, երկուշարթի եւ հինգշարթի օրերը իմաստոց քերթողաց եւ բանաստեղից հետ

խօսակցութեան յատկացուցած էր, իմաստուն եւ հանձարեղ մարդկանց պարգեւները անպակաս լինելով դուռը Քեապէի գուռ եղած էր, ուր մորդիկ բազում ինչ կ'ակընկալեն, մեռնելու կետին մօտ ժողովրդոց ըրած անիւրաւութիւնները առեց՝ արդարութեամբ և օրինօք սիրալ աբուազուտստ և ի ներքուստ մարդեց և որբեց։ (Պէրածին Ալի իթթէլլիին) անուն պատմութիւնը, և քանի քանի առարինութեան հետքերը ախարհիս յիշատակ թուղուց։

Կըպատմնն թէ ժամանակին զարմանալի, և գիտութեան ասպարիզի մէջ դարուց երեւելի և ընկերաց յաղթով, Ալիապիրէն և Պարսկերէն լեզուաց հմնւտ և գրչւաէր, Պաղտատի բնակիչներէն Ապտիւլաղիզ անուն անձը լսեց որ Պաղտատ սուլթան Ահմէտ Ճիշտէրին մօտնէ, և աներեւու թառիս անոր սիրահարեցաւ, և սուլթան Ահմէտին նամակաւ գեսպան խրկեց և ազայեց որ՝ յիշեալ Ապտիւլաղիզ իրէն խրկէ, սուլթան Ահմէտ, որ անոր հետ կինցաղավարելով խօսքերուն զմայլած էր՝ չ'ըր կընար նորա բամնուելուն համբերել, վասն որց քանի մի պատճառակներով պատահուն տալէն յետոյ մտածեց որ՝ իցէ թէ Ապտիւլաղիզ սուլթան Պիւրհան խոտինի պատուցին՝ առատ շնորհաց և պարգեւաց յանկանալով յանկարծ փախչի, և այս հոգը բառնալու համար, պահապան և դէտ կարգեց որ Ապտիւլաղիզ պահէն, այս լուրը Պիւրհան խոտինին հակառակ գալում՝ հարկադրեցաւ Ապտիւլաղիզն մարդ խրկէլ և ծածկաբար նամակաւ հրաւերէլ, շատ պարգեւներ խոստանալին զինի, պէտք եղած ճանապարհի ծախչն եւս վաճառականաց ոմինց պատուիրեց։ Ապտիւլաղիզ հրաւերը ընդունեց, և նորա ծառայութեան ցանկանալով, միտքը զրաւ որ փախչի, ամառնային եղանակին և կէս օրուան սասամիկ շերմութեան տաեն, մինչդեռ սուլթան Ահմէտ բնացած, ծառայը եւ պահապանը ամեն մէկը մէկ կողմ քաշուած էին. Ապտիւլաղիզ Տիգրիս գետը լողալով անցաւ, և կարաւանին հասու, եւ հագուստով փոխելով Կարաւանի բաղմութեան մէջ ծածկուեցաւ և նախատակ գրած անզը ուղեւարեւը

գնաց : Այս կողմը սուլթան Ահմէտ քունէն արթնցաւ և Ապտիւլ ազիզը ուղեց . որքան որ որոնեցին չգտան , և նորա հետքէն տեղեկութիւն մի չառին . միսյն Տիգրիսի եղերը Ապտիւլ ազիզի քանի մի հագուստները և նոր շանները գտան , կարելի է որ օդոցն ջերմութենէ զովանալու համար՝ գետը մտած և լնկղմած է ըսին , և այս կարծիքը բաւական սեպեցին , և պահապանները այս մասին յանդիմանութենէ և ՚ի պատճյ զերծան , յետոյ համբաւեցաւ որ ՚ի Պաղտատ Տիգրիս գետը սուզանող լուղբրդը Սեբաստիոնի դուրս ելերէ : Այս գործը սուլթան Ահմէտին մեծ ցաւ եղաւ : Նա երբ սուլթան Պիւրհան խոտինի հասաւ , մեծ պատուով եւ յարգանօք ընդունեց , պարզեւօք և արօք իրեն մօտ տեղ ցոյց տուաւ , և մինչ չեւ իւր կենաց վերջը , ուրախութեամբ և բերկրութեամբ բարիկեցիկ եղաւ , մինչ զի Պիւրհան խոտինի առաջին իշխանութենէ մինչեւ իւր մահուան ժամանակ ընդարձակ և ճոխ բանիւք պատմութիւն մի գրեց . յիշեալ պատմութիւնը Գարամանի կողմանց իմաստնոց և գիտնոց ընդունելի լինելով պատուով կարգացին : Սուլթան Պիւրհան խոտին մեռնելէն զինի , Ապտիւլ ազիզ Սեբաստիոն մնալը իրեն ապօրինաւոր համարելով Եղիսակոս գնաց , ուր մեծամեծաց հաճելի և առաքինեաց ցանկալի լինելով՝ բարիկեցութեամբ ժամանակ անցաւց , ասկայն ուրախութեան սիրող էր , օր մի յարքած ատեն՝ բարձր տեղէ մի բնկաւ , և արբեցութիւնը իւր կորսուեան պատճառը լինելով մեռաւ :

Գարաիլուք երբ Պիւրհան խոտինը սպանեց , կատարեալ ընդարձակութիւն եւ նոր պատիւ գտաւ , մեծութեան և թագաւորութեան տենչանօք Սեբաստիոն մարդկարկեց , մեծը և փոքրը իւր ուխուն հրաւիրեց , նպասութեան անի մեջ անաղանդիլ , թերեւս անիմիւք և նախատանօք մարդկիները ետ դարձուցին : Գարաիլուք բարկացաւ , և փութաց Պիւրգմէնի քաջերով Սեբաստիոն պաշարել . բազարացիք մարտինի անընդունակ գորութիւնն է կարողութիւն չունենին . յակամայից Յունաց աշխարհի Պամբարաց մարդկարկին և օդնութիւն ուղեցին , մինչդեռ կարելի եղաւ

ծին չափ կը ջանային Գարաիլուքը վանել և ՚ի բաց մերմել , իբրեւ օդնական եկող թաթարները՝ չկարացին Գարաիլուքին գէմ կենալ , թէ եւ ՚ի փախուտոտ աճապարեցին , այլ գնացեալ մեծ բաղմութեամբ և խուռն ամբոխիւ վերաստին Գարաիլուքին վրայ դարձան , այլ այս անգամ Գարաիլուք հակառակելու կարողութիւն չունենալով , Ատրպատականի կողմ գնաց , և Թիմուրայ հնազան գութիւնն ցոց տալով , յօժարեցցց զայն Սեբաստիոն նըւածել :

Սեբաստիոն մեծամեծները և աւագանին խորհրդաց ատեան կազմելով խօսիլ մկան . սուլթան Պիւրհան խոտին թագաւորութեան և իշխանութեան արժանաւոր զաւակ չունի , ՚ի հարկէ երկրին զօրաւոր պահապան մի պէտք է , և տէրութեան գահը թագաւորի մի կարօտ է , որ կողմ դիմել և որո՞ւ ապաւինիլ արժան է , ոմանկը՝ Եգիպտոսի թագաւորը յարմար է , ոմանկը՝ Գարամանի որդին , կըսենին , և ոմանկը՝ Յունաց աշխարհի արդարասէր թագաւոր սուլթան Պայէղիսուր արժան գատեցին , վերջապէս միաբան հաւանութեամբ սուլթան Պայէղիսուր ամենէն վերդասելով , նորա բարձրագոյն դուռը պատգամաւոր խրթիցին , և արակեցին որ նորա հավանաւորութեան տակ խաղաղ և հանգիստ ապրին :

Հզօր թագաւորը նոցա աղաշանքը ընդունեց , և անմիջապէս սնիմիւ զըրքերով Սեբաստիոն գնաց , երբ քաշարը հասաւ , քաղաքին օրէկիները հաստատեց , եւ ժողովրդոց վիճակին վերտերեալ կարգը և կանոնը նորոգեց՝ ապա մեծ արքայորդին Էմիր Պիւրհանը քաղաքին իշխան կարգեց , և իւր հարկաւոր գործերը անօրինելու ծառայութեան մասին , երեւելի նախարարներէն՝ Խարիսի որդի Եագուսպը , Պիկսարիի որդի Համզան , Գուլջ Ալին , Մուստաֆան , և Ֆավատար անուն քաջ նախարարները որաշոնեաց կացցոց . ապա յիշեալ տեղէն մէկնեցաւ եւ գէմ եղեալ Ատրպատականի կողմ գնաց : Առիւծ հզօր թագաւորին երթը՝ Ատրպատականի իշխան Պահարթինի երկիւղի որտոմութեան և զարհուրանաց առիթ լինելով՝ չկարաց նստիլ եւ գագարել , և աճապարանօք Թի-

մաւրաց կողմէ փախուաւ : Սուլլթան Պայէզիս՝ յիշեալ քառ զարը մուաւ , և առանց խոռվաթեան Թահարթիմինի ինչ քը և առացուածքը , կանայքը և ծառաները գրաւեց եւ ինչ որ ուներ առաւ , եւ դարձաւ կոստոնդիսց մայրաքաղաքը պաշտրել գնոց :

ԳԼՈՒԽ ԺԹ.

Թիմուրաց Մարտինի և Աերաստից կողմէ Կրթան : — Քարաքը պաշտիւն : — Առնեն : — Եւ ընակցոց կատունն : — Բերից կողմէ դառնալն : — Եղիպատրին զօրաց Բերից քարաքը ժողովին : — Թիմուրաց պէտայի բերդը և Մելքին քարաքը առնեն : — Հռոմէ կայէն Անթայ դառնալն : — Եղիպատրին բանակի սպառագետն նամակ գրեն : — Դամակոսի և Բերից զօրաց խորհուրդն : — Տէմիր թաշն նենդութիւններն :

Թէպէտ Թիմուր՝ Երկիպառակութենէ և չարտութենէ դադարած չըր , սակայն Գարաիլուք և Թահարթին , անոր չարութեան հուրը աւելի բարբորեցին , գարձեալ նա արշաւանաց գրոշը բարձրացուց և զօրաց գումարտակ ները ճամբաց հանեց : Մարտինի թագաւոր Մէլիք Զահար լեց՝ որ նորա միաքը նախ՝ Ատրապատականի կողմէ անցնիլ , և յետ այնորիկ Մարտինի կողմէ երթալէ ինքը բազմութեան խօսքին հետեւելով , փոյթ չը տարաւ , յառաջադցն յակամայից Թիմուրաց հետ րրած ուխուր եւ գաշինքը կատարել , և գարձեալ մարտի և պատերազմի պատրաստեցաւ . Թիմուր երբ լսեց թէ Մէլիք Զահար իւր ուխտին դրեց , բարիւթիւնը իւրեւ հուր վառեցաւ , և յառաջադցն ըրած բարութեանց վրայ սարջացաւ , սակայն անհոգութեան տալով Մարտինի կողմանց անփոյթ եղաւ :

Սայն ժամանակիս . այօթնքն Ա. Վ. (1399) թուին , Եղիպատրին և Դամասկեան նախարարաց և զօրաց մէջ քանի մի պատճառներով հակառակութիւնն ծագեցաւ , եւ միաբանութիւննին Երկիպառակութեան փոխուեցու , և իրենց բազին զօրութիւնը և համաշռունչ միութիւնը քակուեցաւ , քաղաքին պահպանութենէ և հսկողութեա-

նէ , ժողովրդոց սրաշտպանութենէ և խմանարկութենէ հեղգացան , գուռը հասած տկարութենէ , և նորա երկիւղին անփոյթ եղան , յիշեալ թուականին Շապան եւ Բամազան ամնոց մէջ , Գամմանիսի նշանաւոր երեւելին ներէն Եմիր Թէնիսի և Դամանիսի նոխարարաց ոմանց բունութեամբ , միմակնին բոլորովին ծիւրեալ ապականեցաւ , և քաղաքը կառավարելու մարդ չէ մնաց :

Սեբաստիոյ քաղաքին իշխան էմիր Միւլէյմանը երբ իմացաւ որ Թիմուր , Գարաիլուքի և Ատրապատականի նախակինն իշխան Թահարթիմինի դրդմամբ , Սեբաստիոյ կողմէ զօրք հաներ , և ծովու նման յորդելով կուգաց ։ անմիջապէս պատահած դէսլքերը բնդարձակ և ձօխ բանիւք գրեց եւ Վեհափառ սուլթան Պայէզիսի բարձրագոյն դուռը ծանոց , և պատգամաւոր խրիելով օգնութիւն ու վեց . նոյն ժամանակին թագաւորր , որ Կաստանդիսց քառաքը պաշարելու զբաղմած էր անխրսիկի եղաւ որ նորա համար օգնութիւն պատրաստէ , էմիր Միւլէյման բերդը ամրացուց , աշտարակները և ողարիսանները նորոգեց , և քաղաքին ելեւ մնալոր փափեց և աղխեց , պէտք եղած տէղերը զօրագետներ և զօրքեր շարեց , և մինչդեռ մարտի և պատերազմի կազմը եւ պատրաստ կեցած էր . Թիմուր անթիւ զօրքերով և գունդերով , որ իրեւ ծով կ'ծփացին յանդիման բերդին երեւեցաւ և զօրահանգէս ըրաւ , էմիր Միւլէյման երբ Թիմուրա կատաղի զօրքերը եւ փառքը տեսաւ , բաւաւ , այսպիսի յորդեալ հեղեղի , մրցմանց և մարտին նման յախուռն բազմութեան դէմիենալ խոհեմութիւն չէ , ուստի բարազմին պահպանութիւնը և հսկողութիւնը նախարարաց արիաջան պարտաւորութեան յանձնեց , և ինքը թագաւորին երթալ և օգնութիւն գառնալու պայմանաւ , անոնց հետ ուխտ և դաշնիք զրբաւ , և գէպ ՚ի թագաւորական դուռը ուղեւորեցաւ :

Ա. Վ. Թիմուր Ա. Վ. (1399) թուին Զիլիմանէ ամնոց տանն և եօթին սատանոյի նման և կրօնիւք անհաւաստ զօրքերը վարելով բերդը տանելու յառաջեց , պաշարման գործը յաւուր յարութեան օրինակ , մարտը և պատերազմին վերջին չատաստանի նշանակ էր , յիշեալ թուակա-

Նին Մուհարրէմ ամսոյ երեքին հիմնդաբթի օրը ամրականաց հետ բանակցեցաւ, առանց արիւնին թափուելու պայմանաւ մանկանց տղայոց և կանանց՝ անիրաւութեան ձեռք չի կարկառելու դաշամբ, բերդին բանալիները Թի մուրայ յանձնեցին, մարտը եւ պատերազմը դադարեցաւ, անօրէնն թիմուր, երբ բերդը մտու, դժոնուած զօրաց բոլորն ՚ի միասին բռնել տուաւ, և որպէս թէ արիւնին չժափուելու ուխոը կատարելու համար, վասմի փորել տուաւ. և (1) երեք հաղարի չափ անձնիքը նոյն փառը լեցուց, և հողով ծածկելով չարաչար սպանեց: Յետ այնորիկ, իւր չար առխորութեան համեմատ, քաղաքը աւարեց, և ժողովուրդը տանջանքը բանտերը մատնեց: Յիշեալ քաղաքը անուանի քաղաքներէն մին էր, գեղեցիկ օդով, և վազուն ջրերով չէն, պաղոց շատութեամբ և բարեաց առատութեամբ, ամենէցուն բէրանք հռչակուած էր՝ և բայց յայսմանէ՛ բնակիչքը փառաւոր, հիւրասէր և պատուասէր էին. Դամասկոսի Ատրպատականի և Յունաց աշխարհներուն բանալին և կապանքն էր, այլ այս ահագին պատերազմին, բնակչաց շատերը վայրատարին ցրութեան. շինութեանց և ամրութեանց երեւոյթները հիմնայատակ կործանեցան:

Յիշեալ ամբարտաւանը, Անբաստից գանձերը գըրաւելէն, և հպատակաց ստացուածքը ըստ իւր կամաց յափշտակելէն յետոյ, պէսպէս ազգաց և զանազան ցեղոց հետ ՚ի միասին որք են. Թուրանի մարդիկները, Իւրանի քաջերը, Թուրքաստանի վագրները, Պատախշանի առիւճները, Զինաց գայլերը, Մողով սատանաները, Խուճէնտի, Խուարզմի, Մաղանտարանի, Խորասանու, առիւճները, Ճերճանի, Սաղանի, Տէսմէ մէյտանի, Թալզունի, Քիրմանի, Ասպահանի, Ղազնի, Համատանի, Հինտի, Սինտի, Լազիստանի, զուր և Սաստուր. քաղաքի գիւցազունները և Պարկաստանի հեծեալները, որոնք մէկ մէկ մաս Մոլժանի, կուոյ պաշտօնէից, և պէսպէս մուգալոնից ընկերակցութեամբ, յաջողութեամբ և կատա-

րեալ յաղթութեամբ երջանիկ բախտով և մեծահռչակ փառօք Բերից կողմը գնացին:

Այս չարագուշակ լուրը երբ Դամասկոսի և Եգիպտասի աշխարհները գումէեց, Եգիպտոս՝ Մէլիք Նասրի կողմէն Դամասկոսի կուսակալին և այլ խամր իշխանաց հրամաններ եւ վճիռներ արձակուեցան, և պատուերներներ եղան, որ Բերից քաղաքը ժողովին, կազմ և որսուրաստ մնան. հասած զօբքերը Դամասկոսի կուսակալ Սալտունի հետ ՚ի միասին գումարեցան, պատերազմի և պայքարի պատրաստութեամբ Հ. Թուրին և Սէֆէր ամսոյն Դամասկոսէն մեկնեալ գնացին. առպա՝ միւս նաև խարաբներն և իշխաններն կողմնոց կողմանց եկան, և Բերից քաղաքը աստեղաթիւ զօրաց բանակատեղի եղաւ: Յիշեալ Սալտունը, որպէս թէ վախճանեալ պատմագրին տէրն եղած լինի, քանի որ անունը կուգայ, տէր իմ և բարերար իմ ըսելով կը յիշէ:

Միւս կողմէն Թիմուր, անհուն ծովու նման անեթիւ և անհամար զօբքերով. նախ գէալ ՚ի Պէհնայի բերդը յուր յառաջեց, և անոր ըսրս կողմը աւարեց և յափշտակեց. քանի երեք օր պաշարելով և ՚ի նեղ արկանելով, յաղթեց և նուաճեց, Մէլտինէ (Մալաթեայ) քաղաքին տիրեց, և զայն եւս ոսնակուի ընկելով, Հումմել կոչի բերդին վրայ նեղութիւն ձգելով իջաւ. յիշեալ բերդին տէրը Նէհէրի մականուամբ՝ Մէհէմմէտի որդի Նասր անուն անձն էր: Այս բերդը որպէս թէ երկաթածոյլ և պողպատաշէն ամուր և անառիկ բերդ մի լինելով, անոր ամրութեան և հաստատութեան վրայ, Թիմուրն անդամ զարմանալով ըստ թէ, մեր աւճեւը եղած ամուր և դժուարին գործէն, ասոր յաղթել և նուաճելը շաա դիւրին է. ուստի փոյթ ընկելով, միայն գիշեր մի կեցաւ, և Անթասի կողմ գնաց: Այս քաղաքի իշխանը բերդը ամրացուց և ինքը միայնակ Բերից կողմ փախաւ:

Թիմուր նցն աելք գաղաքելով, Բերից զօրաց ըստ պարագետին մեծամութեամբ փրացեալ նամակ մի գըրեց, խօպերուն մէջ պէսպէս գուղղութիւն և զանազան յոխորտանքներ խառնելով, իւր հնաղանդութեան հրա-

(1) Թուր. հայ, Վ. գ. 4.000. երես 63:

ւիրեց . և պատուիրեց որ՝ մեծ էմիր Թիմուր կիւրկէն Մահմանաւի անուան խութպէ կարգալտայ մարտը և պատերազմը դադրեցնէ , ապա՝ իւր քրոջ դստեր այր Աթլամիշ անուն անձը , որ յառաջադրվն . քանի մի յանցանօք յԵղիստոս փախչեր էր . և Թիմուր լսեց որ , սկիզբը և կած աւտեն զայն անարգեր և անպատուեր և բանախց արդիլարանը գերի բրած են . և յետոյ բանտէն հանելով , Եղիստոսի մէջ փառոք և պատուով մեծարեր են , զայն ևս պահանջեց . ապա իւր զօրութիւնը մեծութիւնը և փառը ճանուցանելով կրուէ , քանի որ մարդկանց իշխանութիւնը , և խօսմաց յաջորդութիւնը և թուգուսորութիւնը իմ հզօր ձեռքիս տակն է , քանի որ երկրիս թագաւորները ծառաց , և ես ի վերաց ամեննեցուն թագաւորուեմ , գուք ինչ կերպով արժանի կ'լինէք չէքես տղթին մեծ և իշխան լինիլ : Գրած նամակը սասպիսի խօսքերով լիցուց իսրեց : Թէպէտ գիտեր որ գործադրութիւնը գետուար , և ուզածը յանձնել անկարելի է , այլ միայն իւր կամքը , ատելութեան և թշնամութեան գուներ բանալ էր : Գամանկոսի կուտակալ Սավուոնը , և կած նամակը անպատուելէն յետոյ , գեւպանները սասպիկ տանջանօք սպանեց , մարտի և պատերազմի պատրաստեցաւ : Երբ ստոցդ հաստատեցաւ որ իմի ճնունդն Թիմուր գարձաւ էերից կողմէ կերթաց , սպարապետը և զօրաց նախարարները և զօրապետները պարաւուագառածը խորհելու համար խորհրդ ատեան կազմեցին , և խօսք բացին թէ ինչ ճանապարհաւ պատերազմիլ , և ինչ կերպով թշնամունի գէմ ճակատիլ և զայն վանել պէտք է : Ումանք պաշաճաւոր գատեցին թէ , բաղաքը ամրանալ , աշտարակներէն և պարզապէն , Նետաձիգ Փարածիդ և Հրձիդ լինելով պատերազմելու օրինաւոր է , ումանք այս տնօրինութիւնը տաղտիալի և տկարութեան նշան է լոյն , այլ բերդէն գուրս ելլալով , պատմիշափակ ամրանալը և թըշնամին բերդին չմօտեցնելու օրինաւոր է , այսպէս իւրաքանչիւր ոք , իւր մտաց մէջ եղած տնօրինութիւնը և պատրաստութիւնը ճանաւցանելէն յետոյ , Քրիստոյ կուտակալ Խասերի Մահմադ պատէս սկսաւ առենափուն ,

ով գունդը Խպամաց և տեարք փառաց , յայտնի է թէ Թիմուր մի զօրաւոր թշնամի , զօրքը՝ նենդութիւնը եւ գաւաճանութիւնը աւելի է . խորհրդով պատրաստութեան և նենդութեան կարելի եղածին չափ խաբէյութեան եւ նենդութեան պէտս ունի , վան զի խորհուրդը եւ ազատ միաքը՝ սուրբէն աւելի հատու է , այս գալող անհամար զօրքերը երկրիս անտանելի և տիեզերաց անբովանդակելի են , ուսկայն որբան որ հակառակորդ և թշնամի են , այս տեղ օտարական են , նուաստիս կամքը այս է որ՝ բերդը ամրացնենք , աշտարակները և պարփակը հաստատենք և նորոգենք , և գրոշներով զարդարենք՝ և բաւականի չափ պահապաններ կարգելն զինի , մենք ևս քաղաքէն դուրս ալզահովեալ և անասիկ տեղ մի կելլանք , և մեր շրջապատը խրամնվ կամրացնենք , և կարելի եղած ատեն Թիմուրաց բոլորափեր կ'զարնենք , և նորա մարդիկները բանակնելով՝ կը տաղտկացնենք , յետոյ՝ մեր բոլորտիքը եղած Արագ , Քիւրթ , և Թիւրքմէն ցեղերը մեզի նկանիկ կը կրկոչնենք . որ իւրաքանչւոր ցեղ մէկ կողմէն թշնամունի յաջը և ձախը աւարեն յափշտակեն եւ ինամներ գործեն , և գտածնին սպանամնեն և կորուսանեն . և կամ եթէ գարշագէմ թշնամին մեջ վրայ գայ և մեզի նեղէ , մենք ցած խրամէն կ'զարնենք և կը պատերազմինք , եթէ յաղթող գտնուելով թշնամին խրտակեցինք , ահա այն է մեր կամքը , մեր թագաւորին առջեւ պատուաւոր և մեծարելի կ'լինիմք , եթէ տէր մի արասցէ , թշնամունի կողմը յաղթող լինի , թագաւորին կողմէն օգնութեան կ'սպասենք , և կամ գոնէ մէկ կոմը գտնուելով՝ ընդարձակ հրատարակի մէջ , մեր հոգւոյ օժիկը աղատելու ճանապարհ մի կը գտնենք բանելով իւր ճառը կիրեց :

Թէրիս իշխան Տէմիրթաշ անուն չարակամը՝ ըսաւ , այդ գործը ընդունելի և քաջ արանց մէջ համելի չէ , այս տեղ աճապարելը՝ հանդարտութենէ գերազանց է , մարտը և պատերազմը՝ կասկածելէն և դանդաղելէն բարի է , որպէս թէ Թիմուր վանդակի մէջ թուզուն մի է . արէտը է ջանամք պատեհ ժամանակ գոնալ և նորա դէմ ճակատիլ եւ պատերազմիլ . փառք Աստուծոյ բոլոր զօրքնենս

քաջ և թաղաւորին հնագոմնդ . վորձ հմուտ և գործուանեայ գիւցազուններ են , մարտի և պատերազմի ասպարիզի մէջ գերի ուսող աւելածներ են , եթէ սահմանուած է մեզ օգնութեամբն Աստուծոյ յաղթական լինիլ , Եգիպտոսի զօրաց գալստեան շնոր կարօտիր , թշնամին վանելով քաջութեան և արիութեան դրոշը կ'ապարզնէք , եւ յաջ մարդկանց մեր փառքը պատիւը և քաջութիւնը կ'աւելնայ . եթէ Տէր մի տրասցէ բախզին հայելին ուրիշ կեր պարանք ցոյց տալով , պարտութիւն պատահի , թագաւորը մեր վրէժը կ'առնէ , և մեր պատճառանքները կ'ընդունի : Արդ՝ Աստուծոծ ապաւինելով հաստատուան մը տօք ընտրեմք թշնամւն գէմ ձակասիլ և պատերազմիւ պէտք է որ երկիւղէն հեռանամք և վատութենէ զգուշանամք , այսպէս իւր անարժան կամքը գովելով կրկնեց : Եւ նորա խօսքն վոյ ամենելեան միաբանեցան , և Թիշ մուրայ դէմ երթալու որոշում տալով՝ ուխտ և երդում ըրին :

Գործոյն երեւոյթը այս էր , որ Տէմիր թաշ ամեննեցուն հակառակ , և ծածկապէս Թիմուրայ հետ միաբառնած էր , սորա սովորութիւնը և բնաւորութիւնը միաբառնիլ էր՝ և միշտ սցսպիսի գէպք մի պատահած ատեն՝ զօշրաւոր կողմին հետ ծածկապէս կ'բանակցէր , և պատերազմի ատեն հաստատուն շնենալով՝ գորաց պարտութեան տոիթ կը լինէր : Սայն գէպքին մէջ եւս իւր չար սովորութիւնը ի յայտ ածելով՝ Թիմուրայ հետ գաղանի յարաբերութիւն ունեցեր էր , Թիմուր եւս իրեն հաւատացեր գրած եւ խօսած խօսերուն հաւատարմութիւն ընծայեր էր : Յետ այնորիկ Գամասկոսի զօրքը սորա կամաց հետեւելով՝ քաղաքը ամրացուցին և ճանապարհները փակեցին , և պէտք եղած տեղերը պահապաներ կացուցին , յետոյ թշնամին դիմաւորելու համար՝ Պապ իւլ Ֆարան , Պապ իւլ Գընաթ անուն դոներէն ելեալ գնացին :

ԳԼՈՒԽ Ի .

Թիմուրայ Անթապէն մէկնին : — Եւ յիշեալ թուականին թէպիլ էվիլ ամայ տան և բնին հինգաբթի օրը Տէրիոյ կողմ իշնալն : — Գամասկոսին գորաց պատերազմն և պարտութիւնն : — Տէրիոյ քաղաքին անձնատուր լինին :

Թիմուր երկու հազարի չափ հեծելազօր որոշեց , Բերիոյ և Գամասկոսի զօրաց կողմ իբրեւ մեկնազէն խղկեց : Գամասկոսի զօրքէն երեք հարիւրի չափ սուսերաւորք զանոնք գիմաւորեցին , և թշնամութեան գործարանը կանոնելով վրէմխնդրութեան և ատելութեան պատերազմը յարդարեցին , յաջողութիւնը ձեռնտու և լնկեր եղաւ Գամասկացւոց , և Թաթար զօրքը խորտակելով բնաշնչ կոտորեցին : Հնտեւեալ ուրբաթ օր առաւօտեան , երբ արեգակը երկնից խորանէն իւր ճառագայթները ծաւալելով աշխարհս կլւսաւորէր , գոռովն Թիմուր հինգ հազարի չափ պատերազմանէր եւ արիւնարբու Զղաթայի քաջերը որոշեց՝ մարտի և պատերազմի խրկեց . Գամասկոսի և Էներիոյ զօրքերէն եւս գունդ մի անուանի կորիճներ պատերազմի դաշտը փութացին , և երկու կողմը իբրեւ քաղցեալ առիւծ իրարու մինցան , սոսկալի բազմ և մողոգին սպայքար , քաջը և արիք՝ իրարու վրէմխնդիր լինելու փութացան , թշնամւն կողմէն բաւական վատարախներ հրավառ սրցն կերակուր լեալ , դիաթաւալ յերկիր կործանեցան , արիւննին Ճիհունի պէս վազեց և կառափաւնիր իբրեւ հրազնեուց գնուակ հրապարակի մէջ կուտեցաւ : Սակայն Գամասկոսի զօրքերէն , միայն երկու անձանց կենաց գրոշը՝ մարմնոյ դղեկին հետ հիմն արեւին կործանեցաւ . նոյն օրը մինչեւ երեկոյ կոփւը եւ մաքառումը երկարեցաւ , երբ գիշերուան մութը դիմաւորեց՝ պատերազմը դադարեցաւ , և իւրաքանչիւր ոք իւր տեղը դարձաւ , և հետեւեալ առուր հոգածութեամբ՝ տըրտութեան մէջ լնկղմեցաւ :

Թիմուր՝ գիշերուան մութին երջանիկ եւ յաջողակ բախուց , այն մօտենը Ալյան գիւղի կողմ լնոնացէմ վըզ :

թագիէ (Ոնտիոք) գուռը խորտակեց և քանդեց , և յետին թշուառութեամբ Դամասկոս հասաւ . մնացեալ զօրք և զօրապեալ քաղաքին նախարարները և երեւելները ներբին բերդը ելան , և կատարեալ պարտութեամբ և անարգութէ հոն ամրացան , ապա Տէմիր թաշի միջնորդութեամբ անձնատուր լինելով անցս Թիմուրայ առջեւ և կան : Թիմուր եւո՞ Սավուն , Շէյխ Խասիքի Մուխտ , Սաֆէտի իշխան , Արնայի որդի Պուզայ , և Ղազզէի եւ խան Էօմէր , Սուհանի որդի Ալի անուն Էմիրները բանաւորիութեամբ անպատճեց , և Տէմիրթաշին խիլայ Հաղցնելով փառաւորեց և պատուեց : Յետոյ Թիմուր գաղողելով և մեծվայելութեամբ հանդարտելով , ուշիկ և հանդարտ իւր բերները վերաց և բերից բաղադրական սույն : Մինչեւ Պամասկեանք յառաջամարտիկներուն հետ ըդբաղեալ էին , Թիմուրայ զօրքը մրջմանց և օծից նման , յաջ և ահեակ , յառաջ և յետուսա , իբրեւ կարիմն պատեցին , և ամեն կողմէն նետաձգութեամբ և հրաշունչ սուսերաց հօլովմամբ կը մարտնչէին , Պամասկեան զօրքերը նիզակները ճոճելով և զէնքերը շարժելով՝ թշնամին վանելու և ի բաց մերժելու ջանք և ճիգ կ'թափէին , մարտը և մաքառումը երկարեցաւ , պատերազմը և կոտորումը չափէն անցաւ . արիննին հեղեղ նման յորդեց , եւ մարմինները զանազան կենդանեաց կուր եղան . մինչդեռ արբունի զօրքը կարելի եղածին չափ կը ջանար և կը ճրգնէր թշնամին վանել , յաջ թեւը գտնուած Պամասկեանք և Տէմիր թաշ՝ ի պարտութիւն մատնեցան և ի փախուստ աճապարեցին և մնացած զօրքը տկարութեան և թուլութեան հողը և փոշին պատեց , եւ անմիջապէս իրենց թիմունքը թշնամույն նետից և տապարաց վահան ընելով , հաստատութիւննին փախուստի փոխեցին , և փութացան Բերից կողմը դառնուլ . անդութ թշնամին նոյս հետամուտ լինելով՝ էր որ կոտորեց և էր որ վերաւորեց , այս տագնապով գէպ ՚ի քաղաքին դուռը այն աստիճան խուռան բազմութեամբ խուժեցին , որ դրան մէջ տեղը սունակի եղած զօրքերէն , ներս մանալու հնարք չիմնաց , այս դատաճառաւ շատերը բամնուելով , ուրիշ Երկիրներ վայրավատին ցրուեցան : Այս տագնապով Էմիր մի Ան-

զերը կարգադրեց , և կատաղի զօրքերը մարտի և պատերազմի հանդերձեց , և ահագին պատերազմի պատրաստեցաւ : Նաբախ օր առաւօտեան՝ Պամասկեան զօրքերը կատարեալ չքեզութեամբ և պերճ հանդիսիւ եւ մաքուր զէնքերով իրենց զօրութիւնը և կարողութիւնը երեւցուցին , Արաբացի նմաններով և ձիավարք մարտիկներով , ուկի արծաթ վառերով , ասղնեգործ և ականակուռ զրոշ ներով , յաջ և յահեակ զօրքը գատաւորեցին , յառաջապահ և վերջապահ գունդեալ վառերով և ականակուռ զրոշ ներով , յահեակ զօրքը վառերով և ականակուռ զրոշ ներով : Ես յահեակ զօրքը վառերով և ականակուռ զրոշ ներով , յահեակ զօրքը վառերով և ականակուռ զրոշ ներով , յահեակ զօրքը վառերով և ականակուռ զրոշ ներով : Ես յահեակ զօրքը վառերով և ականակուռ զրոշ ներով , յահեակ զօրքը վառերով և ականակուռ զրոշ ներով : Ես յահեակ զօրքը վառերով և ականակուռ զրոշ ներով , յահեակ զօրքը վառերով և ականակուռ զրոշ ներով : Ես յահեակ զօրքը վառերով և ականակուռ զրոշ ներով :

Այս գէպը հետեւեալ կերպով եւս կը պատմեն :

Խպն Շահնէ պատմից իւր պատմութեան մէջ , Խուարզիմի Հաֆրզին պատմութենէն լսելով՝ յիշեալ գէպը այսպէս պատմած է թէ՝ Ասկէ յառաջ որոշուածին համեմատ , երբ Թիմուր Պէհնայի բերդը պաշարեց , Հռոմ կլայ գղեկին իշխան Նասրը՝ որդի Մէհմէտի , որդւոյ Մուսայի , որդւոյ Շէհէրի , Թիմուրայ բանակը քանի մի անգամ յարձակելով ձիերը և գրաստները կ'աւարեր և կ'յափշտակէր , գտածը կ'սրանանէր եւ գերի կը վարէր , և հատեալ գլուխները Բերիայ կը խրիէր , և Բերիոյ զօրքերը կուրախացնէր . նորա չարիքները բառնալու համար Թիմուր գունդ մի զօրք խրկեց , նորա եւս անարգութեամբ արհամարհեցան և խորտակեցան , և շատերը փախչելով Եփրատ գետը թշուառութեամբ լնկղմեցան . Թիմուր այս գործին մէջ կարի նեղուելով անոր նամակ դրեց՝ որուն իմաստնէր : Ես ինքնին Արմեղանտի աշխարհը

երեւեցայ, և երկրիս երեսը արեւելք և արեւմնագը շոր չեցայ, և մարդիկներէն մէկ անհատ մի ինձ դէմ ճակատելու եւ պատերազմիլու կարողութիւն չունեցաւ, իսկ դու քոյ ապատամբութեամբդ մեր բանակը վնասաց հուրը բորբոքեցիր, և չդադարեցար վնասակար և թըշնամական ձեռք կարկառելէ՝ եւ մեր զօրքերը նեղելէ : Արդ՝ հաստատուն որոշած եմ, որ գիշերուան մութի նման սեւ գունեղերով, և ծովու արեաց նման կանաչ զօրքերով ձեր վրայ գալ, եթէ քու. հոգեցյդ, և այն երկրին մէջ գանուած մէծին և փորուն, աղքատին եւ ընչեղին վրայ գիտութիւն ունիս, հըս և հնագանդ մեր առջեւ եկ, բարերարութեան և մարդամիրութեան արժանի եղիր, իսկ եթէ բունութեան ճանապարհը խոտորիս, ժամանակի պատրաստ լիր. և ասոր նման քանի քանի խօսքերով երկիւղ տուաւ. այս նամակը երբ նաօրին հասաւ և իմաստը հասկցաւ, երբէք պատիւ և շուք չդնելէն զինի, եկած դեսպանն եւս բանտի պատիմներուն մատնեց : Այս գժպատեհ լուրը երբ Թիմուրայ գումեց, գունդ մի զօրք եւս խրկեց. Նասրը բերդէն իջաւ, եկած զօրքերը սպանելով և կոտորելով ճնշեց : Հետեւեալ օրը Թիմուր ինքը անձամբ աստեղամիւ զօրօր փութաց միշեալ բերդը պաշարել. դարձեալ այն անպարտելի առիւծը դուրս ելալով, Թաֆար զօրաց հետ այն աստիճան մարտ և պատերազմ, հարուած և կոտորում ըրաւ որ, Թիմուր անդամ հաւանեցաւ՝ և կեցցէներով նորա մեծութիւնը և քաջութիւնը դրուատեց, և պատերազմը թողով իւր բնական նենդութեան դարձաւ. եւ վերստին նումակ գրեց, սակաւ ինչ գանձ, ծի, և ուղու ընծայելով՝ հրաւիրեց որ կախւը դադրեցնէ, հաշուութիւն և խաղաղութիւն ընէ, նա մերժելով ետ դարձուց. մէպէտ փոքր բանի հաճութիւն տուաւ, սակայն այն եւս չդորձադըր ուեցաւ : Եւ զի՞ Թիմուրայ խկական դիտաւորութիւնը Բերիայ էր, ուստի երբ փոյթ ընելով անտի մէկնեցաւ՝ նա ետեւէն անդելով, պէս պէս վնասներ տուաւ և Թիմուրայ սիրաց կարելիր խոցեց : Յիշեալ Էմիրը՝ մէծին իւր մերայ սերաւնդէն և կրօնասէր մարդ մի էր, արդարեւ՝ իւ

րեն պատահած բախտի յաջողութիւնը՝ գահու. և թագի տէր թագաւորաց չէր պատահած :

Յիշեալ թուականին Ռէպիլ էվիլ ամսոյ իննին՝ Թիմուր Բերիայ կողմ զօրք խրկեց. Բերիայ ժողովեալ՝ Բերիայ իշխան Մուղութիղի, Տէմիրթաշ, Գամասկոսի իշխան Սալտուն. Թրիպօնոյ իշխան Մուղութիղի Մուխտ Նէխ խասեքի, Համսոյի իշխան Գրմագ. Մագիսի և Ղաղջէի իշխանները, զօրաց գլխաւորները մէկ տեղ գումարեցան և խորհրդոյ աստեան կազմելով կըսէին. մէ ինչպէս պէտք է ճակատիլ եւ պատերազմիլ, Ասկէ յառաջ միշուածին համեմատ, ամէն մէկը՝ մէկ կերպ կարգ ցցց տուաւ. ու մանկ կարծիք յայտնեցին թէ՝ ամբանալ աշտարակներէն և պարսպէն պատերազմիլլ լաւ է, և ոմանք՝ քաղաքէն դուրս վրաններ կանգնել և պատերազմի գաշտին մէջ կենալ օրինաւոր գատեցին : Նէխ խասէքի երբ սոցա ապօրինաւոր կամքը և հակառակ որոշումները տեսաւ՝ հրաման տուաւ Բերիացւոց որ կողմ որ ուզեն երթան, և իրենց հօգին և ստացուածքը պատեն, Բերիայ բնակչաց շատերը մէկ կողմ փախչելով, Թիմուրայ շարութենէ աղատեցան, և փրկութեան նաւահանգիստը ելան : Յետոյ սուլմանի զօրքերն եւս վրանները կանգնեցին և թշնամյն գէմ կեցան, Գամասկոսի իշխան Սալտունը, Թիմուրայ գեսպանները անարդութեամբ սպանեց :

Յետ այնորիկ Թիմուր Ռէպիլ էվիլ ամսոյ տասն եւ մէկին Շաբաթ օր արեւմտեան սաստիկ փոթորկի և կարկրատեր սեւ ամսոյ նման երեւեցաւ, եւ սաստիութեամբ նոցա բանակը սաւելի չիկրնալով հակառակիլ, պարտութեամբ Բերիայ կողմը փախան, խուռն ամբոխիւ և տագնապարեզին գուռու շատ մարդիկներ ոտնակոխ եղան, և զինեալ Զըղաթանները նոցա ետեւէն պնդելով քաղաքը յաղթեցին և նուածեցին, սպարապետը և երեւելի մարդիկները բերդը ելան, և բիւրաւուր նեղութեամբ և գժուարութեամբ նատան, և Ռէպիլ էվիլ ամսոյ տասն և իննին երեքալիթի օր անձնատուր եղան, և բերդը Թիմուրայ ձեռքը յանձնեցին :

ԳԼՈՒԽ ԻԱ.

Յիմուրայ Եկրիս գիտնականաց հետ ըրած վեճարանութիւնն : — Բերի-
սպէն մէկնին : — Դասասկոս երթան : — Վերատին Եկրիս դասւալն :
— Քաղաքը կործանեն և այլեն :

Երկրորդ օրը կէս օրէն վերջը Թիմուր բերդը ելաւ,
Եկրիս դասաւորը և գիտնականաց դասը կոչեց : Խո-
ւարզմի Հաֆըլը կ'պատմէ թէ յիշեալ դէպքին նուաս-
տըս գիտնականաց ընկեր էի, և նոյս ժողովը և վիճա-
բանութիւնը սյն օրինակ կը պատմէ :

Այն հանդիսական՝ զմեղ մէկ ժամաւ չափ անարդու-
թեամբ յանդիմանելէն յետոյ նատելու հրաման ըրաւ.
ապա այն գիտնականներն եւս կոչեց, որք իրեն հետ ու-
ղեկից և խօսակից էին, Սըմրդանտի երեւելի գիտնական-
ներէն՝ Նաման խտին Հանիֆի գիտնականի որդին . և
Թիմուրայ տէրութեան մէջ գիտնականաց գլուխ՝ Ասլ-
տիւլ ձէպպարը խօսակից ընելով ըստ, ասոնցմէ խնդիր
մի կը հարցնեմ. որ յառաջադոյն Սըմրդանտի Պուխորայի,
և այլ յաղթած և նուածած երկիրներուս գիտնականաց
երբոր հարցուցած եմ, և մին եւս գոհացուցիչ պատաս-
խան մի ուսուած չէ, ապա խօսքը Եկրիսցւոց ուղղելով ըստ,
ես ուսումնասիրութեան մէջ ջանք, և գիտնականաց հետ
բարեկամութիւն եւ կենցազավարութիւն շատ ունիմ.
արդ ձեր գիտնականը և առաքինին հարցմանս պատաս-
խանը թող տայ. և ինչ որ պիտի ըսէ թող բարու որ խոր-
հի և հասկընաց, Եկրէֆ խտին Մուռա դատաւոր՝ Շա-
ֆին, նուաստոս ցցց տալով ըստ, այս մարդը մեր մէծն
և վարպետն է, և մեր քաղաքին ուսուցիչ և դէնալէտն է,
խնդիրը ի՞նչ որ է՝ բարեհաճեցէր հարցնել. այս խօսքին
Ապտիւլ ձէպպար նուաստոս խօսակից ընելով խնդիրը ա-
ռաջարկեց : Թագաւորին խնդիրը այս է, որ այս մասին
մեղմէ և ձեզմէ պատերազմի և կուտյ դաշտին մէջ մէռ-
նողներէն, մեր կոտորածները, և թէ ձեր կոտորածները
նահատակ և դատաստանի օրը երջանիկ են: Յուածաւ-
դաւն լսած էին թէ, նենդաւորն Թիմուր երեւմն դժուաւ-

րին խնդիրներով գիտնականաց հարցաքննութիւն ընել
տալով կ'սպանանելը, և այս խնդիրն եւս այնպէս կար-
ծելով, ժողովին ներկայ գտնուած երեւելի գիտնական-
ները ըւութեամք գլուխին կախույին: Պարգևելին բար-
եաց Աստուած, նուաստիս անմիջապէս օրինաւոր պա-
տասխան աղբեց, ըսի թէ, այս խնդիրը մեր մեծ . . .
մարդարէին առջև պատահէլով, պատասխան տուած է.
նուաստ եւս նոյն պատասխանը կուտամ, և սկսայ պա-
տասխաննել. Թիմուր նուաստիս կողմը ունկնդրութիւնը
և ուշադրութիւնը դարձնելով, խօսքերս շփոթ և անարդ
համարեց, և Ապտիւլ ձէպպարը խօսակից ընելով ըստ,
մեծ Մարդարէին ի՞նչպէս հարցուած, և ի՞նչ պատասխան
տուած է . նուաստ ըսի, այո՛, Մարդարէին Արաբացի
մի գալով, ով մարդարէ Աստուծոյ, մեղմէ ոմանք արի-
ութեան և ջանից համար, ոմանք քաջութեան անուն ժա-
ռանդելու, և ոմանք համբաւ ստանալու, և իւր փափա-
քին համելու համար կ'պատերազմին, մեր որ մեկին
ջանիքը Աստուծոյ համար է, ըսին եւ աղաչելով հար-
ցուցին, Մարդարէն պատասխանեց թէ, ով որ Աստու-
ծոյ վճիռը գործադրելու, եւ Աստուծոյ խօսքը բարձ-
րացնելու համար կ'պատերազմի, նա երջանիկ նահատակ
է. Լենկ Թիմուր (խոսպ) այսինքն ի՞նչ գեղեցիկ՝ ըստ,
և Ապտիւլ ձէպպարն եւս հաւանեցաւ: Սակայն Եկրէֆ
խտին դատաւորը ինձ աւանձին ըստ թէ, երբ այս
խնդիր մի է որ մեծ մարդարէին հարցուած է, ըսիր, ո-
զորմած Աստուած, մեր առաջնորդին խելքը տիկարանա-
լով մնաստուած է, անոր միտքը մոտաց աղբեցաւթիւն ը-
րաւ: Յետոյ Ապտիւլ ձէպպարն եւս խօսակցութեան մէջ
յայտնեց եւ պատմեց թէ ինքն եւս նոյն երեւակայ-
ութեան մէջ եղած է: Զինի այնորիկ, մուերմութեան
գուները, և բարեկամութեան վարագոյները բացուեցան
և խօսքը խօսք բացաւ. սկսաւ Թիմուր փառամոլութեամք
խօսիլ, ես իշու մարդ մի եմ, այսքան՝ Պարսից, Իրագայ,
Հնդկաստանի, Թաթարաց, Արպատականի, և Թուրքաս-
տանի երկիրներուն յաղթեցի և նուածեցի. նուաստ ըսի,
Արդ՝ պէտք է որ այս շնորհաց գոհութիւնը գիտնաս, և

Հասարակութիւնը ներելու և թողութեան արժանի համարիս, և այս զրկեալ ժողովրդոց գթաս, և մարդ չըպահանես : Ակայ է Աստուած, մէկ անհատ մի չար մաօք չեմ սսլաներ՝ թերեւս գուք ձեր անձը գուները կ'փորսին ցընէք, վկայ Աստուած, ես և ոչ մէկը կապանանեմ որ հոգւով և ընջւռք ինձ հաւատարիմ եղած լինի, և պրեգեց որպէս թէ դուք անօրինի հետեւած էք, և անոր համար ձեր անձը դնելով՝ մարտիւ և պատերազմաւ կը մեռնիք : Այսպիսի խօսքերով և երկար նստելով ժողովն ներկայ եղող օրէնսդէտներոյ բարեկամութիւն ստացուն, և զիրենք դպրոցը կարծելով, իւրաքանչիւր ոք ցանչ կացաւ պատասխան տալ : Եւրէֆ իստին զանոնիք լուց և գուց՝ և պատասխանելոյ նուաստիս յանձնեց : Թիմուր քանի մի հարցումներ ըրաւ . մինչդեռ նուաստու կարելի եղածին չափ պատասխան կուտայի, քանի մի հարցմանը Ամառ իստին Մալիքին պատասխանեց, և Թիմուրայ բը նութեան հակառակ պատասխաներ տուաւ . Թիմուր զարբացաւ և սաստիկ բարկութիւն յայտնեց, նուաստու գարձեալ համեստութեամբ և գեղեցիկ խօսքերով, ներուցութիւն խնդրեցի թէ, Եւյլու գրքին մէջ տեսած խօսքերը չէ հասկցած, աստի Թիմուրայ բարկութիւնը իշնալով գարձեալ հանդարտութեամբ խօսակցութեան ըսկաւ : Յետ այնորիկ Ապտիւլ Ճէպագար նուաստիս հետ քանի մի վլճաբանութիւններ ընելէն յետոյ, յանձնարարութիւն ընելով ըստ, այս մարդը կատարեալ գիտնական, և Եւրէֆ իստին գատաւորը ճարտարախօս եւ առաքինի է : Թիմուր նուաստիս տարիքը, և ծննդեան թուականը հարցուց, նուաստիս ծնունդը ՎՀՀ (1348) թուին եղած է, այժմ՝ յիսուն և չորս տարեկան եմ, նըմանապէս Եւրէֆ իստին գատաւորին տարիքը և ծննդուքեան թուականը հարցուց, տարիքս ասկէ՝ այսինքն Խուարդիմի Հաֆրզէն տարի մի աւելի է ըստ . Թիմուր՝ գուք իմ զաւակացս տեղն էք, կեանքս եօթանատուն հինգ տարիի հասած է, ըստ և խօսքը վերջացուց . Երեկոյեան աղօթքը վճարելու համար նատանք, Ապտիւլ Ճէպագարի քմամութեամբ Թիմուր նուաստիս մօտ աղօթքը վճա

րեց . և իւրաքանչիւր ոք հրամանաւ իւր տունը գնաց : Երկրորդ օրը բերդին բոլոր բնակչաց բռնութիւն և հարստահարութիւնը ըրաւ, անթիւ և անհամար կերպառ ները և հարստութիւնները գրաւեց . բոլոր հաւաքած ինչքը և ստացուածքը, այն աստիճանի հաստ որ, գիրքերէն ուսակ, Թիմուրայ պատմածին համեմատ, իժամած և տիրած Երկիրներուն մեկին մէջ այցքան հարստութեանց և աղխամաղխից, պէսպէս գոյից և բեռանց արժանի եւ զած չէր : Խլամաց շատերը պէսպէս տառապանաց մատնեց, զոմանս երկաթի շղթայիւք կապեց, և զոմանս խաւարին բանտերուն մէջ գերի ըրաւ : Բերդէն իջաւ եւ կուսակալաց յատկացեալ պալատը նառաւ, և Զըդաթայի սովորութեան համեմատ կոչունք տուաւ, իւր հետ եւ զած նախարարները հրաւիրեց, գինեօք և ըմպելիներով մուրախացան և զուարթացան, սակայն շատ սրտեր այրեց և տոչորեց, և նախարարաց շատերը ՚ի պաշտօն ծառայութեան կանգնած էին : Եւ քանի քանի անարժան գործերով մինեւ Ծէպիլ էվմէլ ամսոյ վերջը փոյթ տարաւ ժողովուրդը կոտորել և գերել գպրոցները մզկիթները և աղօթքարանները կործանել և քանդել : Ապա նուաստու և Եւրէֆ իստին գատաւորը կոչեց, և սակաւ ինչ երկար բարսէ հարց և պատասխանէն յետոյ, հարցումներուն մեր տուած պատասխաններէն գոհ և շնորհակալ եղաւ . Թիմուր իշխանութիւնը վարելու որոշուած Էմիրը յատեան կոչեց, և յանձնարարութեամբ պատուիրեց որ նուաստու և Եւրէֆ իստին գատաւորը պատուէ և մեծարէ, և սաստիկ հրամայեց որ մեր բարեկամաց զնաս եւ նեղութիւն չը լինի, ապա մեղք թոշակ որոշեց, և հրամացեց որ բերդին դրան գիմաց Առութանիյէ գպրոցը մեղք բնակութեան տեղի լինի, որ յետոյ բոլոր յանձնարարութիւնը կատարեցաւ, միայն մեր բերդէն իջնալը և յիշեալ գպրոցը փոխագրուիլը եւ մնաց : Նոյն ժամանակին Բերդիյ էմիրը նուաստիս և Եւրէֆ իստին գատաւորին Թիմուրայ սովորութիւնը միշելով ըստ, Թիմուր երբ չարութիւն եւ անիրաւութիւն ընել ուղիւ կ'աճապարէ, երբ նորհը և բարութիւն ընել ուղիւ կ'դան-

դաղի, զմեղ փայտայց և մեր սրտին հանդարտութիւն տուաւ : Բերից գիտնականաց մէջ, Ալիք և⁽¹⁾ Մուալիի մէջ պատահած վէճերը տեղի ունենալով՝ նոցա քանի քանի երկար բարակ վիճաբանութիւնը՝ վախճանեալ պատմագիրը այս տեղ, եւ Դամասկոսի գիտնականաց հետ՝ Դամասկոսի գէպ.քին, այս մասին եղած իւր թարդմանութեան մէջ հրատարակած էր, սակայն, սոյն թարդմանութեան ատեն, երբ այս աեղերուն մօտեցայ, Ճշմարտակ երազ մի պատահեցաւ, որ մաքէս անգամ անցած չէր, Ճշմարիտ Աստուած, քունէս արթնցայ՝ և յիշեալ երազը իբր յանկարծական գէպ.ք հարկագրեց զմեղ այն վիճաբանութեանց ՚ի բաց ձգելը նախալուտիւ սեպել. ուստի թէ այս տեղ, եթէ այսուհետեւ դալիք Դամասկոսի գէպ.քին մէջ պատահած վիճաբանութեանց ետ ձգուելուն առիթը՝ յանկարծ թմրութեան քունէն ար թընցող եղարց խելամտութեան կը յանձնէմ:

Թիմուր՝ Ռէպիլ ախր ամսոյ սկիզբը Բիրիսյէն դուրս ելաւ, և մինչդեռ Դամասկոսի կողմ գիմելու մոտք նըստած էր : Երկրորդ օրը գարձեալ Բերից գիտնականները կոչեց, նորա՝ հրաւիրելու եկող ոստիկանէն հարցուցին թէ ետեւ նայելու և վերաբին կոչելու պատճառն ի՞նչէ, նա պատասխանեց թէ, Թիմուրայ սովորութիւնն է առած երկրին մեծամեծները հրաւիրել. մենք եւս կոչմանց հնարյանդելով յանդիմն լինելու կերթայինք : Մօլոյ Էօմէր անուն անձ մի, զմեղ գիմաւորելով ըստ թէ, թագաւորը ձեղմէ իւր գեսպանը սպանող Դամասկոսի իշխանին որպիսութիւնը հարցնել կուզէ. նուաստա պատասխանեցի թէ՝ այսքան խլամմեր առանց վճռագրու կապանուն, անոր որպիսութիւնը հարցուելուն պատճառն ի՞նչէ . մանաւանդ՝ այսուհետեւ մարդ չափանելու մասին էմիրը երդում ըրած է, նա ըստ թէ ուրեմն մինչեւ երթալ գալը՝ աստ մնացէք, և Թիմուրայ կողմ գնաց, Թիմուր նոյն ժամանակին Զըլաթայի սովորու-

(1) Աէհմէտի յաջորդ և Դամասկոս նասող Արաբացւոց առաջն խալիքան է :

թեան համեմատ խաշած միս կուտէր . Մօլոյ Էօմէր գրնաց և քիչ մի խօսեցաւ, և ձեռքը պատառ մի միա՞ մեր կողմ գարձաւ, Թիմուր որ խրոխտ ձայն մի ունէր՝ բարձր ձայնով գոչեց, և մեր կողմը քանի մի մարդ խրկեց . յետոյ նախարարներէն էմիր մի գալով ներողութիւն խընդուցեց . մեր թագաւորը սպանեալ մարդկանց գլուխներէն աշտարակ շննել հրամայած է, զծեղ ուղած չէ . միայն զծեղ կոչելու եկող մարդը մեր թագաւորին կամքը չէ իւմացեր . գուշ աղատ եւ ձեր կամաց ճանապարհները բաց է, իւրաքանչիւր ոք իւր ուրախութեան թողնայի ըսելով հրաման տուաւ : Խալյին նցն ժաման Թիմուր իւմի աշտանակեալ բաղմութեամբ զօրաց Դամասկոսի կողմ գնաց . յետոյ մենք բերդը գարձանք և մեր մշտնջնաւ ւոր տեղը բնակելով, տեղերնիս մնացնիք, յիշեալ էմիրը պատուասէր մեծարող և միջնորդութիւն ընդունող էր, և զմեղ յարդելու մասին թերութիւն չը ըներ . սակայն Դամասկոսի գիտաւածով արտօնութեամբ վշտացած, երբեմն յաղթելու և երբեմն պարտելու սուա երեւակայութեամբ կասկածանաց մէջ էր :

Վերջապէս, Եգիպտոսի սուլթան Մէլիք նասէր գրօք եկաւ, և Թիմուրայ հետ ահապէն պատերազմ ըրաւ, Թիմուրայ յողմեց, մինչդեռ Թաթար եւ Զգամայի զօրքերը փախչելու վրայ էին . Մէլիք Նասր իւր նախարարներէն ումանց անհաւատարմութեան հոտ առնելով իւր հանդարտութիւնը կորսնցուց, եւ այս խոզնուոտը բառնալու համար յնգիպտոսի կողմ գարձաւ, Թիմուր Դամասկոս մտաւ, հարսուութիւնը աւարեց, մարդիկը կոտորեց՝ տուները կործանեց, և բնակիչքը տաճնանաց մատնեց, Թրիոզուոյ և Պաղեստինոյ ահմանները չանցաւ . և երբ գարձեալ Բերից կողմ գառնալու լուրը հռչակւեցաւ, Բերիացիք վերաբին արտամութեան և տարակուածանաց մէջ ինկան : Յիշեալ թուականին և Շապան ամսոց տասն և եօթին Դամասկոսէն չուեց, Բերից քաղաքին արեւելքան կողմ խիյուլ կոչւած տեղը վրանները կանգնելով նատաւ, և այս անգամ քաղաքը չմտաւ, այլ քաղաքը կործանելու և քանդելու հրաման ըրաւ, կողմ

կողմ առները և գերդաստանները ջրվաթայի զօրքերը
կործանեցին . և այսքան ժամանակէ ՚ի վեր եղած բաղ,
մութիւնը, մէկ վայրկենի մէջ կոտորեցին և ջնջեցին : Սոյն
ժամանակիս Թիմուրայ նախարարներէն իզգեթ արն մէծ
նախարարը նուաստ կոչեց եւ ըստ, Էմիր Թիմուրը
դքեզ, և քեզի հետ եղաները, և ուզած մարդիկներդ
աղատեց . եւ ձեր սիրտը գոհ ընելու հրաման ըրաւ,
Խնդրելու և միջնորդելու մասին մի ժուլանալի խնդիրդ
ընդունելի և խօսքերդ լսելի կը լինի, ապա հրաման ը-
րած է որ, ձեզի հետ (1) Հիւսէյինի գերեզմանը երթայ և
չափան նատի, մինչեւ որ Ջրվաթայի զօրքերէն ձեր մէջ
մարդ մի չմնայ, նուաստ, Եկրէֆ իտախն դատաւորը,
և երկու հաղաքի չափ իտամներ ՚ի միամին առնելով, յի-
շեալ տեղը նատեալ դադարեցակը : մեր ելալին վերջը,
Թաժարները Բերիան կրակի տուին . քաղաքէն կրակին
բոցերը կ'երեւար, ծուխը և մըրիկը երկմոք բարձրացած
էր և մինչեւ գիշերուան մութը աշխարհս սեւ միտով
պատած էր : Երեք օրէն վերջը քաղաքին մէջ մարդ չ'մը-
նաց, արդեօք բաղաքը ինչ վիճակի հասաւ ըսելով քա-
ղաքը դարձանք, տեսանք որ դիականց հոտէն . և կրա-
կին ջերմնութիւնէ ջրիլ և զննելու անկարելի է, ետ դար-
ցանք : Դամասկոսի իշխան Սավուունը՝ Թիմուրայ ձեռքը
գերի մատնուեցաւ և ճանապարհին վրայ Պէլեզայ բեր-
դին մէջ աշխարհիս վշտաց բամսէն վերջին ուրախու-
թեան պալատը գնաց, եւ Դամասկոսի իշխանութեան
Թագրիր տին խրկուեցաւ, ուրիշները՝ որ Թիմուրայ թա-
կարթը մատնուէր էին, յառաջադրոյն փախչելով իրենց
հոգին աղատեցին : Խան Շահնէի գրած պատմութիւնը
և Թուարզիմի Հաֆրզին պատմածը լրացաւ :

(1) Պարսից քարոզիչ Անդի որպէս է :

ԳԼՈՒԽ իբ .

Դամասկոսի պատերազմին ընդարձակ պատմութիւնն : — Մէլլը նասրի
Եղիպատուին ելքն : — Թիմուրայ Բերիային Դամասկոս երթան : — Համա-
քաղաքը աւարելի : — Եւ Համան գէտին : — Պապէքի կոսորումն : — Եւ
դիմասկոսի տուլթանին Դամասկոս համնին : — Եւ Թիմուրայ հետ պատե-
րազմին :

Առվայոյզն Թիմուր՝ երբ Բերիայ տիրեց՝ Տավա-
տար Խոթիղանն Վուպարէքը՝ Ապտ իւլ զէյսար, և անուաց
նի շէյս Վահիրը՝ Բերիային փախչելով, իրենց հոգին ա-
ղատեցին, և երբ Դամասկոս հասան՝ ժողովուրդը կոչե-
լով՝ այս օրինակ բողոք բարձին, և Դամասկոսի բոլոր ժո-
ղովրդոց երկիւղ տուին, ով Վիւսիւլմաններ կարողութիւն
չունենալու բանէն փախչիլը՝ մարդարէից ժամանակին է .
Եւ յս եկողը աշխարհս հրդեհող կրակ մի է, նախարարաց
իշխանաց և մէծամեծաց խելքը տկարացաւ, և նոյն ը-
րած մնօրէնութեան և պատրաստութեան կապը քակ-
ուեցաւ, ապականութեան հուրը բորբռքեցաւ, և ամե-
նեցուն հաստատուն սոքը սասանեցաւ, լոելը՝ տեսնելու
ոյէս չէ . մենք ՚ի մօտոյ տեսանք և նկատեցինք, Թիմուրայ
առջեւ լեռներ չեն գիմանար, գեւերը ուժ և կարողու-
թիւն չեն բերեր, ով որ իւր հոգւոյն փրկութեան ճա-
նապարհը կուզէ, գօտէպինդ արիութեամբ թող չանք ը-
նէ, և Դամասկոս գիշեր մի անգամ կենալը իրեն անար-
ժան թող սեպէ : Ոմանք՝ նոյն ըստաց լսեցին և հայրե-
նիքն գաղթելով օտար երկիրներ գնացին . ոմանք իրենց
ամբարտաւանութեան և յամառութեան մէջ մնացին .
մինչ զի ամանք Խաթիղային և Ապա իւլ զէյսարին հայհոյե-
լով՝ և թէրեւս նոյն մահուան ջանալով՝ ձեր կամքը եր-
կիրը ցրուել է՝ մէջ տեղը խոռոշութիւն և երկապաւակու-
թիւն ձգելէ, ապա թէ ոչ Թիմուրէն երկիւղ չկայ. փառք
բարձրելովն Աստուծոյ Եգիպտոսի սուլթանը մօտ ժամա-
նալիս երկիրը պաշտպանելու կուգայ. թշնամին վանելու
և նորա չարութեան վեսաները բառնալու համար, Բե-
րիայ՝ սպարապետին հետ փոքր ինչ բազմութիւն ժողո-

վեցան, այլ նորա անմիտ և առանց տեսութեան մարդիկներ էին, Գամասկոս անոր չհամեմատիր, Գամասկոսի պահապանները Եգիպտոսի և հզօր թագաւորի զօրքերն են՝ Եգիպտոսի զօր այ զէնքը մաքուր, հեծեալը ծիալարժ, և հետեւակը շուտափոյթ և յաջողակ է՝ կրսէին, և զանոնք համոց կ'ջանային։ Մէնք բիւրաւոր հնաբըններով այն անդունդէն ազատեցանք, և մեր աջօք տեսած որպիսութիւնը բարեկամութեամբ ծանուցինք. արդ՝ գուք գիտեք ըստին եւ իրենք զիրենք անմեղագիր կացուցին։ Այս խոռվեցուցիչ լուրէն Գամասկոսի ժողովուրդը տագանալեցան և զարհուրեցան, ոմանք Երուսաղէմի կողմ, ոմանք Եգիպտոսի աշխարհը, ոմանք՝ լեռները և ոմանք բերդերը ցրուեցան. և ոմանք՝ իրենց տանց և բնակութեանց մէջ յամառութեամբ հաստատուն մնացին։

Քերիոյ կողմ գտնուած արքունի զօրաց խորտակումն և բանակին ցրուին, նախարարաց և մեծամեծաց գերի վարին, և պատժոյ բանտերուն մէջ կասպանօք արգելուելու լուրը, Եգիպտոսի սուլթան Մէլքը Նարին սրտին զայրութը և բարկութիւնը բորբոքելու առիթ եղաւ, կատարեալ կարողութեամբ և մեծ պատրաստութեամբ Գամասկոսի կողմ գնաց։ Երբ արքունի թմբքաց և փողոց ձայնը և գզրդումը Գամասկոսի բնակիչը լսեցին. իրենց երկիրը և տրտութիւնը բոլորովին փարատեցաւ, և ուրախութեան համնելու յուսով անդորրացան, մինչ զի փախատականներէն ոմանք իրենց տեղը վերագարձան։ Աա կայն խելացի մարդիկները գործոյն վերջին վախճանին սպասելով, թագաւորին ընթացքը չհաւանեցան։

Թիմուր Քերիոյ գործերը կատարեց, յատուկ և հասարակ ամենեցուն հարսութիւնը ժողովից, և Քերիոյ ըերդը իրդեւ աւանդ թողուց. ապա Քերիոյ իշխանութիւնը էմիր Մուսային յանձնեց, և Բէպիլ ախորը ամսոյ սկիզբը Գամասկոսի կողմ գնաց։ Աա կամայ քաղաքը աւարեց և յափշտակեց, և առանց յապաղելու ըուեց ուշիկ և հանդարտ նպատակեալ տեղը դէմ եգեալ գնաց։

Ա ախճանեալ պատմագիրը ԱՅՅ (1335) թուին Յուշ նաց աշխարհը գոլու ատեն, Համոյ կը հանդիպի, յիշեալ

քաղաքին արեւելեան կողմ եղած մզկիթին հարաւային որմի քարին վրայ՝ Թիմուրայ բերնէն Պարսիկ բարբառով գրուած խոսքերը տեսնելով՝ այսպէս հրատարակած է։ “Ճմարտիւ՝ ոլորմած բարձրեալն Աստուած, այս նուած ափսութիւնը տեսնելով՝ այսպէս հրատարակած է։ “Ճիւնս իրագոյ և Պաղտատի հասաւ. յետոյ Եգիպտոս սի սուլթանին նամակ գրելով գեսպանաց հետ զանա զան ընծաններ խրկեցի, և բարեկամութեամբ հաշուած թիւն և խաղաղութիւն ուզեցի, խռովութիւնը և թըշ նամութիւնը վերուցի, նա առանց պատճառի գեսպան ներս սաստիկ տանջանօք սպանելէն յետոյ՝ Թիւրքմէն ցեւ զէն ոմանք մեր հեծելոց և ծառայից յաղթելով, գերի վարած մարդիկները երբ Եգիպտատի սուլթան Պէրգու դին ատեանը հանեցին, բանակիւք եւ կասպանօք նոցա պէս պէս ատելութիւն և չարութիւններ լրաւ, թշնա մւոյն ձեռքէն՝ մեր այսպիսի ծառաները ազատել մեր նուիրական պարտաւորութեան պատկանելով՝ այն կողք մերը գնացած եմք։ Գրեցաւ Բէպիլ ախորը ամսոյ քան, ԱՅՅ (1390) թուին ։

Թիմուր Համացէն աղխամաղխը վերուց եւ Համսի կողմ գնաց. երբ քաղաքը հասաւ, ուր Վալիտի որդւոյն առիւծ հզօր մէծին (1) Խալիտի լուսաւոր գերեզմանը քաղաքին լուսատու էր, ՚ի պատիւ նորա գերեզմանին՝ քաղաքին վնաս չի տալով՝ նորին մեծութեան բաշխեց։ Քաղաքի բնակիչներէն Ինվասի որդի Էօմէր անուն անձը պատուական ընծաններ պատրաստելով Թիմուրայ գնաց, նա քաղաքին իշխանութիւնը անոր յանձնեց, և դատաւորութեան պաշտօնը Հետտատի որդի Եշմ իստինի ուուտւ, քաղաքացիք այս կերպով խաղաղութիւն և ապահովութիւն գտան։ Սոյն ժամանակին Գամասկոսի իշխան Սալտունը Թիմուրայ քանտու ծանր հիւանդութեամբ Պէլլզայի մէջ մեռաւ, եւ անդ թաղեցաւ։ Թրիգօլոյ իշխանն տեղ մի փախչելու ձանապարհ գտնալով, իւր երկիրը եւ իշխանութեանը հասաւ։ Նորա հսկութեան

(1) Էօմէր Խաթթապի պարագեան է։

ոստիկան եղող, տասն և վեց անձանց չափ պահապաններ
թիմուրայ բարկութեան մասնուեցան, և հրավառ սրով
սպանուեցան Տէմիրթաշ ոլլքանօք և կեզծաւորութեամբ
Թիմուրը խաբեց և փախաւ: Միայն Վազգէի իշխան Զէյն,
խոտին, և Վաֆֆէտի իշխան Ալյո խոտին՝ և այլ քանի մի
նախարարք՝ բանտին անկիւնները ախուր մնացին:

Յետ այնորիկ բանաւորն Թիմուր Պալդէրի մէջ փա
հատութեան հուրը բորբոքեց, բնակիչք գիմաւորեցին.
խաղաղութեան և հաջատութեան աղաջանօք երկրպագու
թիւն ըրբն, նա մարդասիրութիւն ըննելով բորբին փայտ
անզպմ գահիճներ յարձակեց, և բարկութեան սրափ
կատրել տուաւ:

Ա. յառհետեւ Եգիպտասի սուլթանը թագաւորու
կան պերճութեամբ և արքայական փառօք հեղեղի և ծռ
փռ նման զօրքերով եկաւ, և Դամասկոսի մօտ Գուլպէի
Միար կազաւած տեղով վանները կանգնելավ հատաւ: Յետ
այնորիկ նախ և յառաջ Եգիպտական նախարարները և
Պահիգէի քաջերը խումբ խումբ եկան և արքունի բա
նակը խառնեցան. պերճութեամբ և գուռովութեամբ փա
ռօք և ամիսութեամբ թշնամուցն երեւնազուն կ'ապասէին:
Եւ միշեալ տեղէն չուելով, Եկապիզայի գմբեթը հատան
և Եգիպտասի նախարարները տունները փոխադրուելով առ
կա ինչ մնացին:

Թիմուր մըջմանց նման անմիւ զօրքերով երեւե
ցաւ, և Պահապասի մօտ նեղ ձօրակի մի վլայ, և այն կու
մին մօտ դաշտը բանակեցաւ: Սցն ժամանակիս սուլթա
նին բեռները և աղխամազով քաղաքը փոխադրեցին, բեր
դը ամբացուցին, և խրամներ փորելով ել և մուտք փա
կեցին, ապա զօրքերը պատրաստեցին, յաջ յահեակ յա
ռաջապահ և վերջապահները գասաւորեցին: Իերդը ե
զած սնկաբը աղքատք՝ հարուսոր և օստարականը, բար
ձր ձայնով առ Աստուած կ'աղաղակէին, սղրմած Աստ
ուած օգնէ Ասւլթանին, քաջ պատերազմական գումար
տուկները մարտի ասպարէզը իջան և կատե պատրառ
ակցան՝ արեանարբու. եւ պատերազմասէր զիւցազանց
առաւերաց փայլումը, նիզակոց ճաճումը նետից եւ աղէ-

զանց շառաջումը՝ ահագին ճայթմաւնո և բոմբիւնո կը
դործէին. բերդը գտնուած արքունի զօրաց հրաման եւ
շառ որ զինեալ մարտաւեղին իջնան, նոքա եւս կատաւ
րելապէս վառեալ իղէն ՚ի զրահ և ՚ի զարդ, աղեղամը և
նիզակօք յասպարէզ իջան:

Չղամայի զօրքը իրենց կրկնապատիկ գունդերը եւ
լեռնադէմ փղերը յաջ և յահեակ պատրաստեցին, ակու^ն
նակուռ վառերով, ոսկի և արծալի գրոշներով խումբ
խումբ նոցա դէմ ճակատեցան, Եկապիզայի գմբեթին եւ
տեւ գտնուած ձորը երկու կողմանց զօրքը մէջ փակեցին:
Այն կետին՝ անեզր ծով Թաթարներէն՝ տասը հազարի
չափ աղեղնաձիկ յասպարէզ իջան, և հինգ հարիւրի չափ
Գամասկեան, և երեք հարիւրի չափ Եգիպտական զօրքը՝
և Խոթինպայ էմիլը զանոնիք դիմաւորեցին, մարտի և պա
տերազմի սակին յարգ տունն հարուածք նետից և տա
պարաց, շառաջունք երկրերան սուսերաց, յարձակ
մունք նիզակաց, և շարժմունք պատերազմական գործեաց
և զինուց՝ վերմիլի կրդպահէին, վերջապէս արխացան Պա
մասկեանք և Թաթար զօրքերը կոտորեցին և չարդեցին,
և պատերազմի դաշտը իրենց գլխոյն նեղ և անձուկ քե
րին: Թաթարք ամօթապարա խօրտակմամբ կորակոր ՚ի
պարտութիւն մասնեցան, եւ սոքա երեւելի յաղթու
թեամբ և փառաւոր խնդութեամբ բանակը վերադար
ձան:

Եցն միջոցին՝ Թիմուրայ Պաւերորդի սուլթան
Հիւսէյին՝ Թիմուրէն երես պարձնելով Եգիպտասի սուլ
թանին աղերսագիր տուաւ որ իրեն հնազանցի եւ ծա
ռայէ, նա կատարեալ պատուավ և յարգութեամբ ըն
դունեց, ապա Թաթարի հագուստը մերկացուց, Եգիպ
տական պատուածանաւ զարգարեց եւ սկրտը գրաւեց
իիշեալը քաջաց ասպարէզի մէջ հզօր, և անտառաքոչ
վիթիսարի առ իւծ մի էր: Ասրա զարուասր և հնազանդու
թիւնը Եգիպտական զօրաց ուրախութեան եւ խնդու
թեան առ իւծ եղաւ, և զայտ յաղթութեան առաջին և
բախացրիկ հատմարեցին:

Յետ այնորիկ Թիմուր նենդութեան եւ գուսաճաւ-

Նութեան չուանը ձեռք առաւ, փոքր ինչ գնաց, և ապա
ետ դարձաւ :

ԳԼՈՒԽ ԻԳ .

Սութմակի զօրաց երկասուակին : — Մէլք նասրին Եգիպտոս փոխչին :
— Քերդապահ զօրաց ջանեն և արտանոթիւնն : — Թիմուրաց Դամասկոս պա-
շարեն : — Դամասկոսի նըրէւելաց Թիմուրաց երթան : — Խան Խալչ-
տունի, և Թիմուրաց խօսքեն և պատին : — Սութմանին և Դամասկոսց
հարստութիւնն Թիմուրաց յանձնուին : — Ներքին բերդի ամրութիւնն :
— Թիմուրաց Դամասկոսի վրաց հարկ գնեն : — Քաղաքը մանան : — Գիտ-
նականաց վիճականութիւնն :

Այս չարագուշակ պատերազմին զօրաց հրամանաւ-
տար, և Մէլք նասրի համօրէն գործոց երաշխաւոր Է-
միր Շէյպիքն էր, զի թէպէտ արքունի զօրաց յօդնաթիւ-
բազմութիւնը և առաւելութիւնը չափէն աւելի էր, այլ
իւրաքանչիւր իշխան մեծութեան և անկախութեան թե-
կը ածելով մնջութեան ճանապարհը խօսարեցան, իւ-
րարու հակառակ և իրենց գլխաւորին անհնազննդ . մի-
աբանութիւնը փոխեցն երկասուակութեան, և մուեր
մութիւնը ատելութեան և թշնամութեան, իւրաքանչիւր
ոք իւր ցանկութեան համեմատ՝ յօժարեցան զիրար բամ-
բասել և վատաքանել, որով ծագեցաւ բազմատեսակ հա-
կառակութիւն, և բարձաւ հպատակաց պաշտպանութիւն
և պահպանութիւն : Խակ Զէրքէսի իշխանութիւնը աշ-
խարհիս մէջ երեւելի և վկայեալ հանգիսացաւ : Սոցա-
երկասուակութիւնը իրեւեւ ախտ փոխադրական մեծին և
փոքրին տարածուեցաւ . զօրաբանակին ամեն մէկը մէկ
կուսակցութեան հետեւեցաւ, և ակսան իրարու գործոց
արդեւք լինել, մինչ զի նախարարներէն ումանք չկեցան
և Մէլք Նասրը ձգելով յԵգիպտոս գնացին, արդարեւ
սօրտ Թիմուրաց խօսքերը սառուգեցին որ կըսէր թէ նո-
քա մեծութեան փառաց իշխանութեան և պատուց ար-
ժանի չեն : Մէլք նասրի համբերութիւնը հատաւ, ու-
շը և զօրութիւնը տիպրացաւ, բազմութիւնը ցրուեցաւ,

գիշերուան մութին չուեց և աճապարանօք փութաց Ե-
գիպտոսի կողմ դառնալ : Խրեն հետ ՚ի միասին եղալ գիտ-
նականներէն դատաւորաց դատաւոր Պիւրհան իտամին,
և շաֆի Ալյախտմին դատաւորը, որ սուլթանին հետ ՚ի
միասին էին՝ դարձեալ նորա հետ Եգիպտոս գնացին :
Սոյն ժամանակիս տկար և անկար մարդիկները որ թա-
գաւորին երթալէն անտեղեակ էին, իրենց տեղը մնալով,
բողոքն ալ Թաթմարաց որոդայիթը մատնեցան, Ալյախտ-
մարահ և բերդապահ սուլթանին զօրքերը, գիշեր Եւ-
ցորեկ աշոտարակներէն և պարսպէն կ'աշխատէին թշնամ-
ւոյն վեսար վանել, և սուլթանի կազմէն անհանգիստ օգ-
նութիւն կը յուսացին, և անգագար քաղաքը կը հսկէին
և կը պահէին . և բարձր տեղերէն թագաւորին բանակը
միշտ կը նայէին, և լուրի կ'սպասէին թէ, արդեօք վիճակ-
նին ուր կայացաւ, նոյն գիշերը կոչարաններէն և բարձր
տեղերէն երբ արքունի բանակը գիտեցին, բազմաթիւ-
կրակներէն ուրիշբան մի չերեւցաւ, առաւօտուն հրո-
շակուեցաւ որ արքունի բանակը մարդ չ'մաց փախստա-
կան եղան . քաղաքայւոց վիճակը թշուառոցաւ, զօրաց
խումբը տկարացաւ, և տրոտնութիւնը տիրեց, տնօրէ-
նութեան և պատրաստութեան կարգը խանդարեցաւ,
ահը և երկիւզը արփութեան և քաջութեան կապը խը-
զեց . թշնամւոյն ժամաննելուն սպասեցին . և խորուակուած
յաղթութեան մնացին, մահսւան ժամանակը սոտւկե-
լով յուսակուուր յամաքեցան :

Թագաւորին չուելը և Եգիպտոսի կողմ երթալը,
Թիմուրաց կատարեալ խնդութեան առիթ, և լիու լի ու-
րախութեան պատճառ եղաւ, տեղէն ելաւ և ազիս-
բազիս գլուխէմի կողմ թափեց, յաղթանակի եւ իւր
տենչանաց համելու դիամամբ նստաւ, և բանակին չըր-
ջապատը խրամով ամրացուց, և թագաւորին ետեւէն
զօրք խրկեց . և այն Խալամները ոքք Թաթմարաց որոդայ-
թը բռնուած էին, մէկ մէկ ատեան հանեց, զոմանս ըս-
պանեց, և զոմանս փիղերուն ոտքին տակ ունակոխ ընել
տուաւ :

Սոյն ժամանակիս նշանաւոր գիտնականներէն Մա-

երի աղանդով՝ դատաւորաց դատաւոր Վէլի խոտին Ակա-
լուսուրբահմանը, Մէլիք նասրին երթալին անտեղեակ գո-
լով, քաղաքը Առլիյէ դպրոցը վնաց պահուեցաւ: Մէլիք
նար կայծակի և տմօրոց արագութեամբ իւր շուն տճա-
պարելով, թէ պէտ առանց վնասու և տուժից Եկիոստո
հասաւ: ուիսյն Չզաթայի զօրքը և աստանայ Թաթար-
ները չորս կողմանց տիրեցին, արեւելք և արեւմուսը
ընդ ըսյն և ընդ երկայն աւարեցին և յափշտակեցին և խո-
լամաց ազդին մեծամեծ վնասներ տուին: Ապա երադե-
ցին Գամակոս քաղաքը նուանել, և փութացին պաշտր-
ման գործը սաստկացնել:

Ասկէ յառաջ նշանակուած և գրուածին համեմատ
միշեալ քաղաքին ել և մուտլ վակուած և աղյուս ած, և
բաւականի չափ պահապաներով ամրացած էր, մէջը գլու-
նուած զօրքերը զուարթ յուառվ, և հաստատուն մոօր,
թափաւորին կողմէն օգնութիւն և նպաստ կ'սպասէին: և
կ'ջանային Թիմուրաց զօրքերը ՚ի բաց վանել, միջոցը
երկարեցաւ, յաղթութեան ճանապարհը վասկուեցաւ,
և օգնութիւնը աներեւոյթացաւ, նուաստութիւնը և
խորտակումը առուգուեցաւ, և Գամակոսիցիք իրենց տր-
կարութիւնը և վատթարութիւնը իմացան:

Պամասիսի մեծամեծ գիտնականներէն և նախարար-
ներէն, դատաւորաց դատաւոր Մուհի խոտին Մահմաւա
հանիֆին, և որդին դատաւորաց դատաւոր Շահապ
խոտին, դատաւորաց դատաւոր Թագի խոտին Խոդահիմ
հենաբէլի, և փորհրդական քարտուղար թայիսի որդի՝
դատաւոր Նար խոտին Մէհէմմէտ: Վէլիքի որդի Շահ
հապ խոտին Ահմէտ, դատաւոր Շահապ խոտին շափի,
դատարանի փոխանորդ դատաւոր Պիւրհան խոտին հա-
նիֆին, խորհրդաց ատեան կալմեցին, և յետ բազմալիք
մի խոտակցութեան, Թիմուրէն հաւատարմութիւն և նե-
րողութիւն խնդրելու համար, աղաջանօք նորա առջեւ
երթալու պաշտում տուին: Կախայիչեալ դատաւորաց
դատաւոր Վէլի խոտինը Խոդ խուլունի երթալով՝ իւ-
րենց խորհուրդը և երթակին անոր պատմեց, ոյն եւս
ոյս գործը նոյն խոկ բարեկայից պատմաւ:

այն իրաց յառաջացումիւն և կառարումը, Խոդ խալ-
աւունի գեղեցիկ անօրէնութեան և պատմակօն յաջո-
ղութեան յանձնեցին: Նա անմիջապէս կերպարանքը
փոխեց, և երեսը այլակերպեց, զարմանալի խոյրով և գե-
ղեցիկ ձեւով, մեւ պատմուծան հագաւ, և ամենուն
առջեւը իշխալով, հազար երկիւ զիւ Թիմուրաց ատեանը
մուան, ներողութեան և միջնորդութեան աղաջանօք
նորա յանդիման կանոնեցան, Թիմուր ակնարկեց որ նր-
ամին նոյն երկիւղը և տրամութիւնը փարաւելու համար,
քաղաքը ժամանութիւնը և խնդում երես ցոյց տուաւ.
և միջդեռ նոցա շարժման և հանդարտութեան, խօ-
սակցութեան և գործոց ուշ կը գնէր, Խոդ խալունի վր-
աց զարմանալով ըստաւ, այս մարդը սքանչելի մարդ մի
և այս քաղաքը օտարուկան է: Խոդ խալուն խօսելու և
պատմախանելու միջաց գտնելով, մինչդեռ սքանչելի կեր-
պով ատեանին վայելուց խօսեր կ'խօսէր, կերակուրի նր-
ան արուելուն, խօսքը ընդհատեց:

Չզաթայի սպարտութեան համեմատ, միայն ջրով
խոշած միուր, բլուրներու նման գիտուեցաւ, և իւրաքան-
չերոց արժանաւորութեան և բաւականութեան համե-
մատքամնաւեցաւ, ոմանք վեհանձնութիւն կ'ուտէին, ոմանք
փոյթ ընելով խօսակցութիւն ժամանակ կանցունիէն, և ո-
մանք անհոգ և անհարթեր սպիտին ելած թշուաւականի նման
կուտէին, բլուր ուտովներէն՝ Խոդ խոլուուն Վէլի խոտին
դատաւորը մէկ կողմէն կ'ուաէր, և մէկ կողմէն աչքին ծայ-
րալ Թիմուրաց կը նոցէր, երբ Թիմուր իւր ակնարկը գէալ
առ նմին կը ձգէր, նու գլուխը վար կը կախէր: Սոյն սրա-
հուն Խոդ խալուն բարձր ձայնով աղաջանից, ովք ուէր
ովք էմիր, փառք բարձրեցն և մեծին Աստուծոյ, նուասու-
աշութամարաց ժողովը մտէր և Արակերէն պատմա-
թիւն մի հեղնանկելով շատ մարդկանց անունը վեհամա-
ցուցեր, և յիշատակութիւնը մարդկանց մէջ հաջակել
եմ, Արաբացւոց թագաւորներէն այս ինչ և ոյն ինչ թաւ-
գաւորի ծառայութեան մէջ պիտանի, և շատ թագուու-
րաց բարեկամ եղեր եմ: ապա արեւելք և արեւմուոք
ընդլայն և ընդ երկայն շրջեր, ամեն երկիր իշխանին հետ

կենակցութիւն ըրած եմ, տսկայն փառք Աստուծոյ, կեանքս օգնական և բախտս ձեռնտու լինելով, այժմ ճշմարիտ, արդար, օրինաւոր եւ բարերար տերութեան մէջ թագաւորողին ժողովը մտայ և աւենչանացս հասայ, թէպէտ թագաւորաց կերակուրը ճաշակողները մահուան երկիւղիւ կը պաշարուին. այլթագաւորիս կերակուրը վայ ելողները փառօք և պատուով կը մեծարուին, ըստ եւ խօսքը վերջացուց՝ և իւր դիտաւորութիւնը յայննեց: Թիմուր նորա այսպիսի ճարտար և յարակից խօսքերուն փայ զարմանալով խիստ ուրախացաւ, և խօսքը իովն խալտունի ուղղելով, թագաւորաց ոմանց վիճակէն, և նոցա տերութեան և թագաւորութեան ժամանակներէն տեղեկութիւնները հարցուց, նա՝ տեսած և ըստ դէպքերը և տեղեկութիւնները ընդարձակ և ճարտար բանիւք պատմեց, և հրամանաւ իրենց տունը վերադարձան:

Անդամ մի երբ յիշեալ գիտականները Թիմուրայ առջեւ խօսակցութեան և բարեկամութեան համար նրա տած էին, սուլթաննին հետ փախչող գիտականներէն Սատր խոտին գատաւորը անիրաւ Թաթարաց ծուղակը բռնուելով, Թիմուրայ ատեանը հանուեցաւ, յիշեալը առագատի չսփ վերարկուաւ և աշաբարակի չսփ խոյրով բաղմականները կոխեց և ժողովնին վերի բաղմացը անցեալ բազմեցաւ, այս անպատշաճ գործը՝ Թիմուրայ ծանր գործվ սաստիկ սրտմուռթեամբ և նոր բարկութեամբ սրիկայից ոմանց աինարկեց, որ զայն խայտառակութեամբ անարգութեամբ եւ բաշիւաելով ժողովնի դուրս համեն եւ սաստիկ կապանօք չարչարեն եւ տանչեն:

Յետ այնորիկ Թիմուր իւր առաջն գործոյն դարձաւ քաղաքացւոց հետ քաղցրութեամբ եւ մարդասիրութեամբ վարուեցաւ, և պէսպէս խիլաներ հակցնելով սղատուով և մեծարանօք բոլորը ուրախացուց. միոքը եղած անօրէնութիւնը և չարիքը նոյն միջոցին ծածկեց, բարեկեցիկ և ապահով և հրամանաւ իրենց տունները վերադարձան: Ապա սուլթան Նասրին և իւր նախարարաց յիշեալ քաղաքին մէջ ամբարտած դանձը և հարստու-

թիւնը՝ գրաստները ծառաները և աղախինները Թիմուրայ յանձնելու պայմաննաւ, քաղաքին ապահովութիւն տուաւ. նորա թագաւորին և նախարարաց համի եւ խօսուն ստացուածքը, անաստնները՝ հանուելու և արձակուելու, ինչ որ ունիէին սիրոյ հրապարակը մատուցին և Թիմուրայ նախարարսոց յանձնեցին: Ապայն ներքին բերդը, որ Խօսար անուն Եմիրին ձեռքը և անոր պահպանութեան և հսկողութեան տակն էր, բերդը ամրացուց, և պէտք եղած աեղերը նորոգեց և հաստատեց. ջանիւք եւ գորութեամբ թշնամին բերդէն հեռացնելու մտօք հաստատուն կեցաւ՝ և փութաց մարա և պատերազմ գնել, և յուսալով որ Մելքը նասրի կողմէն օգնութիւն կ'համանի, տակաւ սկսաւ մարտը սաստկացնել: Ապայն Թիմուր առաջն նուագին ներքին բերդին վրայօք երբէք հոգ չտարաւ, միայն գուն գործեց թագաւորական հարստութիւնը ձեռք բերել:

Ապա քաղաքացւոց վրայ հարկ գրաւ, և հաւաքումը քաղաքին երեւելեաց յանձնեց, գրամբնիկալութեան համար քարտուղարներ և հաշուագէտներ որոշեց. և վերակացութիւնը իւր տերութեան նախարարներէն Աէյֆ խատինի եղացը Ալլահ տատ անուն Եմիրին յանձնեց, հարկահանները և անօրէն սատիկանները զրկեց, մարդ մարդու նեղութիւն չ'տալու, և անհատ մի աղքատին զըրկանք և անիրաւութիւն չընելու համար, շուկաները եւ փողոցները մոնեստիններ կանչել տուաւ. մինչ զի Զդաթաններէն ոմանք որ մարդկանց հարստութեանց ագահնելով, աւելորդ պահանջումներ կընէին, գանդատեցան, նաև հրամայեց որ տանջանօք ՚ի կախաղմն հանուին, անմիջապէս անուանի տեղերէն, մետաքսագործոց վաճառատեղին կախուեցան. քաղաքացիք այս գործէն բարի յուսով ուրախաւութիւն և խնդութիւն զգեցան: Յետ այնորիկ, Թիմուրայ հրովարտակաւ քաղաքին դռններէն պատ չասադիր (փարք դուռ) բացուեցաւ, տունները և կարաւանատիղները, շուկաները և խանութները մանրամասն գրուեցան, և հարկը թաղերու վրայ բաժնուելով հաւաքելու զինուորներ զրկուեցան, և Տիրար զզզէնէալ

ունաւն տեղը բանս օրոշուեցաւ, այս պատճառաւ չու շագագիրներէն ոմանք, պատուաւոր մարդ կանց վրոյ բըս նացան, իրար մատնեցին և բամբասեցին և ջղաթայից անօրէն ձեռքերը կաշառօք զօրացուցին:

Այն ժամանակից գարնան Եղանակը՝ Եղիստոսի զօրաց նման փախառական եղաւ, և ձմբան սաստկութիւնը Թաթար զօրաց նման յառաջացաւ. Թիմուր Գասըր խաչ վք անուն պալատը փոխադրեցաւ, յետոյ անտի եւս ելաւ և Պատի Սիհան անուն տունը նոտու, և հրաման ըրաւ որ յիշեալ պալատը կօրծանեն: Յետ այնորիկ, մեծ բազմութեամբ փոքր գոնէն քաղաքը մտաւ, և Աւրբան տուր աղօմքը վՃարելու համար Ամակի մշկիթը զրնաց: Հանիֆիի իմամները շափիներէն առաքինի և նոր խապատիւ դասելով, խուժութէի ընթերցումը դատաւորաց դատաւոր Մոհի խոտին Հանիֆիին յանձնեց: Աւրբան աղօմքը կատարելէն յետոյ, իւր տեղը վերադարձաւ: Աստանօր հեռագոյն դէպքեր, և անհամար չարիք և ոճիքներ գործուեցան, զորա մանրամանն ՚ի գիր գրոշ մեջն տրամութեան առիթ զինելով համառօտեցաւ:⁽¹⁾

Թիմուրաց թարգման և խօսակցութեան մէջ իրեն զեզուին հաւասար՝ հերձեալ Ապտիւլ Ճ. պալարը, Գամակասի գիտուոց հետ քանի մի ինդրոց վրայ վիճարա նութիւն ըրտու. Ի բազմաց մին:⁽²⁾ Եղիստին անօրէնութիւնը՝ թէ Հիւսէյնին նահատակութիւնը՝ երջանիկ է: Նախ Ապտիւլ Ճ. պալարը ըստ թէ, Եղիստին դարձը անօրէն և ամբարիշտ է, և այն գործը Գամուկացւոց ձեռն տուաթեամբ եղաւ, եթէ օրինաւոր տեսան անհաւատ. իսկ եթէ օրինաւոր ըլ տեսան, անիրաւ. եղած կը

(1) Ա. Ալոզի պատմադիրս որ լուռթեամբ կանցի առաջ թերեւ Դամանկասի այն դէպքը կահնարկէն՝ որ մեր ժամանակակից պատմադիր Մէծորեցին կապատէ սպահու: « Եւ եկին առ նա կանայք առաջնորդոց նցան ոք էին ուսուցիչք, Դաստի. Մոհիմի: Մուտքիւ մաստիսի, իմար, և ջանիշման . . . « ման զի յայս քաղաք առեներեան շարագրծք են . . . պատմութիւն մէտորայ, երեւ 62: »

(2) Դամանկասի Արարացոց առաջն ամբասպետ Մուտքիւ որդին է, որ Ամինի որդին Հիւսէյնը չարաշար սպանեց:

լինին, մինչեւ ցայժմ դուք եւս ձեզին յառաջ եւ զաղներուն ազանդովն էք, երբ խօսքը վերջացուց, ժողավին ներկայ գտնուող գիտնականները ամեն մէկը, մէկ կերպ պատասխան տուաւ, նաև ոմանց խօսքերը արհամարհեց, և ոմանց ընդունելով գոմից: Յետոյ խորհրդական դպիրը այսպէս սկսաւ խօսիլ, բարձրեալն Աստուած Հմբիրին երկար կեանք պարգեւէ, նուասախ սերունդը մեծին Խօմէրայ և Օսմանց կը հանի, իմ մեծ նախահայրտ նոյն ժամանակին մեծամեծ երեւելիներէն իրաւասէր և կրօնասէր մարդ մի էք, Եղիստի իշխանութեան Ժամանակ, կերպով մի Խմամ Հիւսէյնի գլուխը ձեռք երկարոցներով լուսաց և մաքրեց հալուեիւ. և ամեզարու վառաւորեց և համբուրեց, և իւր գերեզմանին մէջ ՚ի հողամիտիւնով թաղէց: և այս ծառայութիւնը Աստուած մօտ, մեծ բարեկարծութիւն համարեց, և այս պատճառաւ ապութայիս անուանեցաւ, զիրադ և լից, ովտէր նվազիր՝ ոյն ժամանակը անցաւ գնաց, եթէ գտոն եւ եթէ քաղցրլուծուցաւ, ողորմած բարձրեալն Աստուած զմեզ այն անդունդէն հեռացուց՝ և մեր սիրար այն սրինէն մաքրեց: այժմ մեր հաւատորը խղամաց և ժողովրդոց հաւատորն է: Թիմուր ինչ զարմանը՝ ըստելով տրախացաւ, ճշմարիտ է որ ապութայիս անուամբ անուանի, և մարդկանց մէջ բարութեամբ յիշուելուդ որատ ձառն այս է. դարձեալ խորհրդական դպիրն պատասխան տուաւ թէ, այն, Հմբիր, նուասաս Մէհէմմէտ որդի Խօմիրոյ՝ որդւոց Գամարմի որդւոց Ապտիւլ մասմամի, որդւոց Մէհէմմէտի. որդւոց ապութայիսի, Խօմէրեան և Օսմաննեան լինելը, բոլոր քաղաքացիք կ'վկայէն, Թիմուր ջատագովելով ըստ և ով աղնուաղարմ, եթէ հնար լինէր զըեզ հանապազ իբրեւ հմայշիլ) գլուխն կը կըէի, և քայ ընկերացդ ինչ աստիճան պատիւ լինելս կը տեսնէիր. ապա ժողովակից եղողներուն բոլորին սիրար մարդասիրութեամբ ողքեց և հրաման տուաւ:

Պիշեալ Ապտիւլ Ճ. պալարը Թիմուրաց իմամը և դէն պետն էր, գիտուն առաքինի և կատարեսու օրէնսդիտ, միջնաբանութեան մէջ անցողդարդ, և բանակուուութեան

մէջ անսայիթաքելի, սորա Նաման հայրը, Ամրդանսոի մէջ երկրորդ Նաման անուամբ հոչակաւոր, և քանի մի խոնդ դրաց մէջ հերձուածողաց հետ համաձայն էր, և ըստ մեծի մասին յայնկոյս Օգսոս գետոց գիտնականները դաւաստանական օրէնքը ասորմէ դաս առած են :

ԳԼՈՒԽ ԻԴ.

Դամասկոսի հարկաց հաւաքումն : — Ներքին բերդին պաշտումն : — Խուսցի մարդու մի թիմուրաց հետ ըրած յարերութիւնն : — Բերդին առումն : — Մելք Խասրին փախչելէն յետոյ խրկած նամակն և գետպանն : — Դամասկոսց անձնատուր մնելէն յետոյ թիմուրաց ըրած անիրաւութիւնն : — Դամասկոսէն մեկնին, և երեւելի մարդկանց հետը տանելն :

Դամասկոսի բնակչաց հարկը ժողովնելու համար՝ տեղ գութ ոստիկաններ խրկուելէն յետոյ՝ քաղաքի բնակիչներէն ողնանկ և սինդիքոր մարդիկներ, ճայի որդի Սառըքայ, Մուհուսի որդին, և Ապահու Մելքիքի նման մարդիկներ, սկսան սոյն գործը յառաջ տանել : Հակառակիելու կարողութիւն չունեցող պատուաւոր մարդիկներէն, Մունզա Էօմէր թաճիստին, և խոճա Մասուա Սէմնանի, յիշեալ պաշտօնին գործակալ եղան . շարունակ Թիւ մուրաց կողմէն խրկուած ոստիկանաց եւ քարտուղարաց մօտ կը նատէին, ամենեցուն վերատեսուչ եղող Ալլսհ տանին, փոքր դուռը Խան Մէշքիւրին առնը իջաւ : Սոյն ժամանակիո, մարդիկ այլ և այլ ազգաց փութացին իւրարու ունեցած նախանձութիւնը յերեւան ածել և զերար անիրաւութեանց մատնել, ոստիկանաց պատրաստի առաջնորդ և կաշտատու լինել. որով աղքատաց վիճակը թշուառացաւ, ոստիկանաց հարուածովը և բըռնութեամբ նոցա ուժը և կարողութիւնը ի հող խոնարհեցու :

Ամբարհաւածն Թիմուր, երբ քաղաքին գործը ըստ իւր տենչչանց կատարեց, սկսաւ ներքին բերդը նուածելու համար պաշտօնմը զօրացնել, և փութութեամբ մարտը եւ պատերազմը սաստկացնել ասկա

հրաման ըրաւ որ, բերդին արեւմուեան կողմը լուսնաշափ բերդ մի կառութցանեն՝ անմիջապէս ատաղջ և նիւթ սրատ րաստեցին և բերդէն բարձր բերդ մի չմնեցին, և պաշտման պաշտօնը մեծամեծ նախարարներէն ձիհան շահի արիական պարտաւորութեան յանձնեց, բարենը կանգնեցին և ոկտան բերդը քար ձգել և նեղել, բերդին մէջ Շահապ խոտին՝ եւ Շահապ խոտին Ահմէտ, գուն գործեցին տակաւաթիւ զօրօք թշնամին վանել, նոցա ամէն մէկ յարձակման փոխարէն, յարձակում, և ամէն մէկ յառաջանալուն, յառաջացում ցոյց տուին, պատրաստութեամբ թշնամին հեռացուցին և թշնամւցն անթիւ և անհամար ապիքատները կոտորեցին, այլ Թիմուր ծովու նման գունդերը, միսհաղցն յորդել տալով բերդը պատեցին, և ամեն կողմէն քար եւ հրամառ նետեր տեղացին, բերդականք յակամացից տկարացան յուժոյ և կարողութենէ թափեցան, և լաւ գիտացին որ՝ կենսաց ապահովութիւն ուղելէն ուրիշ ճար և դարման չըմնաց, վանուրաց անցապաղ բերդէն իջան և անձնատուր լինելով Թիմուրայ ներկայացան :

Դամասկոսի պատերազմը, Թէպիլ ախրտ ամսոյ միթղը ըէն, ծէմազիլ էվմէլ ծէմազիլ ախրտ և մինչեւ Թէճէպ ամփար տեւեց . այլ ներքին բերդի պաշտօնմը քառասուն երեք օրէն յետոյ միսաւ : Թիմուր սոյն միջոցին շատ ժամանակ շնորհալի և արհեստագէտ մարդիկներ կոչելու և սեաւ գերիներ ժողովելու զբաղած էր : Սոյն ժամանակ կամ մետաքսագործաց խումբը, Թիմուրաց ոսկեթել եւ մետաքսահիւս զարմանալի կապայ մի ընծայիցին : Գայց ձեալ սոյն օրերս Թիմուր փաքր դրան գերեզմաննատան մէջ թաղուած Մահմէտի կողջ գերեզմանին վրայ՝ իրարու կից երկու բարձր գմբէթներ շնել տուաւ, և այն փառաւոր տեղը պայծառացուց :

Սաֆէտ քաղաքի երեւելի վաճառականներէն՝ Ալլայ խոտին անուն հոչակաւոր վաճառական մի իւր քանի մի ծառայութեանց պատճառաւ Եգիպտոսի սուլթանի կողմէն նոյն քաղաքը սենեկապետութեան աստիճանաւ բարձրացեր՝ և ընկերացը մէջ երեւելի հանդիսացած էր,

Զերբեղի իշխանութեան ատեն՝ քանի որ քաղաքին իշխանին պէտք լինէր, օրէնք եղած էր որ այն տեղ գտնուած ան-
հեկապետը փոխանորդ լինի : Ասկէ յոռաջ գրուածին
համեմատ, երբ սուլթանի պարապետը Բերից կողմէ դր-
նաց, Սաֆֆէտի իշխան Թոնիպաղաց Օսմանը՝ ի միտակն եր-
թալով՝ յիշեալ Ալայ խատինը վաճառականութենէ իշ-
խանութեան քարձրացած և նոյն քարձրը փոխանորդ ե-
ղած էր, երբ Բերից սուլթանի զօրքերը խորասկեցան.
և գերի եղած իշխաններէն ոմանք մեռան, և ոմանք փա-
խըստեամբ աղասութիւն գտան . միայն Սաֆֆէտի իշ-
խան յիշեալ Թոնիպաղան՝ և Վազգէի իշխան Յօմէրը՝ քան-
որ մեացին, եւ երբ Ալայ խատին լսեց որ այն կողմերը
գտնուած իշխանները՝ ոմանք պատերազմի կրպարասոր-
ւին, և ոմանք ամուր տեղերը եւ անմատչելի բերդերը
կ'ամրանան . սուլթէնաւ նա մեծագանձ ճոխութեամբ
և բնական հանձարով ուժեղ և զօրաւոր էր, իւր քաղա-
քին ապահովութեան՝ և Սաֆֆէտի իշխանին աղասու-
թեան համար, ըստ այսի օրինակի խորհուրդ և անօրէ-
նութիւն ըրաւ . քանի որ մեծ հարստութեան աէր եմ,
փախչլը ապօրինաւոր է, և այն միտրանութիւնը որ պա-
տույ պահանութեան համար է, սառուիր ողորմու-
թիւն կ'համարուի, և ձերմակ ատակը՝ սեւ առուր համար-
է, զայս ըսելով՝ փաթաց Թիմուրաց հետ գեղեցիկ յա-
րաբերութիւն հաստատել և հաշութիւն լնել . յսուա-
չագոյն պէտպէս ծանրագին կերպամներ՝ և աղնիք ընծառ-
ներ պատրաստեց և Թիմուրաց ատեննը խրիեց, և ծա-
նոյց որ՝ Թիմուրաց հրամանին հնապանդ, և հրովարուակինն
հաւատարիմ է . ասքա անմիջապէս նոյն չորս Գամասկոսի
վաճառք եւ փառաւոր մարդկանց հանգու սաներ պատ-
րաստելով խրիեց եւ ապահովութիւն ու զից, Թիմուր-
ուրախացաւ, նորա չանքը գովեց և ծառայութիւնը քի-
զունեց, բարեկամական և սիրո նամակ գրեց, և ծանոյց
առ իւր կողմանէ ամենայն կերպիւ ապահով և հաւատաւ-
րիմ լինի, և ըստ ուստիցին իւր երկրին իշխանութեան
մէջ հաստատուն մնայ, և պատուիրեց որ՝ իւր երկրացի-
քը Զամթափ աղջին հետ առ և առուր ընեն, եթէ զօրաց

բաղմութենէ մէկը՝ աղքատին ընչից անկրաւութեամբ
ձեռք երկարցնէ, եթէ Թիմուրաց որդին եւս լինի գանիւք
և հարուածով քաղաքէն արտաքսեն : Այս օրինակ բարե-
կամութեան միջոցները ձեռք առնելով՝ քանի որ Թիմուր
Դամասկոսի կողմերն էր, թէ զրամ և թէ կահ կարասիկ
լիչ որ ուղեր Ալայ խատին յօժարութեամբ սրտի և ուրա-
խութեամբ ուղածէն աւելի կը խրիեր, մինչ զի՞ որ Դա-
մասկոս և Սաֆֆէտ ձերմակ սոխ չեր գտնուէր, Թիմուր
լուր խրիեց և բեռ մի ձերմակ սոխ ուղեց, Ալայ խատին
ըստ առաջն կերպին՝ երեք բեռ պատրաստեց խրիեց =
Աստուածային առաջնորդութեամբ այս ճանապարհը
մուռ, և Թիմուրաց աչքին պատուաւոր և սիրելի եղաւ,
այն հաշութեան եւ խաղաղութեան վրայ, Զամթափ
աղջիք հետպէտէ Սաֆֆէտ յաճախիցին, որքան առ և
տուր կ'ընէին, քաղաքացիք մէծ շահ կունենային, ուստի
մէկին ատելութիւն ցոյց չուուին :

Մեծասիրոն Թիմուր՝ Դամասկոսի ներքին բերդին
եւս յաղթեց և նուածեց, գանձը և հարստութիւնը զը-
րաւեց : Յորչափ Դամասկոս էր, յիշեալ Ալայ խատին խր-
մարգիկները նամակը և ընծառները ուսկատ ընելով՝ օքքան-
չոր մէշերնին համարումը և բարեկամութիւնը աւելցաւ,
երբ Դամասկոսին չուեց եւ Բերից կողմը գնաց, դար-
ձեալ Ալայ խատին՝ թագաւորական ընծայ և արքայափա-
յել նուէր պատրաստելով՝ Թիմուրաց միջնորդութեան
նամակ գրեց . նամակին մէջ՝ բռնաւորաց սիրտը մեզմա-
ցընող խօսքեր՝ գթութեան և սորումնութեան առիթ և
զոլ զրոյցներ մէջ բերաւ՝ և խօսքին ընթացքին մէջ Սաֆ-
ֆէտի իշխան Թոնիպաղան, և Վազգէի իշխան Յօմէրը՝ միջ-
նորդելով, նացա սրձակուամ խնդրեց, և ուելցուց՝ պէտոր-
է զիսնաք առ ձեր ներազութիւնը զոհացողական յաղ-
թութիւն է . քանի որ նորա ժամանակին ձեր մէծութեան
յաղթանակը՝ և ձեր տէրութեան հացիստամին էին, այ-
ժըմ սոցա ըմբռնումը և բանապարկումը ասորութիւն է .
և արձակումը՝ ձեր փառաց և մէծութեան գիւրին գործ՝
յաւել քան զայս, ձեր հրովարուակինն հնապանդ և բարձր
հրամանին հպատակ էմ: Ասմակը վերջացուց և խրիեց :

Երբ յիշեալ նամակը Թիմուրայ հասաւ՝ կարդաց և ըն-
ծաները տեսաւ, որքան որ՝ քար և երկաթ էր, մոմի նման
կարգացաւ, քանափ կապանքէն արձակեց, պատուով և
մեծարանօք բեկեալ սրտերը բժշկեց, սպարգեւոք և ըն-
ծայիւք ուրսիսացուց, ապա ճանապարհի անդորրութեան
համար քաւականի շափ մարդիկներ ուղեկից ընելով խր-
կեց, մէկը ուրախութեամբ խւր Սաֆֆէտը, և միւսը փա-
ռօք իւր Ղազզէն հասաւ:

Մէլիք Նասր՝ երբ Թիմուրայ բոնաւոր ձեռքէն հո-
գին ազատեց և Եգիպտոս հասաւ, Եգիպտոսի նախա-
րարներէն Ալի Եանարդ անուն Էմիրը՝ գետպանութեամբ
Թիմուրայ խրկեց, և իւր նամակին մէջ սյն օրինակ մոտ-
տի և ընդունայն խօսքեր ըրաւ. չիարծէք որ երկիւղիւ-
և կամ տրտմութեամբ փախատական եղած ենք, այլ մի-
այն լսեցինք որ մեր ծառաներէն ումանք՝ իրենց ցանկու-
թեան հետեւած և մոլորութեան անտպատին մէջ կոր-
սուած են, քեզ նմանիլ ուղելով՝ անկախութիւն երա-
զեր, իշխանութեան ծայրը ամբառնալու տենչանքը տա-
ծեր, և ապստամբութեան ճանապարհը խոտորեր են, երբ
Ճարտար բժիշկը մէկ մարդու վրայ երկու ախտից ճարա-
կումը կրակեանայ, յայտնի է թէ նախ վոտանդաւոր ախտը
փարատել կը ջանայ. նմանապէս մենք եւս փոյթ տարինք
այնպիսիները փարատել, ասոնք կարգի դնելն յետոյ՝ վր-
կայ Առառած՝ քաղցած առիւծի նման վրադ կուգամ,
զքեղ եւ զգբերդ ոտնակոխ, քաջ գունդերդ և բազ-
մութիւնդ վայրավսախն ցիր ու ցան, և զքեղ անհանգիստ
կ'ընեմ: Գրած նամակը այսպիսի անարդ և ստապատիր
խօսքերով լեցուց, եթէ այս տեսակ վայրացուցիչ և բար-
կութեան գրգռիչ խօսքերու տեղ՝ սակաւ ինչ ընծայ պատ-
րաստէր, համարում և բարեկամութիւն կազմող խօսքեր
գրէր՝ և ներողութիւն խնդրելու միջոյներ յառաջ բերէր
իցէ թէ անցածը անցած լինէր, հաշտութիւնը և խա-
ղաղութիւնը հաստատուէր, Խղամները՝ ամեն պարագա-
յի մէջ իրենք զիրենք կ'պահպանէին և հանդարտութիւն
կ'գանէին: Մէլիք Նասրի գետպան Եանարդը՝ երբ նամակը
մատոց և Թիմուրայ յանդիման եղաւ, տեղի ունեցած

իսաակցաւթիւնը այսպէս պատմեց թէ՝ երբ Թիմուրայ ա-
տեանը երթարով նամակը յանձնեցի, Թիմուր նամակը
կարգացէն և անոր խմասով հասկալէն յետոյ՝ նուատիս
սնունը հարցուց, Եանարդ է լսի, Եանարդին նշանակու-
թիւնը ինչ է ըստ, չիմ գիտեր լսի, գուն որ անուանոյ
նշանակութիւնը չես գիտեր, գետպանութեան ինչպէս
արժանի կը լինիս, թագաւորաց սուլորութիւնը գետպա-
նոց վեսս շրտալ է. եթէ ես ալ անոնց չինմանէի, և ա-
նոնց սովորութիւնը չպարծագրեի, այժմ՝ զքեղ կ'սպանէի.
ասկայն դռ յանցանք չունիս, այս արհամարհանքը բո-
քեզ այս պաշտօնավ խրկաղին և արհամարհել առողջին է.
ասկայն այն եւս յանցանք չունի, վասն զի խելք՝ և վեր-
ջապէս հանձար չունի, արդարեւ՝ թագաւորին համար
անեցած գործերնիս յարմար և պատշաճաւոր եղած է:
Յետ այնորին ըստ թէ գնայ Գամանկոս քազաքը տես,
որ ձեր փառաւորութեան, զքօսանաց և զւարծութեան
ուեզն էր, նուատաս զնացի և տեսայ որ քաղաքը չեն-
քերը և պաշտաները հիմնայատակ կործանած մողավոր-
որ վայրավատին ցրուած և հեռացած, ոյդիները և պար-
տէզները վեր ի վր եղած, և աստրանք հիմնարեւին
առապալած են, երբ հազար աւաղ և եզնւկ կարգալով Թի-
մուրայ գարձայ, ըստ, զնայ արդ թագաւորդ բարե-
կամութեան նամակի և պատասխանի արժանի չէ. Առ-
ուուծով զինի ձեր պիտի գամ և պիտի չանամ զայն որպալ
և որոգայթը ձգեւ, որքան զօրութիւն և կարսկութիւն
ունի, նորօք իւր բաղրուիները թուղ զօրայնի և դէմ զայ,
և պատուիրեց որ, ասոնք իրեն բերանացի պատմեմ, և հը-
րաման տուաւ. նուատաս երկուղիւ Եգիպտոսի կողմէ գր-
նացի, և աեղի ունեցած խօսակցութիւնը Մէլիք Նասրին
պատմեցի:

Թիմուր Գամանկացոց յոյսնի եղած ինչքը և ըս-
տացուածքը, մէկ մէկ կերպով ժողովրդէն և գրաւելին
յետոյ, նոցա գաղունի և ծածուկ եղած հարատութիւ-
նը ձեռք բերելու համար հրաման ըրաւ որ, քաղաքին
մէծամեծները և երեւելիները չարչորին և պատժեն.
մի առ մի առաջանաց հրապարակը մասուցին, սասակու-

պէս գանեցին և հարուածեցին, գալոնի և ծածուկ եղած
հարստութիւնը բոլորն առին և գրաւեցին, առա հրաման
ըրաւ որ ընդհանուր աւարառութիւն և կոտորում ընեն,
մանկունք և կանացքը գերի վարեն, և քաղաքը հրովար
րեն, անհաւատ և ամբարիշտ Թաթարները և Զղաթանե
րը միսան կոտորել և գերել տուարել և յափշտակել. առ
բարիշտ և եղեռնագործ Թաթարները փռութացին և երա
գեցին տուները և պալատները աւերել և կործանել, իս
լամաց մանկունքը և երեսը տրեփակի ջր տեսած փափկա
սուն տիկնացքը գերի վարեցին, և շատ անմեղ մարդիկ
ներ զղթայի տողեցին: Այս ընդհանուր կոտորումը և
կատարեալ ամբարշտութիւնը, յաւուր յարութեան նր
շն, և վերջին դատաստանին օրինակ եղաւ. տուները և
գերդաստանները վերէն ՚ի վարքանդելին և աւերելին,
և անթիւ մարդկանց սպաները տաշորելին յետոյ, խորա
սանի հերձեալներէն տմանք, Պէնի սամբէի միջիմը հուր
ձգեցին, և օդոյն սասակութենէ կրակին բոցերը առ հա
սարակ ծաւալեցաւ. բարձր և խոնարհ յատուկ և հասա
րակ տեղերը ՚ի միասին այրելով յաճիւն դարձան. այս
քսն դարերէ և ժամանակներէ ՚ի վեր՝ չեն եղած քաղա
քը. և այսքան երեւերի մարդիկներով լեցան եղած եր
կիրը, երկաւ երեք օրուան մէջ իբրեւ չեզած և աշխարհ
չեկածի պէս եղաւ. զարմանք է որ այս գէպքին թուա
կանն ևս (պահ) աւերակ բառը կը յօդէ. և ո՞՛ (1400) (1).

Այս մետաղ չարեաց և անօրէնութեանց, Դամաս
կոսի կողմերէն վրանները վերուց, իրեն բռնաբարած հա
րստութենէ զատ, ապիրատ զօրաց կորած և գրաւած
ինչքը և ապիս. գոյքերը թուէն և համարէն աւելի եր,
բռնալու և տաներու ձանձրացան, ձանսպարհները ձր
գած հարստութիւններով և գենքերով, ձանսպարհները
վիճակարծաց շուկաներ, մետաքսագործաց վաճառատե-

(1) Բնումաց Մեծորեցին կառեցնէ. 700,000 մարդ կ'այր առին 700,000
դրսիս այսօր և վաղին այսօր բերջիք և եօթն բերդ շնեռներ. որ ոչ բե
րդէ գլուխ. հասցի գլուխ նորա. երես 63: Անձորեցին այս գեպքը
Քամակասի առաջ այլ այլապետի պատմիչը գրահները բռնդ շնեռն գեպք
ըն հազարամի առաջ բնագէւս զո շարունակութեան մէջ պիտի տեմնուի:

յիներ, և փերեզակաց խանութեներ դարձան. ըրած ա
նիրաւութեանց կորստեանց և շռայլութեանց համար, ի
րենք անդամ կրսէին թէ շռայլութիւն է, սակայն Ճմա
րիս է որ որբան աւարեն և յափշտակեն, տակաւին հա
զարեկան պատիժ և անվերջանալի աղէտք, հրդեհ մի
լինելավ, գալոնի և թագուն ամբարեալ և շատմարանեալ
բաներուն հետքը անդամ չժռազպ, միսիր գործուց, Աս
տուած հեռի արասցէ. Նօթութենէ քաղաքին շները ըս
պանուած խզամները ուտելով բողոն կատաղեցան, և
տեսած մարդիկներուն վրայ կը յարձակէին՝ որով քաղա
քին մէջ ջրջլ և Մզկիթ երթմալ անկարելի եղած էր:

Այլ Եգիպտացիք, և Եգիպտոսի հպատակ քաղա
քաց գիւղց և աւանաց բնակիչները, Թիմուրաց այս գոր
ծերը և ասորեաց երկրին տաւած վիանները լեցին, եր
կիւղիւ և տրամութեամբ սասաննեցան, տարակուած և
խռոված կը խորհէին, թէ արգեօր իփենց տեղերը մի
ամտութեամբ նստին, և թէ փախչելու պատրաստու
թիւն տեսնան, և կրսէին թէ տեսցուք բախտին հայե
լին ինչ կերպարանք կը ցուցնէ, և այս երկնացին պատիժը
մինչեւ ուր պիտի հասնի, մինչդեռ ոգքա այս խորհրդոց
մէջ կը ծփային, Թիմուրաց երթապուն լուրը եկաւ, և
նոյն օրը մէծ տօն կատարեցին, և հազար փառք աալով
իրենց տանց և բնակութեանց մէջ ապահով մնացին:

Անօրէնն Թիմուր Դամասկոսին երթալին յետոյ,
Դամասկոսի երեւելիններէն և նշանաւոր գիտնականներէն՝
դատաւորաց դատաւոր Եահեա խոտին Հանիֆին, պէտ
պէս անարդանօք և երկամի խարաններով պատուհասեց,
ապա զինքը և իւր որդին դատաւորաց դատաւոր Եա
հապ խոտինը հետը տարաւ, ժամանակ մի Թիմուրաց
հետ թափառեցան, և կերպով մի նորա աղետից բակ
տէն աղաւելով վերստին Դամասկոս դարձան և իրենց
վիճակը դարձեալ բարւոքեցին, և դատաւորաց դատաւոր
Նապուտի հանսիելին, և դատաւորաց դատաւոր Սամր
խոտին Եաֆին՝ հետը տարաւ, Սամր խոտին՝ Ճանապար
հին յորդեալ գետին մէջ ընկզմեցաւ: Եահապ խոտին

Իսկ Աէյֆ խտախն Թիմուրայ առաջին ելնց ատեն իւր ընկերներէն, և թագաւորութեան ժամանակ նախարարներէն մին էր: Մողոլ և Զմիաստանի կողմն Թիմուրայ տէրութեան սահմանագլուխը Թիմուրայ հրամանաւ բերդ մի հիմնելու և նոր ինորոյ շնելու իշխան և վերակացու եղած էր, այն կողմերը յափշտակուած աւարը և հարստութիւն ամբարելու համար, այն տեղը մէծ քաղաք մի շնած, և իշխանութիւնը Արդուն շահին յանձնած էր, և քաղմաթիւ դօքերով ամբացուցեր և հստատեր էր: Թիմուրայ այսպիսի գործերէն և նոյն քաղաքի շնուրնենէ՝ Մողոլ ազգը տրտմութեան մէջ ինկան, վիսամներէն ազատ չինելով նոյն սահմանը գտատարիեցին փախան, նոյն միջային Զղաթայի ազգը Մողոլի ընչց և ստացուածոց վրայ ագահութեամբ բռնացան, երկու կողմէն չարիքները արծարծեցան, շարունակ թշնամութիւն վիսան և պատերազմն չէր դադարեց: և կը ջանային իրար կորուամնելու և իրարու ինչը և ըստացուածք յափշտակելու, այս լուրը Թիմուրայ գումէց, և կարծեց որ ասոնց իրարու թշնամութիւնը և հակառակութիւնը փոքր ինչ տէրութիւնը ընդարձակելու առիթ կը լինի ուրախացաւ: Մողոլ ազգին այսպիսի գործերը՝ երբ սուլթան Մէհմէտ և Էմիր Մէյֆ խտախն տեսան միշեալ բերդը կասարեալ պէտքերով և առաստ քաղմամիշերօք ամբացուցին, և ապահմանութեան համար՝ Հնդկաստանի Մողթանի և իրագ Արասի մարդիկներէն Աստրապատականի, Ֆարսի, Իրագայ, Խորասանու և Պարս կաստանի զօրքերէն մէկ մէկ մաս, և Զղաթայի զօրքերէն մաս մի եւս աւելցնելով, Արդուն շահը զօրացուցին եւ Թիմուրայ կողմ գնացին, Խոճէնա հասան, և Միհուն գետը անցնելով Սմրզնու մտան, կառավարութիւնը Խոճայ Խուսութ անուն անձին յանձնեցին, և անտի եւս մեկնեցան, և երբ Խորասանու կողմերը հասան, Էմիր Աէյֆ խտախնի կենաց վախճանն հասեալ մեռաւ, և սուլթան Մէհմէմէտը եկաւ Թիմուրայ հանգիպեցաւ: Մինչդեռ

Յունաց աշխարհը ուրախութեամբ և քերկրութեամբ կը զններ և կը տեսներ . Աստուածային հրամանաւ Յունաց աշխարհը , Չուրը և հատը լրանալով , Ագ չէ հիր քաղաքը մեռաւ . Թիմուր տրտութեան ծովերուն մէջ ընկղմեցաւ և մուաց ուշադրութիւնը վարանական տիրութեամբ տագնապեցաւ . բոլոր զօրաց հրաման ըրաւ որ սոց օրէնքը կատարեն . վերէն ՚ի վար մեծ և փոքր ամենեքեան սեւազգեցաց եղան . ապա սուլթան Մէհէմմէտի գիակը սընտուկը զնելով՝ կատարեալ պատուով եւ յարգանօք Սմրզանու խրկեց , և պատուիրեց որ քաղաքին բնակիչը սեւ հագնին , ողբով և կոծով դիմաւորեն , և սոց օրէնքը պատուեն : Հրամանին համեմատ Սմրզանու ժողովական վարդը , պատուաւորները մեծամեծները և ռամիկը . սեւ զգեստներ հագան , գիակը դիմաւորեցին . և հ.օ. (1402) թուին քաղաքին մէջ յիշեալ սուլթան Մէհէմմէտին յատ կացեալ դպրոցին մէջ թաղեցին :

ԳԼՈՒԽ ԻԹ .

Թիմուրը Ալբան տատին հետ ունեցած առելութիւնն , Աշխարհին ուղած աեղեկութիւնն . — Սուլթան Պայէզիսի մահն : — Թաթար ցեղին ըստած խորէութիւնն , և զենքերին առնեն : — Սուլթան Պայէզիսի . Թիմուրը տուած խորանեն :

Սախ քան զայս գրուածին համեմատ , Թիմուր Բերխայէն և Դամասկոսէն յափշտակած ժողովրդոց հարըստութիւնը և աղխամանվար , վախճանեալ Եմիր Մէյֆի խոտինի եղբայր Ալլահ տատին հետ , Մարտինէն Սմրզանու խրկեց , և ինքը առանց յապաղելու Պաղտատի կողմէ գընաց : Ալլահ տատի նախանձորդը իւր մեկնելն զինի , սկսան բամբասէլ և վատահամբաւել , և եղբօրը մահուամբ դիպոլ ժամանակ գտնալով , զօրացան նորաւ պատիւը աղարտել վատահամբաւել և Թիմուրը մատնել . և աւելցուցին թէ , Դամասկոսի կողմէ հարկահանութեան ոստիկան եղած ատեն , իրեն համար շատ գանձ և ազնիւ բաներ յափշտակեր է . Թիմուր անորմէ երես դարձուց

և միտքը դրաւ որ վլէմինդիր լինի , սակայն նոյն ժամանակին չը յայտնեց : Յիշեալ Ալլահ տատը երբ յայնկայս Ռգոսս գետոց Սըմրզանու հասաւ , անմիջապէս Թիմուր անոր հրովարտակ խրկեց , եւ իրեւ աքսոր Ալլահ պատասխանութեան , և այն կողմերը աւարելու եւ յափշտակելու , և անհնաղանդ մարդկանց վիասներ տալու գործակալ ըրաւ : Նա հնաղանդելով յիշեալ բերդը գնաց և երբ հասաւ , Արղուն շահը Սըմրզանու անցաւ : Մողոլի ազգը չէին դադարիր Ալլահ վրայ զօբք պատրաստելէ , յափշտակութենէ աւարառութենէ եւ վիասներ տայէ , Ալլահ տատ թշնամին վանելու համար ուղիղ անօրէնութիւն և վառվառուն խորհրդածութիւն ըրաւ , պէտք եղած տեղերը հորեր վորեց , սերմանիքներէն հեռի տեղեր առուներ բացաւ , բերդը ամրացուց և զօբքերը զօրացուց և պատուեց . մինչեւ Թիմուրայ մահը յիշեալ բերդապահութեան պաշտօնին մէջ մնաց . յետոյ նորա վերջին գործոց ուր եղերիլը , Աստուծով այսուտեւ կը յայտնեմք :

Թիմուր մինչդեռ Յունաց աշխարհը կ'գեկերեր , Ալլահ տատին նամակ խրկեց և հրաման ըրաւ որ , այն կողմանց համառօտ և ընդարձակ գործերը , վիճակը եւ հանգամանաց պատկերը , զօրաց որպիսութիւնը , քաղաքին՝ ժողովրդոց ընթացքը , բերդերը ամրացները , դաշտերը և լեռները . ազգերը և ցեղերը . բարեկամը և թրշնամին , գիտնակամնը և ագէտը , օմեւանները և իջևանները , ընդարձակ բանիւը արեւելեան կողմի Զինաստանի ասհմանէն մինչեւ ՚ի Սմրզանու , պատմէ և ծանուցանէ և եղածին պէտ յասեղէ մինչեւ ցասզանի և յարդէ մինչեւ ցիստ ճշգրիտ խօսքերով ընդարձակ և անխոփ ոճով գրքէ և իմացնէ : Նամակը երբ Ալլահ տատին հասաւ , հըրամանին հնաղանդելով , քանի մի թերթ թուղթ իրար փակուց իրեւ քառակուսի մէկ կտոր ձեւացուց , ապա յիշեալ տեղեաց պատկերները , սակաւը և բազումը նըկարագրեց , ամէն տեղը և բնակութիւնը , շարժականը և անշարժը բաժնելով պատմեց , արեւելը և արեւմուռը , հեռախան և մօռ , դաշտերը և լեռները , բարերը և հողերը ,

գետերը և ծառերը, յականէ յանուանէ ծանոց և ձանապարհները յայտնեց և Թիմուրայ խրկեց, հասնելուն Թիմուր ամեն մէկ բանը աչքով տեսնելու չափ տեղեւ կութիւն ստացաւ :

Յունաց աշխարհի օդը այնուհետեւ Թիմուրայ բնութեն տրամութեան առիթ և վշտաց պատճառ կը լինէր, որով հետեւ հարստութենէ և աղնիս բաներէ իւր գանձը լեցուեցաւ, աւարառութեամբ և յափշտակութեամբ զօրքերը հարստացան և ուրախացան, գարնանային եղանակը յառաջնեց, և անձրեւային խստութիւնը հեռացաւ. երբ տեղէն չուեց, բեռները և աղխամաղկը Ագչէհիր իջուց, երջանիկ և յաղթող թագաւոր նահատակ Եէլորը բրմ Պայէզիսը մեռաւ, գարձեալ նոյն ժամանակին եւ նոյն տեղը, ուր Թիմուրայ սրդուց որդին սուլթան Մէհմէտը մեռաւ :

Յիշեալ տեղէն չուեց, Թաթարաց զօրութիւնը եւ փառքը յափշտակելու համար՝ ունեցած դիտաւորութիւնը ծածկեց, երեւելիները և մեծամեծները իւր ատեանը կոչեց, և իւրաքանչիւրը պատուով բազմեցուց, և բարեգործութեան պատրուակաւ այսպէս սկսաւ խօսիլ, մեղի օգնութեան և ձեռնոտութեան մասին, ձեր ըրած ծառայութեան եւ սերնդոյ մերձաւորութեան, միաբանութեան և ընկերութեան, հասուցման ժամանակը եկաւ, և զձեզ պաշտպաննելու և պատուելու ատենը հասաւ, սակայն Յունաց աշխարհը նստելով և կենալով մեր ուրախ բնաւորութիւնը վնասէ և հանգիստ բնութիւնը՝ տրամութենէ աղստ չէ, կուղեմ որ այս նեղ և անձուկ տեղէն, ընդարձակ դաշտ մի երթալ, Սեբաստիոյ դաշտին օդը գեղեցիկ, զբանուած և զուարծութիւն ընելու զուարթարար տեղ մի է, երբ այն կողմը երթանք հանգստանմք և հանդարտինք, աշխարհները կը դրաւեմք, իշխանները կ'որոշեմք, և Ճանապարհները կ'ծանուցանմք, և ձեր ամեն մէկին արժանաւորութեան և կարողութեան համեմատ, պատիւ և իշխանութիւն կ'բաժնէմք, վասն զի այս գործը մտածելու պէտս ունի, երբ յիշեալ տեղը երթանք՝ նախ մեր ձեռքին տակ եղած քա-

ղաքաց և բերդից հետ, ելից և մտից հաշխել կիմանամք. երկրորդ ձեր բաղմութիւնը իշխանները և մեծամեծները մի առ մի թուելով, ձեր թիւը ձեր սերունդը եւ ձեր նախնեաց զանազանութիւնը կը հասկնամք, և անոր համեմատ բաշխում, և ձեր Պէյերուն բաժանումը ընելով, կ'փառաւորեմք և կ'պատուեմք, և ձեր թշուառութիւնը բառնալու գուն կ'գործեմք, երբ այս կերպով գործենք, կանոններ կ'գրենք, իշխանութեան օրէնքը եւ զինուց պատիւը ՚ի գիր գրոշմելով կ'գործադրենք, ձեր իւրաքանչիւրը իւր տեղը և իշխանութեան մէջ հանգըստութեամբ ապահով կը լինի և խաղաղութեամբ զօրութիւն կ'ստանայ :

Այսպիսի շնչին խօսքերով Թաթարները խաբեց և մոքերնին գրաւեց. նորա յակամայից այս խօսքին վրայ որոշում տալով, իրենց տեղին չուեցին գնացին, երբ ամենեքեան յիշեալ տեղը երթալով վրաննին կանգնեցին նստան, Թիմաւր իւր խստումը կատարելու համար ընդհանուր ատեան կազմեց, ընտիր զօրականները բոլորն յանդիման կացուց. ապա Թաթարաց երեւելիները և մեծամեծները կոչեց, պատուեց և մեծարեց, և ամեն մէկին որպիսութիւնը հարցնելով զուարթերես ցցց տուաւապա խօսքը Թաթարաց ուղղելով ըստա :

Յունաց աշխարհին աւանաց և գիւղից, և նորա ազգաց և աղանց նախատեսութեան աջք նայեցայ, այժմ ձեր թշնամիները սպանուած՝ և դուք ձեր կամաց համեմատ քաղաքաց իշխան եղած էք. սակայն ես երթալէսյետոյ, սուլթան Պայէզիսի որդիքը աերութեան մէջ ձեր բաժանորդութիւնը չեն ընդունիր, երբ իրենց հօր վլեժը մոքերնին իյնայ, և եթէ յատուկ և հասարակ մարդիկները հրաւիրեն, ամենեքեան պիտի հնազանդին, յայտնի է թէ, զձեզ ամեն կողմէն պիտի նեղեն եւ վնասեն, մանաւանդ տակաւին շատ մարդիկներ մեղի հնազանդած չեն, և բազմաթիւ բերդեր մեր ձեռքին տակ նուածուած չեն : Արդ աղօմքի ժամացոյի պէս, պէտք է որ պայմանները կատարուին և իշխանութեան օրէնքները հաստատուին : Առաջն պայմանը այս է, պէտք է ձեր մէջ

ամենեցուն սիրելի՝ մեծին և փոքրուն հաւատարիմ և խմանութեան (ժողովագութեատութեան) արժանի թագաւոր մի դնել։ Երկրարդ խրաբանցիւրոյ արժանաւորութեան և կարողութեան համեմատ իշխանութիւն բաժնել, պէտք է իրը իւր տեղը գնել, և իշխանութիւնը արժանաւորին յանձնել, եթէ այսպէս կը մարդանիք, ձեր այս գործը զօրութիւնը և կարողութիւնը կ'փառաւորի, ձեր թշնամին և հակառակորդը կընուաստանայ, թշնամին վանելչ ան կասկած կը լինիք, այս գործը կարդագրելու, և ձեր վիճակը կը բարեղբելու համար, պէտք է որ ես ձեր վիճակը, մարդկանց թիւը, եւ զնուոց քանակութիւնը իմանամ, քանի որ տեղեկութիւն չունիմ, չը լինիք, արդ՝ պէտք է որ ձեր ամեն մէկը իւր զօրութիւնը և կարողութիւնը և մարդկանց թիւը, հետեւակաց և հեծելոց որբան լինելը որատմէ, պակասորդը ինչ որ է լրացնեմ, առ այժմ պէտք է որ, պատերազմի գործիքները և զենքերնիդ բոլոր առ ջեւս բերէք, տեսնամ և պակասութիւնը լեցնելու հոգ տանեմ, բառ և այսպէս իւր խօսքերը վերջացուց։

Թողը թաթար ազգը հրամանին հնագանդեցան, շատ և քիչ զենքերնին թիմուրոյ առջեւ բերին, և ուղմակը թերը լեռներու չափ կուտեցաւ, թաթարաց մեծամեծները բռնեց և շվետայի զարնել տուաւ, ապա բոլոր զենքերը թիմուրոյ զնարանը կրուելով յանձնուեցաւ, յետ այսպէս անտրելին և արհամարհնելին, և նոյս ուժը և կարողութիւնը խորտակելին, դարձեալ արծակեց, և անտարի խոստմունքներով մոքերնին բժշկեց, եւ անմիջապէս անսի չուեց։

Երջանիկի թագաւոր նահատակ սուլթան Պայէզլիսն՝ յամառ թիմուրաց հետ երբեմն ժողովի և խօսակցութեան մէջ, խօսքը թիմուրայ ուղղելով՝ այն օրինակ ընակի խրաբաներ առւած է, «Ով Եմիք, բախտին և ճակատագրին վճռով նենդութեան բանուը մատնուեցոյ, և այսուհետեւ կենդանութենել յցաս կարեցի, այլ որովհետեւ կը պնդես թէ Խոլամ եմ, քեզի բարեկամօրէն և մուերմաքար, երեք իշխանական խրաբաներ ունիմ, եթէ լոնդունին տէրութեան բարեկարգութեան պովիթ, և յատիունաւ

կան տան շինութեան պատճառ է։ Առաջին պէտք է որ չիտութաս Յունաց աշխարհի մարդիկները և դիւցավունները սպանաննել և կորուաննել, վասն զի սոքա Խոլամ ժողովրդոց և խալամաց սահմանագլուխն կապանիքն, և այլակրօնից յաղթանակը վանելու երկաթի վահաններ են, այժմ՝ այս երկրին մէջ գուռք հոգի, և ուրիշները իբրեւ մարմին են, եթէ փութայք Յունաց աշխարհի մարդիկները կատարել, խուլայցող մարդիկները մեծացուցած, Խալամ ները արհամարհած և Արեւելեան ազգը զօրացուցած կը լինիք։ Երկրորդ՝ պէտք է որ թաթարները այս աշխարհս չըթաղուք, վասն զի ժողովրդոց գրգռութեան և երկալաւակութեան առիթ կը լինին, մինչեւ անգամ կը յանդրդուին անիրաւիլ, յամանիլ և հակառակիլ, եթէ նոյս նենդութենէ խարուիք, և նոյս բռնութենէ և անարդութենէ անփոյթ լինիք, նոյս չարութիւնը բարութենէ, և նենդութիւնը հնազանդութենէ շատ է, նոյս այս աշխատակիլը աշխատութեան առիթ, եւ ճանապարհուց ոչ ապահով առիթութեան պատճառ է, յիշեալ ազգը քեզմէ բաժնելու համար, իւրաքանչիւրին սերունդը ստուգէ և ձեր մերձաւորութեան յարէ, նոյս հսկարութիւնն և անկախութիւն կրատանան, և ամեն մէկը իշխանութեան և փառաց ցանկութեան կը հետեւին, պատույ եւ մեծութեան տենչափը սննուելու աղետից մէջ կ'իշնան, պէտք է անսնց համար վառվառն միոք և ողիզ կամք ընել, և գուն գործել Յունաց աշխարհէն հանել։ Երբարդ՝ պէտք չէ որ յօժարիք և կամ փութայք այս սահմանները գանուած բերդերը կօրծանել, վասն զի դիւցավանց ապաւին և աղասասանարան է, ոյս խրամներու աւանդ և ուղիղ ճանապարհին առաջնորդ են, եթէ հոգ կը տաննէք պահել և գործադրել, աշխարհիս և հանդերձեալ թագաւորութեան արժանի կը լինիք, ապա իւր գեղեցիկ խրատական խօսքերուն վախճան տուաւ։ Թիմուրի բնդունելութեան ականջալ լսեց, և կարելի եղածին չափ գործադրութեան փոյթ տարաւ, թաթարաց բազմութեան և նոյս զօրաւոր բազիաց խորտակումն, և Յունաց աշխարհէն յայնիօյ Պատոս գետայ արգելումն, շատ

Հաւանական է որ, սուլթան Պայէղիտի խրատը գործադրելն եղած լինի:

ԳԼՈՒԽ 1.

Թիմուրյաց Յունաց աշխարհէն մեկնին : — Վրաստանի կողմ երթան : — Տիմուրի բերքին պաշարումն, և հնարինք առումն : — Վրացւոց կոտրին և գերի գորին : — Եւ այլ բերդից նուաճումն : — Շէխին իսրահիմի միջնորդութեամբ և արօք, Վրացւոց Թիմուրյաց ձեւքն ազատին :

Թիմուր Յունաց աշխարհէն, այսինքն Սեբաստիայէն ըուեց և խումբ խումբ աստեղաթիւ դօքերով հասած գիւղ ապականեց, և անցած քաղաքը աւերեց, և ձանապարհորդած տեղերը կործանեց, եւ մօտէն անցած բերդերը նուաճեց, և Գոլգայ նման Սորպատական հասաւ . Գարսակուր Թիմուրմէնի Օսմանը զինքը դիմաւորեց և հնազանդութիւն խոստացաւ, նա ծանրագին խլայ հագցնելով պատիւը բարձրացուց, եւ իւր երկրին իշխանութիւնը հաստատեց, և զօքերով օգնեց, Կամախի իշխան Շէմս խոտինի պատուիրեց որ նորա օգնական և ձեռնոտու լինի. անտի եւս չուեց և ծովերու նման յորդեց, Վրաստանի բերդերը և ամրոցները մօտաւ :

Ցիշեալ ազգը կրօնիւք քրիստոնեայ էին, իրենց երկիրը լիւներու գլուխ և ընակութիւնը այրերու և քարանձաւներու մէջ էր, իւրաքանչիւրը ամուր և անմատչելի և երկաթածոյլ բերդի նման, ՚ի քաղմաց անտի, Տիմուրի բերդը՝ որ յառաջադրյն Թիմուրյաց իշխանութեան տակ ինկած էր, Տրապիզոնի և Ավելիանաց բերդերն են: Ցիշեալ բերդին ընակիւները Թիմուրյաց ոչ հնազանդութեամբ պատասխան տուին, Թիմուր պաշարեց և սկսաւ նեղել: Սակայն բերդը ամուր և թշնամույն անմատչելի, բարձր լերան մի վրայ շինուած, աշտարակները և պարիսպը բարքան կանդնելու արդելք էին. բռնաւորն Թիմուր ինչ աստիճան որ գուն գործեց և ջանաց՝ ձար ըլ գտաւ, իւր խորհրդոց և տնօրինութեանց հնաբըները գործադրեց և մորին իմաստութիւնը այսպէս՝ ՚ի կիր եարկ, մտածեց որ

քանի մի կարիճ մարդիկներ, մարտի և պատերազմի ասպարէզի մէջ արի ախոյեաններ՝ մնտուկներու մէջ շարէ և չուաններով այն մօտերը եղած բարձր լեռներէն բերդին գուռը իջուցնէ, արդարեւ այս տնօրէնութեան վրայ երբ նոյնչափ գործունեայ քաջներ բերդին գուռը իջուցընել տուաւ, նոքա դսւոր գտնուած քրիստոնէլից հետ այր զախոյեանէ բուռն հարեալ, պէտք էր տեսնալ թէ Բնչպէս սուրբերը և գաշունները կը շարժէին, եւ Բնչպէս տապարները և նետերը կը ձգէին . Աստուածային յաջուղութիւնը իրենց ձանապարհին առաջնորդ լինելով՝ բերդը դիմեցին, և մէջը գտնուած քրիստոնէայները կոտորեցին և գերեցին, և բերդը նուաճցին, ինչքը և հարրատութիւնը գրաւեցին, և գերիները ընդ լծով ծառայութեան արկին :

Այս ազգը ուրիշ տեղ բերդ մի եւս ունէր, որց երեք կողմը անմատչելի լեռներ էին, և մէկ կողմը միայն շարժական կամուրջ մի ունէր, համնիլը գժուար և մերձնեալը անկարելի . հեռուցէ հեռի ձգուած նետերէն քարերէն և հողայ դիրտերէն երբէք հոգ չէր ըներ . Թիմուր բերդին ամրութեան և հաստատութեան նայելով՝ ստոյգ դիտցաւ որ յաղթել և նուաճել անկարելի է, բաց յայս մանէ՝ քրիստոնէայք գիշերուան մութին կամուրջը կը ձըգէին և Թիմուրյաց բանակը գիշերայարձակ լինելով շարիք և վնասներ կը գործէին և Թիմուրը կը ուագնապէին: Զօրաց մէջ երկու հոգի հնարագէտ և քաջութեամբ իբրեւ առիւծ հոգը, երկուքը իրարու խօսակից եւ բարեկամ՝ քաջութեան մէջ ընկեր, արշաւանաց և ձանապարհի ուղեկից, պատահմամբ օր մի մէկը՝ հասակաւ փիլ և կերպարանօք ահուելի՝ այլակրօնի մի ձեռք ինկաւ, մարտի և պատերազմի մէջ տաճկին բաղի զօրութիւնը յաջողութեամբն Աստուծոյ զօրացաւ, և բախտին ձեռնոտութեամբ յիշեալ այլակրօնը անարդութեամբ յերկիր տապալեց և սրով սպանեց, և հատեալ գլուխը Թիմուրյաց առջեւ բերաւ . Թիմուր ուրախացաւ՝ զայն պատուեց և մէծարեց և պարգեւօք ուրախացուց և ընկերացը մէջ բարձրացուց :

Այս գործը Գամպէր մականուամբ միր Մէհէմմէտ բարեկամին արխութիւնը գրգռեց և եռանդը բորբոքեց՝ և իւր ընկերոջ պէս ծառայութեան մի հանդիպելու, եւ շնորհիւ Թիմուրայ բարձր պաշտօնի մի համնելու յօւսով հոգին չխնայեց, տարփաւորը իւր սիրահարին համնելու պէս՝ կամուրջը պշուցեալ կըդիտէր, և կըսէր թէ՛ բերդին յաղթելին ուրիշ համելի գործ և պատուց առհաւատ չեաց բան չը լինիր, աղջամուղ գիշէր մի՝ ապաւինեալ յԱստուած և քաջ զինեալ գէպ ՚ի բերդին դուռը գնաց, երբեմն օձի նման որովայնին վրայ սովալով, եւ երբեմն իբրեւ շորբոտանի յապիթերս երթարով բերդի գրան մօտ քարերու մէջ պահուեցաւ և կամուրջը կը դիտէր. քրիստոնեայք ՚ի գիշէրի կամուրջը կը ձգէին և բանակին կողմ գիշէրյարձակ կը լինէին, երբ առաւատուն քրիստոնեայք միսան կամուրջը վերցնել, միր Մէհէմմէտ գիւցաղնաբար յարձակեցաւ, կամքնին չուաները կտրեց, և կամուրջը գրաւեց. քրիստոնեայք կամուրջը չը կինալով վերցնել գուն գործեցին միր Մէհէմմէտը հրավառ նետերով և քարածութեամբ հեռացնել, այն քաջ և բարեբախդ երիտասարդը՝ փոյթ չընելով, թշնամւցն քարերուն և հողակրտուներուն նետերուն և տապարներուն բոլոր անձամբ գէմ կեցաւ, մարտը և պատերազմը երկու երեք ժամ տեւեց. Թիմուր և իւր զօրբերը այս գիտուածքն տեղեկութիւն չընէին, և բաղմութեամբ չըւելու պատրաստութեան զբաղած էին, և Թիմուր բարձր տեղ մի նստած բեռներուն կապուելուն կրապասէր, երբ Թիմուր բերդին դուռը եղած աղմուկը տեսաւ, իւր ծառան կոչեց եւ ստիգմամբ հրաման բրաւ որ բերդին դուռը երթայ և լուր մի բերէ, անմիջապէս քաջ մարդիկներ այն կողմ երագեցին, և փութացին եղելութիւնը խմանալ, միր Մէհէմմէտը մահուան վուանդի մէջ տեսան, նա օգնութեան ակնկալութեամբ հաստատուն կեցաւ, հանող գործունեայքաջերը՝ հրավառ սրով զինեալ. քրիստոնէից վրայ առիւծաբար յարձակեցան. քրիստոնեայք կամուրջը ձգէցին և փութացին դուռը աղմուկ, միր Մէհէմմէտ նոյն կէտին նոցա բաղմութեան համար աղմուկը մինչորդութեան միջնորդութեան

անոնց հետ բերդը մոտաւ, քրիստոնէից պրքան որ ջանացին և աշխատեցան զայն՝ ՚ի բաց վանել և ետ գարճնել անկարելի եղաւ, եկած Զղաթանելն եւս նոյն հետայն կայծակի նման բերդը մոտան, յաղթեցին և նուաճեցին՝ քըրիստոնէից շատերը ՚ի սուր սուսերի կոտորեցին և մասցեալները շղթայակապ գերի վարեցին, հարստութիւնը գրաւեցին, կանայքը և մանկունքը տոնելով միր Մէհէմմէտին հետ Թիմուրայ առջեւ ներկայացան. Միր Մէհէմմէտ իւր արկածըր՝ և այս մասին ըրած ծառայութիւնը մի առ մի պատմեց. երբ վերբերը և խոցուածները քննուեցան, տան և ուժ ծանր վերբերով վիրաւորուած էր. Թիմուր նորա ջանքէն գոհ եղաւ, և մեծամեծ խոտամամբ վիրաւորուած միրտը գրաւեց, աղա նորին պատուելի եւ յարգելի մարմնոյն բժշկութեանը համար՝ Թաւրէղ իրկեց, և պատուիրեց որ այն կողմ գտնուած Պարսկի բժիշկները գարմանելու փոյթ տանին, և քաղաքին վիրաբուժները վերբերը բժշկելու վիրակացու լինին. Հրամանին համեմատ բժիշկը և վերաբուժը սպեզալինեօք և գեղօրէիւր, և պէտք եղած ծառայութեան մասին ջանք բրին, ցաւերը փարատեցաւ եւ քիչ միջոցի մէջ կատարեալ առողջացաւ և ըստ առաջնին կերպի Թիմուրայ ծառայութեան գնաց. Թիմուր զայն զօրաց մէջ աղդի մի գլուխ կացոց, և առատ թոշակօք մեծամեծ պաշտօններ յանձնեց. ահա եղաւ յետինը առաջնին, եւ անարդը պատուական:

Յիշեալ բերդը քրիստոնէից ապաւէն և աօրատանարան, և միւս բերգերուն փակալին եւ բանալին էր, նորա նուաճամամբ նոցա բաղկի զօրութիւնը խորտակեցաւ, և փրկութեան գուսը փակուեցաւ, մարտի և պատերազմի ճակատելու և կուուելու ուժ և կարողութիւն, զըմնաց, Թիմուր անգութ ստիկանները իրկեց և սկըսաւ նոցա մեծամեծները եւ իշխանները գերեւ, և միւս բերդերը գրաւել և նուաճնել. միշեալ աղդը իրենց տկարութեան և պատրաստութեանց պակասութեան և անօրինութեան նայելով խաղաղութիւն ինդրելու աղաչան նօր Նիրվանի իշխան չէլիս Խաղահիմին միջնորդութեան

դիմեցին, և նորա գթութեան հովանաւորութիւնը խրնդացին, այս մասին նորա տնօրիէնութեան հաւանեցան, և հրամանէն համեմատ գործեցին :

Այսն ժամանակին ամառնային եղանակը տեղի տըւեալ մեկնեցաւ, և ձմեռնային խստութիւնը նորա տեղը յաջորդեց, անձրեւաց յորդութիւնը և ձեան սաստկութիւնը ծառերը տերեւաթափ ըրաւ, ճանապարհները և շաւիդները փակեցաւ եւ արգիլեցաւ, զի յառաջադոյն ամբարտաւանն Թիմուր՝ բախտաւորութեամբ աշխարհիս ջերմութենէ և ցրութենէ անհոգացաւ, և նորա գէպքերէն աներկիւղ և անկասկած եղաւ, զօրութեամբ եւ յաջորդութեամբ բախտին, մինչդեռ կ'պատրաստուէր Վըրաստանի մնացեալ երկիրները իւր յաղթական բազկին տակ նուաճել. չէյլս Խաղահիմ Թիմուրայ առջեւ միջնորդ և աղաջաւոր կանդնեցաւ, երկրպագութիւն և խոնարհութիւն ընելէն յետոյ՝ ուսը համբուրեց, թագաւորական աղօթիւք և արքայավայել օրհնութեամբ գոհ հութիւն մատոյց, և հրաման խնդրեց որ իւր ինդիրը առաջարկէ. երբ Թիմուրայ կողմէն սիրով ընդունուեցաւ և հրաման եղաւ, իւր մտքին մէջ եղածները այսպէս բակըսաւ ձառել. “ Եմիրին ներողութիւնը և գթութիւնը առաւատ եւ աղքատաց վրայ տարածուած է. բայց յայս մանէ իւր պերճութիւնը և երջանիկ բախտը՝ աշխարհիս թագաւորաց յաղթեց, արեւելից եւ արեւմտից ժողովուրդը իւր տնօրիէնութեան կապերով կապեց, բարեկամք ուրախացան և զուարթացան, և թշնամիք կորագլուխ ամացեցին. այսուհետեւ պատերազմէն հանդիսատ, զօրքերդ և ժողովուրդդ ընչեւք և աղխամաղխիւք լի ու լի լեցուած է, այժմ յայսնի է թէ ձմեռը վերադարձով բանակը եղած տկար զօրքերուն վնաս կրհանի. մանաւանդ Թիմուրաց բազմութիւնը՝ որ արհամարհուած և անարգուած, և նոյա զօրութիւնը և կարողութիւնը և բախտին եղանակութիւնը տկարացած, և անարգութիւնը փոխուած է, եթէ այս որոշման համեմատ գործի սկսուի նոյա զօրաւորները կը տկարանան, և փառաւորները կ'անարդուին, այժմ աշխարհ ամենայն ձեր հրամանէն դուրս

բան մը չեն կրնար գործել, ինչպէս որ նորա հլութենէ և հնազանդութենէ ուրիշ կարողութիւն մի չունին, Վրաց աղդն եւս ձեր հրամանները հնազանդութեան ականջով լսեցին, և ինչ որ հրաման ընէք՝ կատարեալ հնազանդութեամբ ընդունած են, եթէ ձեր կամքը գանձ և գերի է. նուաստս կը պատրաստեմ, և ձեզ ծառայութիւն կը մատուցանեն, յաւելքան զայս հրամանը Սողոմոնի տիպար արքայիդ է, և ձեր ծառան՝ նուաստ և ամօթապարտ չը կացուցանելը Սողոմոնի նման թագաւորիդ սեփհական է: երբ այսպիսի ախորժելի ոճով և գեղեցիկ խօսքերով իւր ձառը կնքեց. Թիմուր՝ շատ գանձուց և բաղրում աղլսամաղից առաջարկութեամբ՝ նորա միջնորդութիւնը սիրով ընդունեց, և չէյլս Խաղահիմ ուրախութեամբ դարձաւ. յիշեալ աղդին մաս մի իւր գանձէն օգնութիւն ընելով՝ պահանջով նորա գանձը յանձնեցին:

Յետ այնորիկ երբ տարւոյն թուականը Հ. (1403) գլխաւորեցաւ, Թիմուր յիշեալ տեղէն մեկնեցաւ եւ ձմիան ժամանակը Գարապաղի գաշողնատելով կատարեց:

ԳԼՈՒԽ Ա.Ա.

Թիմուրայ յայնկցու Ռգասո գետոյ կողմ երթան՝ — Թաթար ցեղերը բաժնեն և ցրուելն՝ — Արքայազուն Ռւլուղ պէյի հարսանեաց հանդէսն:

Երբ երջանկութեան աւետասու գարուն թագաւորը ժամանեց, և սեւաթցը հեծելագունդ ձմեռը՝ տեղի տուեալ մեկնեցաւ, վարդ և մանուշակ նորաբողը ծըլեալ ծաղկեցան, սոխակը և տատրակը սկսան երգել, գաշուրը պէտպէս գալարեօք զարդարեցան, և ձորերը զանազան ծաղիկներով շուք զգեցան, լեռներուն վրայ քաղցրահունչ զէփիւռը սփռեցաւ. ամբարհաւած Թիմուրն եւս սկսաւ տեղէն շարժիլ. չուելու փողոց ձայնը մինչեւ յերկինս կը բարձրանար և երկիրս կ'գլուխէր, սեւագունդ զօրքերը ափեղերը բռնած. պրշձառ դրոշեց և ուկեհուռն հանդերձից փայլումը աշխարհ.ք կը ճառա-

դայթէր, այն նենգաւոր կազմ՝ կատարեալ ուրախութը և երջանիկ բախդավ, ընկերութեամբ թագաւորաց և մի արանութեամբ իշխանաւորաց՝ զիմեց գէտ ՚ Աստրապատական և անտի Խորասանու աշխարհը գնաց . Երբ նորա ուղեւորութեան լուրը տարածուեցաւ, չըջակայ իշխանները փաւթացին զայն դիմաւորել, և յայնիցս Ուգոս գետայ իշխանները աճապարեցին նորա հանգիստը եւ բարի գալուասը նորհաւորել . Հինտի, Սինտի, Խրագայ, Վլրաստանի, Դամասկոսի, և Յունաց աշխարհին յաղթութիւնները գրուատելով ընծանել նուիրեցին և անհամար խնձոյքներով հպատակութիւն մատուցին :

Յետ այնորիկ մեծամեծ աւագանին, գաւոք դիանականաց, և պատուաւոր տեաբը ազգաց, և գլխաւորը ժողովրդոց, խումբ խումբ եկան և դիմաւորելու պարաւորութիւնը հաստացին, ամեն մէկը պատուալ փառաւորեցաւ, և իւր բաւականութեան և արժանաւորութեան համեմատ մեծարեցաւ, ապա նոյց հրութիւնը և հնազնգութիւնը կրկին անդամ ստուգուեցան . ընթացից և հնազննդութեան կանոնները քննուեցան, կուսականները և դաստաւորները նորոգուեցան, և իրենց իշխանութեան գործադրութիւնը հաստատուեցաւ, և հրամանաւ իւրաքանչիւր որ իւր քաղաքը և իւր երկիրը վերադարձաւ :

Յետ այնորիկ Թիմուր գնաց ձի՛ուն գետին վրայապատրաստուած և յարգարուած նաւերով նաւեց . այն կողմանց ժողովսւրդը նորա փառաւոր հանդիպմամբ ուրախացան . Երբ տարսուան թուականը ՀՕՎ (1404) բոլորեցաւ ինքնն եւս եօթանասուն և երկու անսակ ազգով և ժողովրդով (1) Սլմրզանս մոտ . և զօրաց հրաման արւաւ որ, իւրաքանչիւր որ իւր տեղը երթայ :

(1) Թիմուր վրաստանի յաղթէէն յետոյ՝ ձմեռը գարսպաղ անցուց, և գարնան ուղղակի Սմրզան գիմեց, ինչպէս որ պատմութեան կարգը կըցուցէ : Թուամց Ա , յետ մեկնելոց աշխարհէո Հայոց գնաց, տաէ, Հընդհաստան և էաւ զցէնի մայրաքաղաք նոցա . « Սեծորեցին շատ տեղեր պատմւթեան ուղղէ ընթացքէն կը շեղի և կարգը կը խանդարէ . զի Թիմուր Սլեպասիա Աերիայ, և Դամասկոս առնելէն և սուլթան Պայէզիար բանելն յառաջ, արդէն Հնդկաստան արշակը և այն աշխարհը իւր ծառացութեան ըցին տակ ձգեր էր :

Անգութին Թիմուր, Երբ իւր համակին ընակութեան և սեպհական հայրենեաց մէջ արքունի գահը նստաւ, միաբը գրաւ որ Թաթարները ըստ կարգի և ըստ օրինաց բաժնէ և իրարմէ անջատէ, սորա խկական պատճառու այս էր որ, յիշեալ ազգը՝ ըստ մեծի մասին պիտանի պատերազմով և կուռող էր . թէակէտ զէնքերնին առնուած զօրութիւննին տկարացած, փառքելնին անարգուած, և մեծութիւննին վատթարացած էր . սակայն նոցա բաղմանթիւնը շատութիւնը և արիութիւնը տակաւին տեղն էր, Թիմուր կասկածեց, իցէ թէ յանկարծ օր մի յարձակին և յամասութեան ծայրը ամբառնան, ուստի ցիրուցան ցրուելով, իւր այս հոգը փարատեց, մէկ մասը Հնդկաստանի, Զինաստանի եւ Քեաշզարի սահմանները գործակալը ըրաւ, և մէկ ցեղը Զղամայի երկիրը և Մողով սահմանը եղած եւսէր կէց անուն կողի կողմերը կամայ ակամայ խրկեց, մինչդեռ սոցա ձեռնտուութիւն և օգնութիւն եւս ըրած էր, գարձեալ յիշեալ տեղերը ընստելով փախստեամբ Հիւսիսային կողմ նախսագրեալ Աւայտ կիւրվային յարեցան, և ժողովսւրդներէն ոմանք Սլոզուն շահին միացան . և մէկ մասն եւս խազրաց դաշտի սահմանը և խուարդիմի կողմ ցրուեց :

Ըստ այսմ օրինակի՝ Թիմուր ըստ մեծի մասին սովորութիւնը զօրաց տեղերը փոխել և ժողովրդոց վիճակը նորոգել էր, Երբ քաղաքի մի կը տիրէր, անպատճառ զօրաց մէկ մասը այն տեղ կը բնակեցներ, և այն երկիրը կը թողուր, և այն աշխարհի մարդիկներէն մէկ մասը փոխադրելով ուրիշ երկիր կը բնակեցներ, արեւելեան ըընակիչքը՝ արեւմուտք, արեւմուտք, հարաւային մարդիկները՝ հիւսիս, և հիւսիսային քաջերը հարաւ կ'փոխադրեր, մինչ զի Երբ Թաւրէ գաղաքին տիրեց, իշխանութիւնը էմիր ինշահ որդւցն յանձնեց, և նորա պաշտօնեամերը Զղամայի նախարարներէն որոշեց : Իրադ Արասի, և Պարսից ժողովսւրդներէն, Հնդկաստանի և Խորասանու զօրաց մէկ մասը Զինաստանի և Թիմուր վրաստանի սահմանները խրկեց :

Յառաջագայն Դամասկոսին իրեն հետ տարած Նիւք

ըիմ որդի Ապավուլ Մէլիքին՝ Թուրքաստանի մէջ Սիրամ քաղաքին իշխանութիւնը, և Պէլղային՝ Թիքրաս անուն քաղաքին իշխանութիւնը բաժնեց : Այս մասին իւր տեհն չանաց վերջին ծայրը, քանի որ Դամասկոսի մեծամեծները, Յունաց աշխարհի և Պարսից երեւելիները, Պաղտատի և Բերից գիտնականները, այն կողմերը կ'գտնուեն, անոնց հետ կենցաղավարի, բարեկրթութիւն և ուրախութիւն ստանալ, գիտութիւն և իմաստութիւն ուսանիլ էր : Հնարագէտն Թիմուր՝ տէրութեան գործերը կարգադրելն յետոց շրջակայ քաղաքաց և ժողովրդոց վիճակին բարւոքման համար, մեծին և փոքուն, աղքատին և ընչեղին պատիւ և պաշտպանութիւն ըրտաւ, աւելորդ Համարուած տուրքերը վերուց, և սկսաւ իւրաքանչիւր պաշտօնը արժանաւորին յանձնել. մեծամեծ աւագանին պատուեց և մեծարեց, և գիտնականաց դասը պարգեւներով մեծացուց . խոռվարանները անարդեց . յամառ մարդիկները ձեռքակալեց . գողերը և աւազակները տանջելով կախեց, տերութեան գործերը ըստ արժանայն բարեկարդեց, ձինկիդ խանի ընթացից օրէնքները և սովորութիւնները նորոգեց :

Մեծասիրութիւն Թիմուրոյ սակ բախտին յաջողութիւն գտաւ, Խալամայ հարստութիւնը կորզեց, թագաւորաց և իշխանաց յաղթեց . և երբ ամէն կողմէն միտքը անդորրացաւ, և ամեն ուստեք հարստութիւն ժողովեցաւ, վախճանեալ պատմագրի կենդանութեան, այսինքն ՀՀ . (1436) Թուին, Սըմրզանտի իշխան Ռւլուղ Պէյի . որդի Շահը ու իսկ որդւոյ Թիմուրայ, ամուսնութեան և փառաց սակին յարդ տալով, հարսանեաց պատրաստութեան այսպէս սկսաւ :

Նախ քաղաքացիք իրենց մաքուր և նոր հագուստները հագան, քաղաքը և շուկաները զարդարեցին . յետոց հպատակաց վիճակը բարձրացնելու, և անոնց կենցաղը բարւոքելու համար հարկը և տուգանքը վերուց և ժողութեամբ ապահովութիւն շնորհեց, մեծին և փոքրին ընծաներ և պարգեւներ բաժնեց, ապա հրովարտակներ և վճիռներ գրեց, և կողմ կողմ իրից որ, իւր իշ-

խանութեան տակ եղած տէրութեանց և աշխարհաց, աղքաց և ազանց մէջ, սուր չը շարժի, մարտ և պատերազմը ըլ մղուի, մեկումի զրկանք և անիրաւութիւն ըլ լինի, յետոյ պատուիրեց որ, Սըմրզանտ քաղաքէն մինչեւ մղոն միհեռի տեղ հանդիսաւոր կերպով զարդարեն . դաշտերը կակաջ զգեցան, և այն սրուառուչ բոլորակը Բուրաստան և վարդարան դարձաւ . այս կերպով յիշեալ քաղաքին անձարձակ թոյլտութիւն ժամանակ և միջոցներ արրուեցան, Զամթիւլ ամստին իրամ պարտիզին և Շէտտատինն անամարդարան բերելով, ընչեւք և հարստութեամբ լիւլի լիցին, գեղեցկութեամբ և շքեզութեամբ անհամեմատ դրախտ մի յօրինեցին : Երբ քաղաքին, դաշտերուն, տանց և բնակութեանց զարդարանքը լրացաւ, հարսանեաց միջոցները պատրաստելու համար, թագաւորաց և արքայից, նախարարաց և իշխանաց գալստեան հրովարտակներ սիրուեց, իւրաքանչիւրին յաջ և ահեակ, յառաջը և յետուստ, մէկ մէկ տեղ պատրաստեց, նոցա վրանաց և հօվանոցաց տեղերը օրոշեց :

Սըքա ամեններեան իրենց զարդարանքը, ծանրագին զգեսանները, ծաղկանները և ականակուռ, ոսկի և արծաթ կազմածները և զէնքերը բոլոր հանեցին, և պէտք եղածին համեմատ զգեցան և յարդարեցին, և որոշուած տեղերը վրանները հովանոցները և գմբէթները կանգնեցին, Յունատէն, ՈՒնսաէն, իրագայ և Դամասկոսէն բռնութեամբ յափշտակաց աղնիւ և ծանրագին գիտպակներով չընաղ և նորատեսիլ հագուստներով, գեղեցիկ և վայելուչ ժափոր յօրինեցին ուշիկ եւ հանդարտ, նազելով եւ սիդալով, վեհանձնութեամբ աշմէն մէկը իւր խորանը գնաց և փառաւորապէս իջաւ : Ամրա Թիմուրայ մեպհական օժարանը եւ նմա յատկացեալ նախասենեակը՝ գմբէթները եւ խորանները, ախոռ, ծառայից և ընդունաց վրանները և կանանին եւլան, և նոյն շրջանակին միջավայրը պատրաստուած տեղը յարդարեցան եւ կազմեցան, Թիմուրայ գիտանոց եւ զած բարձր խորանը՝ նկարուած աթոռներով և ականակուռ գահոյքներով, հարուստ և փառաւոր բաղմոցնե-

բով զարդարուած էր . և առջեւը երկու հրաշակերտ եղ ջիւրներ կազմեցին , և վրան մեծին Ազէքսանդրի անունով մականուաննեցին , և անոր առջեւ վրանէ դահլիճ մի կանգ ներով մէջը բազմաթիւ վրաններ և գմբեթներ յօրինեցին , գմբեթներէն մէկը վերէն ի վար ոսկով և արծաթով նը կարուած , և մէկն եւս զանազան աղամանդներով ականակուռ և ոսկի թիթեղներով յօրինուած էր : Սոյն միջոցիս զրւա արծաթէ պատուական ցեղուն մի կանգնեցին արծաթ աստիճաններով , և վրանաց բոլորտիքը ոսկեհաւուն և ականակուռ վարագոյններ կախուեցան :

Այլ պատմեն թէ այս բոլոր վարագոյններէն մէկը վախճանեալ սուլթան Պայէզլիսի գանձարանէն յափշտակուած՝ ջուխայէ վարագոյր մի , որ երկաթի կանգունով տասը կանգուն էր առանց կարանի միահատոր , զարմանալի նկարներով նկարուած , և սրանչելի պատկերներով պատկերացած , ընդհանուր անաւոնց թռչնոց և կենդանեաց , կանանց և մանկանց պատկերները՝ ծառոց և պրոց տեսակները , զօրաց , մարտի և պատերազմի պատկերներով զարդարուած եւ գեղեցկացած , և նոյն խորանին առջեւ կախուած էր : Թիմուրայ խորանին գիմաց իշխանաց և գործալվար ոստիկանաց , պաշտօնէից հօտարաց և նուիրակապետաց ատենի համար , քառասուն մեծամեծ սիւներով երեխից հաւասար և ամորց զրւդակից բուրդ մի կանգնեալ հաստատեցին , այս բուրդը այն աստիճան բարձր էր՝ որ խորանին սպասաւորները կապիկներու նըման վրան կ'ելլային և սուպավանդակները կըկապէին : Բը նաև կ'ը քաղաքին յարկեղունս պահուած , և իրենց փառք և պարձանիք համորուած , աղնիւ կերպաւուրը և չքնաղդիպակները հանեցին , և Թիմուրայ վրանին գիմաց մզնի մի հեռի խորանները կանգնեցին եւ սպասաւորներ կաշուցին :

Սոյն միջոցիս արհեստաւոր եւ հնարագէտ մարդիկ զարմանալի ճարտարութեամբ նմանը ըլ տեսնուած մէկ մէկ հիանալի բաններ , նոր ՚ի նորոյ հնարեցին , և Թիմուրայ առջեւ բերին : ՚ի բաղմաց անտի բամբակ գլունները ըսկ բամբակէ և յամենայնէ զերծ՝ աշտարակածեւ արծան

մի կազմեցին և նոյն հրապարակին մէջ կանգնեցին , եւ այս է գործ զարմանալի բսելով աղաղակեցին . նմանապէս երկաթագործք , հիւսք , որմնագիրք , նուագածուք , ծեփիչք , և մագործք , և ասոնց նման արհեստագէտ մարդիկ իրենց արհեստին յարմար : Եւ խաղարկուներէն ու մանք մէկ մէկ արհեստով խնդալու և զարմանալու բաներ հնարեցին . և նոյն հրապարակին մէջ խելացին և տգէտը հանդիսատես եղան :

Յետ այնորիկ հին և նոր դատուաւորք , ընջեւք և ըստացուածովք , ծառայութեալ ընդոնիք և աղմամաղլիսիւք իրենց վրանները նատան , գիտնականաց դասը ժողով կազմեց , և իւր խօսակցութիւնը և վիճաբանութիւնը խաղլեւ խնդումի փոխեց . այն ակմբին մէջ (մարդիկ իրենց թագաւորին օրինաց հետեւող են) իմաստին համեմատ՝ գործեցին : Նոյն դաշտին մէջ վաճառանոցներ կարգեալ արագընթաց մունետինները , Նորկաստանի և Եւրոպից գոյն զգոյն վաճառքները աճուրդի հանելով վաճառքները կը գովեին և գնունները կ'հրապութէին . մրգավաճառք , այս ինչ ամպէրը , և այս ինչ շաբարեղէնը կ'աղաղակէին . խաղամովք և խորովողք , այս ինչ տեսակը և այս ինչ համը կըսէին , նմանապէս հացագործք հրուշակերաբք (նէլլամի) փափաք շարժող ձայններով , և պէսովէս ուրախութեանց նկարագրութեսմբ իրենց վաճառքը կ'գովիէին , եւ այն վաճառատեղւոյն յարգ կընծածայէին :

Հարսանեաց պատիւը և չքեղութիւնը կատարեալ լինելու համար , լեռնագէմ փղէր , բարետեսիլ ձիեր , ոսկեհուռն և ականակուռ թամբերով և կազմածներով , ոսկի և արծաթ սանձերով , նոյն հրապարակին մէջ ճախրատեալ կ'ձեմէին , և վերջապէս սանձարձակ կ'խաղացին . ամեն փափաքող , իւր փափաքին և ամեն սիրահար իւր սիրուհւոյն հասաւ , ոստիկանք և աւաղակք հաւասար , բարձր և խոնարհ միակերպ էր : Յիշեալ հրապարակը ընդլայն և ընդէ երկայն , ՚ի վերուստ և ՚ի ներքուստ , այն օրինակ զարդարուելէն , ակումբները և ժողովատեղիքը՝ այս դրից համեմատ օրոշուելէն յետոյ , ամբարտաւանն Թիմուր արքայական զգեստով և թագաւորական պերճու-

թեամբ ելաւ, և արքունիկ խորանին մէջ պատրաստուած տւրախութեան գահը բաղմեցաւ, եւ նշան տուաւ որ հարանեաց խնձոյքը կազմուի, դմուխուսագոյն սիրոց ներու վրայ արծաթափոյլ մատուռակիք այսր անդր կը նաղէին, բաժակիւրը կ'գառնար և հոգիք կ'զաւարթանաւ յին և կ'հրճուեին . Չզաթայի առիւծները կարմրագոյն գինին խմելով սովորոյն նման թուլացան : Բիրտ եւ խփատ մոզով և Թաթարները յակնթագոյն գինին ըմկելով մոմէն աւելի կակացան, քաղցրանուագ երգեցողը եւ զուար թարար նուագածուք . ժամանակին յարմար իրբեւ բանաստեղծ սոյն ոտանաւորները ներդաշնակութեամբ կերգէին Այսպիսի չքրնաղ և անհամեմատ ակմիտ մէջ խաղաղութիւն և անդորրութիւն ժամանակը բարեխառն սրտերը հանգարան, կեցութիւն աղաւհով, միոք խաղաղ և հանգիստ, թագաւոր արդար, ծառայք բարեկամ, և ամենայն ինչ պատրաստ էր :

Սոյն հանգիստն մէջ, Թիմուրայ հասած մեծութիւնը փառքը և պարծանքը, ոչ նախինն խափֆայիս և ոչ առաջին թագաւորաց պատահած էր, և վերջիններուն եւս պատահիլլ անկարելի է : Վասն զի այս աստիճան փառք և յունգէտս չափազանց ծափք՝ եթէ ուրիշներուն պատահած է, սակայն Թիմուրայ ծառայութեան մէջ սցագան աւստերը և դասերը թագաւորաց կանգնելը զարմանալի դիպուած մի է՝ որ այցայ պատահած չէ . զի նկատուսի և Գամասկօսի սուլթանաց, Հնգկաստանի, Ջինաստանի, Խաղաց, և Ամասի թագաւորաց, Շուռաց՝ և Եւրոպական աէրութեանց, գետպանները՝ ի կարգի սպասաւուրայ ծառայութիւնը յանձե առնելով ուրի կանգնած էին . Եւ առհասարակ անապատի և քաղաքի ժողովուրդք, հակուակ եւ միաքան թշնամի և հաւատարիմ, առանց երկիւղի և կասկածանաց, օրինաց արգելեալ բաներ կերան՝ ամեն մեղք և խայտառակութիւն գործեցին, զի ամբարտաւանն Թիմուր ծառայից և պաշտօնէից ինչ որ հրաման ըրաւ՝ առանց յապաղելոյ կատարեցին և վայրենաբար գործեցին : Ապա թագաւորները մեծամեծները, իշխանները, նախարարները սպասուածները և ականական պատասխան գործեցան և իւրաքանչիւր որ իւր տունը և բնակութիւնը գնաց :

Կը առները ի կոչունա հրաւիրեց . ձեռքէ ձեռք բաժակներ մատոց և իւրաքանչիւրը իւրեւ եղայր և որդի բազմեցուց, և ծանրագին խելայիւք փառաւորեց, յաջ կողմը արտանց, և ձախ կողմը կանանց որոշուած էր, կանայք առանց ողօքելոյ և ամաչելոյ ի միասին գինեց բաժակներ կը բամէին :

Սոյն միջոցիս ընդ միշտ սովորութեան համեմատ, ջութակ, նուագարան, տաւիդ, տամնաղի բամբռան, սրբնագ . Երկեհն և աղաղդ նուագարանաց կը նուագէին և զարմանալի կերպով կերգէին, Թիմուրայ նոր կեանք եւ նոր ուրախութիւն կը պարգեւէին . կատարեալ ուրախութիւնէ տեղին ելաւ, իւր սփեաց և ձերութենէ չք պատկառ յիմուրաբար և կաղորէն ծնկաց և ձեռաց վրայ սկսաւ ինաղալ, և բազմականք կատարելապէս ուրախացան . Երբ Թիմուրայ այս ցանկութիւնէ և տենչանքէն բաժինը առաւ, Ռուուղ պէյն եւս կանանցի պալատը մտաւ և իւր տենչանաց հասաւ, բազմականք ցրուեցան և իւրաքանչիւր որ իւր տունը և բնակութիւնը գնաց :

Իսկ Թիմուր աշխարհիս մէջ բախողի մեծութեան, և յուսացածին համեմատ կատարելութեան ծայրը հասաւ լրացաւ, ընդ նմին կեանքն եւս սկսաւ վերջանալ, և կենաց արեւը գէտ ի յարեւմուտս խոնարհիլ . մարմնաց ակարութիւնը և անդամոց մեղկութիւնը գերեզման կը գուշտէին : Թիմութեան ըստնէն արթնցաւ, իշխանութիւնն և փառաց հրաժարեցաւ, մեծութեան փափաքը և աէրութեան ընդարձակումը թոլուց, եւ սկսաւ ըստ իւր կործեաց գործած մեղքերուն վրայ զղսուց :

ԳԼՈՒԽ ԼԲ.

Թիմուրաց Արմենակի մէջ շնորհ տուած միկիթն : — Վերաստումնն ըստացար մանն : — Մէծ թագուհոյն հիմնած դպրոցն : — Աղիթին խափանումնն : Թիմուրաց Երկրագործութիւնը ծաղկեցնելու վորմ տանելն : — Զինաստանի կողմ արշաւելն : — Զմբն սաստիւթենէ զօրաց կառորումն : և Թիմուրաց շարաչար մանն :

Թիմուր Հնդկաստանի մէջ դարուց և ժամանակաց զարմանալի և չափարհիկ, գմբեթին և շնորհեան տեսքը աչաց պանչելի տեսարան, և մուաց ճարտարութիւնը նորա կանոնը և ձեւակերպութիւնը նկարագրելու անկարող, սպիտակափայլ մարմարինուլ յատակած, զանազան նկարներով և պատկերներով զարդարուած մէծ մկիթ մի տեսած և հաւանած էր, Թիմուր Արմբանակի մէջ անոր նման մկիթ մի շնորհ տալ ձեւնարկեց տեղը որոշելէն յետոյ, հրաման ըրաւ որ քար, փայտ և ինչ որ պէտք է պատրաստէն, և իւր քարեկամերէն ձիլս Մէհմէտ անուն անձը վերատեսուչ նշանակեց : Սոյն դործոյն դործալար, քարահատք և որմնադիբը մէծ ջանիւր և աշխատութեամբ հիմնարկնցին, գմբեթը և դահլիճը քարձրացուցին, սիները և կամարները կանգնեցին, չըր աշտարակով և քարձր գմբեթով մի մկիթը շնորհին եւ հաստատեցին :

Ենութեան վերաբեսուչ ձիլս Մէհմէտ այս մասին աշխատութիւն ընթայեց, և պէտք եղածը պատրաստեց, և կրկարծէր թէ Թիմուրաց բնութեան համաձայն եղաւ, և այնպէս կրյուսար որ իւր ծառայաթիւնը ընդունելի և ջանքը գոհունակութեան արժանի կրվին :

Պատահմամբ՝ նոյն ժամանակին Թիմուր պատերազմի գնացած էր, երբ մկիթին շնորհեամբ աւարտեցաւ, նա պատերազմէն դարձաւ, և նոր մկիթը տեսնելու գնաց, առաջին նուտին մկիթը տեսնելուն պէս, ձիլս Մէհմէտը բռնեց, սաստիկ քարկութեամբ հարուածովը և տանջանօր զայն կտոր կտոր ընել տուաւ, ինչը և ըստացուածը անդաւութեամբ գրաւեց, որդիքը և ման

կունքը դրկանօք թշուառացուց : Թիմուրաց այս մասին ունեցած բարկութեան և սրտմոռութեան բազմաթիւ առմիթներ կըպատճի, մեծը այս էր որ՝ իւր Մէկըէի քէսինը անուն կինը՝ հրաման ըրաւ որ գպրոց մի շնորհի, գործաւորը միաբան հաճութեամբ արժան դատեցին որ, գպրոցին տեղը մկիթին դիմաց լինի, վարպետք և որմնագիրը մէծ ջանիւր յիշեալ գպրոցին շնորհեամբ սկըսան, հիմունքը հաստատուն, պատերը բարձր, և գմբեթը վերամբարձ, և հրամարակը ընդպարձակ շնորհին : Երբ Թիմուր տեսաւ որ գպրոցին գմբեթը և գահիձը՝ մկիթիթէն բարձր, կամարները և սիւները մկիթիթէն ամուր է, սաստիկ հապարտութենէ և ամբարտաւանութենէ ըր կարաց տանէլ, և յիշեալ վերատեսուչը չարտչար տանջանօր պավլ ապանեց : Յիշեալ գէպիքը համաստակի որատմուածէ, մանքուման պատմութիւնն եւս Աստուծով՝ ի մօսոց կը գրուի :

Այս մկիթը իւր տիրոջ բեռնառութեած ծանր եւ գժուարագառնալի մեզքելուն պէս, գմբեթին և տանիւքին վրայ դրուած մեծամեծ քարերուն և ծանր փայտերուն պատերը չկարաց տոկալ, ամենէն յառաջ փարբ շարմէ մի կամարները գահիձը եւ գմբեթը ձեզբուելէ ազատ չին, Թիմուր՝ զայն նոր ՚ի նոր շնորհ և նորուել տուաւ, սակայն քանի մի կոտրած փայտերը և ծուռ դըրուած քարերը անվնասակար վարկանելով՝ տեղը թողարկ, և հրաման ըրաւ որ այն երկիւղալի և վասնգաւոր տեղը ուրբաթ աւուր աղօթքի պարտաւորութիւնը կատարեն, հրամանին համեմատ կը կատարուէր : Զինի մահուան Թիմուրաց ծուռ դրուած քարերէն և կոտրած գերաններէն ունիք շարժելէն ազատ չին, իսլամ ժողովուրդը միշտ մեհանգիստ և զգուշութեամբ աղօթքին կը վճարէին, պատահմամբ անդամն մի յիշեալ մկիթը երբ խուռն բաղմութեամբ և ամբօփիւ լցուն էր, ձեղանէն կտոր մի քար ինկաւ, ժողովրդոց միաբր առաջին երկիւղիւ շփոթեցաւ, աղօթքը թէրի ձգելով ժողովուրդ իմամ եւ կրօնապետ փախան, և պարտաւորութիւնը թէրի թուլով ցրուեցան, յետոյ երբ գործը ստուգեցին՝ վերատին ետ դարձան և

աղօթքնին կուտարեցին : Նախագրեալ Ալլահ ասատը՝ ոք աղնիւ մարդ մի էր, յիշեալ մզիթին պատմութիւնը ընեւ լով յայտարարեց, պէտք է այսուհետեւ այս մզիթը առանց ինդրուածքի աղօթատուն, և երկիւզպի աղօթարան անուանել :

Քաջափրտն Թիմուր՝ մինչդեռ Յունաց աշխարհը կ'աւարեր և կը յափշտակէր՝ արեւելեան կողմերը նուա ձեւ իւր բանաւոր մասց մեծ հոգ և արտմութիւն եղած էր . նոյն սահմանը Ալլահարայ բերդին պահապան Ալլահ տատին նամակ խրկեց եւ այն կողմանց որսիառութիւնը հարցուց, եւ նորա ընդարձակ բանիւք դրած նամակին ուղածին պէս տեղեկութիւն ստացու : Դարձեալ այն կողմանց մեծամեծներէն՝ Պլոտի պէջին, Թանկրի, և խոճաց Խիբարին հետաքանի մի քաջ գործաւորներ և գունդ մի աշխի զինուարներ ընկերացնելով՝ պատուիրեց որ Ալլահ տատին համեմին և իւր կամաց և որոշման համեմատ գործեն:

Ալլահարայէն տասը օմեւան հեռի Մողոլի իշխանութեան տակ՝ Պաշ համզայ անուն բերդին վրայ Զալաթայք և Մողոլը կուռելով երբեմն սոքա և երբեմն նոքա կը յափշտակէին . այս պատճառաւ բերդը աւերակ, այդի ները և պարտէցները ապականած և անպատ եղած էր : Թիմուր զայն Զինաստանու կողմէն անացող զօրաց հանդստարան ընելու մաօք, պատուիրեց որ նորոգեն և շինեն : Նոքա իրենց ստաշտօնին համեմատ ՀՕՎ (1404) թուին այն կողմէ գնացին և յիշեալ տեղը բեռները իջուցանելով նըստան . և մինչեռ մեծ հոգածութեամբ և ջանիւք յիշեալ բերդը նոր ՚ի նորոյ շինելու և նորոգելու վրայ էին, գարձեալ Թիմուրայ կողմէն նամակ և պատվամաւոր եկաւ, յորում կը պատուիրէր որ, շինութիւնը թողուն և ետ դառնան, և այնուհետեւ սկրին դիւղեր և ապարակներ շինել, պարտէցներ և այդիներ անկել : Նախարարք՝ իշխանը, ցեղապետք, զօրք և զօրապետք, և հապատակք, իւրաքանչիւր ոք սկսաւ գուն գործել իւր տեղը շինել և յարդարել : Նմանապէս սաստիկ պատուէր եղած էր, որ Ալմրդանտի սահմանէն մինչեւ Ալլահարայի ծայրը, բոլոր գիւղացիք և քաղաքացիք, իմաստուն և տգէտ, ծառայ և

աէր՝ գործ և վաստակ թողուն՝ դրամ վառնեն, բանիւ և արդեսմիք երկրագործութեան և մշակութեան պարասպին, և առանց զանցառութեան եւ դանդաղելց նոյն գործը յառաջ տանելու աշխատին, և իւրաքանչիւր ոք իւր ագդին և ցեղին մէջ սոյն օրինակ թող աղաղակէ, Մարդ ոք էմիէ իւր աղօթքը անգամ վճարելու ետ մնայ, այլ երկրագործութենէ երբէք երբէք ետ ըլ մնայ :: Այսպիսի սաստիկ պատուէրներով նամակը լցուց : Թիմուրայ հըրաւմանին համեմատ բերդին շինութիւնը ետ ձգուեցաւ, և զօրքերը գնացին երկրագործութեան պարապեցան :

Թիմուր երբ ըստ իւր կամաց և հաճութեան երերագործութիւնը ծաղիեցուց տէրութիւնը և երիթը բարեկարգեց, իւր մշտնչենաւոր սովորութեան համեմատ՝ շրջականները յարձակելու, բաղաբաց եւ աշխարհիս չորս կողմանց տիրելու համար հրովարտակներ հանեց, յորում կը լուսատուիրէր, չորս տարեկան պատրաստութեամբ եւ պաշտօք՝ Զինաց աշխարհը արշաւելու համար՝ կազմ եւ պատրաստ փութանակի բանակատեղին երագեն դան : Թոշակաւորը և ցեղազարեաք՝ ՚ի մից մինչեւ ցհաղար, եւ ՚ի հաղարէ մինչեւ ցմի, իւրաքանչիւր ոք կանխագցն իւրենց տեղէն չուեցին և որոշեալ բանակատեղին եկան և ժողովեցան :

Նոյն ժամանակին անձրեւ զօրաց առաջնորդ աշխանցին եղանակը՝ սեւագունդ ձմեռ բանակին գալստենէ լուր կուտար . այս անգամ ուրիշ անգամի չէր նմանիր . այնպէս զարհութելի կերպով պատմեցին թէ՝ այս ահագին տագինապը և սաստիկ ցուրացը ոսք և ձեռք կը չորացնէ, քիթ և ականջ կը թափէ : Թիմուր երբ ցուրաց օդէն անձրեւաց գալրւստը և աշխանցին հողմերէն ձմրան ժամանումը գուշակեց, հրաման ըրաւ որ զօրքերը վրաններ և խորաններ, կապայ և ձմրան հագուստներ պատրաստեն . այս քանս բռւական ըստեպեց եւ մարդկանց խօսքերուն կարեւորաթիւն ըստուաւ և իւր արշաւանքը ետ ըլթուցոց . զօրքերն եւաս իրար մսիթարելով կ'ըսէին, անձրեւին և ձմրան սաստիկ թեան տոկալ խաղաղութիւն է, զգեստով և կրակով դայն դարմանիւը կարելի է :

Յետ այնորիկ զօրաց բազմութիւնը՝ նախարարք եւ իշխանք ուղեւորութեան կազմեցան և պատրաստեցան։ Թիմուրայ սեփհական աղխամաղխը բառնալու համար հինգ հարիւր սայլ մատուցին Յիշեալ թուականի թէճէպ ամսոյն՝ չուելու թմբկաց ձայնը երկինք և երկիր կը դպրէր և զօրաց տագնապը և խուճապութը վերին յարութեան աւուր օրինակ էր։ Պատահմամբ ճամբայ ելած օրերնին՝ առաւոտուն այնպէս սասափի ցուրտ մի պատահեցաւ, որ հագուստ ունեցողը եւ չունեցողը միակերպ հաւասարեցան։ և մինչդեռ շարժելու անդամ կարողութիւն չունէին՝ դարձեալ զիարդ և իցէ ինալով ելալով նպատակ եդեալ ճանապարհը գնացին։ ուղեւորութիւնը Ճիշուն գետը հասաւ, գետը սառած էր։ Թիմուր նոյն հետայն առանց յապաղեց տառուցին վրայէն ճիմավարեց անցաւ, և զօրաց բազմութիւնը անոր հետեւելով գետը անցան։ Նոյն պահուն անձրեւաց սաստկութիւնը յորդեց, խելքերնին եւ մոքերնին ցնորեցաւ, և օդոյն խստութիւնը ձեռքերնին եւ ոտքերնին սառեցոց, և շատերը անպիտանցեալ մեռան։ Թիմուր դարձեալ իւր ճանապարհէն ետ չի մնաց, և իւր խղճալիներուն չի գթաց, և ճանապարհորդութեան մէջ երբէք պակասութիւն ցցց չոտւաւ։ Վերջապէս այն ցուրտ օդը և ինատ հողմը որուն որ պատահեցաւ, չորացուց և ցամաքեցուց, աղքատին և ընչեղին վիճակը մի օրինակ, տիրոջ և ծառային կեցութիւնը հաւասար էր։ Համբերութիւնը չը մնաց, զրօսանք և զըւարձութիւնը կատարելապէս խափանեցան։ Մինչդեռ այս պժդայի ճախորդութեանէ Թիմուրայ զօբքերէն մէծ բազմութիւն կորսուած էր, և շատերուն ձեռքերը և ոտքերը քիմերը և ականջները ինալով խեղ անդամ եղած էին, դարձեալ անօրէն Թիմուր մարդասիրութիւնը ըստաւ, և իւր ճամբորդութենէ քրիչատեցաւ։

Թիմուր Սըմբղանտէն ըմեկնած, Ալլահ տատին նամակ խրկեց՝ որ յառաջագոյն Աշպարայի բերդին բերդապահն էր, և սոյն օրինակ խստութիւն պարունակող խօսքեր գըրեց, այն կողմերը դալատեան համար՝ իւր ստացուածքէն

պարէն և պաշար, ուտելիք և գրաստ պատրաստէ։ միայն գիշեր մի նստելու համար արքունի խոհանոցին հարիւր ուղտի բեռ ալիւր պատրաստէ։ ծանցյ նա և թէ մէկ գիշերէն աւելի չպատահի նստիմ։ Սյն օրինակ պահանջմունքներէն Ալլահ տատի սրան ուրախութիւնը խոռվեցաւ, և բախտին վճիտ հայելին փոշտեցաւ, վերատեսուչ կարգուած գործերէն բարկութեան հատ և խստութեան նըշաններ գուշակեց։ Մինչդեռ բոլոր ջրերը սառած և ազորիք բարձենելը անկարեի էր։ դարձեալ հարստութիւնը և ջանքը ի գործ դրաւ, մշակներ և գործաւորներ ժողովիներ հանեց, սառուցեալ գետերը խորտակել ատուաւ և իւր պէտքը հոգալու չափ ջրեր գնացուց։ և երբ սակաւ ինչ իւր պէտքը հոգաց, օդոյն խստութեանէ դարձեալ ջրերը սառեցան և նպատութարեցաւ։ Ալլահ տատ լաւ դիմէր որ մշակները եւ գործաւորները տաղտկացած և տկարացած են, սակայն դարձեալ ջանաց իւր կամքը յառաջ տանել, մինչդեռ այս տագնապի մէջ էր, ահա վերատին Թիմուրայ կողմէն խոստութեամբ գրուած նամակ մի եւս հասաւ, որ յիշեալ գործոյն գործադրութիւնը կը փաւթացնէր։ Ալլահ տատ գուշակեց որ այս աստիճան անտանելի առաջարկութեամբ հարկադրութիւնը, իւր անձին կորսուեան, լայն և երկայն ցաւոց և տառապանաց առաջնորդ է։

Յառաջագոյն անօրէն Թիմուրայ բերիսյէն և Դամսկոսէն յափշտակած ժողովրդոց ընչից և ստացուածոց և Աստուծոց քաղաքաց պարենից և պաշարաց մեղքերը ոտքի ելան, իմայիր էր նա և որ թշնամեաց և հակառակորդաց մատնութեամբ Թիմուր իրմէ վշտացեր է։ Եւ բաց յայսմանէ յառաջագոյն նոր ի նորս շինել տուած միկիթիւնն վերատեսուչ ձիւու Մէհէմմէտին ըրած անիրաւութիւնը ընչից յափշտակութիւնը որդւոց եւ ընտանեաց գերի վարին օրինակ առնելով գիշեր և ցերեկ անհանգիստ, որդւոց և ընտանեաց վերջին հրաժարականը տըւած, ընչից և ստացուածոց յուսահատած էր։ Թիմուր Աշղարայէն տապ օթեւան հեռի տեղմի իջաւ, և ծո-

մաղահութեան ամիսը քաղաքները առանները և գիւղերը
մտնալով՝ ճանապարհները փափկուեցաւ, և երթեւեկու
թիւնը խափանեցաւ:

Յիշեալ ամբարտաւանը՝ օթեւանները և իջեւանները
կարեց և նախար կազուած տեղը խորանները կանգնելով
բանակեցաւ. ինչպէս որ արտաքսուած ծանր հագուստ
ներով վնաքը անձեւաց վեաններէն ապահով կը կարծէր.
նոյնպէս ՚ինեքքուած առողջ վնակ կերպէր, մինչեւ իւր
կենաց վերջը՝ ըրած զրկանաց և անօրէնութեանց փոխա-
րէն՝ զազրակի աղտեղութեանց և պատժոց պրժանի եղաւ.
որպէս թէ՛ նաչպէս որ աշխարհիս մէջ դաժան էր, յաւի-
տենսկանութեան եւս մեղօք եւ դատապարտութեամբ
համելու համար՝ տէր մի արացէ, ծայրայեղ չարութե-
նէ և սատանացի թելագրութենէ օգաակար գեղերէ՝ զօ-
քաւոր և ջերմացուցիչ արմատներէ՝ ոգելից ըմպելիներ ձը-
գել տալով՝ ուտելու և ըմպելու զրադեցաւ, զօրաց արդի
միջակը անօրինելու և ուղեւորութեան պէտքերը հոգա-
լու փոյթ չ'տարաւ, այնպէս զուարթմացաւ ՚ի գինաց, որ
երկինք և երկիր աչքին միակերպ հաւասար կ'երեւար:
Քախդին և ճակատագրին դատակնալ, ըստ կարծեաց
առողջութիւն պահպանող ըմպելիները, տրտութեան
եւ սարշանաց պատճառ, և իբրեւ թունաւոր բաժակ՝
կնքեալ մահուան առիմջ վնելով թոքերուն ներգործեց,
և մարմնցն կազմուածքը խաթարեալ վլուանդէց: Բժիշկ
ներ կացեց և իւր ցաւերը յայտնելով դեղ ու վեց, բժիշկը
միաբան հաւանութեամբ ջերմութեանը համար որովայ-
նի և լանջաց վկայ սառուցի կտորներ դրին, որքան որ աշ-
խատեցան ջերմութիւնը փարատել և առողջութիւնը ետ
դարձնել, օգուտ մի չ'տեսան, և ողքան որ բժշկականու-
թեան պահանջմանց համեմատ, դեղեր բաղադրութիւն-
ներ և պէտպէս ընդեղէններ պատրաստելով տուին, գար-
ձեալ շահ մի չ'տեսան. երբ սասցդ հաստատուեցաւ որ
բժիշկները տկարացան, ինքն եւս մահուան ճանապարհը
ձեռք առաւ և արիւն փախեց, բխրաւոր զջմամբ և կա-
րուանօք սիրով խոր խոցուելով հ. Վ. (1404) թուին բա-
մաղան ամսոց տապն և եօթին ըրեքշաբթի օրը անդարձ

կարաւանին ուղելից եղաւ, և գէտ ՚ի տանջանաց և հա-
տուցման տունը առաջն քայլափսիվը առաւ: Աորա⁽¹⁾ մա-
հուամբը աշխարհին բոլոր մարդկանց աչքերը լուսաւորե-
ցան և նոցա տիսուր կերպարանքը նորափթիմ ծաղկեալ
զուարթացան, փառու և գոհութիւնն մատուցին . . . *

Յառաջագոյն Պաշ համզա բերգին շնութեան վերակա-
ցու եղաղ նախարարներէն, Աթէտակեանի իշխան Եմիր
Սայիտ՝ Ալլահ տատին հետ վաղեմի բարեկամութիւն և
մահերմական յարաբերութիւն ունէր՝ և Թիմուրայ բանա-
կին էր, արիւնահեղ Թիմուրայ չարաչար սատակումը եւ
թաղումը գրեց, և Ալլահ տատին այս աւետիսը տուաւ.
յիշեալ թուականին թամացն ամսոց քսան և չորսին ու-
րախառիթ նամակը կերեւ աւետաբեր աղաւնի հասաւ,
և նորա իմաստը համկրցաւ: Ալլահ աստ երբ պատահած
գէպերէն տեղեկութիւն ստոցաւ, գրեթէ կեանքը նո-
րոգեցաւ, և մինչդեռ յուսոց նաւը արտմութեան խորե-
ցուն մատնուած էր, փրկութեան նաւահանգիստը խա-
րսինց, և մինչդեռ ապշութեան անապատին մէջ կ'տագ-
նապէր, քաղաքական զուարձութեամբ հանգարտ իւր
գահը բազմեցաւ: Աորա որպիսութիւնը ընդարձակ բա-
նիւր Ասուածում ՚ի մօտաց կը պատմենք:

ԳԼՈՒԽ Լ. Գ.

Սուլթան Խալիլի գահակալութիւն: — Ալմղամատ քաղաքը հանձնեն: — Թի-
մուրայ գիտակը հետո բերեն, և նախա թագումն: — Գերեզմանին զարդա-
րներն: — Նախարարաց սինոց յանառութիւնն:

Երբ Թիմուր արքայական փառաւոր գահէն անշուր
տախտակամած դադարը գլորեցաւ, ամենեցուն երեսը
ինդաց. և աշխարհիս աչքերը լուսաւորեցաւ. զօրաց մէջ
Եմիր Ինչահի սրդի, որդւոյ Թիմուրայ սուլթան Խալիլէն

(1) Թ. Վ. Թիմուրայ մահը սիալմամբ ՚ի Ալմղամատ գնէ. ինչպէս կը
բառանել և պիղծ թանուր երթեալ յաշխարհն իւր սաստիցաւ
թիւն 70. Ինչպէս պատմութեան ընթացքէն յայսնի կերեւի. Թիմուր Զի-
նաստին արշաւելու ատեն ճանապարհին մեռաւ:

սանձը նորա ձեռքը յանձներ էր, սակայն մեռած ժամանակը իւր հոգւցն զբաղելրվ վարաց վերստին նոր թագաւոր պատրաստել և տէրութեան գործերը յանձնել և նորոգել: Միւս որդիքը և թոռները հէռաւոր տեղեր կը գտնուեցաւ: Սորա Թիմուրաց մահուան դէպքը ծածկեալ պահեցին, և կամեցան որ ազգաց և ժաղովրդոց ըստնուցաւ: Սորա Թիմուրաց մահուան դէպքը ծածկեալ պահեցին, և կամեցան որ ազգաց և ժաղովրդոց ըստնուցաւ: Սորա Թիմուրաց մահուան դէպքը ծածկեալ պահեցին, և կամեցան որ ազգաց և ժաղովրդոց ըստնուցաւ:

Այս նոր վայելչութեամբ աշխարհ և ամենայն մարդիկ ուրախացան, և այս մեծ խնդութեամբ խանգարեալ մաքերը շնուցան և հաստատեցան, մինչդեռ երկրիս երեսը գժոյիք էր, արքայութիւն գարձաւ, և ազտաղսուեցանիսին էր, մարդագետին փոխուեցաւ: յիշեալ թագաւորը զօրաց և զօրապետաց նախարարաց և քաղաքի իշխանաց վրայ իւր կամաց համեմատ իշխանութիւնը՝ ի գործ դրաւ:

Ազգ-ք և ազնիք, Արքացացւոց և Պարսից աշխարհները, նորա հրամանաց և արգելման յարդութեամբ պատասխանեցին: և ինքն եւս ամենեցուն զուարիթ երնացոց տուաւ և մարդագրութեամբ վարուեցաւ, գանձարանները բացաւ և հարատութիւնը քննեց, և ընդհանրապէս տուրքը և պարգեւը պատիւը եւ առատաձեռնութիւնը բաղմացուց: վերէն ՚ի վար իշխանիք և թագաւորը, գաւառապետը և նախարարը ամենայն յօժարութեամբ հնազանդեցան, իրենց որտին մէջ նախանձութիւն եւ սխակալութիւն ունեցովները չկարացին ընդդէմ յառնել և ասպառամբիլ: Յիշեալ թագաւորը Յովելսիաց և Մէհէմմէտի բնաւորութիւնը, Հայք Աբրահամ հեղութիւնը, և Խամոյելի հաւատարմութիւնը ունէր: Կառավարութեան միջոցները ձեռք առած՝ ներքին և արտաքինը հաւատարմութեամբ և ուղղութեամբ հա-

ուրիշ, և Թումարայ քուեր որդի սուլթան Հիւսէինին զատ, (որ յառաջագոյն Եգիպտոսի թագաւոր Մէլիք նասրին փախճեր, և ապա Թիմուրաց վերադարձեր էր), մարդ ըստ գտնուեցաւ: Սորա Թիմուրաց մահուան դէպքը ծածկեալ պահեցին, և կամեցան որ ազգաց և ժաղովրդոց ըստնուցաւ: Սորա Թիմուրաց մահուան դէպքը ծածկեալ պահեցին, և կամեցան որ ազգաց և ժաղովրդոց ըստնուցաւ: Սորա Թիմուրաց մահուան դէպքը ծածկեալ պահեցին, և կամեցան որ ազգաց և ժաղովրդոց ըստնուցաւ: Սորա Թիմուրաց մահուան դէպքը ծածկեալ պահեցին, և կամեցան որ ազգաց և ժաղովրդոց ըստնուցաւ: Սորա Թիմուրաց մահուան դէպքը ծածկեալ պահեցին, և կամեցան որ ազգաց և ժաղովրդոց ըստնուցաւ:

Զինի մահուան Թիմուրաց Գարա Եռասուֆ Թիւբբամինին էմիր ինշահը սպանեց և Ատրպատական աշխարհը գրաւեց, էմիր ինշահի միւս որդին էմիր էօմէրն, որ Ֆարսիստանի և նորա նորհանգաց իշխանն էր: յիշեալ Ապու Պէրիլը զնաց էօմէրը սպանեց: և ինքը Գիրմանի իշխան Այսիկիւլայի ձեռօր սպանուեցաւ: Սցն միջոցիս սոցա մարտը և պատերազմը պատմութեանց մէջ երկարուէն գրուած լինելուն, վերստին իրինել պատշաճ չ'գտանելով համառօտեցինք:

Թիմուրաց մահուան առեն Շահ րուխ որդին Հերածի և Խորասանու աշխարհն էր: Ասկէ յառաջ գրուածին համեմատ, Թիմուր իւր կենդանութեան ծիհանիլիր որդւոյն որդին սուլթան Մէհէմմէտը գահամառանգ ընարած էր: բախտը և ճակատագիրը ձեռնտու ըստնելով, ասկէ յառաջ գրուածին համեմատ Յունաց աշխարհը Ագ չհիր քաղաքը մեռած էր: Փիր Մէհէմմէտ եղբայրը գահամառանգ ընարեր, և իրմէ վերջը կառավարութեան

ւասարած էր բովանդակ աշխարհս նորա բարեկամութեան և մուերմութեան ցանկացող, դաշնաւորը և ուխւտագիրք նորա ապստամբութենէ մեկուսի էին:

Բովանաւորն Թիմուսը երբյաւիտենական անդարձ ճառասպարհը հետեւեցաւ, սուլթանն Խալիլ նորա մարմինը մնառուի մէջ ամփոփելով բանակին հետ Արմբանստ գընաց: Նոյն բերկրառիթ ժամանակին անձրեւաց սաստեկութիւնը վերացաւ, և ուրախութեան աւետառու երջանիկ գարունը յաջորդեց: Սուլթան Խալիլ իմացաւ որ Թիմուրայ զօրաց զօրաւոր նախարարաց և փառաւոր իշխանաց և նորա տէրութեան պաշտօնէից մէջն ումանկայու յաջորդաթեան յորդ ըստալով, զինքը փոքր և Թիմուրայ տէրութիւնը մէծ կը համարէին, երբ և աւեսաւ որ ումանց միաբը տրտութենէ միամիտ չէ, եւ մանաւանդիւր հօր եղթօր որդիքը այս խօսակցութենէ չ'պիտի գառ գարին, ուստի ամեն ցաւոց դեղ, ամեն երկիւղի զիջում, և ամեն խօսքի բռւն պատասխան պատրաստեց: Բացյառ մանէ ձմբան սոստիւթիւնը ամեն մէկ հակառակորդը փշած և ամէն ընդդիմակաց տկարացուցած էր: Սուլթան Խալիլ հնազանդութենէ ուրիշ կենդանութեան գարման ըստալով զօրաց մէծը և փոքրը կատարեալ հպատակութեամբ և հնազանդութեամբ նորա հետ ՚ի միասին նպատակ եղեալ տեղը դիմեալ գնացին, ստիայն տակաւին ումանց օրուն մէջ ծածկեալ թշնամութիւն կար:

Վախ Պիրինտիգ անուն նենգտումիտ Էմիր մի՛ իրբեռ բարեկամ թագաւորին ներկայացաւ եւ այսպէս սկսաւ խօսիլ, եթէ ձեր վեհափառութեան բարձր կամքը կը բարեհածի՛ նուաստ յառաջ երթամ և ձեր մայրաքաղաքը գալուն սիւտքերը առաստապէս հոգամ, թէ պաշարը և թէ ինչ որ կարեւորնէ պատրաստեմ ըսելով հրաման խնդրեց, թագաւորը հրաման ըրաւ, նա անթխապէս ըստւեց և բանակին մեկնեցաւ, և փութաց մօքին մէջ եւ զաները գործադրել, հապ ճեղ տուեալ ընդարձակ լուսները և դաշտերը անցաւ և Արհուն գետը հասաւ, և երբ գետայն վրայ պատրաստուած կամուրջէն անցաւ, կամ մաւրջը խորտակեց, և ապստամբութեան գրոշը պարզեց:

սուլթան Խալիլի հնազանդութեան լուծը խորտակելը հրատարակեց, և Սլմիղանսի կողմը օդաչու երիվարին ունեցը դարձուց:

Անմիջապէս սուլթան Խալիլն հւանելը եկաւ եւ վանները կանգնելով բանակեցաւ, կամուրջին խորտակումը տեսաւ: և Պիրինտիգին ապստամբիլը խմացաւ: ասկայն կատարեալ մեծութենէ և վեհանձնութենէ բարկութեան հուրը ըստ բորբոքելով անհոգութեան տուաւ, և առանց վհանելու դարձեալ նուախներ պատրաստել առլով կամուրջը կանգնեց և անցաւ: Ա. Ա. յայնից Արհուն գետուն կամաց կամուրջը հետուատ անուն Էմիրը սուլթան Հիւսէ յինի յարած էր, և այն կողմանց փառաւոր իշխաններէն կհամարուելը նորա պրակէն սիսակալութիւնը և վնասակարութիւնը հետացած վարուեցաւ, և այն կողմանց իշխանութիւնը և երկիրները նորա անուան գրեց և պատիւը բարձրացաւց, և մոքին մէջ եղածները ծածկելով Արմբանտ գետց:

Զգաստ թագաւորը օմեւանիները և ճանապարհը կարելով ուրախութեամբ Արմբանտ հասաւ, կուսակալը նախարաբը, մոշակաւորը աւագանին գիտնականիք եւ իշխանք գաւառուց, սեւազգեաց և սկաւոր փութացին գիմանորել և միամիջարութեան օրէնքը յարգել եւ Թիմուրայ գիտակը մեծարել: Առաջնի հանդիպման ձեռք պատկնելու պաշտօնը կատարելէն յետոյ, առքունի գահը եւ թագը օրհնութեամբ ընտհաւորեցին, թագաւորական ընծաններ նուերներ և ազնիւ պատարագներ մատուցին, և իւրաքանչյուր ոք հանդիպման արժանի եղաւ: Սուլթան Խալիլ թագաւորութեան և իշխանութեան վայելուց արքայական արխատըներով փոխարինեց, և մարզակիրութեամբ վարուելով փառաւորեց, և իւրաքանչյուր իւր արժանաւորութեան համեմատ պատուեց: Այն միջացի՝ Էմիր Պիրինտիգ եւս ձեռք պատկնելու հանգիտեցաւ, թագաւորին կողմէն կամուրջին գործը չարցուեցաւ, և տգիտութեան տալով ժողովը վերջացաւց:

Յէտ այնպիսի երբ թագաւորութեան գահն վրայ ուա-

ըլլ ամրացուց, հրամայելու եւ արգիլելու գործոց մէջ հաստատուեցաւ, զայն սպանել տուաւ, տունը և բնակութիւնը շանց ժառանգել տալով՝ ընտանիքը եւ գերդաստանը աւերեց և ապահանեց, և ամենեցուն առակ նշաւակի ըրաւ:

Առվելթան Խալիլ երբ Սլովզանտ հասաւ, փոյթ տարաւ իւր նախահօր գերեզման պատրաստել և զայն թաղել: Թիմուրայ դիակը ոսկիազ սնտուկով ամենայն հանդերձանք գլխաց վերայ բարձեալ, և ինքը հետիւտս մօտէն կ'երթար, թագաւորը և աւագանին սեւ հագած և սգոյ օրէնքը կատարելով Ռուհ ապաս կոչուած տեղով սուլթան Մէհէմմէտի յատկացեալ գարոցին մէջ, գարձեալ վախճանեալ սուլթան Մէհէմմէտի գերեզմանը մեծաշուր փառօք թագեցին: Ապա բազմաթիւ Կուրանի գլուխներ կարդացին, սղորմութիւն բաշխեցին, կ'երակուր կ'երուցին, շոքարէ հրուշակ բամնեցին, եւ ողոքութեան օրէնքը պատուեցին:

Այնուհետեւ սկսան գերեզմանը զարդարել, ծանրագին դիպակներով և ոսկենկար վարագործներով պահեցին, ականակապ զէնքեր, պատուական և հազուագիւտ ադամանց ջանքեր և ոսկեզօն կանթեղներ պատերը եւ գմբեթները կախեցին, ներաը և դուրսը աստեղանիշներ սփռուցներով յարդարեցին. ՚ի բազմաց մին՝ կ'պատմեն թէ չըրս հազար սիկլ լիսպայ ոսկի կանթեղ մի կարևուակէս շատ կալուածներ սպասաւորներ վիպասաններ և թոշակաւորներ որոշեցին: Ապա Նիրազեցի վարպետ մի չը տեսնուած եւ չը լոււած բովանդակ պողովասիկէ բաղադրեալ զարմանալի սրնատեկ մի կազմեց և սուլթան Խալիլ ծառայութեան մատոց, որ Թիմուրայ մարմինը նոյն պնտուկին մէջ փոխադրեցաւ:

Գերեզմանը այն կողմի մազովոց մէջ հոշակաւոր շլրիմ և ամենեցուն ուխտատեզի եղաւ, եւ այն աստիճան յարդ պատիւ և մէծարանը տրուեցաւ, որ թագաւորը անդամ անսի անցած ժամանակնին անկեղծ չերմեռանդութեամբ և խոնարհութեամբ կը յարգենին, և թէ ըեւս կը փութացին իրենց երիվորէն վար իջնաւ:

Թիմուր հողին տակ ծածկեցաւ, և սուլթան Խալիլ արքունի գահը ուրախութեամբ բարձրացցաւ, ձմեռը գագարեցաւ եւ գարնան եղանակը բազորասիւք հողմերով աշխարհս փոխարեցաւ. բանաստեղծք և ձարտասանիք թագաւորական ուղերձներով բերանալիք կ'օրհնէին եւ նոր թագաւորը գովութեամբ կ'գրուատէին: Բարեխառն օդով աշխարհս համայն ուրախ և զուարթ, և զուարժալի ժամանակն յորդ անձրեւներով գուռեալ և գոհ, այէս պէտ թուշներ անսատի ծառոց վրայ բարերար թագաւորը կ'օրհնէին և կ'գովիշին, առաւօտեան զեփիւոր նոր թագաւորին գալուեան համար կրնաձեւ գաշտը զիրուխտագոյն ափուցը ափուեր և երկրիս երեսը զանազան ծափեներով զարդարերէ: Ապա զուն գործեց նախարարաց և իշխանաց վիճակը բարեկարգել և հպատակաց կենցաղը ստուգել, և այսպէս կըսէր թէ, նախ մարդկանց սկսուը չը գրաւուիր եթէ ոչ պարգեւօք. և սեփհական ժողովուրդ չը լինիր, եթէ ոչ որօք: Պանձարանաց և գարսնաց գոները բայցաւ, մեծին և փոքրին խմաննցին և աղետին պատուաւորին և անարգին, խուսացին և անմօտին, իրենց արժանաւորութեան համեմատ տուրը տուաւ, գրաբանները և գոգերը պարգեւօք իւ ու չը լեցուց, մեծին և փաքրին միաբը որսաց. Թիմուրայ անարգութեամբ ժողոված խլամաց հարստութիւնը, եւ անիրաւութեամբ յափշասկած թագաւորաց գանձերը, հարկաւոր արոց մատոց. և Թիմուրայ մեզքերը կրող նոչքը՝ բեկեալ արտերը գրաւելու համար բամնեց:

Եմիր Խուտա տատ յայնկցս Սիհուն գետոյ քաղաքաց և Թուրքաստանի իջնանն էր, միաբը գրած չարութիւնները յայտնեց և ելաւ, և սուլթան Խալիլին երես գարձնելով ապատամբութեան դրոշը պարզեց, ամեն ուխտագրուժը երգմնազանցք և խումացցած չարագուղծներ անոր հետեւեցան. նմանապէս Թիմուրայ մերձաւոր և հաւատարիմ և երեւելի նախարարներէն Շէյխ Նուր իստինըն եւս իւր ոխտին գրմեց և ապատամբութեան հու-

ըլ վառելով թնութեան օրէնքները և կանոնները ապա կանեց և Խուտա աստին յարեցաւ : Յետ այնորիկ Շահ մէլիքն ալ սուլթան Խալիլն հաւատարիմ չ'ինելով հաւ կառակութեան ճանապարհը խուտրեցաւ , և Սըմբղան տէն մեկնեալ աճապարանօք Շահ բուխի սպալատը գէմ եղեալ գնաց : Սակայն սուլթան Խալիլ մեկին ալ փոյթ չըրաւ , միայն իւր պարզեւները և շնորհքները հըս եւ համարականութ եղողներուն բաղմացուց . և յամառ մարդիկ ները թողուց :

Ք Ա Մ Ի Խ Ե Լ Պ .

Աշպարացի տէր Ալահ տատի և զօրաց որսկառութիւնն : — Խութեան խոռ կողմէն առ Ալլահ տատ զրոսած նամակն : — Խուտա տատի նամակն : — Ալլահ տատի սուլթան Խալիլն և — Զօրաց Աշպարացին մեկին : — Ալլահ տատի և Խուտա տատի միաբանութիւնն : — Ալլահ տատի գալ և Արմավան Վէջիր լինեն :

Յառաջադրոյն գրուածին համեմատ Մոլով սահմանադրութիւն Աշպարաց բերդին բերդապահ Ալլահ տատ երբ Թիմուրայ մահը սուսուկեց , խիսյն նոյն գիշերը իւր բարձրեկամները կոչեց և նոյս աւետեց որ , Թիմուրայ մահուամբ իւր արտօնութիւնը փարտած է , և սկսաւ նոյս հետ խորհրդակիլ թէ՝ այսուհետեւ ինչ ընթացք բռնել պէտք է , և խաղաղութիւնը ինչ կերպով կ'հաստատի . ամէն մէկը տեսակ մի ընթացք բարի վարկան , և միաբանեցան որ Աշպարացին մեկնին և իրենց բուն հայրենիքը երթան . սրտի մոռք յօժարեցան այն անդունդէն աղատիլ և փրկութեան նաւահանգիստը հասնիլ : Առաւուեան բերդապահութեան սպաշտնին մէջ գտնուող նախարարք և ժողովականութիւնը , Հինատի և Թուրքաց սպարապետները , Անտար զօրապետները և Խրագայ մարդիկները , իրենց օրինաց և սովորութեան համեմատ , միաբանութեամբ այցելութեան ողջունի և խաղաղութեան օրէնքը կատարելու համար Ալլահ տատին ատեանը գնացին , և իւրաքանչւոր իւր պատուց տեղը բաղմեցաւ . առա միջանիկուլ

խորերը աւարասելէն զինի , Ալլահ տատ քանի մը փորչ ձառու ծերունեաց հետ առանձնացաւ՝ Թիմուրայ դէպէ քը պատմեց , և խորհուրդ հարցուց թէ՝ այսուհետեւ ինչ կերպով շարժել պէտք է . ամեն ալ իրեն խոհեմ դատողութեան յանձնեցին , և պատասխանեցին թէ , ձեզ մէ հրաման և մեզմէ ծառայութեան հասուցում : Նա իրենց խոսքերը և գործերը հաստատուն ընելու համար , ամեն նեցուն երդմանը ուխտ և գաշնիք գնել տուաւ : Ի վերջ բանի պարզեւներ խոսանալավ պատաւիրեց որ իշխալ դէպէ ծածուկ մնայ . զանոնիք այս կերպով կապելէն յետոյ , գարձեալ կոչեց և իւր պահանջը այսպէս յայտարարեց , մը ժողովուրդք՝ իմ բարի գիտաւստութիւնս այս է , նուաստ Սըմբղանս երթամ և ձեր վիճակը բարւութելու աշխատիմ , բերդապահութեան պաշտօնէն վերցնեմ և ձեր աեզզ ուրիշ զօրք իրիեմ . եւ այս մասին կերգնում որ ժամ մի անդամ զանցառութիւն և գանդաղութիւն քննեմ , և այս գործը յառաջներու ջանքէն ետ չի մնամ : Արդ բաշութեամբ և գեղեցիկ միաբանութեամբ ջանադիր եկիք գործերը ոտաննել , բերդը եւ ասհմանագլուխը ամրայնել , թշամին վանել և հեռացընել , ձեզմէ այնքան միջոց կուգեմ որ խուճէնս գետք անցնիմ և սուլթան Խալիլն համեմ , եթէ այսքան համ բերքը և գաղարիք , ձեր իւրաքանչերը իւր տենչանաց կ'համարի . Ամենեքեան այս խոսքերուն համարականուցան , և միաբանեցան որ իրեն բացակայութեան ատեն հակառակ բան մի չկագծեն , և ուխտադրութեան գաւազանը ը խորակին . Պրագ զօրաց սպարապետ Էմիր Մանումը տեղապահ լինելու գաշտմբ կառավարութեան պաշտօնին կացուցին , բերդին աշտարակաց և պարսպն պահպանութեան համար արժանաւոր մարդիկներ ընարեցին : Ալլահ տատ Աշպարաց երկար միջոց կենալով բնակութիւն հաստատած էր , բոլոր ինչքը և ստացուածքը՝ որդիքը և ընտանիքը այն կողմերն էին . Պամազան ամսոյ տասն և եօթին ցուրար և շերմանթիւնը բանի տեղ չդնելով բովանդակ հարտութիւնը և շարժական ինչ որ ունիր վերուց , կա

նամքը որդւովք և պարագայիւք Աշպարայէն մեկնեցաւ և փափաքած ճանապարհը դէմ եղեալ զնաց, իշնալով ելալով սառնամանիք ձմրան, որ գժոխոց նմանութիւն ունի, Խուզան խուժ կոչուած աեղք հասաւ:

Մինչդեռ Ալլահ տատ Աշպարայէն մեկնելով Սըմբզան տիկողմ կ'երթար, ճանապարհին սուլթան Խալիֆ կողմէն մարդ և Հրովարտակ եկաւ, յորում կը ծանուցանէր թէ, աշխարհիս պատահարներով և ժամանակիս գարձուածներով ինքը անձամբ տրքունի գահը բազմեր է. և ուխտիք թագաւորաց և մեծամեծաց մտերիմ և հաւատարիմ եղած է, և կ'աւելցնէ թէ փառք բարձրելցն Ասսուծոյ, թագուարական օրէնքը նախնական սովորութեան համեմատ հաստատեցաւ: Կրպատուիրէր որ Աշպարայէն ըսմեկնի, բերդապահութեան պաշտօնէից զօրաց և նախարարաց հետ զոտեղի առնու, և թշնամին վանելու հաստատուն մնայ, եւ միտքը բժշկելով կը հաւասատէր թէ մոտ ժամանակիս նոր զօրք և պահապաններ պիտի խրիւտին և իրենք պիտի փոխութին: Ալլահ տատ եքք նամակը կարդաց և զօրութիւնը հասկաւ, տեղէն շարժելուն զքաց և իւր ընթացից վրայ շուարեցաւ, և մինչդեռ կրտարակուեր թէ ինչ ընթացք բանէ, իմիր Խուտա տատի կողմէն եւս նամակ և մարդ եկաւ. նամակին խմանը զինքը պատուելէն և մեծարելէն յետոյ կը ծանուցանէր որ Աշպարայէն չուէ և աճապարանօք իւր կողմ հասնի: Ալլահ տատ այս խօսքէն ուրախացաւ, և խորհեցաւ որ սուլթան Խալիլ մնապարծ և արտնջող թագաւոր մի է. թէ և Խուտա տատին կողմ երթալ յոց գժուարին ճանապարհը գժուգակի և ճանձրացուցիչ և պէսպէս արգելքներ պակաս չէն, պակայն երկիւղ ընկելով ձիհուն գեալ անցաւ եւ իջեւանները կարելով Խուտա տատին հասաւ, Խուտա տատ նորա գալստեան վրայ ուրախացաւ և բերիլեցաւ. իրենց խուվայոյ և ապականիչ բազուինքը զօրացուցին և միաբանութեամբ Խումէնտ գետը անցաւ եւ Սըմբզանի կողմ ուղեւորեցան հ. Վ (1404) թումն Շապան ամսոյ մէջ յունիարծ Սըմբզանափ իշխանութենէ Պիմբիք կոչեցալ աեղք Թիմուրաց սովորութեան համեմատ աւարեցին և

յափշտակեցին. Երբ սուլթան Խալիլին զգացուցին թէ նորա այս օրինակ չարութեան ճանապարհը խոտորած և յիշեալ տեղը աւարեր և յափշտակեր են, նա երբէք փոյժ չքրաւ. զի անկարելի էր այն ատեն անոնց վրայ երթալ և շանոնք վանել: Մինչդեռ Սըմբզանափ բնակիչը Թիմուրաց հովանաւորութեան տակ կատարեալ ապահով և հանգիստ էին սկիզբը այն աշխարհը չարութիւն յայտնող և խոռ փութիւն յարուցանող Խուտա տատն եղաւ:

Ալլահ տատ Աշպարայի մէջ փոխանորդ գնելով՝ զօրաց և բերդին վիճակին կարգ և օրէնք սահմանելով տղեւորելին յետոյ, Մողոլի իշխանութեան երկիւղիւ, բերդին զօրքերը տագնապեցան եւ ըլ կմնալով հանգարախի միսաբանութիւննին երկպառակութեան փոխուեցաւ. մէկ մասը ուխտազանցութենէ հեռի մուշտը Ալլահ տատին հետ դրած ուխտին և դաշնոց վրայ հաստատուն մնացին. և կ'ըսէին թէ գննէ Ալլահ տատէն լուր մի կամ նամակ մի գալուն սպասենք, և տեմնենք թէ ինչ ընթացքը պիտի բռնէ և բռնչ մնորդնութիւն պիտի ընէ. եթէ նորակամքը մեր կամաց համաձայն լինի՝ խիստ բարի, անոր համեմատ մենք եւս կը շարժինք, եթէ նորա կամքը մեր կամաց համաձայն ըլ լինի, այն ատեն մենք մեր ներկայի կը խորհինք և կը անօրինենք: Եւ ոմանք կը պիտի են թէ բոլորովին Աշպարայէն ելլանք և իւրաքանչիւր ոք տուներ նիս և բնակութիւննիս երթանք. այսպէս սոցա խօսքը և վիճաբանութիւնը կռուի եւ պատերազմի փոխուեցաւ. մինչ զի Խորսոսնու մեծամեծներէն Նիք անուն անձ մի Քուրքաց բռնութիւնէ սպանուեցաւ. և երբ սմանք եւս այս բռն խռովիներուն հետ վրդավելով սկսան փախչիլ, մնացելաց համբերութիւնը հատաւ: Վերջապէս ամեներեան ընտանեօք չուեցին. մեծ և փոքր հետեւակ և հեծեալ առողջ և հիւսնդ ճամբայ ելլան, պաշար ինչը և գրամ և ինչ որ ունեին բեռնաւորեցին և իրենց փափաքած ճանապարհը ուղեւորեցան, իրենց ամսոյ և բնակութեանց մէջ բաց ՚ի գոյն բաներէ և խելագար պառաւէ մի ուրիշ բան չքթովուցին. այս կերպով Ալլահ տատին հասան և պատահած գետքերը պատմեցին: Ալլահ տատ այս մա-

Թին մարդ չը յանդիմանեց, եւ ինքը որ իւր դրած պայմանները դարձաղերը լու փոյթ չէր տարած, Խուռատա տատի արգելքները պատճառ բռնեց եւ չըքմեղս լինելով ինչ շեալ ազդը իւր մօտ պահեց, և յանկարծական դէպքի մի սպասեցին որ Ալմրդանափի կողմէ երթան :

Խուռատա տատ եկաւ Ալմրդանտի կողմերը աւարեց և յափշտակեց և սուլթան Խալիլ թշնամութիւն յայտնեց, և այս մասին Ալլահ տատին հետ միասիրտ և համամիտ լինելով՝ Խուռատա տատ իւր բազում եւ սակաւ գործերը Ալլահ տատին յանձնեց : Սուլթան Խալիլ հպատակներէն ցեղմի Խուռատա տատին դէմ ապստամելով այս կողմի քաղաքները ցրտեցան, Խուռատա տատ երբ միտքը դրաւ և որոշեց որ զանոնք կոտորէ և ջնջէ, Ալլահ տատ արգելք լինելով կեղծ հաշոռութեամբ սցն օրինակ նենգութիւն մի բրաւ : Մեծամեծաց սովորութիւնն է փաքրներուն ներողութիւն և գծութիւնն ընել և ամենեցուն սիրով գրաւել, մանաւանդ նորա՝ որք մօտադիր են անկախ լինիլ և ամենեցուն տիրել պէտք է որ նախ ժողովրդոց հետ քաղարութեամբ վարուին, զանոնք սպանելէն ջնջելէն ինչ օգուտ, և կամ թէ իրենց տեարքը մեզի հետ բարեկամութիւն ունին, իցէ թէ այսուհետեւ ունանք եւս սուլթան Խալիլէն երես դարձնեն . և թէ իրենց ներկային վրայ խոր հին և տարակուախն, հաւանական է որ Թուրքատատնի աշխարհն իմափարբն և այս կազմերը գան, ձեզ օգնական և ձեռնոտու լինին . իսկ եթէ ասոնք սպանեմք, անկարելի է որ նորա այս կողմը հակին և սէր տան, վասն զի սոցա տեարքը և բարեկամերը սուլթան Խալիլ տէրութեան պաշտօնեայներն են, ձեր ըրած բարութենէ ուրախանով զձեղ կը որիքն : Այսպիսի խրամաներով Խուռատատար իւր ճանապարհէն ետ գարձուց, ապա լիշեալ ցեղին պարգելները առատացուց և պատիւը բարձրացուց, եւ նոյս խորտակուած զօրութիւն կազդուրեց : Ասկէ յառաջ գրուած եւ ճանապարհներին համեմատ, մինչդեռ Ալլահ տատ Խուռատա տատին հետ միամատ, մինչդեռ Ալմրդանտի կողմէն Ալլահ տատին ուրախութեամբ գրուած նամակի մի եկու, յորում կը պատուիրէր թէ չա-

նաս Խուռատա տատի սիրով գրաւել և նախնի բարեկամութեան պատիւ գնել, և կարելի եղածին չափ որ և իցէ եղանակաւ փոյթ տանիս Խուռատա տատին միաքը թժշկել, և նորա բարեկամութեան հուրը շիջուցանել, անցածը չը յիշեցու խօսքին խմառն եւս պատմես, ինչ որ կը կամի երաշխաւոր, և ինչ որ կը կը յանձնառու եղիր, հաւատար մութեան և բարեկամութեան օրէնքը նորոգէ և հաստատէ : Ալլահ տատ երբ նամակին իմաստը հասկցաւ, գնաց Խուռատա տատին գործը յայտնեց, և առանց յապազերու ջանաց մէջերնին հաշտութիւն ձգել :

Պատմուածին համեմատ սուլթան Խալիլ և Խուռատա տատի թշնամութեան պատճառը այս էր որ, սուլթան Խալիլ Թիմուրայ հրամանաւ Խուռատա տատին կրթութեան յանձնուած էր, յիշեալը վատ քնաւորութեան և արհամարհ վարմանց տէր լինելով, սուլթան Խալիլը չարշարելէ չէր գագարիր, իսկ սուլթան Խալիլ բնութեամբ անին և բնաւորութեամբ բարեբարայ անձ մի գոլավ, չը կարաց համերերել . մինչ զի ջանացեր էր թօննաւոր բաժակաւ զայն սպանել, որ Խուռատա տատ իմանալու գեղօրինէք ամստը փարատից : Այսպիսի քանիւ և գործով մէջ Շերնին եղած վաղեմի ատելութիւնը պաւերիմ թշնամութեան տախիթ եղաւ : Երբ սուլթան Խալիլ նամակը Ալլահ տատին հաշտաւ, Խուռատա տատին սիրով ապահովենելու համար սասարիկ երգումներ ըրաւ, և կուրամին վրայ ձեռք գրնելով կանոնց արձակման, ընչեց զրկուելուն, և գերեաց աղաստուելուն վրայ երգում ըրաւ . եթէ Ալմրդանտ երթայ, Խուռատա տատին հետ ունեցած ուխար չաւրելով և նորա հնազանդութենէ չհեռանալով, սուլթան Խալիլն հետ հաշեցնէ, եւ Թիմուրայ կանանց մէկը իրեն կին առնէ, և այս մասին կատարեալ ջանիւք աշխատի, և եթէ ատելութիւնը վերցնելու և խոռվութիւնը բառնալու տկարանայ՝ գարձեալ Խուռատա տատի հաւատարմութենէ և օղնականութենէ չհեռանայ : Այսպիսի ողոքանօք Խուռատա տատը մեղմացուց միաքը որաց և հրաման ուռաւ :

Այս ատեն իրենց բանակը Ահրուն դէտին եղերը,

և Շահ բուխն եւս այն մօտերն էր, իսկըն նոյն գիշերը բուր կուսակիցները եւ իւր պարագաները պատրաստեց, և Շահ բուխի բանակը եղած ընկերաց լուր տուաւ, եւ կատարեալ զգուշութեամբ շուեց և Սըմրզանտի կողմ գընոց: Ալլահ տատ ձիհուն գետէն անցաւ, յասեղէ մինչ շեւ ցալզանի բան մի ջմովուց բեռնաւորեց, վինուց և ռազմամթերաց վերաբերեալները, իւր ընկերաց և բարեկամաց բաժնեց. ասպա հետեւակները և տկարները, բեռները և ալիսամաղլսը յառաջ խրկեց, մարտի և պատերազմի քաջները գլուխը հաւաքեց, և կարաւանը պատրաստելով արշալուսին ըռւեց և փափաքեալ ճանապարհը տճապարեց գնաց: Ալլահ պատահած գէպքերն մի առ մի սուլթան Խալիֆն գրեց, և խորհեցաւ որ իցէ թէ Խուտա տատ խօսքը ետ սունելու համար զօրք խրկէ, վասն որոյ գունդ մի զօրք տղեց որ զինքը գիմաւորեն: Նոյն գիշերը մինչեւ ցառաւուս եւ նոյն օրը մինչեւ ցերեկոյ շարունակ ճանապարհ հատին, հետեւակները եւ տկարները թէպէտեւ մեծապէս վաստակաբեկ տկարացան և լքան, սակայն զիարդ եւ իցէ դարձեալ իջեւանը հասան եւ մէկը ետ չի մնաց. նմանապէս նոյն օմեւանը փարք ինչ հանգստանալով մէկնեցան և գիշերուան մութին ուղեւորեցան գնացին: Յետոյ Խուտա տատ ըրած գործոյն վրաց զջաց, և համոզուեցաւ որ Ալլահ տատին արւած խօսքը ետ առնէ, և անմիջապէս գունդ մի զօրք խրկեց, սակայն նորա որովհութենէ տեղեկութիւն, և ճանապարհի փոշներաւ հետքը անդամ չժամանեցին գըտնալ, և անօդուաւ ետ դարձան:

Այս եղանակաւ Ալլահ տատ եկաւ սուլթան Խալիֆն հասաւ և հանդիպմամբ իւր փափաքին և յուսացած ձին արժանացաւ, և ծանրագին խլացիք պատաւեցաւ:

Եէյս Խուր խտոին. Շահ Մելիք, եւ ասոնց նմանն նախորարներէն և իշխաններէն ոմանք, որ յառաջագոյն սուլթան Խալիֆ Աէզիրութեան պաշտօնն մէջ էին, եւ յամսութեան ճանապարհը չեղած էին: Սուլթան Խալիֆ Ալլահ տատի գալստնէ ուրախացաւ, բոլոր նախարարներէն վիր դասեց, և մեծի Աէզիրութեան կնիքը,

եւ տէրութեան վեդ հանուը գործոց բանալիները նորա ձեռքը յանձնեց, նա խոհական մոօք փոյթ տարաւ գործերուն վրայ հակել և հատատաւն պահել, սահմանագրիոց պահպանութեան և հսկողութեան կատարելապէս ինամ կալաւ, քաղաքաց և ժողովրդոց խոտեալ վիճակը հանդարանցուց, տէրութեան փատեալ և ապականեալ օրենքները նոր ՚ի նորոյ նորոգեց և կենգանացուց: Ասորմէ յառաջ Պիրինատիկ Արզուն շահ, և կիւշիւք անուն նախօրարները տէրութեան գործոց միջտմտութիւն ունէին, այժմ եւս յամենայնի տէրութեան բարեկարգութեան թէեւ ջանապիր են, սակայն մէծ հրամանատար և ամենեցուն նախագահ Ալլահ տատն էր:

Եէյս Խուր խտոին և Խուտա տատ իրենց յամառաւթեան մէջ հաստատուն մնացին, Թուրքաստանի շրջականերուն, Սիրամայ, Թաշքէնտի, Էնտիկեանի, Խուճէնտի. Շահ բուխյէի, Սէֆիրի, Էնզարի, եւ Սէֆթագի երկիրներուն կիշխէին, և ժամանակ առ ժամանակ Սիհուն գետը կանչնէին, և յայնկայ Ուգսոս գետոյ վշատութեան հուրը կ'բորբոքէին. Սուլթան Խալիֆ երբեմն ինքը անձամբ հեծներով, և երբեմն զօրք խրկելով, երբ կը փոթար նոցա վեանները ՚ի բաց բառնալ, նոքա հակառակիլու կարողութիւն չունենալով կ'փախչէին:

Ասկէ յառաջ մանրամասն գրուածին համեմատ, հեղինակ չըրեաց Թիմուր աշխարհիս աէրութեանց եւ գանձուց տիրնէն յետոյ, որոշում ըրած էր որ Մողովերկիրը յարձակելու համար, Մողով երկրին դիտաւորութեամբ զօրք պատրաստէ Ալլահոց երթայ և Մողով երկիրը նուածէ, եւ իրեն չհնաղանգողները ՚ի կորուստ մասնէ: Երբ այս լուրը Մողով հաստւ, Թիմուրայ մէծութենէ և փառքէն ամենելքեան զարհութեալ տասանեցան, և նոյն տագնապով իրենց հոգւոց օծիկը Թիմուրայ ձիրաններէն ազատելու համար՝ դաշտերը և լեռները փափան: Նոյնպէս Խալիֆ գալստի բնակիչք յաջ և յահեակ ցրուելով ունմատչելի լեռները և անապատները ապաստանեցան, վերջապէս արեւելքան ժարովուրդը մինչև Սիարիիոյ և Զինատանի սահմանները երկիւղիւ և տարակուանոք

ուադնապեալ փախառական եղան : Այլ երբ Թիմուրայ մահուան լուրը հոչակուեցաւ և ստովեցաւ, յիշեալ ազգաց ևս երկիւլը փարատեցաւ և ապահովութիւն ըստանալով, առ աջին թշնամութեան ճանապարհը խոսութեցան, և մոքելնեն դրին որ, վրէմինսդրութեամբ դերիները գարձեն և լինեց երկիւրը վերսախն նուածեն, վասն որոյ իւրաքանչիւր ոք իւր տեղը դարձաւ : Նախ Մողուազգը Աշպարայի վրայ յարձակեցաւ և Ասի կէօվի կողմերը գրաւելով մինչեւ Խուտա տաստի իշխանութեան տակ եղած երկիւրները տարածուեցան, և Թիմուրայ առած երկիւրները ետ առին . Խուտա տաստի չլարաց զանոնք մերժել և ՚ի բաց վանել, նոցա հետ միասիրտ և համամիտ եղաւ, բարեկամին բարեկամ և թշնամույն թշնամի լինելու պայմանաւ հաշտութիւն ըրաւ, և այն կողմերը խաղացաւ : (Աստուած գիտէ Ճմարիտ եղելութիւնը) :

ԳԼՈՒԽ ԼԵ .

Այսիւլոյի թոթարաց հետ չուելն և յանկցոս Ռդոս գետոց յարձակին : Ճիշմակիրի որդի Փիր Մէհմէմէտին գահաժառանգութեան իրաւունք պահանջնելու : Սուլթան Խաղթի նամակն ու Ազահ տաստի ուլթան Նիւտեյինի ըրած նենդութիւն : Սուլթան Խաղթի ուլթան Նիւտեյինի հետ պատերազմին, և նորա փախուանն :

Թիմուրայ մահուան լուրը՝ որոնք որ յանկարծական միջոցի կը բապասէին, ուրախութեան առիթ, և որոնք որ շարժելու կը մնային՝ խաղալու և երեւնալու պատճառ եղաւ: Սրդուն շահ իրեն հպատակ Յունաց աշխարհի Թաթարաց հետ՝ մինչեւ Ճիշուն դեր ստուած էր անցաւ, իր տունը և բնակութիւնը դարձաւ: Ապա հոչակուեցաւ որ Այսիւլոյի հրախասցին կողմէն մարախի նման Թաթարներու Խուտարդիմի երկիւրը արշաւեց, յիշեալ երկրի իշխան Մուսկրան երկիւրիւ տագնապեալ որդիրը եւ ընտանիքը՝ ազգականները և ստոցուածքը առաւ, և ՚ի Փախուաստ աճապարեց: Այսիւլոյի վրա Խուտարդիմ հասաւ և Զլաթափի ազգը աւարեց և յափշտակեց, և Պուխարայի

կողմանց վեաներ տուաւ . և երբ վերսատին Խուարդիմ՝ եւ կաւ, դարձեալ սուլթան Խալիլ հոգ ըստաներով պարգեւ ևը փոխարինեց, և փոյթ ըստարաւ զաք բմբանել և ըստանանել, այլ քաղցրութեամբ վարուելով այնպիսի թըշնամեաց սրտերը որաց, երկիրը հաստատեց և բնակչաց վիճակը բարձրացուց, հեռաւորաց և մերձաւորաց սիրելի, հին և նոր մարդկանց ցանկալի եղաւ : Միայն շէյխ Կուր խոտին և խուտա տաստ իրենց շարութեան և յամուութեան մէջ յարատեւ, եւ քաղաքները աւերելու ջանից մէջ մնացին :

Ասիէ յառաջ գրուած և սպատմնւածին համեմատ, Փիր Մէհմէմէտ որդի Ճիշմակիրի որդւոյ Թիմուրայ, իր եղբօր սուլթան Մէհմէմէտի մահուանէ յետոյ Թիմուրայ որոշնամբ գահաժառանգ ընսորուած էր, սակայն Թիմուրայ մեռած կէտին ննկը գանտահար լինելով՝ սուլթան Խալիլ արքունի գահը ժառանգեց : Փիր Մէհմէմէտ բաղմութեամբ զօրաց եւլու, սուլթան Խալիլին և նախարարաց ոմանց նամակներ խրկելով Թիմուրայ գահաժառանգ ըննկը ծանօց, և կ'ըսէր թէ՛քանի որ գահը եւ թագը իմ սեփհական իրաւունքս է՝ ինչպէս կը յափշտակուեի . նախարարը և իշխանը ամէն մէկը ըստ արժանւոյն պատճանանցին, սակայն սուլթան Խալիլ անոր պահանջմանն և այս մատին գրած մեղանչական նամակին, սոյն օրինակ նամակ գրեց և պատասխանեց, Ավելուքոյր, թագաւորութեան ինդիրը երկու բանէ կանխում ունի, կամ պէտք է արքայորդի լինիլ, և կամ պէտք է տէրութիւնը բըռնաւթեամբ նուածել, եթէ արքայորդութեան իրաւունքը կը պահանջես, այս իրաւունք տէր ինձմէ եւ քեզմէ յառաջնախուսպատիւ փառաւոր հայրս Էմիր Խնչահն և հօր եղբայր Շահ րուխն է, սոցա կենդանութեամբ ինձ և քեզ իրաւունք չլինար, մանաւանդ նոքա այս մասին ինձ հետ վէճ և հակառակութիւն մի չունին, իրենց գլունուած երկիրներուն հաճ և իրենց արքուած բաներավ գոհ եղած են . երկիրն պահապանութեան եւ հսկողութեան հպատակաց պատռուոյն և պաշտպանութեան ջանագիր են և արժան գատեր են մարտը և պատերազմ գաղթեցնել,

վասն զի հիմակուհիմայ երկրին տէրը և պահապանը ես
եմ։ Իսկ եթէ բռնութեան իրաւունքը կը պահանջնես,
այն եւս կերպով մի հաստատուն չէ, վասն զի աէրութիւն
նը Ամուլին է, այսինքն թագաւորաց իշխանութեան վրայ
ունեցած սաստիկ տենչանքէն իրենց վաւակները կրա-
սրանանեն, եւ ՚ի կենդանութեան իրենցմէ արձանաւորը
չեն ուղեր, ասոր համար մենք եւս զօրութիւնը բազկին
տալով մարտնչներ և պատերազմներ, կտասրեմք և սար-
նանեմք, այն ատեն կ'ըստուգուի ։ Իսկ եթէ զահաժառ
ուանդութեան իրաւունքը կը պահանջնես, այդ ինդիրն և ս
վէճի ինդիր մի չէ, վասն զի եթէ նցն իսկ իշխանաց վասոյ
ահնարկ մի ձգուի, յայսնի պիտի տեսնուի թէ նախա-
հայրդ Թիմուր ինչ կերպով երկրիս տիրեց, և մեծէ առ
մեծ ժառանգելով թագաւորութեանց մէջ ամուր և հաս-
տառուն մնացողներուն թագաւորութիւնը ինչ եղանա-
կաւ բաժնեց, եթէ խաղաղաեր մուսոմիդ Թիմուրայ կը-
տակը և խոսքերը գործազրել հարկ լինի, երբ ները միւր
կենդանութեան երկիրները և բազագները իւր որդուց և
որդուցը որդուոց բաժնեց։ Ատրպատականը վասուաւոյ
հօրս գրեց, Խորասանու աշխարհը մնաւարտիւ հօր եղ-
բօրս անուան նշանակեց, և իրագ Ա.Ճ.մը հօր եղբօր որ-
դի Փիր Խօմէրին անուանեց, Գանտահարը և Գահաժառ
ուանդութիւնը ձեր մեծութեան նշանակեց և ձեր ձեռքը
յանձնեց, այս մասին և այս միջային ինձ մասն և բաժին
չկայ, գոնէ ձեր ամէն մէկը իւր ափած երկիրներէն մէկ
մէկ մաս որոշչուով ինձ յանձնեցէք որ իւրաքանչիւր ոք իւր
մասին գոհ և բաւական լինի, կուիւր եւս խուսվութիւնը
վերնայ։ Բաց յայսմանէ եթէ վասաւոր հայրս և մեծա-
պատիւ հօր եղբայրս քայ գահատառանդութիւնունդ ընդու-
նին, եւ քայ հետաղնդութեան լուծը իրենց պարանցը
գնելով հպատակին, ես եւս կ'ընդունիմ։ Սակայն եթէ
նախառանութեան աջօր նայիս, տէրութիւնը և թագա-
ւորութիւնը անջան որս մի է, ով որ յառաջ որսաց, որս
անորն է։ Սոյն կէտիս բարձրեալին Ասուածած ընդհանու-
թին ու խոտիւր թագաւորութեան միջացները այս նուաս-
տիս պատրաստեր, եւ ժառանգութիւնը այս խոնարհիս

շորհեր է, փառք Աստուծոյ թագաւորութեանս ատեն
ժողովրդոց և քաղաքաց գործերը բարեկարգեալ, աղքատք
և անանկի հանգիստ վիճակի մէջ զարգացեալ, աղէաք և
շարիք անհետացած են, և այն։ Բոլոր թագաւորութեան
իրաւունք պահանջողները՝ ինձ հնազանդիլն օդուտ գիտ-
ցան։ իսկ ոչ հնազանդովները անմիջական վիամներ, այս-
պիսի խօսքերով պատասխան տուաւ։

Սակայն քսու նախարարներէն ոմանք կեղծաւորեցան
և Փիր Մէհէմմէտին սոււտակասպաս բանիւք պատասխան
տուին, միայն յայնկցոյ Ոգոսո գետոյ գլուխ գիտնականաց
և նախագահ առաքինեաց խոհնաց Աստուլահը Փիր Մէ-
հէմմէտին գրած նամակին մէջ, Փիր Մէհէմմէտէն տաղա-
կացած, սուլթան Խալիլը գովելով, այս օրինակ պատաս-
խանեց, գիցաք թէ Թիմուրայ յաջորդը եւ գահաժա-
ռանգը դու ես, սակայն եթէ երջանիկ հակատագիր և
բախտի յաջողութիւն ունէնացիր, Թիմուրայ մօս գլու-
խուելով փափաքիդ կըհաննէիր, այլ այժմ վիճակիդ յար-
մար ձեռքդ եղած ընջց և սուացուածոց գոհ եղիքը, ասա
թէ ոչ ձեռքդ եղածներն եւս կ'երթան, յետոյ զրջումը
օդուտ ըներ։ Սուլթան Խալիլ միայն նամակաւ բաւա-
կան ցլնելով շընաները հրովարտակիներ սփուեց, եւ
ժողովրդական աստեղամիւ զօրաց՝ Թիմուրայ քուեր որդի
սուլթան Հիւսէյինը սպարապետ կարգեց, ապա աէրու-
թեան նախարարներէն Ալլահ տաւը Արղուն շահը, Էմիր
Կիւջիւկը և Զգամշայի մեծամիեններէն շատերը նոցա նիւ-
զակակից տալով Փիր Մէհէմմէտին վրայ սատիկան կար-
գեց, և այն (1404) թուին Զիղգատէ ամսոյ տասն և հինգին
Սըմրզանտէն մեկնեցան օթեւանները և իջեւանները կըտ-
րելով ձիհուն գետը անցան, և գէա ՚ի Պալս քաղաքը ուղե-
ւորեցան և այն կողմերը մարախի նման սփուեցան։ Մինչ-
դեռ անդորր սրտիւ և բարեկարգ վիճակաւ կ'երթային,
հանարարհին սուլթան Հիւսէյինը որպէս թէ քանի մի
ասհմանագիր գործերուն վրայ խորհրդակցելու համար
նախարարները կոչեց, և ծածկապէս քանի մի արեանար-
բու գահիձներ գարանի դրաւ, երբ նախարարները եկան
և իւրաքանչիւր ոք բաղմելով ժողովը կազմեցաւ, նախ

ինքը առիւծաբար նախարարաց վրայ յարձակեցաւ, ապա դարանամուտ շարագործ մարդիկները դուրս եղան, այն միջոցին խոճայ Եղուսութիւնը սպանուեցաւ, որ շատ անգամ Թիմուրայ բացակայութեան ատեն Ալմրդանտի մէջ նորու փոխանորդ եղած էր, և մնացեալները ՚ի կասպանս մաս նեցան: Յետ այնորիկ սուլթան Հիւսէյին սկսաւ թագաւորել և ժողովուրդը իւր ուխտին հրաւիրել:

Ալլահ տատ երբ սուլթան Հիւսէյինի կողմէն այս անակնկալ գործը աւեսաւ, փութաց ամենայն զետուշութեամբ տնօրէնութիւններ ընել: Նախ սուլթան Հիւսէյինին ապահովութիւն ուղելով միտքը հաւատարմացուց ապա իւր հարասակութիւնը այսպէս ակսաւ: յայտնել: Տէր արքայ՝ շատ ժամանակէ ՚ի վեր ձեզմէ այս շարժումք կապսակի և այս գործոյն կ'մնայի, սակայն կ'մտածէի թէ յայտնելը կորառեան առիթ կը լինի կ'ծածկէի, ամեն առ տեն նուասախ մուաց հոգը այս էր, որ սուլթան Խալիլ միայնակ արժանաւորութեամբ փառաւոր գահին տէր կը լինի, մանաւանդ թէ ձեր մեծութեան փառքը և ահար կութիւնը անուանի, զօրութիւնը կարողութիւնը և քաջութիւնը ժողովրդոց բերանը կը յիշուի: Եթէ այս գործէն փոքր ինչ աեղեկութիւն ունենայի, այս մասին խոհական տնօրէնութիւն և իշխանաբար գործոց կարգագորութիւնը կը լինէի. հաւատարիմ խօսքերուս ձեր մեծութեան սիրան եւս կը վկայէ, և այն, Խուտա տասմին անգութ ձեռքը մատնուած ձեր ծառաներէն՝ եթէ հարցը նել կը բարեհամարէ, այն բռնաւորին ձեռքէն զիրենք ով ապատէց, և այն կրակը ով մարեց, եթէ նուասաս նոյս փրկութեան սրատահաճոց դարման ընկի՞ ամենեցուն կորուսալ պատրաստ էր, որդիքը և թուունքը կ'որբացը նէր, եթէ հարցնել կը բարեհամարէ, նոքա աեղեկութիւնը կուտան, եւ թերեւս լած լինիք. այսպիսի խօսքերակ սուլթան Հիւսէյինը վիստեցուց եւ խարեց: Սուլթան Հիւսէյին զայն իրեն բարեկամ կարծելով ամեն գործոց մէջ անոր դատողութեան և խորհրդակցութեան կը հետեւը:

Յետ այնորիկ բռնուած նախարարաց սպանութեան

և կորսուեան համար երբ սուլթան Հիւսէյին Ալլահ տատին խօսք բացաւ, անոնց համար ալ սցն օրինակ պատասխանեց, ճշմարիսէ որ՝ սուլթան Խալիլի քաջութեան մէջ ձեռքը կործէ է, և պատերազմի գաշտին մէջ շրջան տանելու կարսցութիւն չունի, այլ տրօք եւ պարգեւօք մարդկանց սկրար գրաւեր և բարի բնաւորութեամբը ժողովուրդը գերի և թշնամին բարեկամ ըրած է: Այլ սահայն փառք բարձրեցն ձեր գահակը մեծութեան քաջութիւնը անուանի և պերճութեան կանոնները հաստատուն, փառաց և մեծութեան գրոշը հանապաղ յազմուղ է: բաց յայտմանէ՝ բոլոր զօրաց մաքին մէջ ձեր սէրն արմատացած, և զբախափ սատոց փայ ձեր հետղանդութեան բուրմունքը նեքնիրէն կ'աճի, մի միոյն ազգու հրամանի մի կը կարօտին, որ անմիջապէս ազգ և ազնիք քաջստաց և ժողովրդոց սպահանութիւն և հսկողութիւն ընեն: յատուկ և հասարակ մարդիկն իրենց ընչեց և հրդւոց բնամք տանին: Այսօր այս գործոյն ձեզմէ ուրիշ արժանի և արքունի գահին պատշաճաւոր ով կոչ: քաջութիւնը առած տաձեռնութիւնը, տոհմանթիւզ փառքը և մեծութիւնը ձեզի հետ իջած և ընկերացած է, մանաւանդ Շահ Մէջը և Շեյխ Նուր խոտին երբ իմանան որ ձեր մեծութեան պէս ասպաւէն մի ունին, երբէք տարակցու և կարծիք չկայ որ ձեզի պիտի հետեւին և ձեր հրամաններուն պիտի հնազանդին: Վերջապէս դուք ամենեցուն վկայ թագաւոր, և ամեներեան ձեզ ծառայ և գերի են: Եմահ գտտապարեալ խղճակի նախարարաց մահը և կետնը, ձեր զօրութեան և կարողութեան նկատմամբ դիւրին գործ մի է, և ծառայն միշտ իւր ափրոշ գլութեան կը բաղասէ, եթէ ձեր բարի կամքը կը համին ձեր երջանիկ մուց սպահամբութեան համար ամեներեանքս շղթայի կատանաց մէջ, և իսմ՝ հաւատոց հաւատարմութեամբ ձեր ծառայութեան մէջ մնամք, ըստ, և խօսքը կնքեց:

Սուլթան Հիւսէյին այն գործէն յետս կառեցաւ, և Ալլահ տատար բոլոր գործոց գործադիր կացաց, բաղում և սակաւ գործոց տնօրէնութիւնը նորա խորհրդաց և կամոց յանձնեց: Սուլթան Հիւսէյին մինչդեռ յիշեալ նա-

լարարները՝ կապանք նուաճեր և բանտարկեր՝ և ՚ի կեն գանութենէ յուսակառ ըրած էր, դարձեալ բոլորն ալ հանեց, և հաւատոյ հաւատարմութեամբ ուխտ և երդում պահանջեց, որ ամեն պարագայի մէջ իրեն հետ մի ասիր և համամիտ օգնական, և սուլթան Խալիլի թշնամութեան մասին միաշունչ և համբնթաց լինին։ Ամենեքան երդում ըրին, և դաշնք դրին որ՝ ամեն պարագայի մէջ իրեն ՚ի միասին լինին հրամանէն եւ կամքէն դուրս բան ըլ դործեն, և իրեն համար, իրենց հոգւոց և ստացուածոց ըլ խնայեն։

Սուլթան Հիւսէյին յամենայնի սրտի ապահովութիւն ստացաւ, այլ ՚ի կապանաց չ'արձակեց, միայն պատուհասը վերուց և նեղութիւնը թեթեւցուց։ Յետ սցնորիկ սուլթան Հիւսէյին գէմ եղեալ Արմրդանա գնաց, և սուլթան Խալիլի նամակ դրեց և ծանոց որ թագաւորութեան մասին իրեն հետ վէճ ունի։

Սոյն միջոցին Ալբահ տատ սուլթան Խալիլին ծածկաբար հաւատարմութեան նամակ իրիկեց, և սուլթան Հիւսէյինի հետ աեզի ունեցած դէպքերը ծանոց, ապայարեց, ձեր լուսաւորեալ գաղափարը արեգական ձաւ սագայթներէն ըջծածկուի, զի ձեր յաջողութեան աստղը պայծառ, ձեր փառքը եւ բախդը տղիւ է, անմիջապէս բարեհամեցէք ուղիղ գիտաւորութեամբ չուել եւ այս կողմերը գալ. զի ամենազօրն Աստուած ձեզ օգնական է, չը լինի թէ ճապարհի նեղութիւնը երկիւզը և տրամաւթիւնը մասածէք, ամենեցւն սիրաը ձեր ապաւէն թագաւորութիւնը սիրած է հակած է, և աշխարհիս ձեռքը ձեր գիթութեան գուռը աղքատ եւ մուրացիկ է, ըստ և խօսքը վերջացուց։ Սուլթան Խալիլ երբ պատահած դէպքերը իմացաւ, ծովու նման զօրաց յորդան տուեալ Արմրդանատէն մէկնեցաւ, և սուլթան Հիւսէյինի գէմ գընաց, և փութաց զայն խը ցանկութենէ ետ դարձնէլ, Երբ սուլթան Հիւսէյին սուլթան Խալիլի չուելը լից, ՚ի կապանս եղած նախարարներէն վերսասին երդում առաւ, և իւրաքանչւրը իրենց առաջի պատուցին և աստիճանին վերածեց. կապելու և արձակելու իշխանութիւնը վերստին

իրենց վերադարձուց և յանձնեց, և ծանրագին խիլաներ հադցնելով սրտերնին բժշկեց, և նոցա ծառայից պարգևեներ սուլթան բախդով բռնութիւնը մեղմացուց, և աճապարանոք Քէշիտէ քաղաքը գնաց հասաւ։ Այս կողմէն սուլթան Խալիլ փառաւոր բախդով երբ յիշեալ աեզր հասաւ, սուլթան Հիւսէյին պատերազմի և կռուց գործիքները պատրաստեց, Ալբահ տատ կաղմեալ զօրաց աջ թեւին սպարապետ, երդման և կապանաց մէջ եղող նախարարները ձախ թեւին դէտ կարգելով խրկեց. երբ գրնացին և սուլթան Խալիլի զօրաց դէմ ճակատեցան։ Ալբահ տատ նախարարը և բոլոր զօրքերը գրոշակնին գլուխ վար դարձուցին սուլթան Հիւսէյինին բաժնուեցան եւ սուլթան Խալիլի կողմ անցան։ Այս մասին սուլթան Հիւսէյին վնասուց ձորերուն մէջ ապշեցաւ, և սարջանաց անդնդոց մէջ ընկղմեցաւ, չիրաց կենալ, փախստեամբ գնաց Շոհրուխի հովանաւորութեան ապաստանեցաւ, ուր կեանիքը չերկարելով մեռաւ։

ԳԼՈՒԽ 19.

Փիր Մէհէմմէտին մասեալ վիճակն։ — Սուլթան Խալիլի յարթութիւնն։ — Երազաց յայնկայս Ազուս գետոյ իրենց բռն հայրենիքը չուելն։ — Փիր Մէհէմմէտին գարձեալ սուլթան Խալիլին վրաց երթան։ — Գրած նամակն, պատարացին և պարտութիւնն։ — Խուսա տասի և Շէյս Նոր խոտինի հակառակութիւնն։ — Սուլթան Խալիլի թիրամէնտ քաղաքը շենքն։ — Շահ բուխի նոր շնուր տուած քաղաքն։

Փիր Մէհէմմէտի և Սուլթան Խալիլի ատելութիւնը և թշնամութիւնը երկարելով ՚ի վերջոյ մարտի և պատերազմի աեզրի տուաւ։ Փիր Մէհէմմէտի Վէզիր և հաւատարիմ՝ երեւելի գիտնականաց գլուխ։ Փիր Ալբահ որոշինութեամբ և պատրաստութեամբ՝ Գանտահարի զօրքերէն մաս մի քաջ մարդիկներ ընարեց, և Փիր Մէհէմմէտին անձամբ լեռները ողողիչ հեղեղի նման, և առաւտեան հողմոց արագութեամբ գնաց և ձիհուն դեպք հասաւ, և աճապարանոք յիշեալ գետը անցնելով

Նէխչալի գաշող բանակեցաւ : Այս կողմէն սուլթան
Խալիլ ըստ առաջին եղանակին՝ փութաց թագաւորաց
և իշխանաց սրաերը գրաւելու , նախարարաց և մէծամեր
ծաց մոքերը որապես համար պարգեւներ և ընծաներ
տալ : Եւ Փիր Մէհմէմէտը ջնջելու համար շըշակաները
պատգամաւոր և հրախարտակներ խրկեց : Աշխարհաց և
կողմանց զօրքերը և գումարերը նորա հրաւերը սրուի մոտք
ընդունելով՝ արտջալը բանակատեղին փութանակի հասան ,
երբ բաղմութիւնը ամբողջացաւ՝ սուլթան Խալիլ ամեւ
նեցուն պարգեւներ տուաւ , և ճանրագին խիլաներ հագուց
ցուց . և այն ատամիճան փառաւորեց որ հետեւակները
երիվարաց , աղքատները հարսութեան , և մերկերը պար
առաւական հագուստներաւ տէր եղան : Աւրախութեամբ
սրուի , փառօք և յայտնի յաղթաթեամբ յիշեալ տեղէն
մէկնեցան : Սյն միջոցիս սուլթան Խալիլ եւս երջանիկ
բախորով թագաւորական պէրճութեամբ և արքայական
նազարներով փախաքեալ ճանապարհը և նպատակնեալ
տեղը երագեց գնաց . ՀՕՀ (1405) թուին Բամազան ամէ
սոյ սկիզբ Նէխչալ բաղադրը յաղթական զօրաց փաննեւ
ըլ կանգնել առաջնորդեց : Չիշեալ տեղը սուլթան Խալիլ
և Փիր Մէհմէմէտի բանակները՝ իրարու դէմ յանդիւ
ման՝ երկու սեւ լուսներու նման բանակեցան , ամէն մէկը՝
նոյն օրը և նոյն գիշերը առանձնացեալ ազօմքի պար
արագցաւ , և իւրաքանչւուր պէ նոյն օրը և նոյն գիշերը
միայնացեալ խորհեցաւ , և հետեւեալ աւուր գործոցնըս
ուստիլով մարտի և պատերազմի պատրաստեցաւ : Առաւ
ւուեան իւրաքանչւուր պէ իւր բանակին յաջ և ահեակ ,
յառաջց և յետուաս զօրքերը պատրաստեց . տուա սկը
ուան յառաջամարտիկները պատերազմի գաշոնի մէջ շըր
ջան առնուլ , և ձիավարքը իրար որսալով պատերազմիւ
և կոտորել , առաւուեն մինչեւ երեկոյ մարտը երկարեցաւ .
վերջապէս Խալիլին յաղթական դրոշը յաղթանակեց , և
գանուահարի զօրքելը պարտեցան : Սուլթան Խալիլի ձայնը
և աղաղակը երկրիս վրայ յաղթութեամբ հոջակուեցաւ : Փիր
Մէհմէտ անարդ պարտութեամբ խորտաւ կուտէալ և ահեակ
կուտէալ իւր նոյն կողմի երկիրները ցրուեցան . և ուզուց
տեղերնին բնակութիւն հաստատելով նստան :

Թիւն մասնեցաւ . կանայք և ծառացք գերի վարեցան .
և իւր արիական փառքը խոնարհեցաւ և նուաստացաւ .
և այն տաղնասպատ իւրախուստ ամապարեց : Յետոյ սուլթան
Խալիլ իրեւ փառաւոր թագաւոր գովարանու
թեամբ ես դարձաւ և բամազան ամփու նիշովնիք կուցած
տեղը կատարեց . և քանի մի օր կենալով հանգտասացաւ .
և ապա Արմեղանտի կողմը վերադարձաւ :

Պաղտատիր թագաւոր սուլթան Ահմէտ Ճիշյէրին
Պաղտատիր արքայարձաւ և Փիմուրայ մարդիկները արուաք
ուց . նորա իւրաքանչւուր պէ իւր տեղը և բնակութիւնը
գնացին : Երբ այս ըւրը յայնկայս Ուզոս գետաց Խրագոց
մարդիկները լսեցին յիշեալ թուականին Նէվալ ամսոյ ըստ
կիզը և երկրորդ գիշերը՝ մինչդեռ Արմբանտի ժողովուր
գը նուիրական տօնին գործերով , և նորանոր հագուստ
ներ պատրաստելու զբաղած են՝ գիշերուան մութին իւրենց
որդիքը և ծառացքը՝ ինչըլ և ստացուածքը առնին .
համի Փաշան (որ իրենց օգնական ապաւեն . և մեծն էր) .
և Պաղտատիր թագաւոր սուլթան Ահմէտի որդի Ալայիտ
տին , (որ ասկէ յառաջ կերպով մի Փիմուրայ բանալ
մասնուելով գերի եղած էր . և սուլթան Խալիլ զայն առ
պատած էր) : Այս տեղ գանուելով սյն ալնոցա հետ միւ
ասիրա և համամիտ չուեցին և գէպ ՚ի Պաղտատ դէմ եւ
գետը գնացին : զի յիշեալ ազգը հզօր զօրաւոր և պատեր
բարձող լմնելով ոչ որ կարաց նոցա ճանապարհը փակել
և ուղեւորութիւնը աբգիկէլ : Նոքա Ճիհուն գետը ան
ցան և Խորատան հասան , տեղւոյն հեռաւորութեան և
ճանապարհին նեղութեան պատճառ աւ , ոմանք Պաղտատ
եկան , և շատերը իսկ նոյն կողմի երկիրները ցրուեցան
և ուզուց տեղերնին բնակութիւն հաստատելով նստան :

Փիր Մէհմէտ այն պարտութենէ յետոյ , ինալով
ելլալով Գանտահար գնաց նստաւ . հանգստութիւն բար
կի զօրութիւն և կարողութիւն ստացաւ և գործերը կար
գագրեց , զօրքերն եւս հանգտասացան և զօրացան : Պա
տահած խորտական վրայ տրտմեցաւ , և յօմարեցաւ
վրէմինդիր լինել , և ցանկաց վերատին սուլթան Խալիլի
հուե պատերազմիլ . շըշակաները՝ իւր նախարարաց ևւ

թոշտկաւորաց հրավարտակ և մարդիկներ խրկեց՝ և սառարիկ պատուիրեց՝ որ այս ինչ ժամանակին և այս ինչ ամել պատրաստ և նոր պատերազմի համար կազմվելին։ Ամենեքեան հրամանին հնազանդելով որոշեալ տեղը ժողովեցան, և երբ կասպից ծովու նման զօրքերը յորդեցին, գարձեալ սուլթան Խալիֆին նամակ եւ պատգամաւոր խրկեց, նամակին զօրութիւնը այս էր։ « Մեր առաջին պատերազմը խուժութիւնն մի էր որ կաշճակի նման ժայռելով մարեցաւ, եթէ աւզածիս պէս պատրաստութիւն տեսած լինէին չէի խորտակուիր, և եթէ մեծ գործը փոքր քառես նէին չէի նուաստանար։ Բայց յայսանէ քաջ զօրքերդ և երեւելի զօրութիւնդ բատ մեծի մասին իրագայ ժողովուրդն էր, նոյց հետ միաբանելով աշխարհին մեջ հըստ չակելի եղած էիր, այլ այժմ նոցա միաբանութիւնը խոռոշութեան, մօտակայութիւնը հեռաւորութեան, և համաշնչութիւնը երկպատակութեան փոխուեցաւ։ մինչդեռ փառաւոր էիր՝ նուաստացար, ահա ես եկայ՝ եթէ քաջ ես յասպարել եկ, և եթէ զօրութիւն ունիս դիմաւորեա, վասն զի ճշմարիտ է որ երեկեան օրը այսօրուան կը փոխուաւ ու ու։ Փիր Մէհէմմէտ անթիւ և անհամար զօրքերավ չուեց և ձիհունը կորելով Շատամ կոչուած բերդին մօտերը վրանները կանգնելով նստաւ։

Սուլթան Խալիլ միւս կողմէն գործունեայ քաջերավ և կորսիլ առիւճներավ ինոները և դաշտերը անցաւ, և Գանտահարի զօրաց գէմ բանակեցաւ։ Գանտահարի զօրքերը յառաջնին պատերազմին՝ սուլթան Խալիլի հարուած ներէն սրտերնին երկիրդիւ լցուած էր, պատերազմի դաշտն մէջ տակաւին պատերազմի հուրը չը բորբոքած։ Իսկ կոյն անարդ պարտութեամբ իրենց եկած ճանապարհը ետ դարձան և փախատեամբ Գանտահար գնացին։ Եւ Փիր Մէհէմմէտ վերացիւն մերիւնալու կարողութեամբ միշեալ բերդը փախչելով գուռու աղմաեց, աշտարակները և պարիսպը ամրացնելով մարտի և պատերազմի պատրաստցաւ։ Նոյն կէտին սուլթան Խալիլ զօրքերը բերգը պաշարեցին և սկսան սաստիկ նեղել։ Փիր Մէհէմմէտ ամեն կողմէն տկարացաւ և ՚ի զօրութիւնէ պականեցաւ։

միոքը և խելքը ցնորեցաւ, և նենգութենէ զատ կարսդութիւն մի չունէր։ իւր տէրութեան գործոց կարգադրիչ և թագաւորութեան օրինաց նեցուկ՝ Փիր Ալիի անօրէնութեամբ և պատրաստութեամբ կաշիէ եւ փայտէ մարդու կերպարանօք մարդիկներ հնարեց։ և անոնց վրայ հայելիէ եւ փայրուն պտղավասիկէ զրահի և զննաց գոյներավ բաներ հագցուցին աշտարակաց և պարապաց վրայ կանգնեցին, ՚ի նշան վերջին թշուառութեան։

Այս ժամանակին՝ սյսմէրն սուլթան Խալիլի քայլակայութեան, Խուտա տատ և չէյս Նուր իտախն պատեհ ժամանակ գանելով միաբանութեամբ Արմրդանտի կողմէ գիշերյարձակ եղան։ Քաղաքին բնակիչները արիութեամբ գուեւորեալ վերդ և իցէ ջանացին զանոնք հաղածել։ սակայն քաղաքէն դուրս գանուած գիւղերը եւ աւանները աւարեցին եւ յափշտակեցին եւ ետ դարձան։ երբ այս լուրը սուլթան Խալիլին գումաց՝ Արմրդանտ դարձաւ, սակաւ ինչ հանգատանալով զօրքերը ժողովեց և կամաց կամաց երթալով և դադարելով Ճիշունը անցաւ։ Շահրուխի բերդին և Խուճէնու քաղաքի ընկիցները նորա իշխանութեան հնազանդեցան, և փութացին հրատակութեան սանձը նորա ձեռքը յանձնել, այլ Թաշքէնտ քաղաքի բնակիչք՝ երբ նորա հրաւիրանաց յամառութեամբ պատասխանեցին՝ պաշարեց և նեղեց, պարիսպը և աշտարակները աւերեց, սովոյն սաստիկութիւնը եւ տագնասը իրենց տկարութեան և վհատութեան պատճառ լինելով աղաչանօք անձնատուր եղան և աղատեցան։

Սուլթան Խալիլ, Խուտա տատին և չէյս Նուր իտախն ասկէ յառաջ Արմրդանտի տուած վիշերը տունելու ելու, և բաց յայնմանէ՝ ամէն ատեն երբ գիւղը ժամանակ կ'գտնէն, սուլթան Խալիլի վերաբերեալ երկիրներուն վնասներ կը հասցնէն։ յիշեալ թագաւորը աճապարեց զանոնք ՚ի բաց վանել և պատժել։ եւ երբ բազմութեամբ զօրաց անոնց վրայ զնաց, նորա մէկ մէկ օթեւան և աւելի մօտ հեռաւորութեամբ ՚ի փախուստ կեղծելով, սուլթան Խալիլ անոնց ետեւէն բնկաւ, և եւ

յաղթութեան յուսով մինչդեռ բեռները և աղիսամաղէ իւս եւս թողլով կերթար, զօրաց կողմէն անհաւատարմութեան կասկած առաւ, և չուն բողոքավին դադրեցուց. բանակը գտնուած չէյխ նուր իտամինի լուսեմները գնացին պատմեցին, Խուտա տատ և չէյխ նուր իտամին գիշերուան մութին յանկարծափի չուեցին և սուլթան Խութի բանակին մերձ նստան, և բանակին մեջ աղմուկ շրփոթի և մեծ տափնապ հգեցին. բանակը գտնուած արի և եռանդուն կորիճները երագեցին և քաջութեամբ զոնմք ՚ի բաց վանեցին, նորա հետ և թշուառական ետ դարձան. և երբ սուլթան Խալիլ խնցաւ որ, նորա վարդան, արքունի զօրբը կտաղուկացնեն, մարտ եւ պատերազմը դագրեցնելով եւ դարձաւ:

